**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ**
**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՄԻՐՋԱԲԵԿՅԱՆ ԳԵՈՐԳԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ**

# 1590 Թ. ԵՐԵՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԵՎ 1728 Թ. ԵՐԵՎԱՆԻ ԼԻՎԱՅԻ ՈՒ ՆՐԱ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆԻ ՕՍՄԱՆՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԵՐԸ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արսեն Ավագյան

Երևան - 2018

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** ..... 3

**ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ. 1578-1590 ԹԹ. ՕՍՄԱՆԱ-ՍԵՖՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ 1590 Թ. ԵՐԵՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԱՇԽԱՐՀԱԳԻՐԸ** ..... **14**
1.1 Այսրկովկասի գրավումը Օսմանյան կայսրության կողմից ..... **14**
1.2 1590թ. Երևանի վիլայեթի աշխարհագրի հատվածները ..... **22**
1.3 Երևանի վիլայեթի վարչական բաժանումը ըստ 1590 թ. աշխարհագրի **31**
1.4 Երևանի վիլայեթի հարկատեսակներն ու չափերը ըստ 1590 թ. աշխարհագրի ..... **68**
**ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ. XVIII ԴԱՐԻ I ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՍՏԻՆ ՆՎԱՃՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՎ 1728 Թ. ԵՐԵՎԱՆԻ ԼԻՎԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳԻՐԸ** ..... **73**
2.1 Արևելյան Հայաստանի վերստին նվաճումը Օսմանյան կայսրության կողմից ..... **73**
2.2 Երևանի լիվան ըստ 1728 թ. աշխարհագրի ..... **83**
2.3 Երևանի լիվայի հարկերը ըստ 1728 թ. աշխարհագրի ..... **119**
2.4 1590թ. Երևանի վիլայեթի և 1728թ. Երևանի լիվայի աշխարհագրերի համեմատությունը ..... **124**
**ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ. ԹԻՖԼԻՍԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԱՇՈՑՔԻ, ՏԱՇԻՐԻ, ՓԱՄԲԱԿԻ ՆԱՀԻԵՆԵՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ (ԵՐԵՎԱՆԻ ԼԻՎԱՅԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ)** ...**129**
**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ..... **146**
**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ** ..... **152**
**ՀԱՎԵԼՎԱԾ**..... **160**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի արևելյան հատվածը, XVI և XVIII դարերում հիմնականում գտնվելով Սեֆյան Իրանի տիրապետության ներքո, օսմանա-սեֆյան պատերազմների հետևանքով՝ քանիցս ենթարկվել է Օսմանյան կայսրության հարձակումներին: Դրանց թվում հատկապես

առանձնացել են օսմանյան բանակի նվաճողական գործողությունները XVI դարի վերջերին և XVIII դարի սկզբներին, որի ժամանակ կայսրության զորքերին հաջողվեց մեկ տասնամյակից ավելին իրենց տիրապետությունը հաստատել Արևելյան Այսրկովկասում: Այդ ընթացքում օսմանյան իշխանությունները գրի են առել և պահպանել տեղացի ժողովուրդներին առնչվող բազմաթիվ վավերագիտական նյութեր, որոնք սերտորեն առնչվում են նաև հայ ժողովրդի պատմությանը:

Պատերազմական գործողությունների հետևանքով հայ ժողովուրդը ենթարկվելով կողոպուտի, աքսորի և վերջապես կրելով մարդկային լուրջ կորուստներ՝ մասնավորապես ժողովրդագրության և սոցիալ-տնտեսական կացության համատեքստում նոր իրողության առջև է կանգնել: Այդ նոր իրավիճակի լուսաբանման համար մեծ կարևորություն ունեն այնպիսի սկզբնաղբյուրներ, ինչպիսիք են օսմանյան ընդարձակ հարկացուցակները՝ աշխարհագիր մատյանները (*թահրիր դեֆթերները*[1]), որոնք կարող են օգտակար լինել միաժամանակ մի շարք խնդիրների ուսումնասիրության համար: Նախ և առաջ, դրանք թույլ են տալիս մեծ ճշգրտությամբ քննել աշխարհագրի անցկացման պահին եղած ժողովրդագրական պատկերը, ինչպես նաև ուսումնասիրել սահմանված հարկերը, որոնք վճարվել են նոր իշխանություններին հիմնականում՝ ըստ հարկատուների թվի (ներառյալ ընտանիքների), զբաղմունքի, դավանական հարցերի: Դրանք արժեքավոր փաստաթղթեր են նաև վարչա-քաղաքական միավորների ուսումնասիրության տեսանկյունից՝ պարզելու համար, թե տվյալ երկրամասը ի՞նչ միավորների է բաժանված եղել: Հատկանշական է, որ Օսմանյան իշխանությունները ընդարձակ հարկամատյանների գրանցումը ամբողջ կայսրությունում իրականացրել են՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկություններն ու ավանդույթները[2], ինչը ավելի է բարձրացնում դրանց արժեքը:

---

[1] Սահակյան Լ., Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007, էջ 4:

[2] Փափազյան Հ., Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան վավերագրերը, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, թիվ 3, 1984, էջ 199:

Օսմանյան հարկամատյանների ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ նշյալ հարկային ցուցակները հատուկ ուշադրության են արժանանում նաև հարևան Ադրբեջանի Հանրապետության պատմագրությունում: Օսմանյան բնագրերը Թուրքիայի Հանրապետության արխիվներներից վերցված լինելով՝ փորձ է արվել ներկայացնել տարածաշրջանը որպես մահմեդաբնակ՝ «Արևմտյան Ադրբեջան»[3]: Օսմանյան աշխարհագիր մատյանների քննությունը հնարավորություն է ընձեռում ոչ միայն ճշգրիտ ներկայացնել այնտեղ արձանագրված բոլոր տվյալները, այլ նաև՝ անաչառության սկզբունքով ստացված տվյալները համեմատել ադրբեջանական և հնարավորինս՝ նաև թուրքական տվյալների միջև:

Օսմանյան իշխանությունների կարգադրությամբ արձանագրվել են նաև համառոտ հարկամատյաններ (դրանց մի մասը վերաբերում է XVII դարին), սակայն դրանց բովանդակությունը հիմնականում տվյալ շրջանի միայն ֆեոդալական գյուղերին ու դրանցից գանձվող հարկաչափերին է վերաբերում և չեն ներառվել ատենախոսությունում: Անշուշտ, ընդարձակ հարկամատյաններն ավելի բովանդակալից են, որտեղ արձանագրված տեղեկությունների կառուցվածքը հիմնականում հետևյալն է. հարկացուցակի սկզբում նշվում է գյուղի անվանունը, ապա՝ գյուղացիների անուն հայրանունները, հարկատուների ընդհանուր թիվը, այնուհետև՝ ըստ անհրաժեշտության ներկայացվում են հարկատուների տրամադրության տակ գտնվող ունեցվածքը (պարտեզ, այգի և այլն) և վերջում անցում է կատարվում հարկատեսակների թվարկմանը (օսմանյան դրամական միավորի արժեքներով)՝ նշվելով նաև ընդհանուր հարկաչափը:

Ատենախոսությունը ժամանակագրորեն ընդգրկում է XVI և XVIII դարերը: Ժամանակագրության ընտրությունը պայմանավորված է նրանով, որ Օսմանյան կայսրությունը, նվաճելով Արևելյան Հայաստանը, միայն վերոնշյալ երկու դարաշրջանում է անցկացրել

[3] Չոբանյան Պ., Հայաստանի պատմության օսմանյան սկզբնաղբյուրների շուրջ, Բանբեր Հայագիտության, Երևան, թիվ 1, 2017, էջ 209:

Երևանի (Ռևանի[4]) *վիլայեթի* աշխարհագիր մատյանների գրանցում: Հետևաբար մեծարժեք է այդ երկու հարկամատյանների լուսաբանումն ու համեմատական քննությունը: Ատենախոսության հետազոտության համար նյութ են կազմել 1590 թ. Երևանի *վիլայեթի*[5] և 1728 թ. Երևանի *լիվայի*[6] աշխարհագիր մատյանները: Հատկանշական է, որ ի տարբերություն XVI դարի, օսմանյան իշխանությունները XVIII դարում Երևանի *վիլայեթը* չեն ընդգրկել մեկ ամբողջական մատյանում, ուստի այդ շրջանում Երևանի *վիլայեթն* ամբողջացնող մյուս վարչական միավորը՝ Նախիջևանի *լիվան*, ընդգրկվել է առանձին մատյանում[7]: Հաշվի առնելով այդ հանգամանքը և ծավալները, 1728 թ. Նախիջևանի *լիվայի* ուսումնասիրությունը ներառված չէ սույն ատենախոսությունում:

Վերոնշյալ աշխարհագրերից բացի, ատենախոսության հիմքում ընկած է նաև մեր ձեռքի տակ եղած հայկական այն շրջանի օսմանյան ընդարձակ հարկացուցակների քննությունը, որոնց թվում էին՝ 1728 թ. Թիֆլիսի *վիլայեթի* մաս կազմող Աշոցքի, Տաշիրի և Փամբակի *նահիեները*[8], որոնք գտնվել են Երևանի լիվային հարակից հյուսիսային մասում: Դրանց աշխարհագրերի քննությունը և համեմատությունը նույն թվականի Երևանի *լիվայի* մատյանի միջև, ավելի ամբողջական տեսք են հաղորդում մասնավորապես օսմանյան աշխարհագրերի անցկացման ուսումնասիրությանը, ինչի շնորհիվ պարզ են դառնում կենտրոնական իշխանությունների հարկային քաղաքականության առանձնահատկությունները:

Ատենախոսությունում բացի նշյալ երկու դարաշրջաններին վերաբերող օսմանյան ընդարձակ հարկացուցակների քննությունից, տեղ են գտել այդ ժամանակահատվածներում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները: Դրանց հիմնական նպատակն է՝ ավելի պատկերավոր դարձնել այն իրադրությունը, որի

---

[4] Օսմանյան հարկամատյաններում Երևանը արձանագրվել է՝ Ռևան: Այսուհետև՝ Երևան:

[5] T.C. Başbakanlık Osmanlı Arşivi, TT_d, sıra nu: 0633, Tapu Tahrir Defteri (այսուհետև՝ BOA, 0633).

[6] T.C. Başbakanlık Osmanlı Arşivi, TT_d, sıra nu: 0901, Tapu Tahrir Defteri (այսուհետև՝ BOA, 0901).

[7] T.C. Başbakanlık Osmanlı Arşivi, TT_d, sıra nu: 0905, Tapu Tahrir Defteri.

[8] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი. ოსმალური ტექსტი ქართული თარგმანით, შესავლით, გამოკვლევითა და ფაქსიმილეებით გამოსაცემად მოამზადეს სერგი ჯიქიამ და ნოდარ შენგელიამ. წიგნი 1, 2, თბილისი: 2009-2010 (այսուհետև՝ 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი).

պայմաններում օսմանյան իշխանությունները գրի են առել հիշյալ ընդարձակ հարկացուցակները:

Օսմանյան հարկամատյաններում ամբողջ բնակչությունը չի գրանցվել[9], այլ միայն՝ չափահաս տղամարդիկ: Դա վերաբերում է թե՛ մահմեդականներին, թե՛ ոչ մահմեդականներին[10]: Այլակրոն հարկատուների անձնանունները, որոնք խնդրո առարկա աշխարհագրերում հիշյալ գրությամբ տարանջատվել են մահմեդական անձնանուններից, գերազանցապես հայկական էին, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ նրանք հայազգի էին, քանի որ հարկամատյաններում անձնանունների ուսումնասիրությունը էթնիկ պատկանելությունը որոշելու միակ եղանակն է: Ոչ մահմեդականների շրջանում չպետք է բացառել օրինակ՝ եզդիների, ասորիների ներկայությունը, սակայն նրանց հնարավոր քիչ քանակը չի կարող էական ազդեցություն թողնել ժողովրդագրական ընդհանուր պատկերի վրա: Այսպիսով, ոչ մահմեդականների շրջանում ընդունելով հայերի բացարձակ մեծամասնություն կազմելու փաստը, այնուամենայնիվ, շարադրանքում ժողովրդագրական տվյալները ներկայացնելիս օգտագործել ենք քրիստոնյա և մահմեդական եզրույթները: Առաջին եզրույթի ընտրությունը պայմանավորված է նաև նրանով, որ ոչ բոլոր հայերը կարող էին լինել հայ առաքելական եկեղեցու հետևորդ, այլ հնարավոր է՝ ներկայացրել են օրինակ՝ կաթոլիկ եկեղեցին:

Աշխարհագիր ընդարձակ մատյաններում բացակայում է ոչ մահմեդական բնակչությունից գանձվող *ջիզիեի*՝ գլխահարկի տուրքը: Օսմանյան իշխանավորները այն առանձին մատյաններում են գրանցել, որը հատուկ ուղղվել է պետական գանձարան:

Այսպիսով, ատենախոսության առանցքը կազմել են 1590 թ. Երևանի վիլայեթի, 1728 թ. Երևանի *լիվայի*, ինչպես նաև՝ Թիֆլիսի *վիլայեթին* պատկանող Աշոցքի, Տաշիրի, Փամբակի *նահիեների* հարկացուցակների քննությունը, որտեղ մեծ է համեմատական մեթոդիկայի նշանակությունը: Մասնավորապես 1590 թ. Երևանի

[9] Venzke L., M., The Ottoman Tahrir Defterleri and Agricultural Productivity, The Journal of Ottoman Studies, XVII, İstanbul, 1997, s. 6.

[10] Խնդրո առարկա հարկամատյաններում լայնորեն օգտագործվել է «كبران»-«քաբրան» եզրույթը, որը նշանակել է անհավատ և վերաբերել է բոլոր ոչ մահմեդական՝ այլակրոն բնակչությանը:

*վիլայեթի* հարկամատյանը համեմատվել է 1728 թ. Երևանի *լիվայի*, իսկ վերջինս էլ՝ այդ նույն ժամանակահատվածի՝ Թիֆլիսի *վիլայեթի* մաս կազմող հայկական 3 *նահիեի* տեղեկությունների հետ: Հատկանշական է, որ բացառությամբ որոշ հարցերի, դրանց բոլորի ուսումնասիրության համատեքստում, հետապնդել ենք գրեթե նույն նպատակները.

- Պարզել հարկամատյաններում տեղ գտած վարչա-քաղաքական միավորները:
- Ճշտել գյուղանունները և պարզել, թե դրանցից քանիսն էին չբնակեցված (դատարկված):
- Վերհանել ժողովրդագրական պատկերը՝ հնարավորինս համադրելով այլ հեղինակների տեղեկությունների հետ:
- Անդրադառնալ 1590 և 1728 թթ. հայ հոգևորականների և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վերաբերյալ Օսմանյան կայսրության տեղեկություններին:
- Քննվող հարկամատյաններում բացահայտել հնարավոր քրդական աշիրեթների (հանրույթների) գոյությունը:
- Համակողմանի կերպով քննել օսմանյան իշխանությունների սահմանած հարկերը և նրանց դիմաց արձանագրված հարկադրույքները:
- Մատնացույց անել օսմանյան աշխարհագրի անցկացմանն առնչվող ուշագրավ օրինաչափություններ:
- Անցկացնել խնդրո առարկա օսմանյան հարկամատյանների միջև համեմատություն:

Հատկանշական է, որ հետազոտվող սկզբնաղբյուրները առ այսօր հայագիտական հետազոտություններում առանձին ուսումնասիրության առարկա չեն դարձել և Արևելյան Հայաստանի XVI և XVIII դարերի պատմության համար բացառիկ նշանակություն ունեցող վավերագիտական նյութեր են: Դրանց շնորհիվ հնարավոր է վերհանել մասնավորապես ողջ բնակչության մոտավոր թիվը, պարզել մահմեդական և քրիստոնյա ընտանիքների քանակը, բնակչության տնտեսական զբաղվածությունը և տեղեկանալ հարկատուներից օսմանյան իշխանավորների սահմանած տուրքերին՝ իրենց դրամական արժեքներով: Հնարավոր է ճշգրիտ պարզել բոլոր

այն քրդական աշիրեթների գոյությունը, որոնք բնակվել են Երևանի վիլայեթի մաս կազմող շրջաններում: Կարևորություն են ներկայացնում հետազոտության առարկա հարկացուցակները կազմելու գործում օսմանյան իշխանությունների գրանցած միտումներն ու օրինաչափությունները: Հարկամատյանների տեղեկությունների շնորհիվ առաջին անգամ շրջանառության մեջ է դրվում նաև XVI և XVIII դարերում Օսմանյան կայսրության կողմից Արևելյան Հայաստանի նվաճմամբ սկիզբ դրված վարչա-քաղաքական միավորների ուսումնասիրությունը: Բացի այդ, բացարձակ նորույթ են հայ եկեղեցականներին և հատկապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին շնորհված օսմանյան իրավունքների լուսաբանումը:

Ատենախոսության շարադրմանը նպաստել է օգտագործված սկզբնաղբյուրների և տարաբնույթ մասնագիտական գրականության ուսումնասիրությունը, որոնք վերաբերում են սույն ատենախոսության հիմքում ընկած հարկամատյանների քննությանը:

Ատենախոսության համար արժեքավոր է ադրբեջանցի հեղինակներ Զիա Բունիաթովի և Հուսամադդին Մամմադովի (Քարամանլը) կազմած 1728 թ. Երևանի *վիլայեթի* համառոտ հարկամատյանի ուսումնասիրությունը[11]: Աշխատանքի ներածական մասում անդրադարձ է կատարվում նաև 1590 թ. Երևանի *վիլայեթին*, որտեղ 1728 թ. օրինակով հիմնականում արծարծվում են՝ վարչա-քաղաքական բաժանումները, ժողովրդագրական տվյալները և ընդհանուր հարկադրույքների մասին տեղեկությունները: Ներկայացված է նաև՝ ընդհանուր գյուղերի քանակը: Հիշյալ աշխատանքը, որը մեզ հետաքրքրել է գլխավորապես ժողովրդագրական պատկերի ուսումնասիրության տեսանկյունից, տվյալների վերանայման կարիք ունի: Ճշգրիտ չեն հատկապես 1590 թ. Երևանի *վիլայեթի* հարկամատյանում արձանագրված հարկատուների, ընտանիքների, ինչպես նաև՝ գյուղերի ընդհանուր թիվը: Այնուամենայնիվ, աշխատանքում նշված է *վիլայեթում*՝ քրիստոնյաների մեծամասնություն կազմելու փաստը, որի տվյալները մոտեն մեր ստացած տեղեկություններին: Վերանայման

[11] İrəvan əyalətinin icmal dəftəri. Araşdırma, tərcümə, qeyd ve əlavələrin müəllifləri Ziya Bünyadov Hüsaməddin Məmmədov (Qaramanlı), Rəssamı: Hüsaməddin Məmmədov (Qaramanlı) Bakı, 1996 (այսուհետև՝ İrəvan əyalətinin icmal dəftəri).

կարիք ունեն նաև 1728 թ. Երևան քաղաքի ժողովրդագրական պատկերի ուսումնասիրությունը, քանի որ ստացված արդյունքները չեն համապատասխանում հարկամատյանի տվյալներին: Հարկ է նշել, որ աշխատանքում եղած անճշտությունները դժվար է պայմանավորել փաստերը միտումնավոր խեղաթյուրելու գործոնով, այլ ավելի շատ հակված ենք կարծել, որ դրանք անփութության հետևանք են:

Հետաքրքրություն է ներկայացնում մեկ այլ ադրբեջանցի հեղինակ Մեհմեդ Իսլամօղլուի աշխատանքը, որը վերաբերում է 1590 թ. Երևանի *վիլայեթի* Օրդուբադի *քազայի*[12]: Այդ աշխատանքում կարևորել ենք Օրդուբադ քաղաքի ժողովրդագրական տվյալների ուսումնասիրությունը, որտեղ հեղինակի ներկայացրած տվյալները զերծ չեն սխալներից: Ամենամեծ թերությունն այն է, որ պատմաբան Իսլամօղլուն բաց է թողել քաղաքի ամենաշատ հարկատուներով աչքի ընկած թաղը, ուստի իր ներկայացրած արդյունքները չեն կարող համապատասխանել իրականությանը: Հարկ է նկատել, որ հեղինակի այդ անճշտությունը դիտավորություն չի կարելի համարել առնվազն այն պատճառով, որ չհաշվառված թաղը մահմեդաբնակ էր:

Ժողովրդագրական տվյալների ուսումնասիրության տեսանկյունից ուշագրավ է նաև թուրք գիտնական Հասան Բաբաջանի ղեկավարությամբ գրված Հաքան Քարագյոզի մագիստրոսական աշխատանքը, որը վերաբերում է 1590 թ. Նախիջևանի *քազայի*[13]: Աշխատանքում մեծ տեղ է հատկացված ժողովրդագրական տվյալներին, ինչը կարևոր է հատկապես Նախիջևան քաղաքի մարդահամարի ուսումնասիրության համար: Հարկ է նշել, որ այդ աշխատանքը վստահելի չէ, քանի որ փորձ է կատարվել ուռճացնել մահմեդականների թիվը, ինչը, անշուշտ, բացասական է ազդել քրիստոնյա և մահմեդական բնակչության քանակի հարաբերակցության վրա:

[12] İslamoğlu M. A., 1590 Tarihli Mufassal Tapu Tahrir Defterine Göre Revan Eyaletinde Alınan Vergiler (Ordubad Kazası orneği), Cappadocia Journal of History and Social Sciences, volume 4, 2014.
[13] Karagöz H., 1590 Tahririne Göre Nahçivan Kazası, Yüksek Lisans Tezi, İsparta, 2001.

Ատենախոսության շարադրման համար մեծարժեք է Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատությունը[14], որը մեծ նշանակություն ունի օսմանյան հարկացուցակներում վկայված այն տեղեկությունների հետ համեմատության տեսանկյունից, որոնք վերաբերում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը իր աշխատանքում չի անդրադարձել 1590 թ. օսմանյան իշխանությունների կողմից եկեղեցու կարգավիճակի հարցին, ուստի, հատուկ ուշադրություն ենք դարձրել 1728 թ. Էջմիածնի իրավունքներին: Կարևոր են Մայր Աթոռին պատկանող վանքերի թվի, անասունների քանակի, հողատարածությունների և այլ ունեցվածքի վերաբերյալ կաթողիկոսի արձանագրումները և դրանց համեմատությունը օսմանյան հարկամատյանի հետ: Իրենց արժեքով բավականին ուշագրավ են նաև այն տվյալները, որոնք, ի տարբերություն 1728 թ. օսմանյան հարկամատյանի, տեղ չեն գտել «Ջամբռ»-ի էջերում:

Փորձել ենք վերհանել 1728 թ. Էջմիածնին պատկանող գյուղերի թիվը: Այդ համատեքստում մեզ օգնել են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի[15] Կաթողիկոսական դիվանում[16] պահվող այն բոլոր վավերագիտական նյութերը, որոնք առնչվում են հատկապես 1725[17], 1726[18], 1727[19] թվականներին գյուղերի նկատմամբ Մայր Աթոռի ունեցած սեփականության իրավունքներին: Դրանք անգնահատելի սկզբնաղբյուրներ են, որտեղ տարի առ տարի շարադրվել են եկեղեցապատկան բնակավայրերի թիվը: Այդ նյութերի շնորհիվ կարելի է հետևություններ անել 3 տարվա ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների շուրջ: Դժբախտաբար, չեն հանդիպում նմանօրինակ վավերագիտական նյութեր 1590 թ. եկեղեցու ունեցվածքի վերաբերյալ, քանզի մեզ մնում է բավարարվել միայն այդ նույն թվականի Երևանի *վիլայեթի* հարկամատյանի շատ սուղ

[14] Ջամբռ. գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն: Համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմէօնէ ցաւահար եւ ի վշտակոծ կաթուղիկոսէ երեւանցւոյ: ի Վաղարշապատ, 1873 (այսուհետև՝ Ջամբռ):
[15] Այսուհետև՝ Մատենադարան:
[16] Այսուհետև՝ Կ/դ:
[17] Մատենադարան, Կ/դ, թղթ. 1գ, վավ. 316:
[18] Մատենադարան, Կ/դ, թղթ. 1գ, վավ. 306:
[19] Մատենադարան, Կ/դ, թղթ. 1գ, վավ. 314:

տեղեկություններով, որոնք հիմնականում առնչվում են հոգևորականների իրավունքներին:

Հատկանշական է, որ պատմաբան Հակոբ Փափազյանը Վաղարշապատին նվիրված իր աշխատանքում[20] օգտվել է հատկապես 1725 թ. վերոնշյալ վավերագրից, այնինչ 1728 թվականը ներկայացված է գլխավորապես միայն հարկերի ուսումնասիրության տեսանկյունից, հետևաբար՝ անդրադարձ չի կատարվել այդ նույն թվականի և նախորդ 2 տարիների եկեղեցու իրավունքներին:

Ատենախուսության շարադրման գործում նշանակալի է հարկերի լուսաբանումը, որը նպաստում է ոչ միայն Օսմանյան կայսրությունում տարածված հարկային համակարգի համապարփակ ըմբռնմանը, այլ նաև ավելի առարկայական է դարձնում դրանց գործածվածությունն Արևելյան Հայաստանում: Այդ առնչությամբ օգտվել ենք տարաբնույթ մասնագիտական գրականությունից, որոնց շրջանում առանձնանում են Արամ Սաֆրաստյանի և Մանվել Զուլալյանի[21], Հալիլ Ինալջըքի[22], Սադըք Բիլգեի[23], Վալտեր Հինցի[24], Վլադիմիր Ջանևի[25], Յավուզ Էրջանի[26], Ունալ Թաշքընի[27], Նեշեթ Չաղաթայի[28], Սութ Յլդըզի[29] և Հավվա Քանգյուլի[30] աշխատանքները: Հարկերի ուսումնասիրության համատեքստում մեծապես օգտվել ենք նաև Մատենադարանի պարսկերեն հրովարտակների առաջին[31],

---

[20] Փափազյան Հ., Վաղարշապատգյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, Բանբեր Մատենադարանի, Երևան, թիվ 5, 1960:

[21] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI- XVII դդ. Կանուններ), թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Զուլալյանի, Երևան, 1964 (այսուհետև՝ Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում):

[22] İnalcık H., Osmanlılar'da Raiyyet Rüsumu, Türk Tarih Kurumu, Belleten, Ankara, cilt: XXIII, sayı: 92, 1959.

[23] Bilge S. M., Osmanlı Çağında Kafkasya 1454-1829 (Tarih-Toplum-Ekonomi), Istanbul, 2012.

[24] Hinz W., İslam'da Ölçü Sistemleri, Çeviren: Sevim A., İstanbul, 1990.

[25] Janev V., The Jews in Macedonia XV- XVII (century), Skopje. 2011.

[26] Ercan Y. Osmanlı İmparatorluğu'nda Gayrimüslimlerin Ödedikleri Vergiler ve Bu Vergilerin Doğurduğu Sosyal Sonuçlar, Türk Tarih Kurumu, Belleten, Ankara, cilt: LV, sayı: 213, 1991.

[27] Taşkın, Ü. Rüsüm-i Örfiye, Tarih Okulu, İzmir, sayı: XIV, 2013.

[28] Çağatay N., Osmanlı İmparatorluğunda Reayadan Alınan Vergi ve Resimler, Dil Tarih Coğrafya Fakültesi Dergisi, Ankara, cilt 5, sayı 5, 1947.

[29] Yıldız S. (H.984) 1576-1577 Tarihli Timar Ruznamçe Defterinde Göre Karaman Eyaleti, Yüksek Lisans Tezi, Konya, 2010.

[30] Kangül H., 16 Yüzyıl Son Çeyreğinde Osmanlı Devleti Gürcistan Eyaletinin idari ve Nüfüs Yapısı, Yüksek Lisans Tezi, Aydın, 2016.

[31] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, հրովարտակներ, պրակ առաջին (ԺԵ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյանը, Երևան, 1956, (այսուհետև՝ հրովարտակներ, պրակ առաջին):

երրորդ[32], չորրորդ[33] պրակներից: Վերջինների տեղեկությունները, թեպետ վերաբերում են Սեֆյան Իրանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանին, այնուամենայնիվ, մեր կողմից վերհանած հարկերը լիովին համապատասխանում են օսմանյան շրջանի հարկատեսակների նշանակությանը:

Հարկ է նշել, որ ատենախոսությունում օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից հետո կազմվել է բառարան, որտեղ ներառվել են խնդրո առարկա ընդարձակ հարկացուցակներում հանդիպող այն բոլոր տերմինաբանական եզրույթները, որոնք բացատրության կարիք ունեն: Ատենախոսությունում դրանք հիմնականում ներկայացրել ենք շեղատառ: Բառարանում գերակշիռ մասն կազմել հարկային և վարչա-քաղաքական եզրույթները, որոնց իմաստային պարզաբանումների համար մեծապես օգտվել ենք հարկերի քննությանը առնչվող վերոնշյալ ուսումնասիրություններից, ինչպես նաև՝ պատմաբաններ Արամ Սաֆրաստյանի[34] և Աշոտ Մելքոնյանի[35] հեղինակած աշխատություններից:

Ուշագրավ է, որ 1590 թ. Երևանի *վիլայեթի* հարկամատյանը, որը սկսվում է *քանուննամեի*՝ (օրինամատյան[36]) շարադրմամբ, ինքնին մեծարժեք է հատկապես մի շարք հարկերի կիրառական նշանակությունը որոշարկելու համար, սակայն ժամանակի օսմանյան իշխանությունները ոչ միայն չեն տվել բոլոր հարկերի մանրամասն իմաստային նշանակությունը (տրված չեն նաև վարչա-քաղաքական միավորներինը), այլ նաև՝ որոշ հարկեր հանդիպում են միայն բուն օսմանյան ընդարձակ հարկացուցակներում, ուստի

---

[32] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), կազմեց՝ Ք. Պ. Կոստիկյանը, Երևան, 2005, (այսուհետև՝ հրովարտակներ, պրակ երրորդ):

[33] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ չորրորդ (1734-1797), կազմեց՝ Ք. Պ. Կոստիկյանը, Երևան, 2008 (այսուհետև՝ հրովարտակներ, պրակ չորրորդ):

[34] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով, հատոր Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյանը, Երևան, 1961. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով, հատոր Բ, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյանը, Երևան 1964:

[35] Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003:

[36] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 5:

ավելի է մեծանում հատկապես տուրքերի և վարչա-քաղաքական միավորների նշանակությունը պարզաբանող վերոնշյալ աշխատությունների գիտական արժեքը:

Ատենախոսության համար մեծ նշանակություն է ունեցել *քանոնամեներին* առնչվող Արամ Սաֆրաստյանի և Մանվել Զուլալյանի վերոնշյալ աշխատանքը: Այն օսմանյան հարկային համակարգը նկարագրող հայերեն թարգմանված եզակի աշխատություն է, որտեղ ներկայացված են իրավական համառոտ *քանոնամեները*, որոնք առանձին *վիլայեթների* համար սահմանում են հարկերի գանձման չափերն ու սկզբունքները[37]:

Աշխատանքը հնարավորություն է տալիս համեմատության եզրեր անցկացնել՝ օրինակ Ախալցխայի հարկաչափերի միջև[38], որ առավել կհարստացնի մեր պատկերացումները Օսմանյան կայսրության հարկային համակարգի օրինաչափությունների մասին: Ախալցխայի հարկային ցուցակը, հեղինակների աշխատանքում տեղ գտած այլ շրջանների համեմատությամբ, հարկաչափերի ուսումնասիրության տեսանկյունից թերևս ընդգրկում է առավել ամբողջական տվյալներ:

Ատենախոսության համար մեծարժեք են նաև Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում հավաքված աշխարհագրական վկայությունները[39]: Բառարանի հատորների շնորհիվ անդրադարձել ենք հարկամատյաններում գրանցված վարչա-քաղաքական միավորների տեղադրման խնդրին: Հարկ է նշել, որ ատենախոսությունում պարզաբանել ենք այն շրջանների տեղադրությունը, որոնք, ըստ մեզ, ներկայացման կարիք են ունեցել:

Այսպիսով, վերոնշյալ սկզբնաղբյուրներն ու աշխատությունները կարևոր նշանակություն ունեն խնդրո առարկա օսմանյան հարկացուցակները՝ որպես Արևելյան Հայաստանի XVI և XVIII դարերի պատմական սկզբնաղբյուրների քննության և աղբյուրագիտական բացառիկ արժեքի գնահատման գործում:

---

[37] Չոբանյան Պ., նշվ., աշխ, էջ 208:
[38] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 7-8:
[39] Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Լ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 1, 2, 3, 4, 5, Երևան, 1986, 1988, 1991, 1998, 2001 (այսուհետև՝ տեղանունների բառարան):

## ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ. 1578-1590 ԹԹ. ՕՍՄԱՆԱ-ՍԵՖՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ և 1590 Թ. ԵՐԵՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԱՇԽԱՐՀԱԳԻՐԸ

### 1.1 Այսրկովկասի գրավումը Օսմանյան կայսրության կողմից

Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի մրցակցային հակամարտությունը շարունակվեց նաև 1555 թ. Ամասիայի հաշտության պայմանագրից հետո, սրվելով հատկապես Թահմասպ Առաջինի մահից հետո (1524-1576 թթ.), երբ ղզլբաշական միավորումների շրջանում սկիզբ առան քաղաքական խմորումներ[40]: Ինչպես նշում է օսմանցի պատմագիր Սելանիքի Մուստաֆան[41], Ստամբուլի կառավարական շրջանները մեծ աչալրջությամբ հետևում էին Իրանի ներքին անցուդարձին և հատուկ հրամանագրեր էին տալիս օսմանյան պետության արևելյան սահմանի կառավարիչներին, որ նրանք հնարավորինս արագ տեղեկություններ հաղորդեն Իրանի քաղաքական կյանքի մասին՝ անհրաժեշտ զգուշավորության պահպանման համար[42]:

1577 թվականից երկու պետությունների սահմանային ընդհարումները հանապազօրյա բնույթ էին ընդունել[43], իսկ 1578 թ. ծագեց նոր պատերազմ, որի հետևանքով, օսմանցիները ներխուժեցին Սեֆյան Իրան, այդ թվում նաև՝ Արևելյան Հայաստան[44]:

Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև պատերազմի թատերաբեմը նորից Այսրկովկասն էր, որտեղ սկզբնական շրջանում ընթացան համառ մարտեր: Առաջին լայնածավալ բախումը 1578 թ. օգոստոսի սկզբներին տեղի ունեցավ Չլդըրում,
ուր հաղթանակ տարան օսմանցիները[45]: Չլդըրի դաշտում տոնած հաղթանակին և շրջակաբերդերի գրավմանը հաջորդեց նույն ամսվա վերջերին Թիֆլիսի ուղղությամբ հարձակումը, որը ընթացավ առանց որևէ լուրջ խոչընդոտների, քանի որ այնտեղի իշխող Դավիթ

---

[40] Пигулевская Н. В., Якубовский А. Ю., Петрушевский И. П., Строева Л. В., Беленицкий А. М., История Ирана с древнейших времен до конца XVIII века, Ленинград, 1958, стр. 264.

[41] Այսուհետև՝ Սելանիքի:

[42] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Բ, էջ 119:

[43] Զուլալյան Մ. Կ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, քաղաքական պատմություն, Երևան, 1990, էջ 122:

[44] Հայոց պատմություն, հատոր II, միջին դարեր (IV դարի կես-XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ, միջին դարեր (IX դարի կես - XVII դարի առաջին կես), Երևան, 2014, էջ 600 (այսուհետև՝ Հայոց պատմություն):

[45] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Ա, Երևան 1961, էջ 35-36:

խանը, հասկանալով օսմանյան զորքերին դիմադրելու անհնարինությունը, բերդի հպատակների հետ ապաստանել էր դժվարանցանելի լեռներում[46]:

Այդ նույն ժամանակահատվածում օսմանցիներին հաջողվել է նաև հաղթանակի հասնել Թավրիզի Էմիր խանի նկատմամբ, որից հետո վերջինս դիմել է փախուստի[47]: Ինչպես նշվում է օսմանյան պատմագրությունում՝ Շիրվանի սունի բնակչությունը, այդ հաղթանակը բախտավորություն համարելով, կանոնավոր զինված ուժերով դիմավորել է իսլամական զորքին և շարժվել Շիրվանի կենտրոն Շամախի, որտեղ ջախջախից առավելության է հասել հակառակորդի նկատմամբ[48]:

Թեպետ Բարձր Դռան հաղթանակները օրինաչափ էին, այնուամենայնիվ, Այսրկովկասի սունի բնակչության համակրանքը նշանակալի երևույթ էր նրանց համար: Դրանով՝ օսմանցիները Սեֆյան Իրանի տիրապետության տակ գտվող շրջաններում ձեռք էին բերում դաշնակցի, ինչն ավելի էր հեշտացնում ռազմական գործողությունների ընթացքը:

Օսմանյան իշխանությունները այս պատերազմի մեջ որոշեցին ներքաշել նաև Ղրիմի թաթարներին: Վերջիններիս մասնակցությունը մեծ նշանակություն ուներ Օսմանյան կայսրության ռազմական հաջողությունների համար[49]: Սուլթանական զորքերը նվաճեցին Դաղստանը և Հյուսիսային Կովկասի միջոցով կապվեցին նրանց հետ, որից հետո ավերակ դարձրեցին Շիրվանը[50]: Օսմանյան բանակը 1578 թ. գրավելով Վրաստանի և Շիրվանի մի մասը, հաջորդ տարի գարնանը ձեռնամուխ եղավ Կարսի ամրոցի վերակառուցմանը: Մայրաքաղաք Ղազվինում գրված եվրոպական մի զեկուցագրի համաձայն՝ Սեֆյան Իրանի կառավարող շրջանները կռահում էին, որ այն արվում էր հանուն Թիֆլիսի պաշտպանության, ուստի հրաման արձակվեց աշխատանքները

---

[46] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Բ, էջ 37-38:
[47] Նույն տեղում, էջ 121:
[48] Նույն տեղում:
[49] Shaw S., History of the Ottoman Empire and Modern Turkey, Empire of the Gazis: The Rise and Decline of the Ottoman Empire, 1280-1808, volume 1, Cambridge, 1976, s. 182.
[50] Լեո, հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք առաջին, Երևան, 1969, էջ 195:

խոչընդոտելու մասին[51]: Հարկ է նշել, որ այն պսակվեց հաջողությամբ և կանխարգելեց օսմանցիների հետագա հաջողությունները: Մասնավորապես, երբ օսմանյան հրամանատար Հասան փաշան պետք է 20000 բանակով շարժվեր Թիֆլիս, Դմանիսի կիրճում անակնկալ հարձակման ենթարկվեց շահի վստահված անձանց՝ Ալի Քուլիի և Սիմոնի կողմից, որոնք ապաստանել էին մոտակալեռներում[52]:

Ըստ եվրոպական մեկ այլ զեկուցագրի՝ թեպետ օսմանցիներին հաջողվեց գրավել մի շարք շրջաններ, սակայն ինչպես Վրաստանում, այնպես էլ Ծիրվանում նրանք ունեցան մարդկային կորուստներ: Բացի այդ, սուլթանական զորքերի գրաված շրջանների մի կարևոր հատվածը վերանվաճվեց իրանցիների կողմից: Նշվում է նաև, որ օսմանյան բանակում այդ ժամանակահատվածում համաճարակ էր տարածված, որին զոհ դարձան ավելի քան 70000 զինվոր[53]: Անխոս, նման իրադարձությունների ընթացքը օսմանյան բանակին հասցված ծանր հարված էր, որը հարաբերակնորեն հավասարակշռություն էր մտցնում ռազմական գործողություններում:

Այնուամենայնիվ, այդ բոլոր դժվարությունները չխանգարեցին Օսմանյան կայսրությանը՝ նախաձեռնել հետագա տարածքների նվաճման քայլեր: Սելանիքիի վկայությամբ՝ Կարսի վերակառուցման ավարտելուց հետո 30000 հեծելազորով օսմանցի հրամանատար Ջաֆեր փաշան[54] արշավեց Երևան[55]: Սակայն Թոքմաք խանը, նախօրոք տեղեկանալով այդ արշավանքի մասին, 1579 թ. հոկտեմբերի 7-ին քաղաքը կողոպտում և թալանում է, որից հետո միայն՝ փախուստի դիմում[56]:

Օսմանցիների 1579 թ. արշավանքը Երևան, ավելի շատ հետապնդում էր ավարառության, քան բուն տարածքի նվաճման նպատակ: Շատ հավանական է, որ այն պայմանավորված էր պատերազմական գործողությունների անկայուն ընթացքով, և

[51] Զուլալյան Մ. Կ., նշվ., աշխ., էջ 125:
[52] Նույն տեղում, էջ 126:
[53] Նույն տեղում:
[54] Խոսքը Մուստաֆա Լալա փաշայի մասին է, ով հայտնի է եղել նաև՝ Ջաֆեր փաշա անվամբ:
[55] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Բ, էջ 271:
[56] Նույն տեղում, էջ 124:

օսմանյան հրամանատարությանը պետք էր ինչ-որ չափով փոխհատուցել կորուստները:

Օսմանցի պատմագիր Փեչևին նշում է, որ քաղաքն ու երկիրն այս անգամ Ջաֆեր փաշայի կողմից ավերվելուց ու թալանվելուց հետո, 20000-ից ավելի կանայք և երեխաներ գերի են տարվել, ինչից հետո իսլամական բանակը մեծ խանդավառությամբ վերադարձել է կայսերական բանակատեղ[57]:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ գերիների թիվը հայկական աղբյուրներում տարբերվում է օսմանյան տարեգրությունից: Այսպես օրինակ՝ ըստ Հովհաննիսիկ Ծարեցու ժամանակագրության, Լալա փաշան, բազում զորքով արշավելով Արարատյան երկիր, գերել է ընդհանուր 60000 մարդ[58]: Գերիների թիվը 60000-ի է հասնում նաև Երզրում գավառի Սալաձոր գյուղի Առաքել սարկավագի վկայությամբ[59]: Սակայն մեկ այլ ժամանակակցի՝ Դավիթ Բաղիշեցու տեղեկություններով, գերիների թիվը կազմել է 30000 մարդ[60]:

Երևան կատարած օսմանյան արշավանքի համատեքստում կարևոր է նաև դեպքերի ժամանակակից և ականատես ոմն Հովհաննեսի ողբը[61]: Ականատեսը պատմում է բնակիչների գերևարմանը, կոտորածներին վերաբերող մանրամասնություններ և այլն: Մասնավորապես կարևոր են այն տեղեկությունները, որոնք վերաբերում են քաղաքի գրավման ստույգ տարեթվին և այն փաստին, որ օսմանցիները մինչև քաղաք մտնելը բանակ էին դրել Նորագեղում:

Հեղինակը, որպես արշավանքի տարեթիվ, հիշատակում է 1028 թ. հրոտամսվա 12-ը (օրը՝ երկուշաբթի)[62], որը համապատասխանում է 1579 թ. նոյեմբերի սկզբներին: Արդյունքում, եթե այս տեղեկությունը համադրենք Սելանիքիի վերոնշյալ վկայությանը, ապա կարելի է փաստել, որ օսմանյան բանակը Երևան է արշավել Թոքմաք խանի կատարած կողոպուտից մոտ 1 ամիս հետո:

---

[57] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Ա, էջ 46-47:
[58] Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հատոր II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյանը, Երևան, 1956, էջ 241 (այսուհետև՝ մանր ժամանակագրություններ, հատոր II):
[59] Լեո, նշվ., աշխ., էջ 195
[60] Մանր ժամանակագրություններ, հատոր II, էջ 355:
[61] Ալիշան Ղ., Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 300-301:
[62] Նույն տեղում, էջ 301:

Պատերազմի ընթացքը չէր գոհացնում Օսմանյան կայսրությանը, ինչը ստիպեց Մուրադ Երրորդ սուլթանին (1574-1595 թթ.)՝ հեռացնել Մուստաֆա փաշային գլխավոր հրամանատարի պաշտոնից, որին փոխարինեց Սինան փաշան[63]: Հակառակ այլ տրամադրություններ էր տիրում Սեֆյան Իրանում, որի վերնախավը, խուսափելով հետագա ռազմական գործողություններից, փորձում էր հաշտության եզրեր գտնել օսմանցիների հետ: Այդ էր վկայում 1580-1581 թթ. շահի ներկայացուցիչ Մախուդ Սուլթանի հաշտության առաջարկը հակառակորդ կողմին, որը մերժվեց Բարձր Դռան կողմից[64]:

Օսմանյան կայսրության նոր գլխավոր հրամանատարը շոշափելի հաջողությունների չհասավ, ինչը նոր դժգոհության տեղիք տվեց կենտրոնական կառավարության շրջանում: Սինան փաշան Կարսից շարժվեց Թիֆլիս՝ նպատակադրվելով Դմանիսի կիրճում ամրոց կառուցել[65]: Դրանով փորձ էր արվում ամուր հենարան ստեղծել Թիֆլիս տանող ճանապարհին: Սակայն իմանալով, որ մեծաքանակ շահական բանակը շարժվում է Թիֆլիսի ուղղությամբ, փաշան տեղափոխվում է Արդահան և Չլդըր[66]՝ խույս տալով հակառակորդից:

1582 թ. օսմանյան բանակը նորից ձեռնարկեց արշավանք՝ շարժվելով Կարս և Ախալքալաք, սակայն Գորիի մոտ տեղի ունեցած ճակատամարտում օսմանցիները պարտություն կրեցին վրացական և իրանական ուժերից[67]: Այդ պարտությունը վտանգում էր օսմանյան զորքերի դիրքերը Այսրկովկասում:

Դեպքերի նման զարգացման հետևանքով այս անգամ Սինան փաշան հեռացվեց պաշտոնից՝ զիջելով իր տեղը Ֆարհադ փաշային: Վերջինս ջանք չխնայեց՝ բեկում մտցնել ռազմական գործողություններում, ինչը մասամբ նրան հաջողվեց: Մասնավորապես 1583 թ. նա արշավեց Երևան և Թոքմաք խանի պալատի շրջակայքում կառուցեց լայն և ամրակուռ պարիսպ[68]: Այս գրավումից հետո, ղզլբաշական

---

[63] Զուլալյան Մ. Կ., նշվ., աշխ., էջ 127:
[64] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Բ, էջ 124, 272:
[65] Զուլալյան Մ. Կ., նշվ., աշխ., էջ 128:
[66] Նույն տեղում:
[67] Նույն տեղում:
[68] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Ա, էջ 51:

միավորումները ստիպված եղան թողնել նաև Ծիրվանը, ինչի հետևանքով օսմանցիները տիրացան նաև այդ շրջանին[69]:

Հատկանշական է, որ Երևանի բերդի գրավումը թվագրվում է նաև այլ տարեթվերով, սակայն, մասնավորապես Հովհաննիսիկ Ծարեցու[70] և օսմանյան աղբյուրների վկայությունները[71] համապատասխանում են 1583 թվականին: Ինչ վերաբերում է այլ տվյալներին, ապա մի Ավետարանի հիշատակարանի համաձայն, օսմանցիները 300000 հեծելազորով 1584 թ. արշավել են Երևան և կառուցել՝ մի մեծ բերդ, իսկ բնակչությանը քշել՝ մինչև Գանձակ[72]: Երևանի գրավման համատեքստում 1584 թվականը կարելի է հանդիպել նաև XVIII դարի մի անանուն ժամանակագրի տեղեկություններում[73], իսկ վարդապետ Բարսեղ Վարագեցու մի հիշատակարանում Երևանի արշավանքը վերագրված է 1581 թվականին.[74]: Այնուամենայնիվ, ըստ պատմաբան Թաթիկ Հակոբյանի, արշավանքի սկիզբը պետք է համարել 1583 թվականը և բոլոր այլ տարեթվերը արժանահավատչեն[75]:

Հարկ է նկատել, որ Երևանի գրավումը նոր ազդակ հաղորդեց օսմանցիներին, որոնց հարձակումները չդադարեցին նաև հետագա տարիներին: 1584 թ. Օսման փաշան Կարսի և Չլդրի վրայով շարժվեց Չալդրան, այնուհետև անցնելով Խոյը, Մարանդը՝ մոտեցավ Թավրիզին, որտեղ սեպտեմբեր ամսին տեղի ունեցած ճակատամարտում օսմանցիները առավելության հասան հակառակորդի նկատմամբ՝ կողոպուտի և կոտորածի մատնելով բնակչությանը[76]: Սակայն դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ Թավրիզի համար պայքարը բավականաչափ համառ ստացվեց: Հաղթանակից հետո Սեֆյան Իրանի զինվորները հակահարձակման անցան՝ սպանելով 30000 օսմանցիների[77]: Այնուամենայնիվ, իրանցիների այդ

---

[69] Рахмани А. А., “Тарих-и алам арай-и Аббаси” как источник по истории Азербайджана, Баку, 1960, с. 72.
[70] Մանր ժամանակագրություններ, հատոր II, էջ 244:
[71] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Ա, էջ 51, հատոր Բ, էջ 13:
[72] Մանր ժամանակագրություններ, հատոր II, էջ 252:
[73] Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հատոր I, կազմեց Վ. Ա. Հակոբյանը, Երևան, 1951, էջ 324:
[74] Դիվան հայոց պատմության, գիրք Ժ, մանր մատենագիրք, ԺԵ-ԺԹ դար, կենսագրական տեղեկութիւններով և ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ-Աղանեանց Ա. քահ., Թիֆլիս, 1912 թ. էջ 36-37:
[75] Հակոբյան Թ., Խ., Երևանի պատմությունը 1500-1800, Երևան, 1971, էջ 17:
[76] Ղուլալյան Մ. Կ., նշվ., աշխ., էջ 130:
[77] Ղուլալյան Մ. Կ., նշվ., աշխ., էջ 130-131:

հաջողությունը երկար չի տևում և ըստ Փեչևիի, օսմանցիները, 1585 թ. գրավելով Թավրիզը, կոտորեցին բնակչությանը[78]:

Հեղինակը բավական ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Թավրիզում տեղի ունեցած հետագա զարգացումների մասին: Մասնավորապես նշում է, որ գրավումից հետո օսմանցիները ձեռնամուխ են եղել վերակառուցողական աշխատանքներին՝ շրջակայքի ժողովրդին բնակեցնելով այնտեղ: Նշվում է, որ գրանցվել են շուրջ 80000 ընտանիք և այդչափ էլ վերաբնակեցվել են հաշվառումից հետո: Սակայն, շուտով Թավրիզում մնացած կայազորը ենթարկվել է իրանցիների հարձակմանը: Պաշարվածներին օգնության է հասել Ֆարհադ փաշան, ով զորամասեր է ուղարկել՝ ղզլբաշներին կողոպտելու և կոտորելու համար[79]:

Օսմանյան բանակը 1585 թ. գրավում է նաև Լոռիի և Գորիի բերդերը, այնուհետև հաջողության հասնում՝ նաև Թիֆլիսում, որտեղ տեղի Ալեքսանդր խանից վերցրել են պարտադրված տուրքը, որը կազմել է 30 բեռ մետաքս, մի քանի երիտասարդ տղա և գեղեցիկ աղջիկներ, ինչպես նաև՝ մի քանի վայրի բազե և այլն[80]: Թեպետ վրացական զինված խմբերին հաջողվում է 1586 թ. հավաքել ուժերը և ապրիլին հետգրավել Լոռու բերդը[81], սակայն այդ հաղթանակը խիստ ժամանակավոր էր: Բարձր Դռանը հաջողվում է աստիճանաբար Վրաստանի *վիլայեթում* ամրապնդվել և տարբեր հատվածներում՝ մասնավորապես Թիֆլիսում, Գորիում, ձեռնամուխ լինել բերդերի շինարարական և ամրացման գործընթացին[82]:

Արևելքի երկու հզոր հարևանների պատերազմը շարունակվում էր օսմանցիների առավելությամբ: Բախումների ընթացքում բնակավայրերի ոչնչացումը մեծ չափերի էր հասնում[83]: Օսմանյան զորքերը ավերակների վերածեցին Ղարաբաղը, Մուղանը,

---

[78] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Ա, էջ 53:
[79] Նույն տեղում, էջ 53-54:
[80] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Ա, էջ 52-53:
[81] Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ. առաջաբանով, ներածություններով և ծանոթագրություններով Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., հատոր Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Երևան, 1955, էջ 18:
[82] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Բ, էջ 130:
[83] Մանր ժամանակագրություններ, հատոր II, էջ 246:

Ատրպատականը, Արարատյան երկրի մեծ մասը, Գանձակի շրջանը և այլ շրջաններ[84]: Օսմանցիները, վերջնականապես կոտրելով Սեֆյան Իրանի դիմադրությունը, 1588 թ. կարողանում են իրենց դիրքերը հաստատել ողջ Այսրկովկասում՝ իրանական Ատրպատականով հանդերձ[85]:

Շահ Խոդաբանդային փոխարինած Շահ Աբբասի (1587-1629 թթ.) կառավարման առաջին տարիները լուրջ փորձություն էին երկրի համար: Օսմանյան կայսրության հաղթանակները ռազմի դաշտում ծանր կացության մեջ էին դրել Սեֆյան Իրանին՝ հանգեցնելով ճգնաժամային իրավիճակի: Բացի այդ, երկրում ծայր էին առել շամլու, ռումլու, ուսթաջլու, զուլքադար և թուրքմենական ցեղերի առաջնորդների հուժկու ապստամբություններ, որոնք դրդեցին նորաթուխ շահին հաշտություն խնդրել Օսմանյան կայսրությունից[86]: Ըստ Սելանիքիի՝ Ստամբուլում հաշտության բանակցություններ վարելու համար Սեֆյան Իրանի շքախմբում էր նաև թագաժառանգ Հայդար Միրզան, ով ուղարկվել էր իբրև պատանդ[87]: Արդյունքում 1590 թ. մարտի 21-ին Կոստանդնուպոլսում արևելյան երկու պետությունների միջև կնքվեց հաշտության նոր պայմանագիր, ըստորի՝ Օսմանյան տիրապետության տակ էր անցնում Այսրկովկասը և Ատրպատականը՝ Թավրիզի հետ միասին[88]: Այսպիսով, գրեթե 12 տարի շարունակվող պատերազմում Օսմանյան կայսրությանը հաջողվեց վստահորեն առավելության հասնել Սեֆյան Իրանի նկատմամբ և իրականացնել ողջ Այսրկովկասի գրավումը:

Այնուամենայնիվ, ինչպես ցույց տվեցին հետագա քաղաքական զարգացումները, Օսմանյան կայսրության հաղթանակը երկար չտևեց: Կոստանդնուպոլսի հաշտության պայմանագիրը հարմար առիթ էր Սեֆյան Իրանի համար ժամանակ շահելու և ուժերը վերադասավորելու տեսանկյունից: Մասնավորապես մեծ աշխատանք տարվեց ներքին երկպառակությունները ճնշելու և կենտրոնամետ

---

[84] Հակոբյան Թ., Խ., նշվ., աշխ., էջ 23:
[85] Հայոց պատմություն, էջ 601:
[86] Զուլալյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI- XVIII դդ., Երևան, 1980, էջ 52:
[87] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Բ, էջ 136:
[88] Զուլալյան Մ. Կ., նշվ. աշխ., էջ 52:

քաղաքականություն վարելու ուղղությամբ, ինչը մեծապես նպաստում էր երկրում ճգնաժամի հաղթահարմանը:

Օսմանյան կայսրությունը տևական պատերազմում ձեռք բերված հաղթանակից հետո XVI դարի 90-ականներին ի դեմս ջալալիների ապստամբությունների[89], բախվեց նոր մարտահրավերի: Այդ շարժումների հետևանքով, կայսրության կյանքը կաթվածահար եղավ: Ցեղապետերի արշավանքները երկրով մեկ իսկական արհավիրք դարձան՝ հանգեցնելով նոր ավերածությունների և մասնավորապես սովի: Ըստ Գրիգոր Դարանաղցու վկայության՝ կայսրության տարբեր հատվածներում, այդ թվում նաև Երևանում անգամ մարդակերության դեպքեր են գրանցվել[90]: Իրադարձությունների այդպիսի ընթացքից պարզ է դառնում, որ XVI դարի վերջերին այս անգամ արդեն Օսմանյան կայսրությունն էր ճգնաժամի մեջ հայտնվել, ինչը հնարավորություն էր տալիս Իրանին՝ մտածել կորցրած տարածքները վերանվաճելու մասին:

### 1.2 1590թ. Երևանի վիլայեթի աշխարհագրի հատվածները

Օսմանյան կայսրությունը, տիրանալով նոր տարաշրջանների, սովորույթի համաձայն, հնարավորինս սեղմ ժամկետներում ձեռնամուխ էր լինում դրանց հանգամանալից գրանցմանը միտված քայլերին: Բացառություն չէր նաև Երևանի *վիլայեթի* 1590 թ. աշխարհագիր մատյանը[91], որը գտնվում է Թուրքիայի Հանրապետության վարչապետին կից Օսմանյան արխիվում (T.C. Başbakanlık Osmanlı Arşivi): Այն աղբյուրագիտական կարևոր արժեք է ներկայացնում, որի ուսումնասիրության շնորհիվ՝ կարելի է պարզել *վիլայեթի* վարչական կառուցվածքը, ընդհանուր բնակչության մոտավոր քանակը, էթնիկական կազմը, տնտեսական դրությունը, սահմանված հարկերը և մի շարք կարևոր այլ հարցեր:

---

[89] Զուլալյան Մ. Կ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI- XVII), Երևան, 1966:

[90] Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցիոյ կամ Դարանաղցիոյ, Երուսաղէմ, 1915, էջ 14:

[91] BOA, 0633. Բնագիր, գրված օսմանյան «سياكت»-«սիյաքաթ» տառատեսակով, 394 էջ, 52.5x20, 1, 13, 15, 22, 23, 95, 98-99, 131, 134, 137-138, 144-147, 157-164, 163, 178-179, 213, 228-231, 239, 242-243, 253, 259-263, 272-275, 319, 322-323, 325, 329, 334-337, 339, 358-359, 366, 367, 387, 394 էջերը մաքուր:

1590 թ. Երևանի *վիլայեթի* օսմանյան աշխարհագիրը սկսվում է *քանունnամեի* շարադրանքով[92], որտեղ գլխավորապես տեղ են գտել այն դրույթները, որոնք ընկած են եղել Երևանի *վիլայեթում* գործող օրենքների հիմքում[93]:

Երևանի *վիլայեթի* աշխարհագրի անքակտելի մաս կազմող *քանունnամեն* կարևոր նշանակություն ունի հարկամատյանի ուսումնասիրության համար: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր *քանունnամե* կազմվել է ըստ տվյալ վարչական միավորի առանձնահատկությունների:

Ուշագրավ է խնդրո առարկա *քանունnամեի* բովանդակությունը: Առաջաբանում կարևոր տեղ է հատկացված աստծուն՝ որպես արարչագործի: Այնուհետև անցում է կատարվում Մուրադ Երրորդին, որտեղ նա բնութագրվում է՝ աշխարհի տիրակալ և քայլերի մեջ անթերի սուլթան[94]:

Նյութը շարունակվում է բարձրաստճան հրամանատարների գովասանքով, որոնք հրոճարակ են դարձրել գրավված տարածքները: Մասնավորապես հիշատակվում է Ֆարհադ փաշան, որին ուղղված դրվատանքի խոսքերը վերաբերում են Շիրվանի *վիլայեթը*, Վրաստանի (Գյուրջիսթան) մի մասը նվաճվելուց հետո Վրաստանի, Նախիջևանի և Երևանի *վիլայեթի* մնացյալ մասի, նաև ամբողջ Ատրպատականի պաշտպանության առաքելության կատարմանը[95]:

Ըստ *քանունnամեի*՝ Երևանի *վիլայեթը*, գրավյալ այլ տարածքների նման կրոնական և սուլթանական բոլոր օրենքների համաձայն՝ պետք է ընդարձակ *դեֆթերների* գրանցումունենար, որի իրագործման համար ուղարկվել էին ֆինանսական *դեֆթերդար*[96] և Բարձր Դռան ֆինանսական քարտուղարներից՝ համապատասխանաբար Մեհմեդ և Հասան անունով պաշտոնյաները, որոնք պետք է գրանցումն իրականացնեին հին սովորույթների համաձայն[97]: *Քանունnամեից* տեղեկանում ենք, որ արձանագրումը կատարվել է հիջրայի 999 թ.

---

[92] Երևանի *վիլայեթի* քանունnամեն գրված է օսմանյան «خسا»-«նասխ» տառատեսակով:
[93] BOA, 0633, ss. 2-12.
[94] Նույն տեղում, էջ 2:
[95] Նույն տեղում, էջ 2-3:
[96] Պետության եկամտի և ծախսերի մատյանները կազմող և նրանց վրա վերահսկողություն հաստատող պաշտոնյան:
[97] BOA, 0633, s. 3.

մուհարրեմ ամսվա վերջին[98], որը համապատասխանում է 1590 թ. նոյեմբերի 18-28-ն ընկած ժամանակահատվածին:

Քաղաքական հատվածին հաջորդում են օրենքների հիմնադրույթները, որոնք տեղ են գտել խնդրո առարկա *վիլայեթում*: Հարկ է նշել, որ դրանք բաղկացած են 18 հատվածից[99]:

Առաջին հատվածի[100] սկզբում նշվում է, որ 1 *չիֆթ (չիֆթլիք)* ունեցող հպատակներից սահմանվել է 50 *աքչե*, իսկ կես *չիֆթի* տիրապետողից՝ 25 *աքչե*: Նշյալ հարկաչափից քիչ էր *բեննաքի* հարկը. *էքինլու բեննաքից* գանձվել է 18 *աքչե*, իսկ *ջաբա բեննաքից*՝ 12 *աքչե*: Ամուրի տղամարդու ամուսնության դեպքում, նրանից *ջաբա բեննաքի* հարկ էր գանձվելու, իսկ *ջաբա* հպատակի՝ *էքինլու բեննաքի* փոխադրման պարագայում՝ համապատասխանաբար *էքինլու բեննաքի* հարկ պետք է գանձվեր: *Չիֆթի*, կես *չիֆթի*, կամ էլ *բեննաք* հանդիսացող հպատակներից մեկի մահվան պարագայում, զավակները իրավունք էին ստանում համատեղությամբ կիսել հողաբաժինը: Նշվում է, որ *ջաբա բեննաքի* կողմից հոր տիրույթին տիրելը անօրինական չէր, ինչը նման է *մուլքային* ժառանգությանը[101]: Սակայն, եթե *չիֆթ* ունեցող հպատակը մահանար և փոքր երեխա ունենար, ապա ֆեոդալը *չիֆթի* հարկ չպետք է պահաջեր, այլ պարտավոր էր նրան պաշտանել՝ մինչև նրահողին տիրելու տարիքին հասնելը[102], որից հետո զավակը կարող էր տիրել իր հոր հողային ժառանգությանը:

Ի տարբերություն երեխաների ժառանգական իրավունքներին, ունեցվածքը չէր կարող փոխանցվել հանգուցյալի եղբորը, ինչպես նաև պապինը՝ թոռանը: Դա վերաբերում էր նաև *վիլայեթի* ոչ մահմեդական բնակչությանը: Բացի այդ, կայսրության ոչ մահմեդական բնակչությունից *չիֆթի* հարկի փոխարեն *իսփենջի* հարկ պետք է գանձվեր, որը կազմել է 25 *աքչե*: Այն վճարելուց հետո

---

[98] BOA, 0633, s. 3.

[99] Օսմաներենում՝ կիրառվել է “فصل”- «ֆասլ» եզրույթը, որը բառացի նշանակում է հատված:

[100] BOA, 0633, ss. 4-7.

[101] BOA, 0633, s. 4.

[102] Չափահաս դառնալը:

ոչ մահմեդականներ բնակչությունից *չիֆթի*, կես *չիֆթի* և *դյունում* հարկ չպետք է գանձվեր[103]:

Ըստ քանուննամեի՝ *վիլայեթի* որոշ մահմեդականներ պարտավոր էին վճարել սեփական այգիների և պարտեզների տասանորդները: Այն կրկնապատկվում էր, երբ հարկատուն *չիֆթը* լքելով, որոշեր այլ վայրում հողագործությամբ զբաղվել: Սակայն, եթե իր ֆեոդալի տիրույթում հողագործությամբ զբաղվելու տեղ չլիներ, կամ այդ հողատարածքներում վարելու տեղերը սպառված լինեին, ապա այլ տեղում հող մշակելու պարագայում հարկը համապատասխան ֆեոդալին պետք է հանձնվեր[104]:

Հպատակների սահմանված իրավունքների համատեքստում, անդրադարձ է կատարվում նաև իրենց տեղափոխության որոշ հարցերին: Մասնավորապես, եթե հողատեր հպատակները լքեին իրենց տիրույթները և հեռանային գյուղից, ապա ֆեոդալը կարող էր վերադարձնել նրանց 10 տարվա ընթացքում, հակառակ դեպքում՝ դրան միտված փորձերը արգելվում էր[105]: Բացի այդ, սահմանվում էր, որ եթե գյուղացին չէր պատկանում տվյալ գյուղին և իրեն զրկում են հողի *թափից*, ապա այն տվյալ գյուղի հպատակին հանձնելը չէր թույլատրվում, քանի որ երկու կողմի գյուղացիների միջև արգելք էր դրված[106]:

Այնուհետև նորից անդրադարձ է կատարվում *չիֆթի* հարկին, այս անգամ լուսաբանվելով այլ դրույթներ: Պարզվում է, որ 1 *չիֆթից* ավելի տեղ զբաղեցնելու դեպքում, այդ նոր հողատարածությունները նույնպես ենթակա էին հարկման[107]:

Ուշագրավ է, որ դրան զուգահեռ տեղեկություններ է տրվում *չիֆթի* մասին՝ սահմանվելով նաև դրա մեծության չափը: Պարզ է դառնում, որ Երևանի *վիլայեթում* հողատարածքը բաժանված է եղել՝ ըստ բարձր, միջին և ցածր բերքատվության: Ամենալավ վայրերի *չիֆթի* չափը մոտավորապես 80 *դյոնում* էր (մեկ *դյոնումը*՝ երկարությամբ և լայնությամբ՝ 40 քայլ), միջին տեղի չափը՝ 100 *դյոնում*, իսկ ցածրինը՝ 130 *դյոնում*: *Չիֆթի* հարկը մարտամսին է

---

[103] BOA, 0633, s. 5.
[104] BOA, 0633, s. 5.
[105] Նույն տեղում:
[106] Նույն տեղում:
[107] Նույն տեղում, էջ 6:

գանձվել: Բացի այդ, եթե *չիֆթը* այգի չունենար, ապահասույթի մեկ քառորդը պատկանելու էր հողի տիրոջը: Ծարունակելով միտքը, հաղորդվում է նաև *էքինլու բենաքի* հարկի մասին, որի չափը բնորոշվում է, որպես կես *չիֆթից* պակաս հողակտոր[108]:

Սահմանումներ կան նաև բնական երևույթների պարագայում ձեռնարկվելիք գործողությունների մասին: Օրինակ՝ եթե աղետի հետևանքով, հողը 3 տարի շարունակ անտեր մնար, սահմանված կարգով՝ հողատերը գյուղացուն կարող էր վռնդել և նրա *թափուն* հանձնել մեկ ուրիշին: Սակայն, եթե հողը չսունցվեր ջրի պակասի, կամ հողի լեռնային կամ զառիվայր դիրքի պատճառով, ապա գյուղացուն հողից զրկելն արգելվում էր[109]: Խոսվում է նաև ֆեոդալի և գյուղացու փոխհարաբերությունների մասին: Տարածված է եղել այն իրողությունը, որ որոշ դեպքերում այգիներից և պարտեզներից վերցվող մասնաբաժինը տարաձայնությունների պատճառ է եղել կողմերի միջև և համաձայնության չգալով, որպես լուծում, ընտրվել է *մաքթուն*[110]:

Այնուամենայնիվ, եղել են դեպքեր, երբ տերերը, ճնշում գործադրելով հպատակների վրա, գանձել են տասանորդի բերքը: Պայմանների չկատարման պարագայում, նշվում է բռնության հնարավորության մասին, կամ էլ այդ գործընթացը 3 օր պետք է հետաձգվեր և գյուղի հոգևորականի և ավագանու միջոցով նախատեսվեր այդ միանվագ վճարի գանձումը[111]:

Երկրորդ հատվածում[112] խոսվում է ջրաղացների հարկի մասին: Տարեկան հարկաչափը կախված էր նրանից, թե քանի ամիս է շահագործվել: Սահմանված էր ամսական 5 *աքչե*, որը գանձվում էր կալսման ժամանակ[113]:

Երրորդ հատվածը[114] վերաբերում է ֆեոդալի տիրույթում *քըշլաքի* հարկի մասին, ըստորի՝ ամուսնացած հարկատուից պետք է գանձվեր 6 *աքչե*, իսկ ամուրիներից՝ դրա կեսը: Սահմանված էր, որ քըշլաքներում հողագործությամբ զբաղվելու դեպքում պետք է

[108] Նույն տեղում:
[109] BOA, 0633, s. 6.
[110] Նույն տեղում, էջ 6-7:
[111] Նույն տեղում, էջ 7:
[112] Նույն տեղում:
[113] Նույն տեղում:
[114] Նույն տեղում:

վճարվեր նաև հողի հարկ: Եթե *քըշլաքի* դիմաց գանձվող հարկատուն բնակվեր 3 տարի կամ ավելի երկար, ապա *քըշլաքի* հարկը փոխարինվում էր *բենաքի* հարկով[115]:

Չորրորդ հատվածում[116] անդրադարձ է կատարվում ոչխարների հարկին: Երկու ոչխարի դիմաց՝ 1 *աքչե* էր սահմանված: Ավելին՝ ոչխարները գառների հետ միասին էին հաշվում: Ընթացիկ հարկը գանձվելու էր ապրիլ ամսվա սկզբին: Քանուննամեի համաձայն՝ ոչխարների հարկը Բարձր Դռանն էր փոխանցվում[117]:

Հինգերորդ հատվածում[118] նույնպես նշվում է կենդանիների մասին: Մասնավորապես, սահմանված էր որպես տուրք գանձել հոտից մեկ ոչխար: Նշվում է, որ թեպետ Երևանում[119] հարկաչափը ավելին էր քան մեկը, այնուամենայնիվ, նոր *դեֆթերում* այդպես է գրանցվել[120]:

Վեցերորդ հատվածում[121] նշվում է մեղրից ստացվող հարկի մասին: Բարձրորակ տարրայի դիմաց 2 *աքչե* էր գանձվում, իսկ ցածրորակի դեպքում՝ 1 *աքչե*[122]:

Յոթերորդ հատվածում անդրադարձ է կատարվում հարսնության հարկին[123]: Կույս աղջիկներից սահմանված էր 60 *աքչե*, իսկ նոր ամուսնացածներից՝ 30: Ամուսնության պարագայում անկախ աղջկա տեղափոխությունից, հայրը պետք է սահմանված դրամի չափը վճարեր այն ֆեոդալին, ում հպատակն էր ինքը հանդիսանում[124]:

Ութերորդ հատվածը[125] վերաբերում է փախուստի դիմաց ստրուկներին կամ հարճերին, որոնց իրենց տիրոջը վերադարձնելը հրամայական էր համարվում: Պարտադիր էր, որ նրանց գտնելու դեպքում իրականացվեր իրերի առգրավում և հանձնում: Առգրավողների կողմից իրերի թաքցնելու և չհրապարակելու դեպքում, նրանք մեղավոր կճանաչվեին: Սակայն, եթե փախուստից հետո տերը ի հայտ չգար, ապա որոշակի ժամկետից հետո տեղի *քադիի*

[115] Նույն տեղում:
[116] Նույն տեղում:
[117] BOA, 0633, s. 7.
[118] Նույն տեղում, էջ 7-8:
[119] Խոսքը Երևանի վիլայեթի մասին է:
[120] BOA, 0633, s. 8.
[121] Նույն տեղում:
[122] Նույն տեղում:
[123] Նույն տեղում:
[124] Նույն տեղում:
[125] Նույն տեղում:

հովանավորությամբ պետք է վաճառեին տվյալ ստրուկին կամ հարճին և ստանային նրանից ստացված եկամուտը: Որպես ժամկետ նշվել է 3 ամիսը[126]:

Իններորդ հատվածում[127] սահմանվում է այն պատժաչափը, երբ որևիցե հպատակի ձին, անասունը, կամ ընդհանրապես չորքոտանի կենդանիներից մեկը կարող էր մտնել այլ հողատարածք և վնաս պատճառել: Այդ պարագայում նախատեսվում էր 5 հարված հասցնել կենդանու տիրոջը և ամեն կենդանու գլխի համար 5 *աքչե* տուգանք գանձել: Այդ տուգանքը հայտնի էր *դաշթիբանի* անվամբ[128]:

Տասներորդ հատվածում[129] նշվում է զանազան ապրանքների վաճառքից գանձվող հարկերի մասին: Ստրուկի վաճառքից ընդունված էր և՛ վաճառողից, և՛ գնողից գանձել 4-ական *աքչե*, ուղտի բեռի դիմաց՝ 4-ական *աքչե*, գոմեշի վաճառքից՝ 2-ական *աքչե*, ձիու վաճառքից՝ 2-ական *աքչե*, ավանակի վաճառքից՝ 1-ական *աքչե*[130]: Ընդունված էր նաև գանձել սպանդանոցում գտնվող կենդանիների դիմաց: Օրինակ՝ գոմեշի դիմաց սահմանված էր 4 *աքչե*, սև անասունից՝ 2 *աքչե*, իսկ ոչխարի համար՝ 1 *աքչե*[131]:

Տասնմեկերորդ հատվածում[132] անդրադարձ է կատարվում ոչ մահմեդական հոգևորականների[133] իրավունքներին: Հիմնավորապես նշվում է, որ *վիլայեթի քաղաքներում* գտնվող *քադիները* այլակրոնների մասնակցությամբ ծեսերը օրենքին հակասող էին համարում: Ապա հաղորդվում, որ նշյալ *վիլայեթում* որոշ առաջնորդներ սևագլուխ անունով էին հայտնի[134]: Նրանք, իրենց ձեռքում կենտրոնացնելով մեկական վանք, պետք է միանվագ վճարեին 1-ական *աքչե*[135]: Պետականորեն սահմանված չափի դիմաց, հոգևորականները կայսերական որոշման համաձայն՝ ազատվում էին *իսփենջ* վճարելու պարտականությունից և կարող էին տնօրինել *բեյթ-ուլ մալը*: Միաժամանակ, հոգևոր առաջնորդները

[126] Նույն տեղում:
[127] BOA, 0633, ss. 8-9.
[128] Նույն տեղում, էջ 9:
[129] Նույն տեղում:
[130] Նույն տեղում:
[131] Նույն տեղում:
[132] Նույն տեղում:
[133] Խոսքն առաջին հերթին հայ ազգի հոգևորականների մասին է:
[134] Քանուննամեում հիշատակվում է՝ "قره باش"-«Քարաբաշ» եզրույթը:
[135] Վճարը կոչվում էր "مرخصه اقچه سی"- «Մարհասե աքչեսի», որը թարգմանաբար նշանակում է՝ առաջնորդական դրամ:

պարտավորվում էին իրենց վանքերում մշակված հողերի մասնաբաժինը վճարել: Դանակ վերաբերում էր վանքերին պատկանող ջրաղացներին, այգիներին, պարտեզներին[136]:

Տասներկուերորդ հատվածը[137] շուկայում վաճառքից գանձվող եկամուտների մասին է: Նշվում է, որ քաղաքի շուկայում ցորենի, գարու վաճառքի դեպքում ամեն *մուդում* կես *քիլե* էր գանձվում, ինչը նույնն էր այլ հացահատիկների պարագայում: Սահմանված դրույթները այլ էին ալյուրի վաճառքի դեպքում, որի մեկ բեռի դիմաց գանձվելու էր երկու *աքչե* (յուրաքանչյուր բեռը՝ 6 *քիլե* գնահատմամբ)[138]:

Տասներեքերորդ հատվածում[139] հիշատակվում են շուկայում սահմանված կարգերը, որի խախտման պարագայում՝ վաճառողները տուգանվում էին: Օրինակ՝ այծի, ոչխարի և գառան միսը, ինչպես նաև՝ թուզը, խաղողը, չորացրած մրգերը, մեղրը, կաթը, պանիրը, դոշաբը և նմանատիպ այլ ապրանքներ ունեին իրենց սահմանված գինը: Այն ենթադրում էր, որ չէր կարելի պայմանական գնից թանկ կամ էժան վաճառել[140]:

Տասնչորսերորդ հատվածը[141] նորից վերաբերում է շուկայական հարաբերություններին: Այստեղ նշվում է ապրանքը հերթով վաճառելու և անիրավության անհնարինության մասին, որի առկայության դեպքում, ըստ հին սովորույթի, կարող էին վաճառողին արգելել գործունեություն ծավալել և վռնդել շուկայից[142]:

Տասնհինգերորդ հատվածը[143] առնչվում է քաղաքացի առևտրականներին և արհեստավորներին: Հատկապես նշվում է, որ իրենց խանութներից ամսական պետք է գանձվեր համապատասխանաբար 2-ական և 1-ական *աքչե*: Բացի այդ, նրանք բաժանվում էին բարձր, միջին և ցածր խավերի միջև[144]:

---

[136] BOA, 0633, s. 9.
[137] Նույն տեղում, էջ 10:
[138] Նույն տեղում:
[139] Նույն տեղում:
[140] Նույն տեղում:
[141] Նույն տեղում:
[142] Նույն տեղում:
[143] Նույն տեղում, էջ 10-11:
[144] Նույն տեղում, էջ 11:

Տասնվեցերորդ հատվածում[145] մասնավորապես խոսվում է այն մասին, որ բերդերի կայազորի պահապանները, հպատակների շրջանում հայտնվելով, անհանգստացնում էին և 5 *աքչե* պահանջում, որի առկայությունը անօրինական էր համարվում[146]:

Տասնյոթերորդ հատվածը[147] նվիրված է հանցագործությանը: Նշվում է, որ դրադիմաց գանձվող տուգանքի չափը կախված էր տվյալ վարչական միավորի քաղաքականությունից, ուստի սահմանված չափը փոփոխական էր: Հանցագործությունը չէր վերաբերում վարչաքաղաքական անձանց[148]: Ինչ վերաբերում է բունսպանություններին, ապա տուգանքի չափը կախված էր՝ ըստ սոցիալական կացության: Օրինակ՝ բարձր խավի մարդկանցից սահմանված էր 400 *աքչե*, միջին խավից՝ 200 *աքչե*, իսկ ցածր խավից՝ 100 *աքչե*[149]:

Պատիժ էր սահմանված նաև այլասերման դեպքերի պարագայում: Այստեղ նույնպես հասարակությունը, ըստ սոցիալական վիճակի, բաժանված է եղել 3 մասի և նման իրողության դեպքում վճարել համապատասխանաբար՝ 300, 250 և 200 *աքչե*: Իսկ եթե նման հանցանք կատարողը ամուրի լիներ, ապա սահմանված էին համապատասխանաբար՝ 200, 150 և 100 *աքչե* դրույքաչափերը[150]:

Իշխանությունների ուշադրությունից չէր վրիպել նաև սուտ մեղադրանքը, որը կազմում էր 30 *աքչե*: Բացի այդ, եթե դատարանում անձի հացագործությունը ապացուցվեր, սակայն վերջինս համառ գտնվեր և մերժեր այդ վճիռը, ապա թույլատրված էր նրա նկատմամբ բռնություն գործադրել[151]:

Վերջին հատվածում[152] շեշտվում էր այն իրողությունը, որ Երևանի *վիլայեթի* ալփավուդ, թյուրքմեն և նյոքեր ցեղերը ցեղերը հարսնության և *բաղիավայի* հարկի կեսը իրենց բնակվող գյուղերին հանձնեն: Բացի այդ, *վիլայեթի* չգրանցված հարկատուների հարկը գյուղի հաշվին պետք էր գրանցել:

---

[145] BOA, 0633, s. 11.
[146] Նույն տեղում:
[147] Նույն տեղում, էջ 11-12:
[148] Նույն տեղում, էջ 11:
[149] Նույն տեղում:
[150] Նույն տեղում:
[151] Նույն տեղում, էջ 12:
[152] Նույն տեղում:

Այսպիսով, 1590 թ. *քանուննամեն* մեծ հնարավորություն է տալիս պարզել *վիլայեթում* սահմանված օրենքները, որոնք շատ կարևոր են Օսմանյան կայսրության ներքին կյանքի քննության տեսանկյունից: Հատկապես ուշագրավ են վիլայեթի ոչ մահմեդական բնակչության իրավունքներին վերաբերող տեղեկությունները, որոնց շրջանում առանձնանում են *վիլայեթի* բարձրաստիճան ոչ մահմեդական եկեղեցականներին առնչվող դրույթները: Հարկ է ընդգծել նաև, որ *քանուննամեի* հատվածների թարգմանությունը էապես նպաստում է աշխարհագրի ավելի հեշտ ըմբռմանը, որի շնորհիվ, հատկապես պարզ է դառնում հարկացուցակում հանդիպող որոշ հարկերի կիրառական նշանակությունը:

### 1.3 Երևանի վիլայեթի վարչական բաժանումը ըստ 1590 թ. աշխարհագրի

Քանուննամեի հատվածների շարադրանքին հաջորդում են Երևանի *վիլայեթի* 27 վարչա-քաղաքական միավորները, որոնց թվում էին՝ Երևանը, Կարբին, Գառնին, Վեդին, Արալըքը, Թալինը, Արմավիրը, Աբնիքը (°)[153], Ապարանը, Ծարաբխանեն, Աղչաքալան, Նախիջևանը, Մևազի Խաթունը, Մելիք-Արսլանլուն, Ղարաբաղը, Դարաշամը, Դարաշահբուզը, Բազարչայը, Ծարուրը, Զառը, Զաբիլը, Ալընջան, Սիսիանը, Օրդուբադը, Ազադջիրանը, Ծորլութը և Դերենուրքութը[154]: Ըստ աշխարհագրի տվյալների՝ նշյալ վարչա-քաղաքական միավորներից 7-ը՝ Երևանը, Նախիջևանը, Ծարուրը, Աղչաքալան, Թալինը, Արալըքը և Օրդուբադը *քազաներ* էին, որոնցից՝ Երևանի, Նախիջևանի և Օրդուբադի *քազաներին*, որպես *նահիե*, պատկանում էին մնացյալ շրջանները՝ իրենց գյուղերով հանդերձ, ինչը նշանակում է, որ Ծարուրը, Աղչաքալան, Թալինը և Արալըքը զուրկ էին որևէ *նահիեից* (ընդգրկում էին միայն գյուղեր)[155]:

Ճիշտ չեն ադրբեջանցի պատմաբան Մեհմեդ Իսլամօղլուի և 1728 թ. Երևանի *վիլայեթի* համառոտ մատյանի հեղինակների այն պնդումները առ այն, որ Երևանի *քազան* բաղկացած է եղել 10 *նահիեից*, որոնց շարքում ենթադրվում է Երևանի (նաև քաղաքը),

[153] Հարցական նշան է դրված այն տեղանունների վրա, որոնց ճիշտ արտասանության մեջ վստահ չենք:
[154] BOA, 0633, s. 14.
[155] Նույն տեղում, էջ 24-393:

Կարբիի, Գառնիի, Վեդիի, Արալ ըքի, Թալ ինի, Արմավիրի, Աբնիքի (՞), Ապարանի և Ծարաբխանեի *նահիեների* ներառումը[156]: Բանն այն է, որ իրականում, 1590 թ. օսմանյան հարկամատյանում Թալ ինի[157] և Արալ ըքի[158] աշխարհագրերին վերաբերող բուն հատվածում նշված են ոչ թե *նահիեներ*, այլ՝ *քազաներ*, ինչը նշանակում է, որ նրանք չէին կարող իրենց հերթին՝ Երևանի *քազայի* մաս կազմել: Հավանաբար, այդ սխալմունքը առաջ է եկել այն փաստից, որ Երևանի *վիլայեթի* հարկամատյանի առաջին էջերում, խիստ համառոտ տրված լինելով Երևանի *քազային* պատկանող վարչական միավորները՝ Թալ ինն ու Արալ ըքը արձանագրված են *նահիե*[159] և հեղինակները դա հիմք ընդունելով՝ այլևս ուշադրություն չեն դարձրել դրանց բուն նյութին: Այդ համատեքստում հարկ է ընդգծել, որ թեպետ օսմանյան հարկամատյանում իր հերթին եղած փոքր-ինչ հակասությանը, սակայն, մեզ համար հիմք է աշխարհագրի հիմնական տեղեկությունները, քանի որ դրանք հնարավորինս ամբողջական տվյալներ են հաղորդում վարչա-քաղաքական միավորների վերաբերյալ:

Ի տարբերություն Երևանի *քազայի*, Նախիջևանի *քազան* 1590 թ. բաղկացած է եղել 7 *նահիեից*, որոնցից էին՝ համանուն Նախիջևանը (նաև քաղաքը), Մեվազիհ Խաթունը, Մելիք-Արսլանլուն, Ղարաբաղը, Դարաշամը, Դարաշահբուզը և Բազարչայը[160]: Ինչ վերաբերում է Օրդուբադի *քազային*, ապա այն բաղկացած է եղել 8 *նահիեից*. դրանք էին՝ Օրդուբադը (քաղաքը), Ազադջիրանը, Ծորլութը, Դերենուրգութը, Զառը, Զաբիլը, Ալ ընջան և Սիսիանը[161]:

Թեպետ հիշյալ վարչա-քաղաքական միավորների դասակարգմանը, այնուամենայնիվ, ատենախոսությունում հիմք ենք ընդունել *վիլայեթի* աշխարհագիր մատյանի բուն նյութում տեղ գտած երկրամասերի հաջորդականությունը:

---

[156] İslamoğlu M. A., նշվ., աշխ., էջ 134. İrəvan əyalətinin icmal dəftəri, s. 7.
[157] BOA, 0633, s. 244.
[158] Նույն տեղում, էջ 264:
[159] Նույն տեղում, էջ 16-19:
[160] Նույն տեղում, էջ 96-97, 100-156:
[161] Նույն տեղում, էջ 276-365, İslamoğlu M. A., նշվ., աշխ., էջ 134:

*Վիլայեթի* աշխարհագիրը սկսվում է Երևանի *նահիեի* մաս կազմող համանուն քաղաքի շարադրանքով[162]: Նյութի քննությունը ցույց է տալիս, որ քաղաքում գրանցվել է 29 մահմեդական հարկատու[163]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրանց շրջանում ամուրիներ չեն եղել, ուստի եղել է նույնքան ընտանիք:

Նրանց թվարկումից հետո անցում է կատարվում քաղաքի ոչ մահմեդական բնակչության: Հարկացուցակից պարզ է դառնում, որ քաղաքը այդ ժամանակ բաժանված է եղել թվով 6՝ Մարտիրոսի, Միրզայի, Քուչեք Քայքբի, Իսալուի, Բուրանջա Օհանի և Դերեգույի թաղերի միջև, ուր բնակվել է տեղի քրիստոնյա բնակչությունը[164]:

Երևան քաղաքի հարկացուցակում գրանցված քրիստոնյաների թիվը ընդհանուր կազմել է 377 մարդ, որոնցից 4-ը եղել են ամուրի[165]: Հետևաբար ստացվում է, որ քրիստոնյա ընտանիքների թիվը 373-ն էր:

Հետաքրքրքական է նաև ամենամեծ բնակչությամբ աչքի ընկած թաղերի տվյալները: Աչքի են ընկել Քուչեք Քայքբի և Մարտիրոսի թաղերը, որտեղ արձանագրվել է համապատասխանաբար 94 և 89 անձ: Ինչ վերաբերում է մնացյալ թաղերի վիճակագրությանը, ապա այնտեղ գրանցվածների թիվը տատանվել է 41-ից 54-ի միջև:

Ի մի բերելով ժողովրդագրական տվյալները՝ կարելի է հաշվել ընդհանուր բնակչության մոտավոր քանակը: Հարկ է նշել, որ այդ համատեքստում հիմնվել ենք թուրք օսմանագետ Օմեր Լյութֆի Բարքանի այն տեսակետի վրա, ըստ որի՝ յուրաքանչյուր ընտանիք միջինը բաղկացած է եղել 5 անդամից[166]: Այսպիսով, Երևան քաղաքի բնակչությունը 1590 թ. կազմել է շուրջ 1869 քրիստոնյա և 145 մահմեդական:

Մեկ այլ կարևոր տեղեկություն, որը կապված է գրանցված բնակչությանը: Անձնանուններից երևում է, որ երբեմն արձանագրված է տվյալ հարկատուի միայն անունը: Այդ իրողությունը հանդիպում է ինչպես քրիստոնյա բնակչության, այնպես էլ՝ մահմեդականների պարագայում: Հավանական է, որ այն պայմանավորված էր անհրաժեշտ տեղեկությունների պակասով:

---

[162] BOA, 0633, ss. 24-35.

[163] BOA, 0633, s. 24.

[164] Նույն տեղում, էջ 24-28:

[165] 2-ական ամուրի արձանագրված են առաջին և երկրորդ թաղում:

[166] İslamoğlu M. A., նշվ., աշխ., էջ 135:

Բնակչության թվարկումից հետո նշվում են այն բոլոր այգիները, որոնք մշակվել են՝ *մաքթու* վճարելու պայմանով: Այդ վճարումների չափը խիստ փոփոխական է եղել, ինչից կարելի է ենթադրել, որ տիրապետած այգիների մեծությունը և հետևաբար շահութաբերությունը տարբեր էին: Բացի այդ, հանդիպում է, որ հարկատուն միաժամանակ մշակել է մի քանի այգի և ոչ թե մեկը[167]: Աշխարհագրի տվյալների համաձայն, Երևան քաղաքում կար շուրջ 406 այգի և 4 կես այգի[168]: Հատկանշական է, որ այգի ունեցողների թվում նշվում է Քըզըլ վանքը, որը, ըստ օսմանյան իշխանությունների, հայտնի է եղել նաև Խաչլու անվամբ[169]:

Ի թիվս այգիների, նշված է նաև 12 պարտեզ և 1 *չիֆթ*[170]: Մասնավորապես *չիֆթի* մասին արված գրությունից կարելի է իմանալ, որ այն գտնվել է Վեդիում և պատկանել է ոմն Սալեհբեյի, որի համար նահարկ է վճարել այդ տարածքի բերքի տասանորդը[171]:

Կարևոր է նաև ջրաղացների մասին տեղեկությունները: Դրանք քաղաքում 19 հատ էին[172], որից 1-ը եղել է ավեր վիճակում[173]: Հատկանշական է, որ երկու ջրաղաց պատկանել է Սալեհբեյին[174]:

Երևան քաղաքից հետո անցում է կատարվում դրան ենթակա թվով 89 գյուղի տվյալներին[175]: Ըստ աշխարհագրի հաջորդականության՝ այդ բնակավայրերից են եղել Նորագեղը, Գյոքքենդին, Արյադը (՞), Զանգին, Յենիջեն, Հաջ Էլիասը, Միրզա Քուբարը, Քոլլարան, Ողջաբերդը, Ջուրբաշը, Քըզըլքալան, Քանաքեռը, Շերբաբը, Զաքը, Զաքավանքը, Ավանը, Առինջը, Նորքը, Գեթուզան (՞), Արզնին, Նուրնուսը, Եղվարդը, Քամրանիշը, Էյլադը, Բելղովանը, Թաջարաբեյը, Թոթվան, Զառը, Մունլա Հասանը, Գելլուջան, Հասան

---

[167] Այգիների, պարտեզների քանակի միավորը օսմանյան փաստաթղթերում “قطعه”-«քըթ’ա»-ն է: Չորս կողմից սահմանագծված յուրաքանչյուր այգի դիտվում էր որպես 1 միավոր և անվանվում «1 կտոր»: Փափազյան Հ., Այգիներն ու այգետեղերը ըստ հայերեն և պարսկերեն կալվածագրերի, Երևան, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 1, 1982, էջ 66:

[168] BOA, 0633, ss. 28-34.

[169] Նույն տեղում, էջ 34:

[170] Նույն տեղում, էջ 32-34:

[171] Նույն տեղում, էջ 34:

[172] Օսմանյան աշխարհագրում, ի տարբերություն այգիների, պարտեզների քանակը բնորոշող եզրույթի, ջրաղացների և տարատեսակ շինությունների համար կիրառվել է «باب»-«բաբ» ձևը, որը բառացի նշանակում է գլուխ, դուռ:

[173] Հարկամատյանում չգործող ջրաղացների համար հանդիպում է «خراب»-«խարաբ» բառը, որը թարգմանաբար նշանակում է՝ ավեր, ավերակ (այսուհետև՝ չգործող):

[174] BOA, 0633, s. 34.

[175] Նույն տեղում 35-66:

Ավարը[176], Քըզըլվիրանը, Ջաբաջիլուն, Թամե Գիրմեզը, Առաքելը, Դիբաքլուն, Դիմաշքը, Քամալ Դերվիշը, Օզանարը, Ջիգրաշենը, Բեդղոսը, Գյոքքիլիսեն, Քան Քանը, Աղվերանը, Ջիք Խաջին, Թամջիլուն, Քարաքալեն, Աղաչուրումը, Քավիսը, Աքրաքը, Բալուջան, Արամուսը, Արախուսը, Քոջա Ահմադը, Ծուշադը, Ջավիյեն, Ծաշք Գերեքը, Քարաջավիրանը, Աղասուրը, Քըշլաք Աբվադը, Աշադուշթը, Դոքուզ Բենին, Գյոքչաբեյլուն, Սիսքերդը, Քըշլաք Խոշալուն, Քըշլաք Թուբաթլուն, Մոլա Խազարը, Քըշլաք Հաջի Բարամը, Աղչաքալան, Ավիսբեյլուն, Դեմուրջիլուն, Լալեն, Քարաքըշլան, Փուրսուքլուն, Վիրան Աբդալը, Խազադլուն, Շեյխզադլուն, Թաշջիլուն, Քարա Քուբաթլուն, Յավալլուն, Իբրահիմ Սոլունան Քըշլաղը, Ղալ Բիսթամը, Յայջը Շահվարդին, Մուրադ Ալին, Քըշլաք Մուրադը, Թիրջանլու Քըշլաղը, Փերվանեսը, Թիր Խարաբը և Քիրքալասըն: Բնակավայրերի շրջանում նշված է նաև 4 *մազրայե*:

Հատկանշական է, որ նշյալ բնակավայրերի շրջանում մեծ թիվ են կազմել չբնակեցված գյուղերը: Ըստ օսմանյան աշխարհագրի հաջորդականության՝ դրանց թվին են դասվել՝ Արյադը (՞), Ջանգին, Քոլլարան, Քըզըլվիրանը, ինչպես նաև Թոթվային հաջորդող բոլոր գյուղերը՝ բացառությամբ՝ Հասան Ավարի և Ջեբեջիլուի: Արդյունքում ստացվում է, որ բնակչության տվյալներով աչքի ընկած գյուղերը եղել են ընդամենը 25-ը:

*Նահիեին* վերաբերող հաջորդ կարևոր հատվածը վերաբերում է ժողովրդագրական տվյալներին: Աշխարհագրի քննությունը ցույց է տալիս, որ գյուղերում զգալի է եղել ինչպես մահմեդականների, այնպես էլ քրիստոնյաների ներկայությունը: Նրանք ապրել են և՛ առանձին, և՛ միևնույն գյուղերում:

Միայն քրիստոնյա հարկատուներով էր բնակեցված 13 գյուղ: Դրանց թվին են պատկանել՝ Ջուրբեշը (18 անձ), Ծերբաբը (10 անձ), Ջաքը (79 անձ), Ջաքավանքը (9 անձ), Ավանը (56 անձ), Առինջը (71 անձ), Նորքը (37 անձ), Գեթուզան (՞) (8 անձ), Նուրնուսը (25 անձ), Եղվարդը (29 անձ), Քամրանիշը (16 անձ) Էլյադը (9 անձ) և Բելղովանը (25 անձ):

[176] Այն հայտնի է եղել նաև՝ Փալասլու անվամբ:

Սոսկ մահմեդաբնակ գյուղերը 5-ն էին: Դրանցից են եղել Հաջ Էլիասը (10 անձ), Ողջաբերդը (20 անձ), Թոթվան (4 անձ), Հասան Ավարը (3 անձ) և Ջեբեջիլուն (2 անձ) գյուղերը:

Ինչ վերաբերում է մնացյալ գյուղերին, որոնք աչքի են ընկել խառը բնակչությամբ, ապա պատկերը հետևյալն է՝ Նորագեղում արձանագրվել է 1 մահմեդական, 46 քրիստոնյա, Գյոքքենդիում՝ 2 մահմեդական, 32 քրիստոնյա, Յենիջեյում՝ 4 մահմեդական, 3 քրիստոնյա, Միրզա Քուբարում՝ 5 մահմեդական, 37 քրիստոնյա, Քանաքեռում՝ 18 մահմեդական, 220 քրիստոնյա, Արզնիում՝ 2 մահմեդական, 25 քրիստոնյա, Թաջարաբեյում՝ 4 մահմեդական և 14 քրիստոնյա:

Նկատելի է, որ հարկատուների թվով ամենամեծ գյուղը Քանաքեռն էր: Ժողովրդագրական տվյալների համաձայն՝ գյուղերում ընդհանուր հաշվառված են եղել 769 քրիստոնյա և 75 մահմեդական[177]: Հատկանշական է, որ ի տարբերություն մահմեդականների, քրիստոնյա բնակչության շրջանում որևէ ամուրի արձանագրված չէ, ինչը փաստում է, որ քրիստոնյա ընտանիքները նույնքան են կազմել, ինչ հաշվառվածները: Ինչ վերաբերում է մահմեդականների շրջանում ամուրիների թվին, ապա այն 4-ն էր: Այն ենթադրում է, որ 3845-ը 359-ի դիմաց վիճակագրությամբ՝ քրիստոնյաները Երևանի *նահիեի* գյուղերում բացարձակ մեծամասնություն էին կազմում:

*Նահիեն* հարուստ եղել հողատարածություններով, *չիֆթերով*, պարտեզներով և հատկապես այգիներով, որոնց թիվը անհամեմատ ավելի շատ էր մյուսներից: Կարելի է հաշվել ընդհանուր 7 հողատարածք, 14 *չիֆթ*, 16 պարտեզ և շուրջ 590 այգի: Ամենաշատ այգիները եղել են բնակչության թվով *նահիեի* ամենամեծ գյուղում՝ Քանաքեռում, ուր կարելի է հաշվել 281 այգի[178]: Ըստ քանակի՝ դրան հաջորդել են Առինջի[179] (91), Ձաքի[180] (71) և Ավանի[181] (63) այգիները: Ինչ վերաբերում է մնացած գյուղերում արձանագրված այգիներին, ապադրանց թիվը՝ խիստփոփոխական է եղել:

---

[177] BOA, 0633, ss. 40-42.
[178] Նույն տեղում, էջ 42-45:
[179] Նույն տեղում, էջ 51-52:
[180] Նույն տեղում, էջ 46-47:
[181] Նույն տեղում, էջ 49:

Երևանի գյուղերի հարկաբաժիններում գրանցվել են նաև ջրաղացներ և ձիթհաններ: Ընդհանուր հաշվարկի տվյալներով՝ ջրաղացները գյուղերում եղել են 44-ը, որից 11-ը չեն գործել: Ամենաշատ ջրաղացները գրանցված են Քանաքեռում, որտեղ 9 ջրաղացից միայն 1-ը չի գործել[182]: Նահիերում նկատելի է նաև ձիթհանների առկայությունը, որոնք ընդամենը 3-ն էին: Բացի այդ, գրանցվել է նաև շուրջ 9 *յայլաք*, որի մասին տեղեկանում ենք գյուղերին վերաբերող հարկացուցակի վերջին հատվածներից:

Ըստ օսմանյան աշխարհագրի՝ հաջորդ *նահիեն* Կարբին է, որը բաղկացած է եղել 63 գյուղից[183]: Դրանցից էին՝ Գուշը, Քըզըլ Աքրաքը, Ախիսը, Փիր Թաքիյեսին, Փարաքյարը, Զուփանուսը, Փարպին, Նաֆաս Քուչին, Օշինը, Մուղնին, Խանեվանքը, Օշը, Աշտարակը, Մունլա Թուրսունը, Թուսը, Քարանքը, Քըզըլ Թիմուրը, Աք Թիմուրը, Քերլանսիան (՞), Օշականը, Հաջ Քարալուն, Խասլարը, Խաչավանքը, Դաղբարը, Բաթրինջը, Քարա Աղիլը, Աղչաքալան[184], Ուչքիլիսեն[185], Զավիյեն, Սինբաքը, Սալմաղարը, Խալիֆաքենդին[186], Մուղանլուն, Ուջանը, Նազրվանը, Սարմասվանքը, Սարքուլին, Թաշլուն, Ազուջը, Գուրյալուն, Խեզավաթիրը (՞), Փալուն, Խոջքարին, Աղնադուն, Յասաքլուն, Անքուդիքը՞, Ավանը, Բաշսըզը, Դուքանը, Ալիբեյլուն, Ծանդանաթը (՞), Խաթուն Արքալան, Քահմանդարը, Ալի Մարկոսը, Աքրաքը, Քըշլաք Շեյխզադեն, Ուլուխանբեյ Քըշլասըն, Սալափիրդը, Օզքուն, Յաշալարը, Փիրանին (՞), Հաղասքերտը և Սարութինը:

Կարբիում ևս եղել են գյուղեր, որոնք բնակեցված չէին. դրանց քանակը հասել է 31-ի: Այդ բնակավայրերից են եղել Թուսը, Աք Թիմուրը, Դաղբարը, Քարա Աղիլը, Աղչաքալան, Խալիֆաքենդին և ըստ վերոնշյալ հաջորդականության, Թաշլու գյուղից մինչև Յաշալար, ինչպես նաև՝ վերջին երեք գյուղերը: Օսմանյան իշխանությունները նմանատիպ գյուղերում, սովորության համաձայն, հիմնականում բավարարվել են միայն ընդհանուր հարկաչափի գրանցմամբ:

---

[182] Նույն տեղում, էջ 45:
[183] BOA, 0633, ss. 67-94.
[184] Այն հայտնի է եղել նաև՝ Հաթունքենդի և Քուզանլու անուններով:
[185] Այդպես էին օսմանցիները անվանում Վաղարշապատը (այսուհետև՝ Վաղարշապատ):
[186] Այն հայտնի է եղել նաև՝ Բաբ Քարաանվամբ:

Ուշագրավ է *նահիեի* ժողովրդագրական պատկերը, որտեղ բնակվել են քրիստոնյաներ և մահմեդականներ: Հարկ է նշել, որ նրանք բնակվել են ինչպես առանձին, այնպես էլ՝ ընդհանուր գյուղերում:

Կարբիի *նահիեի* օսմանյան աշխարհագրի տեղեկություններով՝ միայն քրիստոնյաներից էին բաղկացած Գուշը (55 անձ), Նաֆաս Քուչին (180 անձ), Օշինը (32 անձ), Մուղնին (11 անձ), Խանեվանքը (37 անձ), Օշը (9 անձ), Աշտարակը (28 անձ), Խաչավանքը (8 անձ), Ուջանը (23 անձ), Նազրվանը (14 անձ), Սարմասվանքը (23 անձ) և Սարքուլին (46 անձ):

Մահմեդականները բնակվում էին Փիր Թաքիյեսիում (10 անձ), Զուփանուսում (10 անձ), Մունլա Թուրսունում (24), Քերլանսիայում (՞) (9 անձ), Հաջ Քարալուում (10 անձ), Խասլարում (11 անձ), Բաթրինջում (7 անձ), Զավիյեում (4 անձ), Սինբաքում (7 անձ), Սալմաղարում (6 անձ), Մուղանլուում (29 անձ) և Յաշալարում (10 անձ):

Ինչ վերաբերում է խառը բնակչությամբ աչքի ընկած գյուղերին, ապա Քըզըլ Աքրաքում արձանագրվել է՝ 33 քրիստոնյա, 2 մահմեդական, Ախիսում՝ 23 քրիստոնյա, 2 մահմեդական, Փարաքյարում՝ 14 քրիստոնյա, 2 մահմեդական, Փարպիում՝ 32 քրիստոնյա, 4 մահմեդական, Քարանքում՝ 17 քրիստոնյա, 2 մահմեդական, Քըզըլ Թիմուրում՝ 10 քրիստոնյա, 3 մահմեդական, Օշականում՝ 33 քրիստոնյա, 4 մահմեդական և Վաղարշապատում՝ 63 քրիստոնյա, 12 մահմեդական:

Վերոնշյալ տվյալներից պարզ է դառնում, որ արձանագրված մարդկանց թվով *նահիեի* ամենամեծ գյուղը Նաֆաս Քուչին էր[187], որին հաջորդել են Վաղարշապատ[188] և Գուշ[189] գյուղերը:

Կարբիի *նահիեում* քրիստոնյա բնակչությունը ճնշող մեծամասնություն է կազմել՝ աշխարհագրում հաշվառված լինելով ընդհանուր 691 քրիստոնյա և 169 մահմեդական: Հատկանշական է, որ քրիստոնյաների շրջանում նորից որևէ ամուրի չի հանդիպում, այնինչ մահմեդականների շրջանում նրանք 11-ն էին, ինչը փաստում է, որ գոյություն է ունեցել 158 մահմեդական ընտանիք: Բերված

[187] BOA, 0633, ss. 72-73.
[188] Նույն տեղում, էջ 85-86:
[189] Նույն տեղում, էջ 67:

տվյալների համաձայն՝ *նահիեում* եղել է 3455 քրիստոնյա և 801 մահմեդական:

Ուսումնասիրելով *նահիեում* օսմանյան աշխարհագիրը՝ կարելի է նկատել, որ գյուղերը ընդգրկել են մեծ թվով այգիներ: *Նահիեում* եղել է 393 այգի, որոնցից ամենաշատը գրանցված էին Նաֆաս Քուչիում[190] (89) և Աշտարակում[191] (72): Հարկ է նկատել, որ եթե Նաֆաս Քուչիում, հաշվի առնելով բնակչության վիճակագրությունը, այգիների առատությունը ավելի քան օրինաչափ է, ապա նույնը չի կարելի ասել Աշտարակի մասին, ուր այգիների թիվը գերազանց էլ է գրանցված անձանց քանակը, ինչը կարող է վկայել հողի բերրիության մասին: Այգիներից բացի, աշխարհագրում արձանագրվել են նաև մի շարք *չիֆթեր*, պարտեզներ, հողատարածքներ, որոնք սակայն, անհամաչափորեն զիջել են այգիների տարածվածության ցուցանիշին:

Հարկացուցակի քննությունը թույլ է տալիս պարզել մի շարք ջրաղացների և ձիթհանների առկայության մասին: Կարբիում եղել է 63 ջրաղաց, որից 4-ը՝ չգործող: Ինչպես երևում է, ոչ պիտանի ջրաղացները շատ քիչ տոկոս են կազմել: Ինչ վերաբերում է ձիթհաններին, ապա դրանք թվով 8-ն էին: *Նահիեին* վերաբերող վերջին հատվածը վերջանում է 11 *յայլաքի* նշումով: Գրության համաձայն՝ դրանք գտնվել են Արագածլեռան ստորոտում[192]:

Աշխարհագրում Կարբիին հաջորդում են Նախիջևան քաղաքի[193] և դրան պատկանող գյուղերի հարկացուցակները[194]: Պարզվում է, որ Նախիջևան քաղաքը ըստ 1590 թ. օսմանյան աշխարհագրի՝ ունեցել է 12 թաղ[195], որոնցից են եղել՝ Քադի Ջհանը[196], Սեյեդ Հուսեյնը, Մոլա Ահմեդին, Միրզաբեյը, Ծահաբը, Քունբեթը[197], Բալան, Խոջաբեյը, Խուզամիրաքը, Թիզ Խարաբը, Քեքե Թավերը և Քալան:

Նշյալ 12 թաղում գրանցված են բացառապես մահմեդականներ, որոնց թիվը կազմում է 706 մարդ: Ըստ նվազման կարգի, ամենաշատ

---

[190] Նույն տեղում, էջ 73-75:
[191] Նույն տեղում, էջ 67-94:
[192] BOA, 0633, s. 78.
[193] Նույն տեղում, էջ 100-114:
[194] Նույն տեղում, էջ 114-130:
[195] Նույն տեղում, էջ 100-108:
[196] Այն հայտնի է եղել նաև՝ Խոջա Միրիջան անվամբ:
[197] Այն հայտնի է եղել նաև՝ Թուրքմենլեր անվամբ:

անձինք գրանցվել են Խոջաբեյ և Սեյեդ Միրզա թաղերում, որտեղ նշված է համապատասխանաբար՝ 125 և 122 մահմեդական: Այդ թաղերին հաջորդում է Բալան, որտեղ արձանագրված է ընդհանուր 99 մահմեդական: Ամենաքիչ մահմեդականները նկատելի են Թիզ Խարաբ, Քալա և Ծահաբ թաղերում, որտեղ հաշվառվել են համապատասխաբար՝ 12, 13 և 14 մահմեդական: Մյուս թաղերում նրանց թիվը տատանվում է 30-ից 87-ի միջև:

Հարկ է նշել, որ 706 գրանցված մահմեդականի շրջանում մեծ թիվ են կազմել ամուրիները: Ստացված տվյալներից պարզ է դառնում, որ խոսքը վերաբերում է 114 չափահաս տղամարդկանց մասին: Ամենաշատ ամուրիները արձանագրվել են Մոլա Ահմեդում, որտեղ բնակվել են 21 ամուրի: Այն ենթադրում է, որ 12 թաղում, եղել է 592 մահմեդական ընտանիք:

Նյութի քննությունից պարզվում է, որ քաղաքում նկատելի է եղել քրիստոնյաների գոյությունը: Երևում է, որ նրանք քաղաքում ապրել են նշյալ 12 թաղից դուրս և կազմել են փոքրամասնություն: Այսպես օրինակ՝ մահմեդականների թվարկումից հետո անցում կատարելով տեղի քրիստոնյաներին՝ նշվում է 142 անձնանուն, որից միայն 1-ն է եղել ամուրի: Կարելի է եզրակացնել, որ Նախիջևան քաղաքում բնակվել են 706 քրիստոնյա և 3074 մահմեդական:

Ժողովրդագրական տվյալների քննությունը մեծ հնարավորություն է ընձեռում համեմատություն անցկացնելու՝ Հաքան Քարագյոզի աշխատանքի միջև, որը 1590 թ. Նախիջևան քաղաքին առնչվող մեր ձեռքի տակ եղած միակ աշխատանքն է: Հիմք ընդունելով մեր կողմից ուսումնասիրված տվյալները՝ պարզվում է, որ այնտեղ ճշգրիտ են ներկայացված միայն Նախիջևան քաղաքում բնակվող քրիստոնյաների թիվը, այնինչ մահմեդականների հարցում գոյություն ունեն իրական թվի մեծացում: Ըստ թուրք հեղինակի տեղեկությունների՝ մահմեդական հարկատուների թիվը կազմել է 724 անձ, որոնցից 120-ը՝ ամուրիներ. այն ենթադրում է՝ 604 ընտանիքի առկայություն[198]: Սակայն, իրականում, մահմեդական ընտանիքները եղել են 592-ը, իսկ ամուրիները՝ 114-ը, որն էլ

[198] Karagöz H., նշվ., աշխ., էջ 20-21:

նշանակում է՝ անվանացանկում 724 անձի փոխարեն՝ 706 հարկատուի գոյություն:

Անձնանունների թվարկումից հետո տրվում են քաղաքում եղած այգիները և պարտեզները: Նշվում է շուրջ 229 այգու և 86 պարտեզի մասին[199]: Դրան զուգահեռ, տրված է նաև 6 հողատարածք և 14 *չիֆթ*[200]: Վերջինները եղել են քաղաքում 14 հատ: Նկատելի են նաև թվով 25 ջրաղացի առկայություն[201]:

Նախիջևան քաղաքից հետո անցում է կատարվում դրան հաջորդող գյուղերին: Նշվում են՝ Ծեյխ Մեհմեդլու, Խալիլու, Յենջա, Ուզուն Օյա, Դիր Աբադ, Մազրայե Ալագյոզ, Թամջան (՞), Թունթուլ (՞), Բոլլա, Բուլղան (՞), Քարաչուք, Ծեյխ Բուսաքլու, Ծեյխզադեգան, Քեհիլ Ասլամընա (՞), Քոթիք, Նահջուր, Վերին Սուրմարաք, Ներքին Սուրմարաք, Նաֆաս Թերքին, Ծեյխ Միհրանշա, Սեյեդ Մուրադ, Դերե Ալբաք, Յերխաշան, Գել Թեփե, Յարընջա, Թուրքին, Նահրամ, Յեզդաբադ (՞), Քուհ Բուրան, Չեհրի, Ազնաբերդ, Մեհմեդ Աբադ, Խաջավ, Հաջիվար, Քուրա Քումար գյուղերը: Սրանց կողքին նշվում են նաև շուրջ 10 *մազրայե*:

Հարկ է նշել, որ նշյալ բնակավայրերի շրջանում եղել են չբնակեցված գյուղեր: Այդպիսիներից էին՝ Թունթուլ (՞), Բոլլա, Բուլղան (՞), Քոթիք, Ծեյխ Միհրանշա, Գել Թեփե, Յարընջա, Մեհմեդ Աբադ, Խաջավ, Հաջիվար և Քուրա Քումար գյուղերը: Ստացվում է, որ ըստաշխարհագրի, 35 գյուղից միայն 24-ն էր բնակեցված:

Գյուղերի բնակիչների շրջանում բնակվել են ինչպես քրիստոնյաներ, այնպես էլ՝ մահմեդականներ: Նրանք ապրել են ինչպես առանձին, այնպես էլ՝ միևնույն գյուղերում:

Միայն քրիստոնյաներով էր բնակեցված՝ Նահջուրը, Յեզդաբադը (՞) և Ազնաբերդը: Առաջինը աչքի է ընկել 7 հարկատուով, որոնցից 2-ը՝ ամուրի: Յեզդաբադ(՞) գյուղում ամուրիների թիվը գերազանցում էր Նահջուրի տվյալներին և 164 հարկատուից կազմում էր 20-ը: Ինչ վերաբերում է Ազնաբերդին, ապա գրանցված է 52 քրիստոնյա ոչ մի ամուրի:

---

[199] BOA, 0633, ss. 108-113.
[200] Նույն տեղում, էջ 113-114:
[201] Նույն տեղում, էջ 114:

Անհամեմատ ավելի շատ էր սոսկ մահմեդական հարկատուներով բնակեցված գյուղերը: Այն ուներ հետևյալ պատկերը՝ Խալիլուում արձանագրված է 16 մահմեդական, Յենջայում, Ուզուն Օյայում, Դիր Աբադում 6-ական մահմեդական, Մազրայե Ալյոգյուզում՝ 21 մահմեդական, Թումջանում (՞)՝ 25 մահմեդական, Քարաչուքում՝ 29 մահմեդական, Ծեյզադեգանում՝ 7 մահմեդական, Քեհիլ Ասլամընայում (՞)՝ 4 մահմեդական, Վերին Սուրամարաքում՝ 13 մահմեդական, Ներքին Սուրամարաքում՝ 6 մահմեդական, Նաֆաս Թերքինում՝ 8 մահմեդական, Սեյեդ Մուրադում՝ 5 մահմեդական, Դերե Ալբաքում՝ 7 մահմեդական, Յերխաջանում՝ 19 մահմեդական, Թուրքինում՝ 4 մահմեդական, Նահրամում՝ 25 մահմեդական և Քուհ Բուրանում՝ 3 մահմեդական:

Խառը բնակչությամբ աչքի ընկած գյուղերից Ծեյխ Մեհմեդլուում՝ հաշվառվել են 1 քրիստոնյա, 14 մահմեդական, Ծեյխ Բուսաքլուում՝ 3 քրիստոնյա, 21 մահմեդական, իսկ Չեհրիում՝ 71 քրիստոնյա և 17 մահմեդական:

Հարկ է ընդգծել, որ Նախիջևանի գյուղերի շրջանում ամենաշատ գյուղացիները Յեզդաբադում են գրանցվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մահմեդականներով զբաղեցված գյուղերի քանակը անհամեմատ ավելի շատ է եղել, ուստի առաջին հայացքից կարող է խաբկանք առաջանալ առ այն, թե ճնշող մեծամասնությունը մահմեդականներ են եղել: Այնուամենայնիվ, տվյալների համադրությամբ ստացվում է, որ *նահիեում* եղել են արձանագրված ընդհանուր 298 քրիստոնյա և 262 մահմեդական հարկատու: Հարկ է նշել, որ նման պատկերը գլխավորապես պայմանավորվել է նրանով, որ քրիստոնյաները ավելի խիտ են բնակեցված եղել:

Բացի այդ, հարկամատյանի ուսումնասիրությունից երևում է, որ մահմեդականների շրջանում, ի տարբերություն քրիստոնյաների, շատ են եղել ամուրիները, որոնք կազմել են 38 մարդ: Փաստորեն ստացվում է, որ գյուղերում քրիստոնյա ընտանիքները 276-ն են եղել, իսկ մահմեդականների տները՝ 224-ը: Այդ բոլոր տվյալներից հետևում է, որ գյուղերում ապրող ամբողջ բնակչությունը կազմել է շուրջ 1402 քրիստոնյա և 1158

մահմեդական, ինչը փաստում է, որ քրիստոնյաները Նախիջևանի գյուղերում եղել են մեծամասնություն:

Աշխարհագրի տվյալների համաձայն, գյուղերում նկատվել է այգիների և պարտեզների մշակությունը: Թեպետ դրանց տարածվածությունն անհամեմատելի է Նախիջևան քաղաքում գրանցվածների քանակի հետ, այնուամենայնիվ, ուշադրության են արժանի: Այսպես օրինակ՝ կարելի է նշել, շուրջ 70 այգու և 2 պարտեզի մասին: Ընդորում, այգիների զգալի մասը, գտնվել է Չեհրի գյուղում՝ կազմելով 37 հատ[202]: Մեծ թիվ չեն կազմել նաև *չիֆթերը*, որոնց քանակը չի անցել 10-ը:

Գյուղերում հանդիպում են նաև մի շարք ջրաղացներ: Նրանց թիվը կազմել է 28, որոնցից 13-ը եղել են ավեր վիճակում: Ինչ վերաբերում է ձիթհաններին և ներկատներին, ապա նրանք անհամեմատելիորեն ավելի քիչ էին, քանի որ նրանց թիվը չէր անցնում 2-ը:

Նախիջևանի *նահիեին* հաջորդում է Մեվազիհ Խաթունի[203] հարկացուցակը, որը բաղկացած է եղել 8 գյուղից[204]: Դրանք են՝ Ավանես[205], Սոլունանբեյը, Աքխաչը, Օղբինը, Քուրադենիրը, Դեքիզեն, Անիբքիրանը և Ալմալըքը: Գյուղերի շրջանում եղել է նաև 2 *մազրայե*, որոնցից մեկը գտնվել է Դեքիզեյում, իսկ մյուսը ներկայացված է առանձին:

Հարկ է ընդգծել, որ *նահիեում* ըստ վերոնշյալ հաջորդականության՝ միայն առաջին և երկրորդ գյուղերն են բնակեցված եղել:

Ըստ օսմանյան վավերագրի, թե՛ Հովհաննես, թե՛ Սոլունանբեյ գյուղերում բնակվել են միայն քրիստոնյաներ, որտեղ եղել են համապատասխանաբար՝ 14 և 10 հարկատու: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրանց շրջանում ամուրի գրանցված չէ, ուստի խոսքը գնում է նույնքան քրիստոնյա ընտանիքի մասին: Ինչ վերաբերում է *նահիեի* բնակչության ընդհանուր թվին՝ ապա ստացվում է 120 բնակիչ:

---

[202] BOA, 0633, s. 137.
[203] Նշյալ վարչա-քաղաքական միավորի տեղադրման վայրը մեզ չի հաջողվել պարզել:
[204] BOA, 0633, ss. 132-133.
[205] Այսուհետև՝ Հովհաննես:

Հատկանշական է ջրաղացներին վերաբերող տվյալները: Նյութի քննությունից պարզվում է, որ դրանք եղել են ոչ միայն Սոլունանբեյում (1 ջրաղաց), այլև Անիբքիրանում և Ալմալըքում՝ ընդհանուր կազմելով 3 ջրաղաց:

Հերթականությամբ հաջորդը Մելիք-Արսլանլուի[206] *նահիեն է*[207]: Այն բաղկացած է եղել հետևյալ գյուղերից՝ Փաբիր, Քյարամ Սաղ, Բազղավ, Քարաքոշ, Ազիրդ (՞), ինչպես նաև՝ 2 *մազրայից*: Օսմանյան աշխարհագրում նշյալ բոլոր գյուղերից միայն Քյարամ Սաղն է աչքի ընկել բնակչությամբ, այնինչ մյուս բնակավայրերում գյուղանունից և ընդհանուր հարկաչափից բացի[208], այլ տեղեկություններ չկան:

Քյարամ Սաղ բնակավայրում գրանցվել է 4 մահմեդական և ոչ մի ամուրի: Այն ենթադրում է որ գյուղի բնակիչների թիվը հասել է շուրջ 20 մարդու:

Մելիք-Արսլանլուին հաջորդում է Ղարաբաղի[209] *նահիեն*[210], որտեղ եղել են թվով 5 գյուղ և 2 *մազրայ*[211]: Այդ գյուղերից են եղել՝ Ղարաբաղը, Ջալիքը[212], Սիսքը (՞), Քարադաղը և Սուսը (՞): Նշվածներից միայն Ղարաբաղը, Ջալիքը և Քարադաղն են առանձնացել հաշվառված մարդկանցով, որոնք եղել են բացառապես մահմեդականներ:

Ըստ հարկացուցակի՝ ամենաշատ հարկատուները գրանցվել են Քարադաղում՝ կազմելով 23 անձ: Դրան հաջորդել է Ղարաբաղը, այնուհետև՝ Ջալիքը՝ համապատասխանաբար՝ 19 և 5 մահմեդականով: Ուշագրավ է այն իրողությունը, որ 3 գյուղում մարդկանց անձնանունների:

*Նահիեում* հաշվվում է 36 մահմեդական ընտանիք, ինչպես նաև 11 ամուրի: Այդպիսով, Ղարաբաղ *նահիեի* բնակիչների թիվը կազմել է 191 մարդ:

---

[206] Ենթադրում ենք, որ այն գտնվել է Բուզղովի շրջանում, ներկայիս Խաչիկ գյուղի մոտակայքում:
[207] BOA, 0633, ss. 135-136.
[208] Բացառություն է եղել առաջին գյուղը, որտեղ արձանագրված է 3 չիֆթ:
[209] Գտնվել է Նախիջևանի Նորաշենի շրջանում: Տեղանունների բառարան, հատոր 3, էջ 522:
[210] BOA, 0633, ss. 135-136.
[211] Նույն տեղում, էջ 139-141:
[212] Այն հայտնի է եղել նաև՝ Բինավել անվամբ:

*Նահիեում* զբաղվել են այգիների մշակությամբ: Այդ երևույթը հանդիպում է Ղարաբաղ գյուղում, որոնք 6 էին[213]: Բացի այգիներից, գյուղերում շահագործվել են 11 ջրաղաց, որոնցից երկուսը ավերակ էին:

Ղարաբաղի տվյալներից հետո նշված է Դարաշամի[214] հարկացուցակը, որը ներառել է 3 գյուղ[215]: Դրանք են՝ Դիբքենդը, Բաշքենդը և Օրթաքենդը: Պետք է փաստել, որ նշյալ բոլոր գյուղերի տվյալները գրանցվել են լիարժեքորեն:

Նյութի քննությունից պարզվում է, որ *նահիեում* ապրել են միայն քրիստոնյաներ: Հաշվվելով ընդհանուր 54 ընտանիք, ստացվում է, որ ընդհանուր բնակիչների թիվը կազմել է 270 մարդ: Հարկացուցակում հաշվառված բնակչության թվով ամենամեծը Դիբքենդն էր, որն ունեցել է 26 անձ[216]:

*Նահիեի* բնակիչները ունեցել են հնարավորություն մշակելու այգիներ, ինչպես նաև պարտեզներ, որոնք արձանագրված են Դիբքենդում և Օրթաքենդում: Տվյալների համաձայն՝ երկու գյուղում նշված է ընդհանուր 12 այգի: Ինչ վերաբերում է պարտեզներին, ապադրանք միայն եղել են Օրթաքենդում՝ կազմելով 5-ը[217]: Գյուղերում նաև արձանագրվել է 2 ջրաղաց, որոնցով աչքի են ընկել Դիբքենդ և Օրթաքենդ բնակավայրերը:

Դարաշամին հաջորդում է Դարաշահբուզի[218] *նահիեն*[219]: Այն ներառել է 2 *մազրայե* և հետևյալ գյուղերը՝ Դարաշահբուզը, Սալասուսը, Թերքեշը, Խուզերին, Գալուստը, Մազրայե Սութին (՞), Քուքին, Քյոմուրը, Խազարբեյը, Բեչինիքը, Նորաշենը, Բադամլուն, Նուրսը, Առինջը, Մոքադալը, Նահատակը, Քոջազորը, Զարնաթունը, Ծադան, Քարաբուլաքը, Աքրաքը, Օզմուզը, Յաղնագանը, Քարդասարը, Աղչաչալը, Բոլը, Մարալիքը և Ծուքարը:

---

[213] BOA, 0633, s. 139.

[214] Հայկական գրականության մեջ վկայված է՝ Դարաշամբ տեղանվամբ: Գտնվել է Նախիջևան քաղաքից 27 կմ հարավ-արևելք, Արաքսի ձախ ափին: Տեղանունների բառարան, հատոր 2, էջ 54:

[215] BOA, 0633, ss. 142-143.

[216] Նույն տեղում, էջ 142:

[217] Նույն տեղում, էջ 143:

[218] Հայկական գրականության մեջ վկայված է՝ Ծահապունյաց ձոր, Ծահապոնք տեղանուններով: Գտնվել է Նախիջևան քաղաքից 30 կմ հյուսիս-արևելք, Քեչիլ գետակի ափին, պատմական Ծահապոնք բերդի ավերակներից ներքև: Տեղանունների բառարան, հատոր 2, էջ 51:

[219] BOA, 0633, ss. 148-155.

Հարկ է նշել, որ նշյալ 28 գյուղից միայն 7-ն է աչքի ընկել ամբողջական տվյալներով, իսկ մյուս 21 գյուղի դիմաց, բացի գյուղանունից, արձանագրված են միայն ընդհանուր հարկաչափերը: Այդ 7 գյուղի թվին են դասվել՝ ըստ օսմանյան վերոնշյալ հաջորդականության՝ առաջին 3-ը, ինչպես նաև՝ Գալուստը, Բադամլուն, Նուրսը և Առինջը:

Աշխարհագրի տվյալների համաձայն՝ *Նահիեում* բացի մահմեդականներից, եղել են նաև քրիստոնյաներ: Հարկացուցակում թե՛ մահմեդական, թե՛ քրիստոնյա հարկատուները ներկայացված են ինչպես առանձին բնակավայրերում, այնպես էլ՝ միևնույն գյուղերում:

Սոսկ քրիստոնյա բնակչություն ուներ միայն Բադամլուն, որտեղ հարկատուների թիվը կազմել է 26 մարդ: Դրան զուգահեռ՝ միայն մահմեդաբնակ էր Սալասուս, Թիրքեշ և Առինջ գյուղերը: Այնտեղ գրանցված են եղել համապատասխանաբար՝ 9, 5 և 14 անձ:

Ինչ վերաբերում է խառը բնակչությամբ հանդես եկող գյուղերին, ապա այդ գյուղերում պատկերը հետևյալն է՝ Դարաշահբուզում՝ գրանցվել է 11 քրիստոնյա, 33 մահմեդական, Գալուստում՝ 9 քրիստոնյա, 2 մահմեդական, Նուրսում՝ 56 քրիստոնյա և 2 մահմեդական: Այդպիսով, ամենաշատ հարկատուները գրանցվել են Նուրսում՝ կազմելով 58 անձ:

Կարելի է արձանագրել, որ հարկամատյանում գրանցված մարդկանց վիճակագրությամբ՝ քրիստոնյաների թիվը հասել է 102-ի, իսկ մահմեդականներինը՝ 65-ի: Բացի այդ, նյութի քննությունից պարզվում է, որ թե՛ քրիստոնյաների, թե՛ մահմեդականների, շրջանում եղել են ամուրիներ, որոնց թիվը համապատասխանաբար կազմել է 2 և 9 մարդ: Արդյունքում ստացվում է՝ 100 քրիստոնյա և 56 մահմեդական ընտանիք: Այն ենթադրում է, որ *Նահիեի* շուրջ 791 բնակիչներից 502-ը կազմել են քրիստոնյաները, իսկ մնացյալ 289-ը՝ մահմեդականները:

*Նահիեի* բնակչությունը տիրել է նաև բազմաթիվ այգիների: Ըստ հարկացուցակի՝ դրանց թիվը բնակեցված գյուղերում հասել է 96-ի: Մասնավորապես ամենաշատ այգիներով աչքի է ընկել

Դարաշահբուզ գյուղը, որտեղ նշված է 56 այգի[220]: Բադամլուում գրանցվել է 16 այգի[221]: Այգիներից բացի, *նահիեում* գրանցված է եղել նաև 2 պարտեզ և 13 ջրաղաց, որոնցից 4-ը՝ չգործող:

Երևանի *վիլայեթի* հերթական *նահիեն* Բազարչայն է[222], որին պատկանել է թվով 10 գյուղ[223]: Դրանք են՝ Քալաջաքը[224], Բազարչայը, Թուրքինը, Քազալջաքիլիսեն, Աղջամալը, Գելեդիքը, Ծաղատը, Փուրը, Դալքու Թեփեսին և Յենիջեն: Նշյալ բոլոր գյուղերը բնակեցված չէին:

Օսմանյան աշխարհագրում հաջորդ տեղեկությունները վերաբերում են Ծարուրի[225] *քազայի*[226]: Այն բաղկացած է եղել հետևյալ գյուղերից, որոնցից են՝ Փարսանջանը, Թաշ Արքը, Քոշթաբելը, Յալնըզ Աղաջը, Դերուքիշլերը, Խալաջը, Վերին Քարքինը, Փոքր Քարքինը, Չումաքթուրը, Օղին Ծալոն, Արալըքը, Քյոսաջանը, Սիյահ Քունլին, Մուղանջաքը, Ծահրիյարը, Քազիհադը (՞), Նորաշենը, Քալաջաքը, Զավիան, Քուշանջըն, Քարայուրջին, Քուրդքենին, Յենիջեն, Ախեր Ահմադը, Մախաուդլուն, Էլիշարը, Թանանջըն, Յենիջե Արաբը, Իսաջանը, Արբիթանը[227], Հաջ Լալալուն, Քարահիսարլու Քըշլաղըն, Քըշլաք Իմամքուլին, Քըշլաք Ծահքուլին և Ծիքամը: Բացի այդ, եղել է 1 *մազրայե*:

Նշյալ 35 գյուղի մի մասում որևէ բնակիչ արձնագրված չէ: Այդպիսի գյուղերից էին՝ Թաշ Արքը, Չումուքթուրը, Քազիհադը (՞), Մաքսուդլուն, ինչպես նաև՝ ըստ հաջորդականության՝ Թանանջը գյուղից մինչև վերջին բնակավայրը: Ստացվում է, որ աշխարհագրի տվյալներով՝ 35-ից միայն 23-ն է աչքի ընկել բնակչությամբ:

Ինչ վերաբերում է հաշվառվածների ընդհանուր թվին, ապա *քազայի* աշխարհագրում հաշվվում է ընդհանուր 414 չափահաս տղամարդ, որոնցից 62-ը եղել է ամուրի, իսկ 4-ը՝ գյուղի հոգևորականներ: Ստացվում է, որ *քազայում* ապրել է շուրջ 1822

---

[220] BOA, 0633, s. 156.
[221] Նույն տեղում, էջ 152:
[222] Գտնվում է Սիսիանի շրջանում, Որոտան գետի վերին հոսանքում:
[223] BOA, 0633, s. 156.
[224] Այն հայտնի է եղել նաև՝ Փիրնադիք անվամբ:
[225] Համապատասխանում է պատմական Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Ծարուր գավառին: Տարածվել է Արփա գետի ստորին հոսանքի շրջանում, Ծարուրի դաշտում: Տեղանունների բառարան, հատոր 4, էջ 90:
[226] BOA, 0633, ss. 164-177.
[227] Այն հայտնի է եղել նաև՝ Չուրք Քեսմեզ անվամբ:

բնակիչ: Ուշագրավ է, որ գյուղերում բոլորը եղել են մահմեդական: Ամենաշատ մարդիկ գրանցված են Ծահրիյար և Նորաշեն գյուղերում, որոնց թիվը յուրաքանչյուր գյուղում կազմել է 36 անձ: Ամենանվազ անձանց թվով աչքի է ընկել Օղին Ծալոն, որտեղ ապրել է 4 մահմեդական: Մյուս գյուղերում արձանագրված մարդկանց թիվը տատանվել է 4-ից 36-ի միջև:

*Քազայում* գտնվել են այգիներ, պարտեզներ և *չիֆթեր*: Դրանց շրջանում ամենաշատը եղել է *չիֆթերի* քանակը՝ կազմելով 66 հատ: Այգիներն ու պարտեզները եղել են անհամեմատ ավելի քիչ՝ լինելով համապատասխանաբար՝ 3 և 10 հատ:

*Քազայում* եղել են նաև մի շարք ջրաղացներ: Մասնավորապես նշվում է 56 ջրաղաց, որոնցից 17-ը եղել են ավեր վիճակում:

Աշխարհագրի հաջորդ վարչա-քաղաքական միավորը Աղչաքալայի[228] *քազան է*, որը ներառել 61 գյուղ[229]: Դրանց թվին են պատկանել՝ Աղչաքալան, Ղարաբաղը, Փիքրանը, Զարյագուրը, Փիյուքը, Համամլուն (՞), Դելուլերը, Արդավիդը, Օզնուդը, Թեքելուն, Ռիաթը, Չիրաքքենդին, Թերքեն, Օլուքլուն, Ջուրա Քըշլասըն, Մենինջեն, Խիրբեյը, Քեչիլուն, Հավաջաքենդին, Վերին Բյույուքը, Ներքին Բյույուքը, Բեզիրխանեն, Քըզըլվիրանը[230], Սույուրը (՞), Քարաջաքալան, Աբու Ծահմեն, Գուզարան, Էբթիլերը, Ջալալը[231], Մազվաքը, Քավալան, Բուլանը, Քամիշլուն, Նախիջևանջաքը, Սորքունջաքը, Քըզըլվիրանը, Վերին Ջուբերլուն, Ներքին Ջուբերլուն, Քարաջաքալան, Զանբին, Նիջեն, Թաշբուլաքը, Քարաքաբուլուն, Ասաբիշլուն, Թաշ Քափուն, Մարդաքլուն, Դերեթաշը, Բիքլին (՞), Ծավարնուզը, Աքրաքը, Դաբքուրը, Ալամը, Խազփուշնան, Հասանջանը, Բարդաքլուն, Քուրդաչուրը, Թաշարբեյ Լալան, Թաշայբեյ Զիրը, .....[232], Բազարջաքը և Քալաջաքը: Աշխարհագրում արձանագրվել է նաև 7 *մազրայե*:

Հատկանշական է, որ մեծ թիվ են կազմել այն բնակավայրերը, որոնց դիմաց հարկատու արձանագրված չէ: Չբնակեցված գյուղերի

---

[228] Հայկական գրականության մեջ վկայված է՝ Աղջաղալա տեղանվամբ: Այն գտնվել է Ախուրյան և Արաքս գետերի խառնարանի մոտ, համապատասխանում է պատմական Երվանդակերտին: Տեղանունների բառարան, հատոր 1, էջ 189:

[229] BOA, 0633, ss. 182-196.

[230] Այն հայտնի է եղել նաև՝ Հասան Քուրի անվամբ:

[231] Այն հայտնի է եղել նաև՝ Քըզըլվիրան անվամբ:

[232] Կետերն են դրված այն տեղանունների վրա, որոնք մեզ չի հաջողվել ընթերցել:

թիվը հասել է 54-ի: Լիարժեք տվյալներով են աչքի ընկել միայն՝ Աղչաքալա, Ղարաբաղ, Փիքրան, Փիյուք, Աքրաք, Դաբքուր և Ալամ գյուղերը:

Աղչաքալայի հարկացուցակից պարզ է դառնում *քազայի* ժողովրդագրությունը: Այն նույնպես բաղկացած է եղել մահմեդական և քրիստոնյա բնակիչներից: Օսմանյան աղբյուրի տվյալների համաձայն՝ նրանք ապրել են ինչպես առանձին գյուղերում, այնպես էլ միևնույն բնակավայրերում:

Միայն քրիստոնեաբնակ գյուղերից մեկը եղել է Աղչաքալան, որտեղ գրանցվել է 92 հարկատու: Հաջորդ գյուղը՝ Աքրաքն էր, ուր նշված է 62 քրիստոնյա: Քրիստոնյաներով էր բնակեցված նաև Ալամ գյուղը՝ 13 գրանցված գյուղաբնակներով: Այս տվյալներին զուգահեռ՝ սոսկ մահմեդաբնակ էր միայն Դաբքուրը, որտեղ արձանագրված է 21 մահմեդական:

Ինչ վերաբերում է խառը բնակչությամբ աչքի ընկած գյուղերին, ապա Ղարաբաղի 126 շնչից 121-ը եղել են քրիստոնյաներ, իսկ 5-ը՝ մահմեդականներ: Քրիստոնյաները մեծամասնություն են կազմել նաև Փիքրանում, ուր գրանցված 47-ից միայն 3-ն էր մահմեդական: Վերջապես Փիյուքում, 68 հաշվառված քրիստոնյայից միայն 5-ն էր մահմեդական:

Ինչպես երևում է՝ հարկացուցակում մարդկանց ամենամեծ թիվը գրանցվել է Ղարաբաղ գյուղում:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, քրիստոնյաները Աղչաքալայում կազմել են ճնշող մեծամասնություն, որը արտահայտվել է 395-ը 34 հարկատուի հարաբերակցությամբ: Հարկ է նշել, որ քրիստոնյաների շրջանում որևէ ամուրի արձանագրված չէ, այնինչ մահմեդականների շրջանում, նրանք եղել են 3-ը: Այսպիսով, 395 քրիստոնյա և 31 մահմեդական ընտանիքների հիման վրա կարելի է փաստել, որ ընդհանուր բնակիչների թիվը՝ համապատասխանաբար կազմել է 1975 և 158 մարդ:

Հարկացուցակի ուսումնասիրությունը թույլ է տալիս տեղեկանալ, որ Աղչաքալայում գրանցվել է շուրջ 112 այգի: Ուշագրավ է, որ դրանք գտնվել են միայն Ղարաբաղ գյուղում: Բացի

այգիներից, նշվում է նաև 14 պարտեզի և երկու հողատարածքի մասին:

Աղչաքալում գրանցվել են նաև մի շարք ջրաղացներ, ինչպես նաև ձիթհաններ և 2 ներկատուն: Ջրաղացների ընդհանուր թիվը կազմել է 21 հատ, որից միայն 2-ն է եղել ավեր: Ի տարբերություն ջրաղացների, ձիթհանների քանակը Աղչաքալայում 3-ն էր, որոնց շրջանում բոլորը գործող էին: Ինչ վերաբերում է ներկատներին, ապաամբողջ *քազայում* դրանք եղել են երկուսը:

Աղչաքալայի *քազայից* հետո նշված է Գառնիի հարկացուցակը, որը 1590 թ. օսմանյան աշխարհագրի համաձայն՝ բաղկացած է եղել 42 գյուղից[233]: Դրանց թվին են պատկանել Գառնի, Վերին Քիլան, Ներքին Քիլան, Գողթ, Գուրանջա (՞), Ամարգիք, Քըզըլվանք, Ավանիք, Փեշիխան, Դուբին (՞)[234], Քովայ, Արտաշիր, Իմանշալու, Քոյլահիսար, Քուշանջը, Ափաբաքլու, Թամամլու, Քըզըլ Ավա, Դոքուզ, Աղաջ Արի, Ալի Քարիք, Հարուն Բիրուն, Բիրանուս, Մուսա Հաջիլու, Չաթալար, Մուսթաֆալու, Աբդաբլուսի, Նովրուզլու, Ալմալու, Փիր Ահմեդ Աբդալ, Ախուշվանք, Մանքուս, Քաղավազ, Բափաքիր, Մոլա Փոլադ, Յոլ Քեսին, Ջանդարլար, Քարավելի Քըշլաղը, Աղչա Քըշլաք Քըշլաք, Խեթաբթարա, Քազանլու[235] և Արնուս գյուղերը: Դրանց շրջանում գտնվել է նաև 10 *մազրայե*:

Նշյալ բնակավայրերից 27-ը բնակեցված չէր: Այդպիսիններց էին՝ Ներքին Քիլանը, Ամարգիքը, Ավանիքը, Քովայը, Քոյլահիսարը, Քուշանջին, Ափաբաքլուն, Թամամլուն, Քըզըլ Ավան, Աղաջ Արին, Ալի Քարիքը, Հարուն Բիրունը, Բիրանուսը, Մուսա Հաջիլուն, Չաթալարը, Մուստաֆալուն, Փիր Ահմեդ Աբդալը, Մանքուսը, Բափաքիրը, Մոլա Փոլադը, Յոլ Քեսինը, Ջանդարլարը, Քարավելի Քըշլաղը, Աղչա Քըշլաքը, Խեթաբթարան, Քազանլուն և Արնուս գյուղերը: Սրանց դիմաց հիմնականում կամ նշված էր միայն սահմանված հարկաչափը, կամ էլ դրա հետ մեկտեղ արձանագրված էր որևէ *չիֆթի* կամ *մազրայեի* առկայություն:

Հարկացուցակում բնակչություն չարձանագրված գյուղերի թվում լրացուցիչ հետաքրքրություն է առաջացնում Փիր Ահմեդ

---

[233] BOA, 0633, ss. 200-212.
[234] Այն հայտնի է եղել նաև՝ Թոփրաք Քալա անվամբ (այսուհետև՝ Թոփրաք Քալա):
[235] Այն հայտնի է եղել նաև՝ Իսմանլու անվամբ:

Աբդալ գյուղը: Նշված է՝ գյուղը գտնվել է Գուրանջայի (՞) հարևանությամբ: Հիշյալ *նահիեում* նմանօրինակ աշխարհագրական բնույթի այլ գրություն չկա:

Հարկացուցակը կարևոր սկզբնաղբյուր է ժողովրդագրության ուսումնասիրման տեսանկյունից: Գառնիի *նահիեն* նույնպես աչքի է ընկել քրիստոնյա և մահմեդական բնակչությամբ, որոնք ապրել են առանձին գյուղերում: Բացառություն էր կազմում միայն Գառնի գյուղը, որտեղ գրանցվել է 96 քրիստոնյա և 4 մահմեդական[236]:

Սոսկ քրիստոնյաներով բնակեցված գյուղերը կազմել են ընդամենը 4-ը: Դրանց թվին են դասվել՝ Վերին Քիլանը (13 անձ), Գողթը (10 անձ), Գուրանջան (՞) (9 անձ) և Քըզըլվանքը (10 անձ):

Ինչ վերաբերում է միայն մահմեդականներով բնակեցված գյուղերի վիճակագրական տվյալներին, ապա Փեշիխան գյուղում նրանք կազմել են 16 անձ, Թոփրաք Քալայում՝ 32 անձ, Արտաշիրում՝ 19 անձ, Իմանշալուում՝ 16 անձ, Դոքուզում՝ 11 անձ, Աբդաբլուսիում՝ 7 անձ, Նովրուզլուում՝ 18 անձ, Ալմալուում՝ 11 անձ, Քաղավալում՝ 18 անձ և վերջապես Աղչաքըշլաքում՝ 13 անձ:

Նկատելի է, որ հարկատուների թվով *նահիեում* աչքի է ընկել խառը բնակչություն ունեցող Գառնի գյուղը:

Տվյալների հանրագումարից ստացվում է՝ 138 քրիստոնյա և 165 մահմեդական: Կարևոր է նկատել, որ քրիստոնյա բնակչության շրջանում կրկին գրանցված չեն եղել ամուրիներ: Իրավիճակը տարբերվել է մահմեդականների շրջանում, ուր ընտանիքների թիվը հասել է 145-ի, քանի որ նրանց շրջանում ամուրիների թիվը 20 էր: *Նահիեի* ողջ բնակչության թվի համատեքստում ստացվում է, որ եղել է շուրջ 690 քրիստոնյա և 745 մահմեդական բնակիչ: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ փոքր առավելությամբ ընթացիկ *նահիեի* մեծամասնությունը կազմել են մահմեդականները:

*Նահիեում* բնակչության շրջանում տարածված է եղել այգիների մշակությունը: Ընդհանուր առմամբ՝ կարելի է հաշվել 151 այգի, ինչը բավական շատ էր՝ համադրած այն գյուղերի թվին, որի դիմաց հարկացուցակում բնակչություն է եղել արձանագրված: Ամենաշատ այգիները եղել են Գառնի գյուղում, որտեղ 101 հատ

[236] BOA, 0633, s. 200.

էին[237]: Հարկ է նշել, որ բացառությամբ նշյալ բնակավայրի և Թոփրաք Քալայի (6 այգի), այգիները առկաեն միայն քրիստոնեաբնակ գյուղերում: Բացի այդ, արձանագրված են 29 չիֆթ, 4 պարտեզ և 4 հողատարածք:

Ջրաղացների և ձիթհանների դիմաց գանձվող միջոցները նույնպես կարևոր նշանակություն են ունեցել *նահիեի* տնտեսության համար: Դրանք համապատասխանաբար 15 և 3 հատ էին, որոնցից շահագործման ենթակա չէր մեկ ջրաղաց և նույնքան ձիթհան:

Ըստ աշխարհագրի՝ Գառնիին հաջորդում է Վեդիի *նահիեն*, որին պատկանել է 52 գյուղ[238]: Դրանք են՝ Մեծ Վեդին, Աշթին, Փոքր Վեդին, Ղարաբաղը, Ջիղինը (՞), Բաղչաջաքը, Մունլա Սեյֆ Ալդինը, Խոսրովը, Մեծ Դիքլուն, Փոքր Դիքլուն, Չուքանդազը, Վերին Քարաբիղը, Ներքին Քարաբիղը, Օշարը, Քըզըլվիրանը, Ձենջիրլուն, Ինջա Դիրեն, Աղչաքիլիսեն, Քադիքենդին, Աղչավիրանը, Գութուսը, Հաքասը, Չանլուն, Ջարմայիսը, Քուսուսը, Ջարդաքլուն, Փունուսը, Քարաջա Աբդալը, Գյոլքենդին, Թինասը, Շեյխջաքը, Քինզաքը, Ախփարսը, Խամուդը, Մանկիկը, Ձիմմին, ....., Անգիզը, Մուսա Դերվիշը, Ծահրիյարը, Սուլթան Սարայը, Ալի Քարան, Մաքար Դերվիշը, Ծաբար Ալքուջը (՞), Քարախաչը, Միրարուսը, Արմուքը, Գել Դերվիշը, Քամիշլուն, Քուրավանը, Միրաքլու Բուջաղըն և Փիրիլուն: Դրանց շրջանում արձանագրված է նաև 6 *մազրայե*:

Նշյալ գյուղերի ճնշող մեծամասնության դիմաց որևէ գյուղացի արձանագրված չէ և միայն 9 գյուղ է աչքի ընկել հաշվառված հպատակներով: Այդ բնակավայրերից էին՝ Մեծ Վեդին, Աշթին, Փոքր Վեդին, Ղարաբաղը, Ջիղինը (՞), Բաղչաջաքը, Մունլա Սեյֆ Ալդինը, Խոսրովը, Մեծ Դիքլուն և Քուրավանը: Հետաքրքրական է, որ Քարաջա Աբդալ գյուղի դիմաց նույնպես որոշ աշխարհագրական ճշգրտում է տրված, ըստորի՝ այն գտնվել է Գել Դերվիշ և Փիրիլու գյուղերի մոտակայքում:

Հարկացուցակում գրանցված մարդկանց վիճակագրությունը հնարավորություն է տալիս ներկայացնելու *նահիեի* ժողովրդագրական պատկերը: Նյութի քննությունից պարզվում է, որ

[237] BOA, 0633, ss. 201-202.
[238] Նույն տեղում, էջ 214-227:

գյուղերում եղել են ինչպես քրիստոնյաներ, այնպես էլ՝ մահմեդականներ, որոնք ապրել են միայն առանձին բնակավայրերում:

Քրիստոնեաբնակ գյուղերը *նահիեում* եղել են ընդամենը 3-ը, որոնցից էին՝ Ղարաբաղը, Ջիղինը (՞) և Խոսրովը: Այնտեղ արձանագրված են՝ համապատասխանաբար 33, 7 և 10 քրիստոնյա: Ինչ վերաբերում է *նահիեի* մահմեդականներին, ապա նրանք բնակվել են հետևաբար՝ մնացյալ գյուղերում՝ կազմելով Մեծ Վեդիում՝ 81 անձ, Աշթիում և Փոքր Վեդիում՝ 28-ական անձ, Մունլա Սեյֆ Ալդինում՝ 21 անձ, Մեծ Դիքլուում՝ 40 անձ և Քուրավանում՝ 27 անձ:

Այսպիսով, *նահիեում* ամենաշատ գրանցված բնակչությամբ՝ աչքի է ընկել Մեծ Վեդին:

Վերոնշյալ տվյալներից ստացվում է, որ *նահիեում* հաշվառվածների թիվը կազմել է թիվը կազմել է 50 քրիստոնյա և 225 մահմեդական: Հարկ է շեշտել, որ քրիստոնյաների շրջանում որևէ ամուրի գրանցված չէ, ուստի եղել է նույնքան ընտանիք: Դրան զուգահեռ՝ մահմեդականների շրջանում եղել է 197 ընտանիք, որը պայմանավորված է նրանց շրջանում 28 ամուրիի գոյությամբ: Ասպիսով, կարելի է արձանագրել, որ *նահիեում* ապրել է շուրջ 250 քրիստոնյա և 1013 մահմեդական, ինչը փաստում է, որ քրիստոնյաները փոքրամասնություն են կազմել:

Աշխարհագրի քննությունից պարզվում է, որ Վեդիի *նահիեն* աչքի է ընկել այգիներով, պարտեզներով և չիֆթերով: Դրանց շրջանում առանձնանում էին հատկապես այգիների մշակությունը, որոնք բավական շատ են արձանագրված՝ ամբողջ *նահիեում* կազմելով 214 հատ: Ամենաշատ այգիներով աչքի ընկած գյուղերը՝ Ղարաբաղն ու Մեծ Վեդին էին, որոնք ունեին համապատասխանաբար՝ 93[239] և 88[240] այգի: Ստացվում է, որ 33 ընտանիք ունեցող գյուղը այգիների քանակով գերազանցել է *նահիեում* հաշվառված ամենամեծ բնակավայրին:

Չնայած պարտեզները նկատելիորեն ավելի քիչ են եղել այգիներից, այնուամենայնիվ, դրանք զգալի էին՝ լինելով 19 հատ:

[239] BOA, 0633, ss. 218-219.
[240] Նույն տեղում, էջ 215-216:

Ինչ վերաբերում է *չիֆթերին*, ապա նրանց թիվն ամբողջ *նահիեում* չի գերազանցել 10-ը:

Կարևոր է նաև ջրաղացների և ներկատների քանակի ուսումնասիրությունը: Պարզվում է, որ *նահիեում* հաշվառված է եղել 41 ջրաղաց, որից 5-ը՝ շահագործման ենթակա չէր: Ինչ վերաբերում է ներկատներին, ապա դրանք ընդամենը երկուսն էին, որից մեկը Մեծ Վեդիում է արձանագրված, իսկ մյուսը՝ Ձենջիրլու գյուղում:

Օսմանյան աշխարհագրում հաջորդը նշված է Ապարանի *նահիեն*[241]: Այն աչքի է ընկել հետևյալ գյուղերով, որոնցից են՝ Քարմա Սաթին, Միզանջի կամ Թոփչուն, Ապարան Օղալը, Ջեբիբինլուն (՞), Գուրքուչին, Ծիրվանջաքը, Դենգեվանքը, Քարաբուլաքը, Ասթա Ձանգինը, Քարակերտը, Սաչլուն, Քարաքիլիսեն, Քալաջաքը[242], Մոլա Քասեմը, Թամջիլուն, Յարղալ Դերվիշը, Բաթջիլուն, Քըզըլ Բիրունը, Փարանջան, Քենդլուն, Սարո Բուդաքը, Գել Աբդինը, Սամ Դերվիշը (՞), Գյոլլուջան, Բաշ Ապարանը, Ջարահաջը, Սարին[243], Դելու Սեյդին, Խարփուշրաքիլիսեն, Սարոմիրաքը, Բարսեղ Գունին, Անտոնը, Փոքր Ալին, Յարփաշան, Ջանդարը, Քարաբուրունը, Ծիրեքալասըն, Յաղուբ Դերվիշը[244], Աբխանա Քիղը, Լալեն, Քյոսալարը, Բեքիրլուն, Յաղուբ Դերվիշը[245], Նազար Օղալը, Բուլխիրը՞, Բազարջաքը, Ղազնաֆարը և Վալադլուն:

Ուշագրավ է, որ նշված բոլոր գյուղերը բնակեցված չէին: Այնուամենայնիվ, ինչպես նախորդ *նահիեների* նմանատիպ գյուղերը, այնպես էլ Ապարանի գյուղերը, ներկայացվել են իրենց ընդհանուր հարկաչափերով:

Հարկ է ուշադրություն դարձնել այն իրողությանը, որ ինչպես երևաց գյուղերի թվարկումից, փաստացիորեն եղել է 2 Յաղուբ Դերվիշ անունով գյուղ, որոնք տարբերվում էին միմյանցից իրենց երկրորդ անուններով:

---

[241] BOA, 0633, ss. 232-238.
[242] Այն հայտնի է եղել նաև՝ Օմար Գունի անվամբ:
[243] Այն հայտնի է եղել նաև՝ Ջայանջըքենդի անվամբ:
[244] Այն հայտնի է եղել նաև՝ Համին Գունի անվամբ:
[245] Այն հայտնի է եղել նաև՝ Բազարջաք անվամբ:

Օսմանյան վավերագրի համաձայն՝ Ապարանին հաջորդում է Ծարաբխանեի[246] *նահիեն*, որը ներառել է 15 գյուղ[247]: Դրանք են՝ Քարաջավիրանը, Քարաբուրքը (՞), Գյուզալ Դերեն, Քենդին, Քարաջաքալան, Քուրանիյեն (՞), Բունջաքլուն, Ջարջառիսը, Խասբեյը, Աղզանը Քանլուն, Մունլա Մեհմեդը, Քովալլան, Աղչաքիան, Աբդի Օղլուն և Քուրու Բողազը: Ապարանի *նահիեի* նման նշյալ բոլոր գյուղերը դատարկված էին:

Երևանի *վիլայեթի* աշխարհագրի մաս է կազմել Թալինի *քազան*, որը նույնպես բաղկացած է եղել մի շարք գյուղերից[248]: Դրանց թվում էին՝ Թալին, Աշնակ, Մաստարա, Փիրի Քարաքի, Գյոզլու, Մեհրիբանլու, Աղչաքալա[249], Ղուրբան Քուլի, Ռենդ, Ծեյխաջի, Մունլա Հուքի, Աքշաք Ահմեդ[250], Քուլի Դերվիշ, Քըզըլվիրան, Ջառ Աբդալա[251], Բուլադաջաք (՞)գյուղերը: Նշյալ 16 գյուղի շրջանում նշված է նաև 4 *մազրայե*:

Թալինում նույնպես մեծ թիվ են կազմել չբնակեցված գյուղերը: Արդյունքում, միայն Թալին, Աշնաք, Մաստարա և Մեհրիբանլու գյուղերն են աչքի ընկնում լիարժեք տեղեկություններով:

Օսմանյան հարկամատյանի մյուս կարևոր հատվածը վերաբերում է Թալինի ժողովրդագրությանը: Նյութի քննությունից պարզվում է, որ Թալինում ապրել են և՛ քրիստոնյաներ, և՛ մահմեդականներ, որոնք, բացառությամբ Մեհրիբանլուի, միևնույն գյուղի մաս են կազմել:

Խառը բնակչությամբ աչքի ընկնող առաջին գյուղում՝ Թալինում, արձանագրված է 130 քրիստոնյա և 12 մահմեդական: Հաջորդաբար՝ Աշնաքում հաշվվում է 22 քրիստոնյա, 12 մահմեդական և Մաստարայում՝ 21 քրիստոնյա, 10 մահմեդական: Ինչ վերաբերում է Մեհրիբանլուին, ապա այնտեղ նկատելի է 15 մահմեդական անձ: Ըստ գրանցված անձնանունների թվի մեծության՝ երևում է, որ նշյալ 4 գյուղի շրջանում ամենախիտը բնակեցված է եղել Թալին գյուղը:

---

[246] Գտնվել է Ապարանից հյուսիս: Տեղանունների բառարան, հատոր 4, էջ 86:
[247] BOA, 0633, ss. 240-241.
[248] BOA, 0633, ss. 244-249.
[249] Այն հայտնի է եղել նաև՝ Ջան Քեդի անվամբ:
[250] Այն հայտնի է եղել նաև՝ Քարաջավիրան անվամբ:
[251] Այն հայտնի է եղել նաև՝ Բուդաք անվամբ:

Ի մի բերելով ստացված տվյալները՝ պարզում ենք գրանցված 173 քրիստոնյայի և 49 մահմեդականի մասին: Հարկ է ընդգծել, որ քրիստոնյաների շրջանում բոլորը ամուսնացած էին, այնինչ մահմեդական ընտանիքների թիվը, հաշվի առնելով 3 ամուրիի գոյությունը, հասել է 46-ի: Այդ արդյունքների համաձայն՝ Թալինի ընդհանուր բնակչության թիվը ունեցել է 865-ը 233-ի դիմաց հարաբերակցությունը, ինչը փաստում է՝ քրիստոնյաների շոշափելի քանակական առավելությունը:

*Քազայում* արձանագրվել են նաև մեծ թվով այգիներ, որոնց թիվը հասել է 116-ի: Դրանք գտնվել են միայն Թալին գյուղում (93 հատ[252]) և Աշնաքում (23 հատ[253]): Բացի այգիների առկայությունից, Թալինում եղել է նաև 1 հողատարածք և 2 *չիֆթ*:

Օսմանյան աշխարհագրի հաջորդ *նահիեն* Արմավիրն է, որը ներառել է 20 գյուղ[254]: Դրանք են եղել՝ Արաքուն, Ծահրիյարը, Մուսա Ջաջիլուն, Քուր Սուլթանշալուն, Քարալավեն, Բենինջեն, Քըսմի Օղալը, Մեսքին Օղլուն, Օմլուն[255], Ասաշլուն, Մուսա Ջաջիլուն, Ղանիլուն, Քարաքուլը, Քուրանջիլուն[256], Միր Մեհմեդ Գունին, Մունլա Աբդինը, Քազալջալուն, Ամսիրլուն, Ջան Ահմեդլուն և Քարախարարլուն: Բացի այդ, արձանագրված է 2 *մազրայե*:

Հիշյալ գյուղերից միայն Արաքու և Ծահրիյար գյուղերն են առանձնացել բնակչությամբ. առաջինում արձանագրվել է 38, իսկ մյուսում՝ 36 անձնանուն:

Հարկ է նշել, որ միայն Արաքուում են ապրել քրիստոնյաներ և մահմեդականներ: Ըստ *նահիեի* աշխարհագրի՝ այն ունեցել է 16 քրիստոնյա և 22 մահմեդական անձ: Ինչ վերաբերում է Ծահրիյարին, ապահաշվառված 36 հարկատուները եղել են մահմեդական:

Աշխարհագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քրիստոնյա ընտանիքները եղել են 16-ը, իսկ մահմեդական ընտանիքները՝ 45-ը, քանի որ նրանց շրջանում կար 13 ամուրի: Այդ տվյալների արդյունքում ստացվում է, որ *նահիեում* ընդհանուր բնակիչների թիվը կազմել է 80 քրիստոնյա, 238 մահմեդական:

---

[252] BOA, 0633, ss. 245-246.
[253] Նույն տեղում, էջ 246:
[254] Նույն տեղում, էջ 250-252:
[255] Այն հայտնի է եղել նաև՝ Բաղջիլու անվամբ:
[256] Այն հայտնի է եղել նաև՝ Նեհրեքեշ անվամբ:

Հաջորդ *նահիեի* տվյալները վերաբերում են Աբնիքին (՞)[257], որն աչքի է ընկել 37 գյուղով[258]: Դրանք են՝ Մուսայիլը, Վերին Քըզըլվիրանը[259], Ջերբեշը, Բարդաքլուն, Ադի Թիմանը (՞), Քարավելին, Ծերհեբարը, Քարաշադին, Աքվիրանը, Քուրդլուջան[260], Քիքնարը (՞), Ջիլիանվիրանը, Քամիզլուն, Խուզարը, Նողաջին, Քըզըլքուլան, Ահմեդլուն, Գյանջալուն, Ահմադջաքը, Մազազջաքը, Բիրաթլուն, Քարա Թեփեն[261], Դուլինբար Գունին, Ջան Ահմադլուն, Աքբուջաքը, Մալ Քարան, Ամինջանը, Փիրիլու Գունին, Յենիջեն, Նուր Ալին, Մոլա Բարանը, Վանքը, Ամալ Փաշան, Քարա Ահմեդը, Սաբեղը, Քուրդեշը և Դունդար Վիրանը: Բացի այդ, Ադի Թիման և Մոլա Բարանիում գրանցված են 1-ական *մազրայե*: Հարկ է փաստել, որ *նահիեում* բնակեցված գյուղ չկար:

Ըստ Երևանի *վիլայեթի* հաջորդականության՝ հաջորդը նշվում է Արալըքի[262] *քազան*[263]: Այն նույնպես բաժանված է եղել մի շարք գյուղերի, որոցից էին՝ Ախուրին, Աքբաշը, Բոլորանը, Բուրալան Բուլլաք Փաշան[264], Ջադքիրանը, Արաբ Օղալը, Յենիջե Ալամընան, Մամումլուն (՞), Ալի Քըզըլը, Նովրուզլուն, Հուդանլուն, Վերին Քարաքունիլուն, Թաթիփանը (՞), Ամինջան, Աքշաքը, Քարա Քուրղանը, Բեյդինարեն, Աբուդ Դարդան, Իսմայիլբեյլուն, Ծաբընջան Ջանլուն, Փոլադլուն, Չեքնին, Խարվաշ Քըշլաղը, Արաթանը, Ծիրազլուն, Ներքին Քարաքունիլուն, Քենդ Քըշլաղը[265], Բերաթ Քըշլաղը, Քայնին (՞) և Բուլաք Փաշան: Արալըքի գյուղերը ներառել են նաև թվով 5 *մազրայե*, որոնք ընդգրված են եղել Ջադքիրանում, Յենիջե Ալամնայում, Մամումլուում, Հուդանլուում և Քարաքուրղանում:

Ուշագրավ է, որ նշյալ *քազային* պատկանող 30 գյուղից միայն առաջին երեքում է, որ բնակչություն է արձանագրված: Ընդ որում՝

---

[257] Նշյալ վարչա-քաղաքական միավորի տեղադրման վայրը մեզ չի հաջողվել պարզել:
[258] BOA, 0633, ss. 254-258.
[259] Այն հայտնի է եղել նաև՝ Քոթլուբեյ անվամբ:
[260] Այն հայտնի է եղել նաև՝ Ամիր Մեհմեդ անվամբ:
[261] Այն հայտնի է եղել նաև՝ Դուսթ Ամալ անվամբ:
[262] Հայկական գրականության մեջ վկայված է՝ Արալըխ տեղանվամբ: Գտնվել է Սուրմալու գավառում, նրա հարավ-արևելյան մասում, Մասիսից մոտ 23 կմ հեռավորության վրա: Տեղանունների բառարան, հատոր, 1, էջ 383:
[263] BOA, 0633, ss. 264-271.
[264] Այն հայտնի է եղել նաև՝ Խաբար Ալդին Քըշլաղը անվամբ:
[265] Այն հայտնի է եղել նաև՝ Գերեք Բուրնի և Բազարգան անուններով:

Աքբաշում, գրանցված են միայն մարդկանց անձնանունները և ընդհանուր հարկաչափը՝ առանց որևէ հարկի թվարկման:

Նյութի քննությունից պարզվում է, որ Արալըքի բնակչությունը կազմված է եղել քրիստոնյաներից և մահմեդականներից: Միայն քրիստոնյաներով էր բնակեցված բնակչությամբ ամենամեծ գյուղը՝ Ախուրին, որտեղ հաշվառվել է 160 անձ: Աքբաշ գյուղը կազմված էր զուտ մահմեդականներից, որը աչքի է ընկել 11 հարկատուով: Ինչ վերաբերում է Բոլորանին, ապա հանդիպում է 45 քրիստոնյա և 10 մահմեդական:

Ստացված նյութերի հիման վրա պարզ է դառնում, որ քրիստոնյաները ոչ միայն խառը բնակչությամբ աչքի ընկնող միակ գյուղում՝ Բոլորանում էին մեծամասնություն կազմում, այլև՝ 3 գյուղի ընդհանուր հաշվարկում, որը արտահայտվել է 205-ը 21-ի հարաբերակցությամբ: Բացի այդ, մահմեդականները կազմել են ընդհանուր 4 ամուրի, այնինչ քրիստոնյաների շրջանում ամուրի չի արձանագրվել: Հետևաբար ստացվում է՝ 205 քրիստոնյա և 17 մահմեդական ընտանիք: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ *քազայում* ապրել են ընդհանուր առմամբ՝ 1025 քրիստոնյա և 89 մահմեդական, ինչը վկայում է քրիստոնյաների բացարձակ մեծամասնության մասին:

Կարևոր է արձանագրել, որ Ախուրի գյուղը աչքի է ընկել նաև ամենաշատ այգիներով, որոնց քանակը հասել է 85-ի[266]: Այլևս ոչ մի բնակակավայրի դիմաց այգի նշված չէ: Գյուղն աչքի է ընկել նաև 30 ջրաղացով և մեկ ձիթհանով[267]: Հատկանշական է, որ արձանագրված ջրաղացներից ուղիղ կեսը եղել են ավեր վիճակում:

Օսմանյան աշխարհագրում հաջորդը նշված է Օրդուբադ քաղաքը[268]: Այն բաղկացած է եղել 6 թաղից, որոնցից էին՝ Մաքիսը (՞), Քուրադանալը[269], Ղաբրաշը (՞), Սարշեհիրը, Ջամին և Արամանեն[270]: Հարկ է նշել, որ առաջին հինգ թաղում բնակվել են բացառապես մահմեդականներ, իսկ վեցերորդում՝ Արամանեում, քրիստոնյաներն ու մահմեդականները ապրել են միասին:

---

[266] BOA, 0633, ss. 265-266.
[267] Նույն տեղում, էջ 266-267:
[268] Նույն տեղում, էջ 276-289:
[269] Այն հայտնի է եղել նաև՝ Մեյդան անվամբ:
[270] BOA, 0633, ss. 276-279.

Թաղերում գրանցված մահմեդականների ընդհանուր թիվը կազմել է 266 անձ, որոնցից 14-ը եղել է ամուրի: Բացի այդ, նշվում է 3 հոգևորականի մասին, որոնք բնակվել են Օրդուբադի մզկիթում:

Ամենաշատ մահմեդականները նկատելի են Ղաբրաշում (՞)՝ կազմելով 82 մարդ: Ըստ նվազման կարգի՝ Մաքիսում (՞) նշվել է 63 մահմեդական, Քուրդանալում՝ 57, Սարշեհիրում՝ 44, Արամանեում՝ 17 և Ջամիում՝ 3 անձ: Ի դեպ վերջինները եղել են հոգևորականներ:

Արամանե թաղում մահմեդականների հետ համատեղ նշված է 15 քրիստոնյա հարկատու, որոնց շրջանում ամուրիներ չեն գրանցվել: Այսպիսով, ընդհանուրի բերելով թաղերում ապրող բնակիչների թիվը, ստացվում է՝ 75 քրիստոնյա և 1274 մահմեդական:

Օրդուբադ քաղաքի մարդկանց հաշվումի տվյալները չեն համապատասխանում Մեհմեդ Իսլամօղլուի ներկայացրած թվերին, որտեղ կարելի է արձանագրել 2 վրիպում: Առաջինը՝ հեղինակը քաղաքում 6-ի փոխարեն հաշվել է 5 թաղ՝ բաց թողնելով ամենամեծ հարկատուներով աչքի ընկած թաղը[271]: Երկրորդ սխալը վերաբերում է ամուրիների թվին, որոնց թվում Իսլամօղլուն հաշվում է 15 անձ[272], այնինչ նրանք 14-ն էին[273]: Հետաքրքրական է այն իրողությունը, որ հեղինակը նաև 2 ամուրի է հաշվել Արամանե թաղում[274], երբ բնագրում թե՛ մահմեդականների, թե՛ քրիստոնյաների շրջանում, որևէ ամուրի արձանագրված չէ[275]: Հետևաբար ակներև է, որ նշյալ պատմաբանի ներկայացրած ժողովրդագրական տվյալները վերանայելի են:

Անձնանուններից հետո անցում է կատարվում ըստ թաղերի՝ քաղաքի ինչքին: Դրանց շրջանում եղել են միայն այգիներ և պարտեզներ: Հարկ է նկատել, որ իշխանությունների կողմից թաղերի թվարկման հաջորդականությունը չի պահվել և այն սկսվել է Արամանե թաղից:

Նյութի քննությունից պարզ է դառնում, որ Արամանեում եղել է ընդհանուր 388 այգի և ընդամենը 5 պարտեզ[276]: Մյուս բոլոր

---

[271] İslamoğlu M. A., նշվ.. աշխ., էջ 135:
[272] Նույն տեղում:
[273] BOA, 0633, ss. 276-289.
[274] İslamoğlu M. A., նշվ.. աշխ., էջ 135:
[275] BOA, 0633, s. 279.
[276] Նույն տեղում, էջ 279-285:

թաղերում որևէ այգի նշված չէ, փոխարենը նշվել են պարտեզներ: Ըստ օսմանյան աղբյուրի հաջորդականության՝ Ղաբրաշում (՞) պարտեզները եղել են 54-ը[277], Քուրդանալում՝ 51-ը[278], Մաքիսում (՞)՝ 64-ը[279], իսկ Սարշեհիրում՝ 33-ը[280]: Այս տվյալները փաստում են, որ թաղերի ողջ պարտեզների քանակը չի գերազանցում Արամանեում տեղ գտած այգիների թվին:

Օրդուբադ քաղաքին հաջորդում է Ազադջիրանի[281] *նահիեն*[282]: Այն բաղկացած է եղել հետևյալ գյուղերից՝ Սալնաբ, Ուստուփու, Փարաղա, Տևի, Խաչանի, Վանանդ, Ակոռի, Դիր, Էյլիս, Սահրայի Էյլիս, Դասթաք, Ազատ, Դերնիս, Դանաքերտ, Քեշան, Քուդզամ, Քելուդ, Քոչարի, Քեսիրան, Օրմուս (՞), Դոքլուդ (՞), Բույուրջի, Նասրիվազ, Օփիազ, Ալահի, Բիրուդ, Մասքուն, Բահչը, Քեսիրան, Բիլավ[283], Ամիրքենդի և Խանաղա: Սրանց շրջանում աչքի ընկել նաև 1 *մազրայե*: Չբնակեցված գյուղերի թիվը 6-ն էր, որոնցին էին՝ Քեշանը, Նասրիվազը, Օփիազը, Բիրուդը, Մասքունը և Քեսիրանը:

Ազադջիրանի օսմանյան հարկացուցակը ևս կարևոր սկզբնաղբյուր է ժողովրդագրության տեսանկյունից: Նյութի քննությունից պարզվում է, որ *նահիեում* ապրել են քրիստոնյաներ և մահմեդականներ: Նրանք բնակվել են ինչպես առանձին գյուղերում, այնպես էլ՝ ընդհանուր գյուղերում:

Սոսկ քրիստոնյաներով էին բնակեցված հետևյալ գյուղերը՝ Սալնաբը (56 անձ), Փարաղան (9 անձ), Տևին (6 անձ), Սահրայի Էյլիսը (31 անձ), Օրմուսը (՞) (38 անձ), Բույուրջին (7 անձ) և Ալահին (6 անձ):

Արձանագրված մարդիկ միայն մահմեդական էին՝ Ուստուփուում (22 անձ), Խաչանիում (6 անձ), Ակոռիում (15 անձ), Դիրում (65 անձ), Ազատում (67 անձ), Քուհզամում (21 անձ), Քելուդում (6 անձ), Քոչարիում (29 անձ), Քեսիրանում (7 անձ), Դոքլուդում (՞) (24

---

[277] Նույն տեղում, էջ 285-286:
[278] Նույն տեղում, էջ 286-287:
[279] Նույն տեղում, էջ 287-288:
[280] Նույն տեղում, էջ 288:
[281] Հայկական գրականության մեծ վկայված է Ազագիրան տեղանվամբ: Քաղաք Նախիջևանի շրջանում, պատմական Վասպուրական աշխարհի Գողթն գավառում: Այն գտնվել է Օրդուբադ քաղաքից 11 կմ հեռավորության վրա: Տեղանունների բառարան, հատոր 1, էջ 37:
[282] BOA, 0633, ss. 290-314.
[283] Այն հայտնի է եղել նաև՝ Աղաջանլու անվամբ:

անձ), Բահչըում (19 անձ), Բիլավում (34 անձ), Ամիրքենդիում (6 անձ) և Խանաղայում (12 անձ):

Ինչ վերաբերում է խառը բնակչությամբ աչքի ընկած գյուղերին, ապա Վանանդում՝ նշված է 24 քրիստոնյա, 74 մահմեդական, Էյլիսում՝ 114 քրիստոնյա, 9 մահմեդական, Դասթաքում՝ 43 քրիստոնյա, 13 մահմեդական, Դերնիսում՝ 19 քրիստոնյա, 14 մահմեդական և Դանաքերտում՝ 12 քրիստոնյա և 4 մահմեդական: Նկատելի է, որ համատեղ ապրելիս, բացառությամբ Վանանդի, քրիստոնյաները քանակական առավելություն են ունեցել մահմեդականների նկատմամբ: Բացի այդ, նկատելի է, որ գյուղերի շրջանում արձանագրված ամենամեծ թվով հարկատուների շրջանում աչքի է ընկել Էյլիս գյուղը:

Բերված տվյալներից կարելի է հաշվել, որ *նահիեում* գրանցված մահմեդականների թիվը հասել է 447-ի, որոնց շրջանում կարելի է հաշվել 75 ամուրի: Դրան զուգահեռ, հարկացուցակում նշված քրիստոնյաների ընդհանուր թիվը հասել է 365-ի, որոնցից 29-ը ամուրի էր: Արդյունքում, ստացվում է 372 մահմեդական և 336 քրիստոնյա ընտանիք, ինչն էլ փաստում է *նահիեում* 1935 մահմեդականների և 1709 քրիստոնյաների գոյությունը:

Աշխարհագրի տեղեկություններով՝ Ազադջիրանի *նահիեում* լայնորեն տարածված է եղել այգիների մշակությունը: Մասնավորապես նշվում է ընդհանուր 723 այգի, որից 12-ը գտնվել են Դիր գյուղում[284]՝ որպես *վաքֆային* սեփականություն: Հարկ է նշել, որ ամենաշատ թվով այգիները նկատվում են Վանանդ գյուղում՝ կազմելով 168-ը[285]: *Նահիեում* այգիներից բացի, եղել են պարտեզներ, հողատարածքներ, *չիֆթեր*, որոնց թիվը անհամաչափորեն ավելի քիչ է եղել գրանցված: Այսպես օրինակ՝ կարելի է հաշվել շուրջ 7 պարտեզ, 38 հողատարածք և 4 *չիֆթ*[286]:

Ազադջիրանում գրանցվել են նաև ջրաղացներ և 1 ներկատուն: Ջրաղացների ընդհանուրը թիվը կազմել է 30-ը, որոնցից 25-ը եղել են բարվոք վիճակում:

---

[284] BOA, 0633, ss. 297-298.
[285] Նույն տեղում, էջ 294-295:
[286] Դրանք Դիր գյուղում եղել են վաքֆային տարածքներ:

Հաջորդը Ծորլութի[287] *նահիեն է*[288]: Այն ներառել է հետևյալ գյուղերը՝ Անապաթ, Քանթարա (՞), Վերին Ասա Քըլըջ (՞), Նուսնուս, Նուքադահ, Դիքան, Վիրաքիթ և Ներքին Ասա Քըլըջ (՞): Նշյալ գյուղերից միայն Վիրաքիթ և Ներքին Ասա Քըլըջ (՞) գյուղներ էին դատարկված:

Հարկացուցակի ուսումնասիրությունը շատ կարևոր է ժողովրդագրական տվյալների ներկայացման տեսանկյունից: Ըստ օսմանյան աղբյուրի՝ պարզ է դառնում, որ Ծորլութում նույնպես ապրել են քրիստոնյաներ և մահմեդականներ: Ուշագրավ է, որ գյուղերում սոսկ քրիստոնյաներով բնակեցված գյուղեր գոյություն չեն ունեցել, փոխարենը՝ նկատելի են միայն մահմեդաբնակ և խառը բնակչությամբ աչքի ընկնող բնակավայրեր:

Միայն մահմեդականներով էին աչքի ընկնում՝ թվով 4 գյուղ՝ Քանթարան (՞)՝ 10 հարկատու, Վերին Ասա Քըլըջը (՞)՝ 15 հարկատու, Նուքադահը՝ 13 հարկատու և Դիքանը՝ 14 հարկատու: Ինչ վերաբերում է խառը բնակչությամբ աչքի ընկնող գյուղերի վիճակագրությանը, ապա Անապաթում 41 հարկատուից 31-ը քրիստոնյա էր, 10-ը՝ մահմեդական, իսկ Նուսնուսում գրանցված է եղել 3 քրիստոնյա և 9 մահմեդական: Հարկամատյանում գրանցված մարդկանց թվով ամենամեծը եղել է Անապաթը:

Տվյալների ուսումնասիրությունից պարզվում է, որ քրիստոնյա ընտանիքների թիվը հասել է 34-ի, այնինչ մահմեդականներինը կազմել է 59-ը, քանի որ նրանց շրջանում նկատելի է 12 ամուրի: Արդյունքում ստացվում է, որ *նահիեի* ընդհանուր բնակչությունը կազմել է 170 քրիստոնյա և 307 մահմեդական:

Ծորլութում գրանցվել են մի շարք այգիներ և պարտեզներ: Մասնավորապես հաշվվում է շուրջ 44 այգի և 11 պարտեզ: Ամենաշատ

[287] Հայկական գրականության մեջ վկայված է Ծոռոթ տեղանվամբ: Նահիեն համապատասխանում է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Երնջակ գավառի մի մասին: Այժմ գտնվում է Նախիջևանի Ծոռութ գավառի հյուսիս-արևմտյան կողմում: Տեղանունների բառարան, հատոր 4, էջ 148:

[288] BOA, 0633, ss. 315-318.

այգիները գրանցված են Անապատում, որոնց թիվը հասել է 27-ի[289], իսկ 8 պարտեզը գտնվել է Նուսնուսում[290]:

Գյուղերում գրանցվել են նաև մի շարք ջրաղացներ, որոնց թիվը հասել է 8-ի, որոնցից ըստ համապատասխան գրության՝ շահագործման էր ընթակա 6-ը:

Օսմանյան աշխարհագրում հաջորդը Դերենուրգութի[291] *նահիեն է*[292]: Այն բաղկացած է եղել 5 գյուղից, որոնց թվում էին՝ Բիսթ, Ազնամիրը, Թալթաք (՞), Դերենուրգութ և Խալաս բնակավայրերը: Ուշագրավ է, որ բոլոր 5 գյուղի դիմաց արձանագրված են ամբողջական տվյալներ:

Հատկանշական է, որ նշյալ 5 գյուղի բնակիչները եղել են քրիստոնյաներ, որոնց շրջանում որևէ ամուրի արձանագրված չէ: *Նահիեում* հաշվվում է 27 քրիստոնյա ընտանիք, որոնցից 10-ը բնակվում էր Բիսթում, 5-ը՝ Ազնամիրում և 4-ական ընտանիք՝ մնացյալ գյուղերում: Ենթադրելի է, որ *նահիեում* բնակվել է շուրջ 135 բնակիչ:

Դերենուրգութում, ըստ օսմանյան աշխարհագրի, գրանցվել է 5 այգի և 1 պարտեզ, որոնք եղել են Բիսթ գյուղում[293]:

Օսմանյան աշխարհագրի հերթականությամբ՝ հաջորդ Զառի[294] *նահիեն* է[295], որի մեջ մտել են Այու, Զոդ, Քարասաթալ, Փիրուս, Յալլուդարա, Քազալջա, Նիհադիք, Բաշքենդ, Թամղա, Քարաբուլաք, Զառ, Չիրքին, Դաշթաք, Գիլավեչիր, Աքքիլիսե, Աբիհան, Գյունլու, Փարանշա[296], Ջաչքելու (՞), Սաբանթա (՞), Սելամ Թիմլիք, Ջանան[297], Խարաբեյդ, Յենիջե Փոլադ և Աքչաքենդ գյուղերը: Նշյալ 25 գյուղի շրջանում եղել է 2 *մազրայե*, որոնք պատկանել են Այու և Զոդ

---

[289] BOA, 0633, s. 315.
[290] Նույն տեղում, էջ 317:
[291] Նահիեի տեղադրությունը համապատասխանում է Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Գողթն գավառին: Այժմ այն կոչվում է Նոր Գյուտ: Տեղանունների բառարան, հատոր 4, էջ 27:
[292] BOA, 0633, ss. 320-321.
[293] BOA, 0633, s. 320.
[294] Գտնվել է Թարթառ գետի վերին հոսանքի շրջանում: Հնում կոչվել է Ծար, որը համապատասխանում է Մեծ Հայքի Արցախ աշխարհի Ծար կամ Զառ գավառին: Տեղանունների բառարան, հատոր, 2, էջ 269:
[295] BOA, 0633, ss. 326-328.
[296] Այն հայտնի է եղել նաև՝ Քարագյոզ անվամբ:
[297] Այն հայտնի է եղել նաև՝ Ջհանշա անվամբ:

գյուղերին: Հատկանշական է, որ նշյալ գյուղերի դիմաց, բացի ընդհանուր հարկաչափից, որևէ տեղեկություն առկա չէ:

Զառին հաջորդում է Զաբիլի[298] *նահիեն*[299]: Այն ներառել է Չերքեդար, Օշա Ջաֆար, Ջամա, Թոզ Քումա, Մեզայ (՞), Ալթուն Քուշնի[300], Բաշ Զաբիլ, Յենիջե, Խոդրաքիր, Թախթա ....., Չովան Քերեքմեզ, Ասրուք, Գյոքչաքենդի, Արաքլու, Ծիշլաք, Քալագունի, Դեք Չաղուրի, Փոլադլուք, Ազմադլուք, Վանք Թաթը, Չիրքինի, Մարլանոս, Մուզ և Մերջիմեք գյուղերը:

Զաբիլի *նահիեում* Զառի նմանությամբ նույնպես որևէ հարկատու արձանագրված չէ: Այնուամենայնիվ, նյութից կարելի է տեղեկանալ, որ Վանք Թաթը գյուղը գտնվել է Օշա Ջաֆարի մոտակայքում: Մյուս ուշագրավ փաստը ևս վերաբերում է Օշա Ջաֆարին առ այն, որ տեղեկության համաձայն՝ այնտեղ եղել է 1 ներկատուն[301]:

Զաբիլի *նահիեից* հետո արձանագրվել է Ալընջայի[302] աշխարհագիրը[303]: Հարկացուցակում նշված են Բանա Նիյար, Սալինաք (՞), Ապրակունիս, Քաբրանա, Նուշ Քեշին, Բիրդիք, Ծենջիլեր, Վերին Ամզուզ, Միջին Ամզուզ, Ներքին Ամզուզ, Արազին, Ջամալ Ալդին, Նեֆսի Ալընջա, Քուզնուդ, Ղազանչի, Խանղան, Մազրայե, Յենիջե, Նորաշեն, Խաչափրաք, Նոր Խաչափրաք, Քալ, Փուրադաշթ, Մեծ Արքաշք (՞), Թաթալու, Ծեյխ Սեյիդ Ալիլու, Զավալըք, Ջարաջուր, Թահվաս, Ծարութ, Փոքր Արքաշք (՞), Քումլուջա, Քաբուղլար, Դերքեմրաք և Լաթաթաք գյուղերը: Գրանցվել է նաև 5 *մազրայե*:

Հարկ է նշել, որ նշյալ 35 գյուղից միայն 15-ն էր բնակեցված: Ըստ օսմանյան հաջորդականության՝ այդ գյուղերն էին Բանա Նիյարից մինչև Նուշ Քեշին բնակավայրը ներառյալ, ինչպես նաև՝ Քազանջա, Խանղան, Մազրայե, Խաչափրաք, Նոր Խաչափրաք, Քալ, Մեծ Արքաշք (՞), Թաթալու, Զավալըք և Ջարաջուր գյուղերը:

---

[298] Հայկական գրականության մեջ վկայված է Զիվել տեղանվամբ: Գտնվել է Քարվաճառի շրջանում: Տեղանունների բառարան, հատոր 2, էջ 308:

[299] BOA, 0633, ss. 330-333.

[300] Այն հայտնի է եղել նաև՝ Մելիքքենդի:

[301] BOA, 0633, s. 330.

[302] Նահիեի տեղադրությունը մոտավորապես համապատասխանում է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Երնջակ գավառին: Տեղանունների բառարան, հատոր 1, էջ 88

[303] BOA, 0633, ss. 340-357.

Օսմանյան սկզբնաղբյուրը բավական հետաքրքիր է ազգաբնակչության ուսումնասիրման համար: Ըստ աշխարհագրի՝ Ալընջա *նահիեում* եղել է քրիստոնյա և մահմեդական բնակչություն, որոնք բնակվել են ինչպես առանձին, այնպես էլ՝ միևնույն գյուղերում:

Միայն քրիստոնյաներից էին բաղկացած՝ Քազանջան (39 անձ), Մազրայեն (7 անձ) և Քալը (6 անձ): Դրան զուգահեռ՝ սոսկ մահմեդաբնակ էր 7 գյուղ: Դրանք էին՝ Խանղանը՝ 39 անձ, Խաչափրաքը՝ 53 անձ, Նոր Խաչափրաքը՝ 27 անձ, Մեծ Արքաշքը (՞)՝ 67 անձ, Թաթալուն՝ 7 անձ, Ջավալըքը՝ 6 անձ և Ջարաջուրը՝ 12 անձ:

Խառը բնակչությամբ աչքի ընկնող բնակավայրերում պատկերը հետևյալն է՝ Բանա Նիյարում գրանցվել է 139 քրիստոնյա, 24 մահմեդական, Սալինաքում (՞)՝ 5 քրիստոնյա, 70 մահմեդական, Ապակունիսում՝ 30 քրիստոնյա, 19 մահմեդական, Քաբրանայում՝ 3 քրիստոնյա, 85 մահմեդական իսկ Նուշ Քեշինում՝ 25 քրիստոնյա, 2 մահմեդական: Ինչպես կարելի է նկատել՝ 15 գյուղի շրջանում ամենաշատհարկատուները հաշվառվել են Բանա Նիյար գյուղում:

*Նահիեի* ժողովրդագրական պատկերի համաձայն՝ ընդհանուր եղել է 252 քրիստոնյա ընտանիք, որոնց թվում կար 2 ամուրի: Այնինչ մահմեդական ընտանիքները եղել են 315-ը, որոնք ներառել են 96 ամուրի: Այսպիսով, *նահիեի* ընդհանուր բնակիչների թիվը ստացվում է շուրջ 1262 քրիստոնյա և 1671 մահմեդական:

Աշխարհագրի տվյալներից պարզվում է նաև, որ *նահիեում* մեծ թիվ էին կազմում այգիները: Մասնավորապես դրանք գտնվել են և՛ բնակիչների տրամադրության տակ, և՛ եղել են *վաքֆային* սեփականություն: Առաջինների շրջանում այգիները 349-ն էր, որոնց մեծ մասը (143 այգի) գտնվել է Բանա Նիյար գյուղում[304]: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ 349 այգուց մեկը եղել է ավեր վիճակում. այն հանդիպում է Ապակունիս գյուղում[305]: Ինչ վերաբերում է *վաքֆային* այգիներին, ապա դրանց թիվը *նահիեում* 11-ն էր:

Հարկացուցակում այգիների կողքին տեղ-տեղ արձանագրվել են նաև պարտեզներին և հողատարածքների մասին տեղեկություններ:

[304] BOA, 0633, ss. 341-343.
[305] Նույն տեղում, էջ 345-346:

Պարզվում է, որ *նահիեում* եղել է ընդհանուր 7 պարտեզ և 9 հողատարածք: Ուշագրավ է, որ 9-ից մեկը եղել է *վաֆքային* սեփականություն:

*Նահիեում* տարածված են եղել նաև ձիթհաններն ու ջրաղացները: Վերջինների թիվը անհամեմատ ավելի շատ է եղել ձիթհաններից և կազմել է ընդհանուր 28 հատ, որոնցից միայն 4-ն էր չգործող: Ինչ վերաբերում է ձիթհաններին, ապա դրանք *նահիեում* ընդամենը 3-ն էր, որից մեկն էր միայն չգործող եղել:

Ալ ընջային հաջորդում է Սիսիանի *նահիեն*[306]: Այն ներառել է՝ Աշքամուր, Ալինուր, Սիսջան[307], Յաղին[308], Աղչաբենդ, Ծուքար, Ծալթ, Բեքիր, Գելվանես, Մազրայե, Ուզ, Զաբեզադիր, Թելոս, Գեթունուս (՞), Ազլաթիան, Օրթուքիս, Անքլաբերդ, Քարաքիլիսե, Բռնակոթ, Օրֆաջաք, Աղամին, Ծիփխար, Չեքթի (՞), Դաստակերտ, Կռվաք, Քոչերի, Փիսք, Գեթվանես (՞), Զանանավեր, Քեշիշ և Բուխարիս գյուղերը: Նշված է նաև 1 *մազրայե*:

Ըստ աշխարհագրի տվյալների՝ 31 գյուղից միայն Թելոս, Ազլաթիան, Անքլաբերդ, Քարաքիլիսե և Բռնակոթ բնակավայրերն են ընդգրկում ամբողջական տեղեկություններ:

Սիսիանում նույնպես նկատելի է քրիստոնյաների և մահմեդականների ներկայությունը: Նրանք բնակվել են ինչպես առանձին գյուղերում, այնպես էլ՝ համատեղ բնակավայրերում:

Սոսկ քրիստոնեաբնակ էին Թելոս և Անքլաբերդ գյուղերը, որտեղ արձանագրվել է՝ համապատասխանաբար 17 և 24 անձ: Դրան զուգահեռ՝ ամբողջովին մահմեդաբնակ էր Քարաքիլիսեն, որտեղ հանդիպում է 15 հարկատու:

Ինչ վերաբերում է խառը բնակչությամբ աչքի ընկած բնակավայրերին, ապա Ազլաթիանում նշված են՝ 15 քրիստոնյա, 5 մահմեդական, իսկ Բռնակոթում՝ 29 քրիստոնյա և 13 մահմեդական: Վերջին գյուղը ընդհանուր 42 հարկատուով ամենամեծ բնակչությունն է ունեցել *նահիեում*:

Ստացված նյութերի հիմա վրա պարզվում է, որ *նահիեում* ապրել են ընդհանուր 85 քրիստոնյա և 33 մահմեդական հարկատու:

---

[306] Նույն տեղում, էջ 360-365:
[307] Այն հայտնի է եղել նաև՝ Սիսիան անվամբ:
[308] Այն հայտնի է եղել նաև՝ Աշք անվամբ:

Ընդ որում՝ քրիստոնյա ընտանիքների թիվը նույնպես այդքան է կազմել, այնինչ մահմեդականներինը՝ 31-ը, քանի որ 2 անձ ամուրի էր: Այն ենթադրում է, որ *նահիեի* բնակիչների ընդհանուր թիվը արտահայտվել է 425 քրիստոնյա և 157 մահմեդական հարաբերակցությամբ: Այսպիսով, կարելի է փաստել, որ Սիսիանի *նահիեում* 1590 թ. քրիստոնյաները մեծամասնություն էին:

*Նահիեում* նկատելի է նաև ջրաղացների թիվը, որոնք 5-ն էին: Հատկանշական է, որ նրանց շրջանում որևէ չգործող ջրաղաց չի նկատվում:

Երևանի *վիլայեթին* պատկանող վերջին բնակավայրը Ջուլհա գյուղն է[309]: Հետաքրքրական է, որ այն բաղկացած է միայն թաղերից, որից հետո թվարկվում են գյուղին պատկանող բոլոր պարտեզները, այնուհետև՝ ստացված հասույթը: Հարկացուցակում տեղ գտած գրության համաձայն՝ Ջուլհա գյուղը գտնվել է Օրդուբադի և Թավրիզի միջև[310]:

Նյութի քննությունից պարզվում է, որ կար 48 թաղ[311]: Ուշագրավ է, որ աշխարհագրում անունները սկսվում են թվարկվել՝ ըստ թաղերի անվանակիցների, ովքեր ենթադրաբար եղել են թաղի նահապետերը:

Ուշագրավ է, որ բոլոր թաղերում արձանագրված հարկատուները քրիստոնյաներն էին, որոնց թիվը հասել է 1470-ի: Նրանց շրջանում միայն մեկն է եղել ամուրի: Ստացվում է, որ Ջուլհայում բնակվել է շուրջ 7346 բնակիչ: Պետք է շեշտել, որ սա մի գյուղի համատեքստում ահռելի թիվ է կազմել:

Հարկացուցակի հաջորդ հատվածը վերաբերում է պարտեզների տվյալներին, որոնք լայնորեն տարածված են եղել Ջուլհայում: Մասնավորապես նշվում է 343 պարտեզի մասին[312]: Հարկ է նշել, որ որոշ գյուղացիներ միաժամանակ տիրապետել են հիմնականում 2 և 3 պարտեզի: Հստակ է, որ գյուղը նպաստավոր է եղել դրանց մշակության համար:

---

[309] BOA, 0633, ss. 368-393.
[310] Նույն տեղում, էջ 393:
[311] Նույն տեղում, էջ 368-386:
[312] BOA, 0633, ss. 389-393.

Բերված տվյալների հիման վրա կարևոր է ամբողջացնել մասնավորապես *վիլայեթի* գյուղերի ընդհանուր թիվը, ինչպես նաև այնտեղ բնակվող բնակչության մոտավոր քանակը: Ըստ մեր հաշվարկների՝ Երևանի *վիլայեթում* հաշվելի է 763 գյուղ: Ինչ վերաբերում է ժողովրդագրական տվյալներին՝ ապա *վիլայեթում* արձանագրվել է ընդհանուր 9349 հարկատու, որոնցից 5682-ը քրիստոնյա, իսկ 3667-ը՝ մահմեդական: Քրիստոնյա ամուրիները 61-ն էր, իսկ մահմեդական ամուրիների քանակը՝ 519-ը, ինչը վկայում է, որ *վիլայեթի* ընդհանուր 8769 ընտանիքից 5621-ը քրիստոնեական էր, իսկ 3148-ը՝ մահմեդական: Ընտանիքի անդամների միջին թիվը 5-ով բազմապատկելու սկզբունքի համաձայն՝ ընդհանուր կազմում է շուրջ 44425 բնակիչ, որոնցից քրիստոնյաները կազմել են 28166-ը, իսկ մահմեդականները՝ 16259-ը: Տոկոսային հարաբերակցությունը որոշարկելիս ստացվում է, որ քրիստոնյաները եղել են *վիլայեթի* ողջ բնակչության 63.4%-ը, իսկ մահմեդականները՝ 36.6%-ը:

Այդ համատեքստում ուշագրավ է վերոնշյալ տվյալների համեմատությունը Երևանի *վիլայեթի* համառոտ մատյանում տեղ գտած վիճակագրության: Ըստ այդ աշխատության՝ *վիլայեթի* ընդհանուր հարկատուները կազմել են 9164 անձ, որոնցից ընտանիք ունեին 8654-ը, իսկ ամուրիների թիվը հասել է 510-ի: Այնտեղ նույնպես հիմք ընդունվելով յուրաքանչյուր ընտանիքի 5 շնչից բաղկացած լինելը՝ ներկայացնում է 1590 թ. Երևանի *վիլայեթում* բնակվող 43780 մարդու գոյություն, որոնցից 59.1%-ը, ըստ հեղինակների, կազմել են քրիստոնյաները, իսկ 39.9%-ը[313]՝ մահմեդականները[314]: Ինչպես երևում է այդ տվյալները թեպետ փոքր-ինչ տարբերությամբ, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ համապատասխանում են իրականությանը: Սակայն, նույնը չի կարելի ասել *վիլայեթի* գյուղերի հաշվարկի վերաբերյալ, որտեղ դրանց թիվը ադրբեջանցի հեղինակների կողմից ուռճացվել է և նշվել՝ 1883 բնակավայր[315]:

---

[313] Ինչպես դիպուկ նկատել է Պավել Չոբանյանը՝ ադրբեջանցի հեղինակի արձանագրած 49.9%-ը վրիպակ է: Չոբանյան Պ., նշվ., աշխ., էջ 210:

[314] İrəvan əyalətinin icmal dəftəri, ss. 9-10.

[315] İrəvan əyalətinin icmal dəftəri, s. 17.

Ուշագրավ է ժողովրդագրական տվյալների համեմատությունը ադրբեջանցի մեկ այլ պատմաբան Ռաֆիկ Սաֆարովի հաղորդած տեղեկությունների հետ: Ըստ հեղինակի՝ քրիստոնյաները Երևանի *վիլայեթի* բնակչության ընդամենը 22.5%-ն են կազմել, իսկ մահմեդականները՝ 77.5%-ը[316]: Հետաքրքրական է, որ *վիլայեթի* բնակչության մոտավոր հաշման համատեքստում, ադրբեջանցի հեղինակների տվյալները իրենց հերթին խիստ տարբերվում են միմյանցից:

Հարկ է նշել, որ եթե Երևանի *վիլայեթի* համառոտ *դեֆթերի* ժողովրդագրական տեղեկությունները փոքր-ինչ մոտ են իրական պատկերին, ապա Ռաֆիկ Սաֆարովի տվյալները ակնհայտորեն խեղաթյուրված են:

Այսպիսով, բացի ժողովրդագրական տվյալներից, 1590 թ. խնդրո առարկա հարկամատյանի շնորհիվ պարզ է դառնում, որ Երևանի *վիլայեթը* բաղկացած է եղել ընդհանուր 27 վարչա-քաղաքական միավորից, որտեղ քրիստոնյաներն ու մահմեդականները մեծամասամբ բնակվել են կողք կողքի: Այնուամենայնիվ, սոսկ քրիստոնեաբնակ էին Մեվազիի խաթունի, Դարաշամի և Դերենուրգութի *նահիեները*, իսկ Մելիք-Արսլանլուն, Ղարաբաղը և Ծարուրը՝ մահմեդաբնակ: Նկատելի են նաև ամբողջովին դատարկված *նահիեներ*, որոնցից էին՝ Ապարանը, Ծարաբխանեն, Աբնիքը (՞), Բազարչայը, Ձառը և Ձաբիլը:

Օսմանյան աշխարհագիր հարկացուցակներում հանդիպում են դեպքեր, երբ գյուղերը աչքի են ընկել իրենց երկրորդ անվանումներով: Նշված է նաև, թե տվյալ գյուղը, որ բնակավայրին է մոտգտնվել:

Նկատելի են՝ բնակիչների կողմից մասնավորապես այգիների, պարտեզների, *չիֆթերի* և հողատարածքների մշակությունը: Դրանց շրջանում առավել մեծ տոկոս են կազմել այգիները: Բնակչության կողմից մեծ տարածում են գտել նաև ջրաղացների, ձիթհանների շահագործումը: Հատկանշական է, որ հատկապես ջրաղացների շրջանում մեծ թիվ են կազմել չգործողները:

[316] Bilge S. M., նշվ., աշխ., էջ 510:

## 1.4 Երևանի վիլայեթի հարկատեսակներն ու չափերը ըստ 1590 թ. աշխարհագրի

Օսմանյան աշխարհագիր մատյաններում կարևոր մաս են կազմում սահմանված հարկաչափերը: Ելնելով այն հանգամանքից, որ վերոնշյալ շրջաններից հիմնականում պահանջվել են նույն հարկերը, ուստի կրկնաբանությունից զերծ մնալու համար՝ տուրքերը հետայսու կներկայացվեն ընդհանուր:

1590 թ. Երևանի *վիլայեթում* օսմանյան իշխանությունները հարկեր են սահմանել *իսփենջի*, *չիֆթի*, *բեննաքի*, *դյոնում*ի, ցորենի, գարու, կորեկի, կտավհատի, ոսպի, բրնձի, սիսեռի, բամբակի, այգիների և *չիֆթի մաքթուի*, փեթակի, քաղցուի, բակլայի, մրգի, բանջարանոցի, խոտի, արոտի, *քըշլաքի*, ոչխարների, անասունների, *դաշթիբանիի* և հողի *թափուի*, *հարիջի*, *բադհավայի* և հարսնության, *յայլաքների*, սպանդանոցի, շուկայի, *բեյթ-ուլ մալի*, դրամատան, մոմատների, ներկատան, ջրաղացների և ձիթհանների դիմաց գանձվող միջոցներից:

*Իսփենջի, բեննաքի (էքինլու), դյունում*ի, ցորենի, գարու, կորեկի, բանջարանոցի, խոտի, արոտի, փեթակի, *քըշլաքի*, ոչխարների, *դաշթիբանիի* և հողի *թափուի*, *հարիջի*, *բադհավայի* և հարսնության հարկերը հանդիպում են գրեթե յուրաքանչյուր գյուղում, այնինչ մնացյալ տուրքերը՝ ըստ բնակավավայրի տնտեսական հնարավորությունների:

Ընթացիկ *դեֆթերում* բադհավայի և հարսնության, ինչպես նաև՝ հողի *թափուի* և *դաշթիբանիի* հարկերը միասին են արձանագրվել ոչ միայն Երևանի *վիլայեթում*, այլև օրինակ՝ Ախալցխայի հարկացուցակում[317]:

Հարկերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Երևանի *վիլայեթում* առավել մեծ առաջնահերթություն են ունեցել ցորենի, գարու, բամբակի, բրնձի, ինչպես նաև՝ այգիների *մաքթուի* դիմաց գանձվող հարկատեսակները, քանի որ նրանց դիմաց սահմանված հարկադրույքները սովորաբար ամենաբարձրն էին:

Ուշադիր զննելով հարկատեսակներն իրենց դրամական միավորով՝ նկատելի է, որ 1590 թ. օսմանյան իշխանությունները

[317] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 8:

որոշ հարկադրույքների դիմաց հստակ սահմանել էին նրանց դրամաչափը: Բացի Երևանի *վիլայեթի* քանուններում հիշատակված *իսփենջի*, *չիֆթի*, *բենաքի* (և այլն) դիմաց գանձվող *աքչեներից*, բացառություն չէին նաև ըստ մեկական *քիլեի*՝ տուրքաչափերը: Այսպես օրինակ՝ ցորենի և գարու ամեն մի *քիլեից* սահմանվել է համապատասխանաբար՝ 8-ական և 6-ական *աքչե*: Նույն հարաբերակցությունն է նկատվել նաև ոսպի և կորեկի բերքի պարագայում: 8 *աքչե* է գանձվել նաև սիսեռի յուրաքանչյուր *քիլեից*, այնինչ բրնձինը գնահատվել է 30 *աքչե*: Հավանաբար, այդ արժեքների տարբերությունը պայմանավորված է եղել դրանց մշակության տարածվածության աստիճանով: Ի դեպ, եթե ըստ մեկական *քիլեի* հստակ սահմանվել էին ցորենի, գարու, բրնձի և այլ հարկերի արժեքը, նույնը չի կարելի ասել բամբակի կշռի միավորի՝ *մանի* մասին, որը ամենևին հաստատուն չի եղել:

Որոշ հարկերի դիմաց հստակ սահմանված դրամական միավորների շրջանում կարևորություն են ներկայացնում ջրաղացների և ձիթհանների տուրքաչափերը, որոնք վարչա-քաղաքական միավորներում բավական տարածված էին: Ըստ հարկամատյանների՝ ջրաղացների արժեքը սովորաբար տատանվել է 30 և 60 *աքչեի* սահմաններում, որը հիմք ընդունելով Երևանի *վիլայեթի* օրինամատյանի համապատասխան հատվածը, կարելի է եզրակացնել, որ *նահիեների* բնակիչները ջրաղացները հիմնականում շահագործել են կես կամ ամբողջ տարի: Ձիթհաններից գանձվել է 60-ական, իսկ ներկատան դիմաց արձանագրվել է 1000 *աքչե*: Մյուս հարկադրույքների դրամական չափը փոփոխական է եղել:

XVI դարի Գյուրջիսթանի *վիլայեթում* նույնպես օսմանյան իշխանությունները *իսփենջի* դիմաց սահմանել էին 25 *աքչե* և ոչ մահմեդական բնակչությունը, այն վճարելով, ազատվել է *չիֆթի*, կես *չիֆթի* հարկ վճարելու պարտականությունից[318]: Ըստ մեկական *քիլեի*՝ մասնավորապես ցորենի, գարու, կորեկի համեմատությունից պարզվում է, որ Վրաստանի *վիլայեթում* նույնպես գրանցվել են հիմնականում միևնույն դրամական

[318] Kangül H., նշվ., աշխ., էջ 99:

արժեքները[319]: Ջրաղացների դիմաց սահմանված հարկաչափը ցույց է տալիս, որ ինչպես Երևանի, այնպես էլ Վրաստանի *վիլայեթում*, ամբողջ տարվա համար դրանց շահագործումից պահանջվել է 60, իսկ կես տարվա համար՝ 30 *աքչե*[320]:

Երևանի *վիլայեթի* հարկերի ուսումնասիրության գործում կարևոր են երկրամասերի բնակավայրերից սահմանված ընդհանուր տուրքաչափերի քննությունը: Պարզվում է, որ ամենաբարձր դրույքաչափը սահմանվել է Ջուլիա գյուղից, որի ընդհանուր արժեքը կազմել է 200000 *աքչե*[321]: Հարկ է նշել, որ այդ տվյալը օրինաչափ է, քանի որ բացի մարդկանց, ինչպես նաև պարտեզների մեծ թվից, գյուղում գրանցվել է նաև դրամատուն, ներկատուն, մոմատուն, շուկա, որոնք հսկայական եկումուտներ են ապահովել: Նշանակալի է նաև Երևան քաղաքից սահմանվող տուրքաչափը, որը կազմել է 150000 *աքչե*[322]: Ըստ տուրքաչափի մեծության դրան հաջորդել են Ազադջիրանի և Թալինի՝ Վանանդ և Մաստարագյուղերը, որտեղից համապատասխանաբար պահանջվել է 80000[323] և 79332[324] *աքչե*: XVI դարի Երևանի *վիլայեթի* ընթացիկ հարկամատյանների մյուս շրջաններում գրանցված ամենաբարձր հարկերը գիջել են վերջիններիս՝ տատանվելով 15000-ից 60000 *աքչեի* միջև:

Հարկացուցակների քննությունը ցույց է տալիս, որ ոչ միշտ են հանդիպում դեպքեր, երբ *նահիեում* ամենամեծ թվով հարկատուներով աչքի ընկած գյուղից սահմանվել է ամենաբարձր հարկաչափը: Ավելին՝ Գառնի *նահիեի* Աբդաբլուսի բնակավայրի օրինակով կարելի է փաստել, որ ամենաքիչ մարդկանցով աչքի ընկած գյուղից գանձվել է ամենաբարձր տուրքաչափը (70000 *աքչե*[325]), որի չափը բավական ակնառու է անգամ ամբողջ Երևանի *վիլայեթի* համատեքստում: Ենթադրելի է, որ այդ իրողությունը մեծապես կարող էր պայմանավորված լինել գյուղի սոցիալ-տնտեսական հսկա ներուժով:

---

[319] Նույն տեղում, էջ 26-89:
[320] Նույն տեղում, էջ 100:
[321] BOA, 0633, s. 393.
[322] Նույն տեղում, էջ 34:
[323] Նույն տեղում, էջ 296:
[324] Նույն տեղում, էջ 248:
[325] Նույն տեղում, էջ 209:

Հարկերի ուսումնասիրության համատեքստում կարելի է արձանագրել այն հազվադեպ հանդիպող երևույթը, երբ, ի տարբերություն անվանացանկի տվյալների, երկու գյուղից սահմանված հարկադրույքները միասնաբար են արձանագրվել: Մասնավորապես այդ միտումը նկատելի է Նախիջևանի՝ Ծեյխ Բասաքլու և Ծեյխզադեգան և Վերին ու Ներքին Սուրմարաք, ինչպես նաև՝ Ալընջա *Նահիեի* Խաչափրաք և Նոր Խաչափրաք գյուղերի պարագայում: Թեպետ հարկերի ընդհանուր նկարագրությանը, այդ գյուղերը հարկամատյանում առանձին են ներկայացվել, ինչը նույնությամբ արտացոլվել է վերոնշյալ համապատասխան շարադրանքում:

Երևանի *վիլայեթի* ընդարձակ մատյանների հարկաբաժինների տվյալները ցույց են տալիս, որ դրանցում առկա են որոշ անճշտություններ: Հարկ է փաստել, որ դրանք հիմնականում արտացոլում են տվյալ բնակավայրի ամբողջական հարկաչափի և առանձին նշված հարկադրույքների հանրագումարի անհամապատասխանությունը:

Կարելի է բերել Երևան քաղաքի և դրան ենթակա գյուղերից՝ Նորագեղի օրինակները. թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքերում արձանագրված վերջնական հարկաչափը փոքր-ինչ բարձր է հարկադրույքների ընդհանուր գումարից: Առաջին դեպքում նկատելի է 455, իսկ երկրորդում՝ 595 *աքչեի* տարբերություն[326]: Այդպիսի երևույթները կարող են պայմանավորված լինել կամ օսմանյան իշխանավորների անփութությամբ, կամ էլ՝ գումարի չափը միտումնավոր բարձրացնելու ճանապարհով՝ հավելյալ շահույթ հետապնդելու միտումով:

1590 թ. Երևանի *վիլայեթի* հարկամատյանները աչքի են ընկել նաև օրինաչափություններով: Դրանցից առաջինը վերաբերում է ընդարձակ մատյանների անվանացանկերում գյուղանունին հաջորդող հարկատուների անունների արձանագրմանը, որոնք ներկայացվել են 7-ական սյունյակով: Բացի այդ, անվանացանկում նկատելի է այն իրողությունը, երբ օսմանյան իշխանությունները միևնույն գյուղում քրիստոնյա և մահմեդական բնակչության

[326] BOA, 0633, s. 36.

առկայության պարագայում նրանց տարանջատելով՝ առաջինը թվարկել են մահմեդականների անձնանունները:

Բավական ուշագրավ է, որ մատյաններում ըստ անհրաժեշտության՝ առկա բոլոր քանակական թվականները գրի են առնվել միայն տառերի[327], այլ ոչ թե թվերի տեսքով: Տարածված է եղել նաև այն իրողությունը, երբ հարկաբաժնում *իսփենջ* հարկատեսակի ներքո նշվել է մատյանում գրանցված ոչ մահմեդական հարկատուների ընդհանուր քանակը՝ առանց ամուրիների և ամուսնացած մարդկանց տարբերակման սկզբունքի:

Այսպիսով, հարկերի լուսաբանումը մեծ նշանակություն ունի *վիլայեթի* սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրման տեսանկյունից: Դատելով հարկաչափերից՝ կարելի է եզրակացնել, որ *վիլայեթի* ամենամեծ տնտեսությունը ունեցել է Ջուլիա գյուղը, որին հաջորդել է Երևան քաղաքը: Ուշագրավ է, որ բնակավայրերի տնտեսության համար առանցքային նշանակություն են ունեցել հատկապես ցորենի, գարու, բամբակի և այգիների մշակությունը:

Կարևոր է նաև այն իրողությունը, որ Երևանի ու Թիֆլիսի վիլայեթներում օսմանյան իշխանությունները հատկապես *իսփենջի*, ջրաղացների և ըստ մեկական *քիլեի*՝ հարկերի դիմաց, որդեգրել էին համանման քաղաքականություն:

[327] Յուրաքանչյուր տառ ուներ իր թվային արժեքը:

## ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ. XVIII ԴԱՐԻ I ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՍՏԻՆ ՆՎԱՃՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՎ 1728 Թ. ԵՐԵՎԱՆԻ ԼԻՎԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳԻՐԸ

### 2.1 Արևելյան Հայաստանի վերստին նվաճումը Օսմանյան կայսրության կողմից

XVIII դարի սկզբներին Այսրկովկասը հայտնվել էր մեծ տերությունների ուշադրության կենտրոնում: Խոսքը վերաբերում է մասնավորապես Օսմանյան և Ռուսական կայսրություններին, որոնց հայացքները համընկան տարածաշրջանում իրենց ազդեցությունը տարածելու ուղղությամբ: Հարկ է փաստել, որ դա հիմնականում պայմանավորված էր Սեֆյան Իրանի աստիճանական թուլացմամբ, ինչը պարարտ հող էր ապահովում մրցակիցների տարածքային նկրտումների համար:

Իրավիճակը Սեֆյան Իրանում զգալիորեն փոխվեց շահ Սուլթան Հուսեյնի (1694-1722 թթ.) գահակալության տարիներին, երբ երկիրը ստիպված եղավ դիմակայել ներքին խոշոր մարտահրավերներին, որոնք կործանարար հետևանքներ ունեին: Տարածված կարծիքների համաձայն՝ այդ վիճակի հիմնական պատասխանատուն շահն էր, որը անուշադրության մատնելով երկրի կառավարումը՝ չշարունակեց իր նախորդների փոքրիշատե հավասարակշռված քաղաքականությունը և չկարողացավ վերահսկել պալատական խարդավանքները[328]: Քաղաքական նման իրադրության պայմաններում տարբեր հատվածներում ծայր առան ապստամբություններ[329], որի արդյունքում, աֆղանները 1722 թ. նվաճեցին մայրաքաղաք Սպահանը:

Երկրում տիրող ամենաթողության և անվստահության մթնոլորտը բացասաբար էր ազդում բնակչության վրա, որը տարածվում էր հատկապես ոչ մահմեդականների՝ քրիստոնյաների նկատմամբ[330]: Այդ համատեքստում ուշագրավ է Ղազար Ջահկեցու[331] 1726 թ. հիշատակարանի բովանդակությունը, որտեղ մռայլ գույներով են պատկերվում շահ Հուսեյնի գահակալության

[328] Matthee, R., The politics of Trade in Safavid: Silk for silver 1600-1730, London-New York, 1999, p. 204.
[329] Newman A. J., Safavid Iran, Rebirth of a Persian Empire, London-New York, p. 107.
[330] دکتر عبدالله رازی- دکتر حسن خزایل، تاریخ مفصل ایران، تهران، 1388، ص. 256.
[331] Ամենայն հայոց կաթողիկոս (1737-1751 թթ.), մատենագիր, աստվածաբան:

տարիները: Հեղինակը մասնավորապես նշում է, որ երկրում ամենաթողության մթնոլորտ էր և ամեն պատեհ առիթի դեպքում կենտրոնական իշխանությունները թալանում էին հայ ժողովրդին և վարում՝ խիստհարկապահանջության քաղաքականություն[332]:

Երկրի ներքին անկայունությունը մեծ արձագանք գտավ Օսմանյան կայսրության կառավարող շրջանակներում, որոնք ուշի ուշով հետևում էին ստեղծված ներքին զարգացումները: Դրան միտված գործնական քայլերից մեկը՝ հատուկ պատգամավորություն ուղարկելն էր Սեֆյան Իրան, որը հանդիպումներ ունեցավ բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Բանակցությունների ընթացքում օսմանցի ներկայացուցիչ Դերի Մուհամմադը շտապել է փարատել հնարավոր հարձակման շուրջ իրանական կողմի մտավախությունները՝ մատնացույց անելով երկու պետությունների միջև գործող 85-ամյա խաղաղության փաստը[333]: Այնուամենայնիվ, ինչպես կարելի է եզրակացնել հետագա զարգացումներից, այցի հիմնական նպատակներից մեկը՝ հետախուզական միջոցառումների անցկացումն էր, որը օսմանցիներին շահեկան դիրքեր կապահովեր: Այդ համատեքստում կարևոր էին սուլթանին հաղորդած տեղեկությունները տեղի սունի բնակչության առկայության մասին, քանի որ Բարձր Դուռը մշտապես օգտագործել է այդ գործոնը Իրանի դեմ: Դիվանագետի տեղեկությունների համաձայն՝ սունիները մեծ թիվ էին կազմում մասնավորապես Շիրվանում, Գանձակում, որից հետո նշվել է, որ թեպետերկիրը, ընդհանուր առմամբ, շատբարեշեն է, սակայն զուրկ է ղեկավարությունից[334]:

Տարածաշրջանում մեծ հետաքրքրություններ ուներ նաև ռուսական կողմը, որը դեռևս զբաղված լինելով Հյուսիսային պատերազմով[335] փորձում էր հնարավորինս զգուշավոր գործել և բանակցությունների միջոցով կյանքի կոչել Իրանում ունեցած իր տնտեսական շահերը: 1715 թ. Արտեմի Վոլինսկու գլխավորությամբ

[332] Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 538:
[333] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Ա, էջ 124:
[334] Նույն տեղում, էջ 127:
[335] Никифоров, Л. А., Внешняя политика России в последние годы Северной войны: Нишдатский мир, М., 1959.

ծանր բանակցություններ սկսվեցին Սեֆյան Իրանի հետ՝ փորձելով ցույց տալ Կասպից ծովով իրականացվելիք հնարավոր առևտրի շահավետությունը և միաժամանակ ռուս առևտրականների համար կորզել արտոնյալ պայմաններ: Մոտ 2 տարի տևաց բանակցությունների արդյունքում՝ 1717 թ. ռուսները ստիպված եղան բավարարվել միայն Գիլանում և Շիրվանում մետաքսի հումք գնելու իրավունքից՝ մյուս առևտրականների հետ համահավասար պայմաններով[336]: Սակայն ձեռք բերված համաձայնագիրը հարուցեց մասնավորապես Շիրվանի տեղի սունի կառավարիչների թշնամական վերաբերմունքը, որոնք կտրականապես հրաժարվեցին իրականացնել կենտրոնական կառավարության ստանձնած պարտավորությունները: Արդյունքում՝ 1721 թ. սունի ֆեոդալների՝ Դաուդ Բեկի և Սուրհայի կողմից գրավվեց Շամախին և հարձակվելով ռուս առևտրականների վրա՝ հափշտակվեց շուրջ կես միլլիոն ռուբլու ապրանք[337]: Այդ միջադեպը շատ մեծ հարված էր Ռուսաստանի հեղինակությանը, որը փորձեց այն օգտագործել Իրան մուտք գործելու ծրագրերը իրականացնելու համար. մասնավորապես գրավելով Շամախին՝ առաջին հերթին նպատակ էր դրվում աստիճանաբար վերահսկել մետաքսով հարուստ մերձկասպյան շրջանները:

Ռուսական նման նկրտումները չէին կարող չանհանգստացնել Օսմանյան կայսրությանը, որը հետաքրքրված լինելով իրանական ապրանքները իր տարածքով Եվրոպա մուտք գործելու շարունակականությամբ, արդեն սկսում էր լուրջ հավակնություններ ունենալ Իրանի տարածքի հանդեպ: Ավելին՝ մերձկասպյան ժողովուրդների շրջանում սունի բնակչության մեծաքանակ լինելը ինքնին ենթադրում էր, որ նրանցով բնակեցված տարածքների նկատմամբ ռուսական վտանգը մեծացնում էր Բարձր Դռան ներգրավվածության աստիճանը ծավալվելիք ռազմական գործողություններում:

Սեֆյան Իրանի խիստ անկայուն վիճակը հնարավորություն էր ընձեռում նաև հայ և վրացի ժողովուրդների պայքարի համար, որոնց շրջանում տարածված էին ազատագրական պայքարի ձգտումները:

---

[336] Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, том II часть I, под редакцией Ашота Иоаннисяна, Ереван, 1964, с. XII.
[337] Նույն տեղում, էջ XIII:

Հարկ է նշել, որ մասնավորապես հայերը XVIII դարի սկզբներից ազատագրական պայքարը կապում էին ռուսական օգնության հետ, քանի որ Մոսկովյան պետությունը միակն էր այդ ժամանակահատվածում, որ Մերձավոր Արևելքում չէր հրաժարվել ակտիվ քաղաքականություն վարելու մտքից[338]: Ազատագրական տրամադրությունները հետզհետե ավելի լայն տարածում էին ստանում, երբ լուրեր էին հասնում տարածաշրջան ռուսների նախապատրաստվող արշավանքի մասին: Հայ ժողովրդի անունից ազատագրական պայքարին միտված քայլերն Իսրայել Օրու մահից հետո հիմնականում համակարգում էին Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը և Մինաս վարդապետ Տիգրանյանը, ովքեր առիթը բաց չէին թողնում նամակներ հղել Պետրոս Առաջինին (1696-1725 թթ.): Այսպես օրինակ՝ Հասան-Ջալալյանը 1718 թ. համայն հայության անունից, հպատակություն էր հայտնում ռուս առաջնորդին և օգնություն խնդրում[339]: Միևնույն բովանդակությունն ուներ Մինաս վարդապետի հղած խնդրագիրը, որտեղ ներկայացվում էին նաև տեղի ունեցած որոշ իրողություններ[340]: Հատկանշական է, որ Մինաս վարդապետը քաղաքական հարցերում մեծապես օգտագործում էր եկեղեցու գործոնը և հավասարապես կապ էր պահպանում թե՛ լուսավորչական եկեղեցականների, թե՛ կաթոլիկ քարոզիչների հետ[341], որոնք, ըստ նրա, կարող էին իրենց մեծ ավանդն ունենալ հայ ազատագրական շարժումներում:

Ինչ վերաբերում է վրացիներին, ապա Վախթանգ VI-ի գլխավորությամբ նրանք նույնպես ունեին ռուսամետ դիրքորոշում և կապ էին պահպանում ռուս ներկայացուցիչների հետ: Ավելին՝ վերջինս, 1719 թ. Սպահանից վերադառնալով Թիֆլիս, սկսել էր Սեֆյան Իրանի դեմ նախապատրաստական աշխատանքներ իրականացնել և վերջինիս հրահանգների համաձայն՝ հայերը

[338] Հովհաննիսյան Ա., նշվ., աշխ., էջ 493:
[339] Армяно-русские отношения в первой трети XVIII века, том II часть I, с. 373-374.
[340] Эзов Г. А., Сношенія Петра Великаго с армянскимъ народомъ, С.-Петербургъ., 1898, с. 329-332.
[341] Հովհաննիսեան Ա., հայ-ռուսական օրիենտացիայի ծագման խնդիրը պատմա-քննադատական ուսումնասիրութիւն, Էջմիածին, 1921, էջ 33:

նույնպես զբաղված էին զինված ուժերի կենտրոնացմամբ[342], որը փաստում է, որ հայերն ու վրացիները համաձայնեցնում էին իրենց քայլերը:

Ծրագրերի իրականացման տեսանկյունից Պետրոս Առաջինն ուներ Այսրկովկասի ժողովուրդների՝ հայերի և վրացիների աջակցության կարիքը, քանի որ նրանցով բնակեցված տարածքները ռազմավարական առումով անչափ կարևոր էին՝ հատկապես օսմանցիների գործոնը հաշվի առնելու պարագայում, որոնց համար դրանք ամենակարճ ճանապարհն էին՝ կասպյան տարածաշրջանները թիրախավորելու առումով: Վերահսկողություն սահմանելով Այսրկովկասում՝ ռուսները կապահովագրեին կասպյան տարածաշրջանների անվտանգությունը և այդտեղ շոշափելի առավելություն կստանային:

Ռուսական զորքերի առաջխաղացումը Այսրկովկաս Պետրոս Առաջինը նախատեսում էր իրականացնել Ծամախիի ուղղությամբ, քանի որ Դերբենտն ու Բաքուն գրավելուց հետո աշխարհագրական տեսակետից այն նպաստավոր էր: Ըստ նրա ծրագրերի՝ երկու ժողովուրդները պետք է համատեղ հանդես գային և ռուսների Դերբենտ մտնելուն պես, պայքարեին Դաուդ Բեկի դեմ ու մտնեին Ծամախի[343], որից հետո տեղի կունենար ռուս-հայ-վրացական զինված ուժերի հանդիպումը: Այդ մասին ռուս առաջնորդը Վախթանգին հրահանգեց 1722 թ. հուլիսին, իսկ օգոստոսին վերջինս տեղեկացվեց Դերբենտ և Բաքու արշավանքի մասին[344]: Օգտագործելով ռուսների՝ Դերբենտ առաջխաղացումը՝ Վախթանգ VI-ն ուղղվեց Գանձակ: Միաժամանակ, Եսայի կաթողիկոսի ակտիվ մասնակցությամբ և Ղարաբաղի հրամանատարների (Ավան, Շրուան, Շահնի, Սարուխան) հավաքած շուրջ 12000 մարտիկները[345] վերջինիս հրահանգով պետք է միավորվեին 30000-ից բաղկացած վրացական զինված ուժերին, որոնք

[342] Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, յօրինեալ Ի Տ. Եսայի Աղուանից Կաթողիկոսէ Հասան Ջալալեանց, Յերուսաղէմ, 1868, էջ 46-48 (այսուհետև՝ Հասան Ջալալեանց):
[343] Лысцов В. П., Персидский поход Петра I. 1722-1723, М., 1951, с. 208.
[344] Цагарели А. А., Сношенія Россіи съ Кавказомъ въ XVI- XVIII стольтіяхъ, С.-Петербургъ., 1891, с. 29.
[345] Հասան Ջալալեանց, էջ 47:

սեպտեմբերին մուտք գործելով Գանձակ, պարտության էին մատնել լեզգիներին[346]:

Ռուսական զորքերը Դերբենտը գրավեցին 1722 թ. օգոստոսին, և սպասվում էր, որ հաջորդ քայլը պետք է լիներ Բաքվի և Շամախիի գրավումը, սակայն ռուսական կողմն անսպասելի հետաձգեց արշավանքը հաջորդ տարվան, քանի որ, բացի բնակլիմայական դժվարին պայմաններից, նաև ծովային փոթորկի պատճառով պարենամթերքի պակաս էր առաջացել: Այդ պատճառով ծրագիրը կյանքի չկոչվեց, ուստի հայ-վրացական ուժերը ստիպված էին վերադառնալ իրենց ելակետային դիրքերը[347]:

Ազատագրական պայքարից անմասն չէր նաև Սյունիքը, որտեղ հաջող պայքար էր ծավալել Դավիթ Բեկը: Մասնավորապես էր 1722 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին ժամանելով Սյունիք՝ կարճ ժամանակամիջոցում կարողանում է ի մի բերել զինված ուժերը և մարտնչել Նախիջևանի խանի զորքերի դեմ: Այնուհետև Սիսիանից Ղափան անցնելու ճանապարհին Եռաբլրի (Ուչթեփեի) սարավանդում հաղթելով Քարաչոռլու ցեղին՝ հաստատվում է Շնհերում: Հատկանշանական է, որ քիչ ժամանակ անց նույն Եռաբլրում ջախջախելով Ջիվանշիր ցեղի քոչվորներին՝ գրավում է Տաթևի բերդը, որը հանդիսացավ Դավիթ Բեկի նստավայրը[348]:

Այնուամենայնիվ, ռուսների առաջխաղացման դադարեցումը փոխեց իրադարձությունների ընթացքը մասնավորապես՝ հայերի և վրացիների համար, որոնք հաջորդ տարի ստիպված էին մաքառել գլխավորապես օսմանյան զորքերի դեմ:

Ռուսաստանի ներկայությունը տարածաշրջանում լուրջ ահազանգ էր Օսմանյան կայսրության համար, որը սկսեց գործնական քայլերի դիմել և արդեն հոկտեմբերին ընդունեց լեզգի ֆեոդալների հովանավորության խնդրանք-առաջարկը՝ Դաուդ Բեկին կարգելով Շիրվանի խան[349], այդպիսով հնարավորություն ստեղծելով լեզգիների պաշտպանությունը ապահովելու քողի տակ՝

[346] Эзов Г. А., նշվ., աշխ., էջ 332:
[347] Հասան Ջալալեանց, էջ 50-51:
[348] Այվազյան Ա. Մ., Դավիթ-Բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, թիվ 3, 1990, էջ 80:
[349] Буткова Н. Г., Матеріалы для новой исторіи Кавказа съ 1722 по 1803 годъ, часть первая, С.-Петербургъ., 1869, с. 10.

ակտիվ ռազմական գործողությունների դիմելու, ինչը ստիպեց Պետրոս Առաջինին՝ վերանայել որոշ ծրագրեր: Այսպես օրինակ՝ եթե նախկինում, հաշվի առնելով լեզգիների հարձակումը, ռուսների գլխավոր նպատակը Շամախին էր, ապա այժմ նա պատրաստ էր հրաժարվել դրանից և գլխավորապես իրագործել մերձկասպյան շրջանների ամրապնդումը: Այն տեղ գտավ 1723 թ. փետրվարի 16-ին սուլթան Ահմեդ Երրորդին (1703-1730 թթ.) ուղղված առաջարկում, որով ռուսական կողմը պատրաստ էր ընդունել օսմանյան հովանավորչությունը Դաղստանի լեռնականների նկատմամբ՝ պայմանով, որ օսմանցիները զորքեր չեն մտցնի Շամախի, Լեզգիստան, Ստորին Դաղստան: Փոխարենը ռուսները հաստատում էին իրենց հավակնությունները Վերին Դաղստանի, ինչպես նաև՝ Շիրվանի մերձկասպյան տարածքների նկատմամբ: Բացի այդ, նրանք հորդորում էին երկուստեք զերծ մնալ Վրաստան արշավելու մտքից[350]: Այնուամենայնիվ, սա չէր նշանակում, որ ռուսներն անտարբեր էին դառնում Շամախի քաղաքի ճակատագրի հանդեպ, քանի որ այն կարևոր էր ոչ միայն Այսրկովկասը, այլև ամբողջ կասպյան տարածաշրջանը վերահսկելու առումով:

Շամախիի առանցքային նշանակությունը հստակ էր նաև Օսմանյան կայսրության համար, որը պատրաստվում էր շուտափույթ արշավել այդ ուղղությամբ: Այն, բացի այսրկովկասյան ազդեցությունից, ընդհանուր առմամբ ամուր հենարան էր Սեֆյան Իրանի նկատմամբ ռուսական հավակնությունների դեմ: Այդ մասին է վկայում այն փաստը, որ 1725 թ. Ղարաբաղի հայերի կողմից գերևարված օսմանցի փաշաներից մեկը հայտնել է, որ ռուսների մուտքը տարածաշրջան ծովային ճանապարհով իրենց ստիպել է հարձակվել այդ տարածքների վրա: Հետևաբար այդ միջակայքում ապրող ժողովուրդները՝ ներառյալ հայերը, պետք է ոչնչացվեն, ապա հավելել է, որ եթե հայերը չլինեին, ապա օսմանյան բանակը կգրավեր Դերբենտը և Բաքուն[351]: Օսմանյան նկրտումների առաջին քայլը 1723 թ. ամռանը Թիֆլիսը գրավելն էր[352], որից հետո թիրախ էր

[350] Лысцов В. П., նշվ., աշխ., էջ 136-137:
[351] Эзов Г. А., նշվ., աշխ., էջ 422:
[352] Лысцов В. П., նշվ., աշխ., էջ 135:

դարձել Ծամախին: Սակայն աշնանը, 80000 զորաբանակով[353] շարժվելով այդ ուղղությամբ, նրանց չհաջողվեց կոտրել Գանձակի դիմադրությունը, որի պաշարումը տևեց 20 օր[354]: Դրանով՝ օսմանյան վտանգը սղնախների համար առժամանակ վերանում էր[355]:

Օսմանյան հարձակումը Թիֆլիս սթափեցրեց Ռուսաստանին, ինչը ստիպեց հատուկ վերահսկողություն սահմանել գրավված Դերբենտում, Գիլանում, իսկ հուլիսից՝ նաև՝ Բաքվում[356]: Պետրոս Մեծը միաժամանակ շարունակում էր աշխատանքներ իրականացնել հայերի դիմադրությունը համակարգելու ուղղությամբ և ի դեմս հայազգի Իվան Կարապետի՝ ներկայացուցիչ ուղարկեց Ղարաբաղ, որն այնտեղ հասավ միայն դեկտեմբերին[357]: Վերջինս 1723 թ. հունիսի 3-ին թվագրված նամակով պետք է դիմեր հայ մեծամեծներին հավաստիացնելու, որ հայերի ազատագրման խնդիրը մեծապես կախված է մերձկասպյան շրջաններում ռուսական զորքերի տեղակայումից և կոչ էր անում հնարավորինս դիմադրել օսմանցիներին: Այնուհետև հավելում էր, որ հայերը վայելում են ռուսական կողմի հովանավորությունը, և եթե դիմադրությունն անհնարին լինի շարունակել, ապա կարող են տեղափոխվել մերձկասպյան տարածաշրջաններ[358]: Հաշվի առնելով օսմանցիների ներխուժումն Այսրկովկաս, փորձ էր արվում համակարգել տեղի ուժերը Օսմանյան կայսրության զորքերի դեմ և այդպես առնվազն խոչընդոտել հակառակորդի առաջխաղացումն առանց իրենց անմիջական մասնակցության, իսկ անհաջողության դեպքում՝ համակերպվել այդ տարածքների կորստի հետ:

Չնայած Գանձակի մոտ սուլթանական բանակի կրած անհաջողությանը օսմանցիները լի էին շուտափույթ հաջողություններ գրանցելու վճռականությամբ: Դեռևս 1723 թ.

---

[353] Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, т. II, ч. II, Ереван, 1967, с. 51.

[354] Арутюнян П. Т., Освободительные движения армянского народа в первой четверти 18 века, М., 1954, с. 167.

[355] Այվազյան Ա. Մ., Իրադարձությունները Այսրկովկասում 1723 թվականին և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, թիվ 4, 1990, էջ 73-74:

[356] Левиатов В. Н., Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку, 1948, с. 58-59.

[357] Աբրահամյան Ա. Գ., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից (Ուսումնասիրություն և վավերագրեր), Երևան, 1953, էջ 31:

[358] Эзов Г. А., նշվ., աշխ., էջ 355-356:

հոկտեմբերի 27-ին Կոստանդնուպոլսի ռուս ռեզիդենտ Իվան Նեպլուևը հայտնում էր, որ օսմանցիները սպառնացել են, թե ձմռանը կգրավեն Երևանն ու Թավրիզը[359]: Ռուսները գիտակցում էին, որ առանց իրենց օգնության, հայերը չէին կարող դիմագրավել երկար ժամանակ հակառակորդին, որը սպառնում էր իրենց ձեռքբերումներին, ուստի ռուսական կողմի՝ օսմանցիներին ուղղված դիմում-առաջարկով, հորդորում էին զերծ մնալ հետագա առաջխաղացումից[360]: Ավելին՝ 1723 թ. վերջին կողմերը պայմանավորվեցին, որ Այսրկովկասում դեմ դիմաց հայտնվելու դեպքում պետք է զերծ մնային պատերազմական գործողություններից[361]: Նման համաձայնությունը միտում ուներ առաջին հերթին ժամանակ շահել և խուսափել միմյանց դեմ հնարավոր պատերազմից: Թեպետ օսմանցիները բացահայտորեն նկատում էին ռուսական հաջողությունները, այնուամենայնիվ, դա չէր նշանակում, որ նրանք պետք է բավարարվեին միայն Թիֆլիսի գրավումով: Նրանք փորձեցին որքան հնարավոր է շատ տարածքներ գրավել՝ հակադրվելով ռուսական ձեռքբերումներին: Ուստի, սուլթանական բանակը 1724 թ. Թիֆլիսից ուղղվեց Երևան՝ նպատակադրվելով նվաճել այն: Կարբիի 40 օրյա դիմադրությունը կոտրելուց հետո (սկիզբը՝ 1724 թ. ապրիլի 25-ից), օսմանցիները ձեռնամուխ եղան Երևանի նվաճմանը, որի բերդի գրավումը տեղի ունեցավ սեպտեմբերի 23-ին, թեև պաշարումը սկսվել էր հունիսի 24-ին[362]:

Ռուս-օսմանյան տևական բանակցություններից հետո 1724 թ. հունիսի 12-ին ֆրանսիական միջնորդությամբ կողմերի միջև կնքվեց պայմանագիր, որով Ռուսաստանին էին անցնում Դերբենտից Մազանդարան ընկած մերձկասպյան տարածքները, իսկ Օսմանյան կայսրությանը՝ Այսրկովկասը, ինչպես նաև՝ Թավրիզը, Արդեբիլը և Քերմանշահը[363]: Ինչ վերաբերում է Ծամախիին, ապա այն դրվեց օսմանյան հովանավորչության ներքո, սակայն այնտեղ նա չէր

[359] Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 153.
[360] Лысцов В. П., նշվ., աշխ., էջ 146:
[361] Նույն տեղում, էջ 147:
[362] Այվազյան Ա. Մ., Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, թիվ 1, 1991, էջ 93-100:
[363] Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. I, с. LXXV:

կարող զորք ուղարկել, իսկ մնացյալ տարածքները ճանաչվում էին Իրանի անբաժանելի մաս, եթե շահ Թահմասպն այդ պայմաններն ընդուներ[364]: Այդ պայմանագրով՝ օսմանյան և ռուսական կողմերը խուսափեցին հնարավոր բախումից, ինչը ձեռնտու էր նրանց անգամ այն պարագայում, որ դրանով Օսմանյան կայսրությունը զրկվեց մերձկասպյան տարածաշրջաններ արշավելու հեռանկարից, իսկ Ռուսաստանը՝ Այսրկովկասում հաստատվելու մտքից:

Պետրոս Առաջինը, չունենալով ամուր հենարան, չէր ցանկանա պատերազմել Օսմանյան կայսրության դեմ: Դրա փոխարեն ամրապնդելով վերահսկելի շրջանները՝ նա միաժամանակ Այսրկովկասի ռուսամետ ուժերին հույս ներշնչող կոչեր էր անում՝ ձգտելով միասնական պատնեշ ստեղծել: Դրա իրագործման համար հույժ կարևոր էր չթույլատրել օսմանյան զորքերի մուտքը Ծամախի, որի դիմաց ստեղծված իրավիճակում կարելի էր զիջել պայմանագրով նախատեսված տարածքները, որի հետևանքով Ծամախին չեզոք գոտի դարձավ ռուս և օսմանցի զինվորների համար՝ զերծ մնալով կողմերի անմիջական ներկայությունից:

Բարձր Դուռն իր հերթին էր խուսափում պատերազմից, քանի որ նկատի ունենալով մերձկասպյան շրջաններում հակառակորդի ամրապնդվելը՝ հաղթանակի հասնելու որևէ երաշխիք չուներ: Բացի այդ, կար այն մտավախությունը, որ զորքերի առաջացման դեպքում տարածաշրջանի ռուսամետ ուժերը, որոնք արժանի դիմադրություն էին ցուցաբերում, կարող էին շատ մեծ հարված հասցնել թիկունքից: Անխոս, հետագայում երկու երկրները տեսականորեն պահպանում էին միմյանց դեմ պատերազմելու հնարավորությունը, ինչը մեծ լարվածություն էր առաջացնում, սակայն կողմերը մինչև 1720-ականների վերջը խուսափեցին անմիջական առճակատումից:

Օսմանցիները, դեռևս Երևանի պաշարման ժամանակ (օգոստոսի սկզբին), օգտվելով Նախիջևանի հայերի պատվիրակության օսմանամետդիրքորոշումից՝ կարգադրեցին քուրդ առաջնորդներին 12000 զինվորով այնտեղ արշավել, նրանց կցելով՝ 1000-ի հասնող

[364] Лысцов В. П., նշվ., աշխ., էջ 238:

զորաջոկատ[365]: Զարգացնելով հաջողությունը՝ օսմանցիները 1725 թ. մտան Ղազախ, Ծամշադին, Լոռի, Բորչալու, իսկ նույն տարվա հոկտեմբերին գրավեցին Գանձակը[366]: Մեծ դիմադրություն կար Սյունիքի և Ղարաբաղի հայերի կողմից, որոնք միահամուռ ուժերով պայքարում էին օսմանցիների դեմ, սակայն այդ շրջանները նույնպես մինչև 1728 թ. ամբողջովին մտան օսմանյան տիրապետության ներքո[367]:

Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ Բարձր Դուռը փորձեց նախատեսվածից ավել տարածքներ գրավել, ինչը կտրուկ սրում էր հարաբերությունները Ռուսաստանի հետ: Մեծ վեզիր Դամադ Իբրահիմ փաշան հակադարձում էր, որ ռուսները ոչինչ չնախաձեռնելով՝ միայն դժգոհում են[368]: Ավելին՝ աֆղանների առաջնորդ Աշրաֆը, շահ ճանաչվելու դիմաց ընդունեց օսմանցիների իրավունքները նաև Քուրդիստանի, Խուզեստանի, Պարսկական Իրաքի մի մասի և անգամ Թեհրանի նկատմամբ[369], սակայն դրանց գրավումը չիրականացավ գլխավորապես Նադիր խանի հաղթական ձեռքբերումների շնորհիվ, որին 1729 թ. հաջողվեց պարտության մատնել աֆղաններին և գրավել Սպահանը[370]: Նաև մեծ պայքար ծավալեց օսմանցիների դեմ և սկզբնական շրջանում գրավեց Համադանը, Արդեբիլը և Թավրիզը՝ դրանով ծանր կացության մեջ գցելով վերջիններիս: Այդ տարածքային կորուստները, ի թիվս ներքին այլ խնդիրների, առաջին հերթին հարկերի բարձրացման պատճառով, Ստամբուլում իշխանական վերնախավի դեմ ըմբոստության պատճառ դարձավ, որը ղեկավարում էր Պատրոնա Հալիլ անունով մի յենիչերի: 1730 թ. դժգոհության ալիքն այնքան մեծ էր, որ գահընկեց արվեց օսմանյան սուլթանը և հաշվեհարդար տեսան Մեծ վեզիր Դամադ Իբրահիմի հետ[371]:

---

[365] Այվազյան Ա. Մ., Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թվականին, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, թիվ 2, 1991, էջ 108:

[366] Հայ ժողովրդի պատմություն, հատոր IV, հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում XIV- XVIII դդ., Երևան, 1972, էջ 158:

[367] Bilge S. M., նշվ., աշխ., էջ 188:

[368] Соловъев С., История России в царствования Императора Петра 2 и Анны Иоанновны, т. 1, М., 1868, с. 11-14.

[369] دکتر حسن خزایل -دکتر عبدالله رازی, նշվ. աշխ., էջ 259:

[370] Newman J.A., նշվ., աշխ., էջ 125:

[371] Aktepe, M, Patrona İsyanı (1730), Istanbul, 1958, ss. 131-182.

Արտաքին քաղաքականությունը նպաստավոր չէր նաև Ռուսական կայսրության համար, որը Պետրոս Մեծի մահից հետո, ելնելով զանազան դժվարություններից, իր ներկայությունը կասպյան շրջաններում անշահավետ համարեց: Իրանին սիրաշահելու համար կայսրուհի Եկատերինա Ի-ը (1725-1727 թթ.) պատրաստվում էր հրաժարվել Գիլանից, Մազանդարանից, Աստարաբադից[372], որոնց վերադարձը, ի թիվս՝ Բաքվի և Դերբենտի, իրականացավ 1730-ականների սկզբին[373]: Անտարակույս, այն հեռատես դիվանագիտական քայլ էր, որի առաջնային նպատակը՝ ի դեմս Իրանի՝ թուլացնել Օսմանյան կայսրության ռազմական ներուժը:

Այսպիսով, Սեֆյան Իրանի թուլությունից և վերջնական անկումից որոշել էին օգտվել Օսմանյան կայսրությունը և Ռուսաստանը, որոնք ի վերջո ազդեցության գոտիների բաժանեցին տարածաշրջանը: Հատկանշական է, որ 1724 թ. Կ. Պոլսի պայմանագիրը, ի տարբերություն Ռուսաստանի, խթան հանդիսացավ օսմանյան զորքերի հաջողությունների համար, որը արտահայտվեց ավելի անկաշկանդ ռազմական գործողություններով: Նրանք հնարավորինս սեղմ ժամկետներում տիրացան պայմանագրով նախատեսված շրջաններին և ձեռնամուխեղան դրատնօրինմանը:

## 2.2 Երևանի լիվան ըստ 1728 թ. աշխարհագրի

Երևանի *լիվայի* 1728 թ. հարկամատյանում[374] վարչական միավորների թիվը հասել է 14-ի, որի կազմի մեջ են մտել Երևանը, Քըրք Բուլաքը, Կարբին, Դարաչիչեքը, Ապարանը, Սուրմալուն, Իգդիրը, Արալըքը, Սադարաքը, Մակուն, Ծարուրը, Վեդին, Գառնին և Ծորագյալը[375]: Երևանի *լիվայի* ընդարձակ հարկամատյաններում արձանագրվել է 2 *քազա՝* Երևանը[376] և Կարբին[377], որոնցից առաջինը բաղկացած է եղել միայն քաղաքից, իսկ Կարբին՝ քաղաքից բացի, նաև՝ բազմաթիվ գյուղերից: Մյուս բոլոր վարչական միավորները

[372] Соловъев С., նշվ., աշխ., էջ 7:
[373] Лысцов, В., П., նշվ, աշխ, էջ 242:
[374] BOA, 0901. Բնագիր, գրված օսմանյան «سياقت»-«սիյաքաթ» տառատեսակով, 585 էջ, առաջին էջում Ահմեդ Երրորդի կնիքն է, 51x19, 21-23, 102-105, 216-223, 241-243, 262-263, 285-287, 313-317, 336-337, 349-353, 389-393, 440-449, 474-477, 530-532 էջերը մաքուր:
[375] BOA, 0901, ss. 24-583.
[376] Նույն տեղում, էջ 24:
[377] Նույն տեղում, էջ 106:

փաստացի ունեցել են *նահիեի* կարգավիճակ: Հատկանշական է, որ հիշյալ վարչական միավորների դասավորությունը համընկնում է *լիվայում* տեղ գտած ընդարձակ մատյանների հաջորդականությանը, ուստի այն ստորև կներկայացվի համապատասխան հերթականությամբ:

1728 թ. Երևանի *լիվայի* օսմանյան աշխարհագիրը, չպարունակելով *քանուններ*՝ սկսվում է Երևան քաղաքի տեղեկություններից[378]: Այն բաղկացած է եղել 4 թաղից[379], որոնցից էին՝ Հին քաղաքը, Թիմուր Բուլաքը, Դարեքենդին և Թեփեբաշը: Յուրաքանչյուր թաղ աչքի է ընկել խիտ բնակչությամբ, որտեղ գրանցվածների ընդհանուր թիվը հաշվվում է 672 անձ: Հաշվառված մարդկանց շրջանում եղել են ինչպես քրիստոնյաներ, այնպես էլ՝ մահմեդականներ: Ընդ որում՝ վերջիններս կազմել են մեծամասնություն: Այսպես օրինակ՝ նյութի քննությունից պարզ է դառնում, որ հաշվառվել են 244 քրիստոնյա և 428 մահմեդական, որոնք բացառությամբ Թիմուր Բուլաք թաղի (բնակչությունը՝ մահմեդական), ապրել են համատեղ: Հատկանշական է, որ ամենաշատը գրանցվել են Հին քաղաքում, որտեղ նկատելի է 340 հարկատու, որից 187-ը քրիստոնյա, իսկ 153-ը՝ մահմեդական: Ուշագրավ է, որ այն միակ թաղն էր, ուր քրիստոնյաները կազմել են մեծամասնություն: Ինչ վերաբերում է մյուս թաղերում հաշվառված մարդկանց վիճակագրությանը, ապա Թիմուր Բուլաքում՝ նկատելի է 130 մահմեդական, Դարեքենդիում՝ 18 քրիստոնյա և 39 մահմեդական, իսկ Թեփեբաշում՝ 39 քրիստոնյա և 106 մահմեդական:

Հարկատուների քննությունից պարզ է դառնում, որ քրիստոնյաների շրջանում, ի տարբերություն մահմեդականների, եղել է թվով 9 ամուրի: Բացի այդ, նկատելի է 6 հոգևորականի առկայություն: Ընդհանուր առմամբ ստացվում է, որ Երևան քաղաքում ապրել է 235 քրիստոնյա և 428 մահմեդական ընտանիք: Եթե յուրաքանչյուր ընտանիքի անդամների միջին թիվը համարենք 5-ը, ուստի կստացվի՝ շուրջ 1184 քրիստոնյա և 2140 մահմեդական:

Ադրբեջանցիների հեղինակած հիշյալ համառոտ մատյանում Երևան քաղաքի 1728 թ. ժողովրդագրական պատկերի համատեքստում կան անճշտություններ: Թերևս ամենակարևորն այն է, որ 235

[378] Նույն տեղում, էջ 24-41:
[379] Նույն տեղում, էջ 24-32:

քրիստոնյա ընտանիքի փոխարեն արձանագրվել է 224-ը: Սակայն նույնիսկ այդ տվյալի դեպքում՝ հեղինակները մարդկանց ընդհանուր թիվը հաշվել են ոչ թե 3269, այլ՝ 3369 անձ[380]:

Հարկատուների թվարկումից հետո անցում է կատարվում մասնավորապես քաղաքին պատկանող այգիների, պարտեզների, հողատարածքների և ջրաղացների թվարկմանը, որոնց շրջանում առանձնացել է այգիները, որոնք ընդհանուր 496-ն էին[381]: Դրանցից 374-ը գտնվել է Հին քաղաք թաղի մոտակայքում: Այգիներից հետո նշված են 7 պարտեզ, 7 հողատարածք և 43 ջրաղաց (5-ը՝ չգործող)[382]:

Նշյալ ինչքերին զուգահեռ նշվում է նաև Երևան քաղաքում եղող 1 վանք և 6 եկեղեցու առկայության մասին, որից 1-ը՝ չի գործել[383]: Այդ համատեքստում, առանձնակի հետաքրքրություն է առաջացնում քաղաքում Էջմիածնի Մայր Աթոռի ներկայությունը: Հարկացուցակի քննությունից պարզ է դառնում, որ Էջմիածնին է պատկանել 1 այգի և 2 ջրաղաց[384]:

Երևան քաղաքին հաջորդել է Քըրք Բուլաքի[385] *նահիեն*, որը բաղկացած է եղել 113 գյուղից[386]: Դրանց թվին են պատկանել՝ Ջարուբեշը (՞), Սանքուբեթը (՞), Չարբախը, Ողջաբերդը, Քոլլարան, Հաջ Էլիասը, Յենիջեն, Խիրխիրաքաթը (՞), Քանաքեռը, Թազաքոնթը (՞), Առինջը, Ձաքը, Ձաքավաթը, Բելղովանը, Ավանը, Ծահիբաբը, Աղաջուրը, Արամուսը, Քամրիշը, Քազաջա Ավանը, Արհուսը (՞), Աքնադուսը, Քոլլաջան, Քամալը, Մանքուսը, Դամ Գիրմեզը, Բոնյադը, Բալլիջան, Յայջըն, Սահանբեյը, Քարաքալան, Ձաթքիրանը, Դամիմլուն, Օրթավիրանը, Փոքր Աղվերանը, Քըզըլվիրանը, ..... Հաջը, Ձառը, Քարաջալարը, Գյոքքիլիսեն, Չոբան Գերեքմեզը, Մասիրջին, Քըզըլքալասըն, Թիզ Խարաբը, Թիհարը, Քանքարան, Բունրու Դելիքը, Խամսը, Քարաջիանեն, Արզաքանը, Ծեյխ Գելվադը, Աղչաքիլիսեն, Աքոր Բողլաքը, Դիլուլուն, Հին Դիլիլուլուն, Իսթիհավանքը (՞), Ձևաբը,

---

380 İrəvan əyalətinin icmal dəftəri, s. 14.
381 BOA, 0901, ss. 32-39.
382 Նույն տեղում, էջ 39-40:
383 Նույն տեղում, էջ 40:
384 Նույն տեղում:
385 Հայկական գրականության մեջ վկայված է Քըրք Պուլախ, Քըրքպուլախ, Քըրքպուլաք տեղանուններով: Գտնվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում: Տերմինների բառարան, հատոր 5, էջ 367:
386 BOA, 0901, ss. 42-101.

Սարուխլարը, Մեծ Աղվերանը, Քեշիշքենդին, Քալաջաքը, Դինքիլերը, Զիհիլին, Ալափարսը (՞), Քարավիրանը, Մոլահաջը, Քուզուրքենդին, Դևրանը, Քարաշամը, Բանթը (՞), Չարջուրը, Բաբաթլուն, Աքրաթը (՞), Քամարը, Նուրնուսը, Աբու Քըշլաղըն, Հիզարաբադը, Նորագեղը, Քաթքութը (՞), Թեքե Քըշլաքը, Օմար Ղավուրը, Ազարքին, Հուլլարը, Քանզանը, Եղվարդը, Քըզըլքալան, Ջանղիրան Մուսալման, Ծիրաբադը, Մուրադաբադը, Արաբլերը, Հաջ Փիրումը, Մեծ Գյոլքենդը, Փոքր Գյոլքենդը, Թիմուր Ջելին, Հաջա Բիրաքը, Խունուզ Բեքիրուն (՞), Փիրխանը, Ուլուխանլուն, Հին Ավադ Գելին, Քամիշլուն, Ռոսթոմլուն, Քարափիրամը, Քարահադիմը, Օրանը, Քազաղվալիքը (՞), Մեհմանդար Ծևալլին, Խալիֆալուն, Գյոքչաբեյը, Բիլասլուն, Ծարբաթը, Քուլիխանը, Քյորջաքը և Նոր Օդգելուն: Այդ բնակավայրերի շրջանում արձանագրված է նաև 1 *մզրայե*:

*Նահիեի* հարկացուցակում պահպանվել են տեղեկություններ, որտեղ նշված են որոշ գյուղերը մեկմեկու մոտ գտնվելը: Այդպես օրինակ՝ պարզ է դառնում, որ Յայջը գյուղը սահմանակցել է Քամալին, Քանքարան՝ Գյոքքիլիսեին, իսկ Արզաքանը՝ Դիլուլուին:

Քըրք Բուլաքի նշյալ գյուղերից 46-ը դատարկված են եղել: Դրանք էին՝ Սանքուբեթը, Չարբախը, Քազաջա Ավանը, Մանքուսը, Դամ Գիրմեզը, Բալլիջան, Յայջըն, Դամիիլուից մինչև Զառ գյուղը, Քարաջալարը, Չոբան Գերեքմեզը, Մասիրջին, Թիզ Խարաբը, Քարաջհանեն, բացառությամբ Քեշիշքենդիի՝ Ծեյխ Գելվադից մինչև Ալափարսը (՞), Մոլահաջահը, Քուզուրքենդին, Դևրանը, Քարաշամը, Բաբաթլուն, Աքրաքը, Աբու Քըշլաղը, Հիզարաբադը, Թեքե Քըշլաքը, Օմար Ղավուրը, ինչպես նաև՝ Քամիշլուից մինչև Մեհմանդար Ծևալլի և վերջին երկու գյուղերը:

Հարկացուցակը կարևոր սկզբնաղբյուր է նաև *Նահիեի* ժողովրդագրական պատկերի տեսանկյունից: Գյուղերում եղել են ինչպես քրիստոնյա, այնպես էլ՝ մահմեդական բնակչություն: Հարկ է ընդգծել, որ քրիստոնյաներն ու մահմեդականները, բացառությամբ Քանաքեռ և Ազարքի գյուղերի, բնակվել են առանձին բնակավայրերում:

Ուշագրավ է, որ սոսկ քրիստոնեաբնակ գյուղերը գերազանցել են մահմեդականներով աչքի ընկած գյուղերին՝ 71 բնակելի գյուղերից կազմելով 38-ը:

Միայն քրիստոնյաներով էին բնակեցված՝ Ջարուբեշ (՞) (40 անձ), Քոլլարա (53 անձ), Յենիջե (19 անձ), Թազաքոնթ (՞) (150 անձ), Առինջ (43 անձ), Ջաք (15 անձ), Ջաքավաթ (13 անձ), Բելղովան (26 անձ), Ավան (22 անձ), Ծահբաբ (5 անձ), Աղաջուր (15 անձ), Արամուս (24 անձ), Քամրիշ (26 անձ), Արհուս (՞) (18 անձ), Բոնյադ (2 անձ), Սահանբեյ (14 անձ), Ջաթքիրան (14 անձ), Գյոքքիլիսե (40 անձ), Քըզըլքալասը (2 անձ), Թիհար (50 անձ), Քանքարա (13 անձ), Բունրու Դելիք (6 անձ), Խամս (20 անձ), Արզաքան (44 անձ), Դիլուլու (5 անձ), Քեշիշքենդի (6 անձ), Ալափարս (՞) (20 անձ), Քարավիրան (22 անձ), Քամար (15 անձ), Նուրնուս (20 անձ), Նորագեղ (16 անձ), Հուլլար (6 անձ), Քանզան (20 անձ), Եղվարդ (52 անձ), Ծիրաբադ (77 անձ), Արաբլեր (29 անձ), Մեծ Գյոլքենդ (23 անձ) և Փոքր Գյոլքենդ (13 անձ) գյուղերը:

Մահմեդաբնակ գյուղերում պատկերը հետևյալն էր՝ Ողջաբերդում գրանցվել է 20, Հաջ Էլիասում՝ 21, Խիրիրաքաթում (՞)՝ 17, Աքնադուսում՝ 13, Քոլլաջայում՝ 11, Քամալում՝ 12, Քարաքալայում՝ 9, Քեշիշքենդում՝ 6, Բանթում (՞)՝ 53, Չարջուրում՝ 21, Քաթքութում՝ 12, Քըզըլքալայում՝ 27, Ջանղիրան Մուսալմայում՝ 7, Մուրադաբադում՝ 31, Հաջ Փիրումում՝ 18, Թիմուր Ջելիում՝ 24, Հաջա Բիրաքում՝ 51, Խունուզ Բեքիրայում՝ 20, Փիրխանում՝ 24, Ուլուխանլուում՝ 101, Հին Ավադ Գելիում՝ 17, Մեհմանդար Ծևալլիում՝ 42, Խալիֆալուում՝ 15, Գյոքջաբեյում՝ 16, Բիլասլուում՝ 33, Ծարբութում՝ 20 և Քուլիխանում՝ 20 անձ: Ինչ վերաբերում Քանաքեռ և Ազարքի գյուղերին, ապա այնտեղ համապատասխանաբար հաշվառվել են՝ 236 քրիստոնյա, 39 մահմեդական և 12 քրիստոնյա, 3 մահմեդական:

Կարելի է եզրակացնել, որ *նահիեում* հարկատուների թվով ամենամեծ գյուղը եղել է Քանաքեռը, ուր ճնշող մեծամասնությունը կազմել են քրիստոնյաները, այնինչ ամենաքիչ թվով հպատակներ արձանագրվել է Բոնյադում:

Գրանցված հարկատուների թվով քրիստոնյա բնակչությունը կազմել է մեծամասնություն: Հաշվելի է 1299 քրիստոնյա և 695

մահմեդական: Պայմանավորված համապատասխանաբար՝ 95 և 39 ամուրիներով՝ քրիստոնյա ընտանիքների թիվը այդպիսով կազմել է 1204-ը, իսկ մահմեդականներինը՝ 656-ը: Սույն տվյալների համաձայն՝ *նահիեում* եղել է շուրջ 6115 քրիստոնյա և 3319 մահմեդական բնակիչ:

*Նահիեի* քննությունից պարզվում է, որ մահմեդաբնակ երկու գյուղում՝ Խալիֆալուում և Գյոքչաբեյում բնակվել են Թաջիլի աշիրեթի ներկայացուցիչները:

Քըրք Բուլաքի *նահիեում* այգիները թիվը այնքան էլ մեծ չի եղել՝ հարկացուցակում հաշվելի են ընդամենը 10-ը: Դրանք բոլորը արձանագրված են Թազաքոնթ (՝) գյուղում[387]: Սակայն նույնը չի կարելի փաստել ջրաղացների մասին, որոնք մեծ տարածում են ունեցել գյուղերում: Դրանք ընդհանուր 171-ն էին, որից միայն 23-ն էին ավեր վիճակում գտնվում: Ջրաղացներին զուգահեռ հանդիպում են նաև *դինգերի*, ձիթհանների և ներկատնի մասին վկայություններ: Մասնավորապես *դինգերը* թվով 54-ն էր, որոնցից 5-ը՝ չգործող: Դինգերն ավելի քիչ էին, քան ձիթհանները, որոնց շրջանում 6-ից 5-ն էին գործող: Ինչ վերաբերում է ներկատանը, ապա արձանագրված է ընդամենը 1-ը:

Ուշագրավ է, որ տվյալներ կան նաև *նահիեում* առկա եկեղեցիների և վանքերի մասին, որոնց թիվը զգալի էր: Քըրք Բուլաքում կարելի է հաշվել 19 եկեղեցի և 2 վանք:

*Լիվայի* հարկամատյանում Քըրք Բուլաքին հաջորդում է Կարբի քաղաքը[388]: Այն ունեցել է 1 թաղ և աչքի է ընկել խիտ բնակչությամբ, որտեղ բնակվել են բացառապես քրիստոնյաներ: Աշխարհագրում հաշվառվածները կազմել են 476 անձ, որոնց թվում եղել է 62 ամուրի: Ստացվում է, որ քրիստոնյա ընտանիքները կազմել են 414-ը, իսկ ընդհանուր բնակչությունը՝ շուրջ 2132 մարդ:

Անձնանուններից հետո անցում է կատարվում մասնավորապես այգիների պարտեզների թվարկմանը, որոնք դատելով տվյալներից՝ բավական տարածված էին: Այսպիսով՝ կարելի է հաշվել 59 այգի և 68 պարտեզ[389]: Պատահում են դեպքեր, երբ որևէ բնակիչ տիրել է

---

[387] BOA, 0901, s. 53.
[388] Նույն տեղում, էջ 106-114:
[389] Նույն տեղում, էջ 111-113:

միանգամից մի քանի այգիների կամ պարտեզների: Դրանց կողքին հիշատակված է նաև շուրջ 3 հողատարածքի մասին տեղեկություն[390]: Հատկանշական է նաև ջրաղացների և ձիթհանների մասին վկայությունները, ըստ որոնց, եղել է շուրջ 15 ջրաղաց և 2 ձիթհան[391]:

Կարբի քաղաքից հետո անցում է կատարվում գյուղերի տվյալներին, որոնց թիվը հասել է 163-ի[392]: Դրանք էին՝ Խանեվանքը, Քաթուզ Բուլաքը, Մուղնին, Աշտարակը, Օշականը, Քուչեքքենդը, Փարպին, Թեքեն, Անքասանքը (՞), Քըզըլ Աքրաքը, Քարաքըշլաքը, Բաթրինջը, Այարքին, Աք Թիմուրը, Քըզըլ Թիմուրը, Սարքուբեթը (՞), Բաթռվանը, Փիրսին (՞), Օշինը, Քութանլումը, Փիրեքաթը, Արքուվը, Խաչավանքը, Դիրքազը (՞), Խոչքերին[393], Ավանը, Ջաֆաքերտը, Մաքդան, Դուքանը, Բաղչաջաքը, Բիշթը (՞), Բաշսըզը, Նազարխանքենդին, Ագարակը, Նոր Թալիշը, Հին Թալիշը, Ծամիրանը, Աղչաքալան, Գուշը, Ուջանը, Ջաֆասը (՞), Վաղարշապատը, Աքսաքլուն, Աբրամիլուն (՞), Աբրամիլուն[394], Աբիրլու (՞), Հաջբեյլուն, Քըշլաքը, Քարղինը, Քաթարլուն, Ծահրամանը, Խալիֆալուն, Ծահ Արղըն, Աղչաքըրքը, Ասայեշ Քըրքը, Ամիրուդլուն, Գյուզելաբադը, Քոլլա Քաշիսը, Մուսա Հաջիլուն, Ջանքարան, Աքարլուն, Հոջա Յարալուն, Քուզա Ջեբելուն, Աքսարլուն (՞), Առնադունը, Խեյր Օթիրը, Հաջքարան, Քազանքը, Բաքին, Աղչաքալան, Քարաքանլուն, Քյորփուլուն, Քավայալուն (՞), Քըզշլաք Նազարլուն, Քըզլաք Քուզուջիլուն, Հիթաքը, Սամաղարը, Մուղանլուն, Քարանբաղը, Մունլա Թուրսունը, Թուսը, Խաչիլերը, Աքինլուն, Քուրթալը, Ալիբեյլուն, Աքշաթլուն, Ջաբունը (՞), Չիդամլուն, Բիրամշլուն, Մեծ Բաղին, Ուզուն Օյան, Ծահրիյարը, Ջաֆարաբադը, Արաբքիրլի Գելինը, Մունլա Բաթիրիդը, Փոքր Թալինը, Մեծ Թալինը, Աշանքը, Մեհրիբանը, Քազաղա Քողազը, Թեփեքինլուն, Շեյխհաջը, Թուքլուվիրանը, Գյոզլուն, Վերին Քարգանսարան, Ներքին Քարվանսարան, Չալ Թեփեն, Չարվինը, Գունինքենդին, Ջառընջան, Սադաքլուն, Քըզըլ Քուլան, Թիմուրջին, Մաստարան, Աբդուլլերը, Բահլուքքենդին, Խոշա Բիթաքը,

[390] Նույն տեղում, էջ 113:
[391] BOA, 0901, s. 114.
[392] Նույն տեղում, էջ 114-215:
[393] Այն հայտնի է եղել նաև՝ Քոյլու անվամբ:
[394] Այն հայտնի է եղել նաև՝ Օրթալու անվամբ:

Սաբունջան, Մոլա Քուլին, Ալիքենդին, Ամիրբարը, Արաբկիրը, Բիրաթլուն, Մուղանլուն, Փեդարթաշը (՞), Քըզըլքիլիսեն, Վերին Մաղարան, Ներքին Մաղարան, Յենիջեն, Չարփալուն, Արընջան, Ծիրհաջին, Քուլի Դերվիշը, Քըզըլվիրանը, Քազաջա Ուրթը (՞), Քըզմըզ Գելաքը, Մազարջաքը, Աքրի Սիվաթը (՞), Աղչաքալան, Քըշլաք Հաջբիրամը, Խեյրբեյլուն, Քարա Ալիքենդին, Ծավարանիդը, Խալիմջանը, Հալիլքենդին, Սաբո Թիհալին (՞), Բաշքենդը, Ուզուն Քըշլաքը, Քուքիքենդին, Չարքելին, Քազը Նաբաղը (՞), Այարլուն, Քոլաղուրը, Քուքեր Ջինլուն, Գյոլքենդին, Թաղքալան, Հին Յոլ Քաջարան, Բայանդուրը, Սարոխազերը, Փիրի Միրաքը, Բուրդաղանը և Զաբդը: Սրանց շրջանում եղել են մոտմեկ տասնյակ մզրայներ:

Գյուղանունների համատեքստում նկատելի է, որ Կարբիում Աբրամիլու և Աղչաքալա անուններով 2 գյուղ է գոյություն ունեցել: Հատկանշական է, որ Աբրամիլու գյուղերի պարագայում դրանք առանձնացել են միայն՝ ըստ հաջորդականության երկրորդ բնակավայրի այլ անվանման շնորհիվ: Բացի այդ, պահպանվել է նաև գյուղերին առնչվող տեղագրական տեղեկություն, որի համաձայն՝ Քուչեքքենդը գտնվել է Օշին գյուղի մոտակայքում:

Կարբիի վերոնշյալ գյուղերի շրջանում եղել են նաև դատարկված բնակավայրեր, որոնք եղել են 58-ը: Դրանց թվում էին՝ Անքասանքը (՞), Նազարխանքենդին, Հին Թալիշը, Աքսաքլուն և Աբրամիլուն (՞)[395], Ամիրուդլուն, Քուրթալը, Մեծ Բաղին, Ջաֆարաբադը, Մեծ Թալինը, Թեփեքինլուն, Ծեյխհաջը, Թուքլու Վիրանը, բացառությամբ Մաստարայի՝ Ներքին Քարվանսարայից մինչև Քազաջա Ուրթ ընկած գյուղերը, ինչպես նաև՝ Խերբեյլուն, Աղչաքալան և Քուքիքենդիից վերջին բնակավայրը ներառյալ բոլոր բնակավայրերը:

Հարկացուցակի ուսումնասիրությունից պարզվում է, որ մնացյալ 106-ում ապրել են քրիստոնյաներ և մահմեդականներ: Հատկանշական է, որ միայն քրիստոնյաներով բնակեցված գյուղերը զգալիորեն զիջել են սոսկ մահմեդաբնակ բնակավայրերին, որը արտահայտվել է 23-ը 76-ի հարաբերակցությամբ: Բացի այդ, եղել են

[395] Խոսքը վերաբերում է հերթականությամբ առաջին գյուղին:

նաև այնպիսի գյուղեր, որտեղ բնակչությունը միատարր չի եղել. դրանք թվով 7-ն էին:

Գյուղերի շրջանում ամբողջովին քրիստոնեաբնակ էին՝ Խանեվանքը (31 անձ), Մուղնին (60 անձ), Աշտարակը (180 անձ), Օշականը (87 անձ), Քուչեքքենդը (22 անձ), Քըզըլ Աքրաքը (18 անձ), Աք Թիմուրը (22 անձ), Քըզըլ Թիմուրը (25 անձ), Սարքուբեթը (՞) (30 անձ), Բաթովանը (15 անձ), Օշինը (21 անձ), Փիրեքաթը (20 անձ), Դիքազը (10 անձ), Գուշը (32 անձ), Ջաֆասը (՞) (31 անձ), Վաղարշապատը (516 անձ), Առնադունը (29 անձ), *Քազա*նքը (31 անձ), Թուսը (47 անձ), Ալիբեյլուն (67 անձ), Ծահրիյարը (104 անձ), Վերին Քարվանսարան (22 անձ) և Մաստարան (32 անձ):

Սոսկ մահմեդաբնակ 76 գյուղերից՝ Քաթուզ Բուլաքում արձանագրվել է 20, Թեքեյում՝ 38, Քարաքըշլաքում՝ 2, Բաթրինջում՝ 17, Այարքիում՝ 15, Փիրսիում (՞)՝ 21, Քութանլումում՝ 10, Արքուվում՝ 11, Խաչավանքում՝ 7, Խոչքերիում՝ 25, Ավանում՝ 13, Ջաֆասքերտում՝ 7, Մաքդայում՝ 2, Դուքանում՝ 6, Բաղչաջաքում և Բիշթում՝ 3-ական, Բաշսըզում՝ 4, Ագարակում և Նոր Թալիշում՝ 12-ական, Ծամիրանում՝ 7, Աղչաքալայում՝ 3, Աբրամիլուում՝ 141, Աբիրլուում (՞)՝ 14, Հաջբեյլուում՝ 18, Քըշլաքում՝ 31, Քարղինում՝ 16, Քաթարլուում՝ 31, Ծահրամանում՝ 4, Խալիֆալուում՝ 44, Ծահ Արղըում՝ 9, Աղչաքըրքում՝ 30, Ասայեշ Քըրքում՝ 8, Գյուզելաբադում՝ 10, Քոլլա Քաշիսում՝ 4, Մունլա Աբդիում՝ 16, Մուսա Հաջիլուում՝ 59, Աքարլուում՝ 21, Խոջա Յարալուում՝ 32, Քուզա Ջեբելուում՝ 13, Աքարլուում՝ 18, Խեյր Օթիրում՝ 23, Հաջքարայում՝ 14, Բաքիում՝ 11, Աղչաքալում՝ 10, Քուրաքանլուում՝ 28, Քյորփուլուում՝ 7, Քավայալուում (՞)՝ 5, Քըշլաք Նազարլուում՝ 2, Քըշլաք Քուզուջիլուում՝ 6, Հիթաքում՝ 33, Սամաղարում՝ 6, Մուղանլուում՝ 16, Քարանբաղում՝ 14, Մունլա Թուրսունում՝ 15, Խաչիլերում՝ 26, Աքինլուում՝ 25, Աքշաթլուում՝ 21, Ջաբունում (՞)՝ 60, Չիդամլուում՝ 20, Բիրամշլուում՝ 6, Ուզուն Ույայում՝ 29, Արաբքիրլի Գելինում՝ 53, Աշնաքում՝ 8, Մեհրիբանում՝ 14, Քազաղա Քողազում՝ 10, Քազաջա Ուրթում (՞)՝ 6, Քըզմըզ Քըշլաքում՝ 9, Մազարջաքում՝ 5, Աքրի Սիվաթում (՞)՝ 20, Քարա Ալիքենդիում և Ծավարանիդում՝ 19-ական,

Խալիմջանում՝ 17, Հալիլքենդիում՝ 19, Սաբո Թիհալիում (՞)՝ 17, Բաշքենդում՝ 24 և Ուզուն Քըշլաքում՝ 43 անձ:

Ինչ վերաբերում է համատեղ բնակչությամբ աչքի ընկած գյուղերին, ապա Փարպիում գրանցվել է 41 քրիստոնյա, 12 մահմեդական, Ուջանում՝ 32 քրիստոնյա, 5 մահմեդական, Ջանքարայում՝ 28 քրիստոնյա, 8 մահմեդական, Մունլա Բաթիրիդում՝ 4 քրիստոնյա, 9 մահմեդական, Փոքր Թալինում՝ 33 քրիստոնյա, 20 մահմեդական, Գյոզլուում՝ 7 քրիստոնյա, 17 մահմեդական և Քըշլաք Հաջբիրամում՝ 11 քրիստոնյա և 50 մահմեդական:

Բերված փաստերից երևում է, որ Կարբիի գյուղերում հաշվառված անձանց թվով ամենամեծը աչքի է ընկել Վաղարշապատ գյուղը: Այնինչ ամենաքիչ հարկատուները հաստատվել էին՝ Քարաքըշլաքում և Մաքդայում:

Չնայած մահմեդաբնակ գյուղերի ակնհայտ քանակական առավելությանը, բերված տվյալները ցույց են տալիս, որ գյուղերում բնակչության մեծամասնությունը կազմել են քրիստոնյաները: Այսպիսով, գյուղերում ընդհանուր հաշվառվել է 1608 քրիստոնյա և 1553 մահմեդական, որոնց շրջանում եղել են համապատասխանաբար՝ 257 և 229 ամուրիներ: Այն ենթադրում է, որ գյուղերում քրիստոնյա ընտանիքները կազմել են 1351-ը, իսկ մահմեդականներինը՝ 1324-ը: Ինչ վերաբերում է բնակավայրերում առկա ընդհանուր բնակչության քանակին՝ ապա ստացվում է 7012-ը 6849-ի դիմաց: Հարկ է ընդգծել, որ եթե ժողովրդագրական պատկերը դիտարկենք ամբողջ գյուղերի համատեքստում, ապա այս ամենին հավելելով նաև քաղաքում նշված բնակչության թիվը, ուստի քրիստոնյա բնակչության քանակական առավելությունը կտրուկ կմեծանա՝ հասնելով 9152-ի:

Կարբիի աշխարհագրից պարզ է դառնում, որ մահմեդականները մի շարք գյուղերում ներկայացրել են աշիրեթներ: Մասնավորապես Ավանում և Ջաֆաքերտում բնակչություն են կազմել Քարաջալար, Քըշլաքում՝ Քամարլու Սեյֆիաբադ, Խալիֆալուում՝ Թուրքեմանլու, Աղչաքըրքում՝ Ծանթլու, Ասայեշ Քըրքում և Խեյր Օթիրում՝ Քուրդքուլլու, Գյուզելաբադում, Քավայալուում և Քըշլաք Նազարլուում՝ Քուզիքուդանլու, Քոլլա Քաշիսում՝

Քաչիլու, Մուսա Հաջլիում՝ Ծիթլու, Ջանքարայում, Աքարլուում, Հոջա Յարալուում՝ Իսհանլու, Քյորփուլլուում՝ Ծիրելու, Հիթաքում՝ Ալբաթանլու և Մուղանլուում՝ Բանադ՞ աշիրեթները:

Բնակավայրերի շրջանում հատուկ կարևորություն է ներկայացնում Վաղարշապատ գյուղը, որտեղ գտնվել է Մայր Աթոռը[396]: Օսմանյան աշխարհագրի տվյալներով՝ բացի հարկատուներից թվարկումից, գյուղում գրանցված է այն սեփականությունը, որը պատկանել է բնակչությանը[397]: Այդ տվյալների համաձայն՝ ընդհանուր առմամբ, գյուղացիների այգիները 81-ն էին, ջրաղացները 11-ը և կար ընդամենը մեկ հողատարածք:

Հարկացուցակում այնուհետև թվարկվում է գյուղի այն սեփականությունը, որը պատկանել է Էջմիածնի Մայր Աթոռին[398]: Թվարկվածների մեջ տեղ են գտել 1 քարավանատուն, 3 վարելահող, այգի, մեկ առանձին վարելահող, ջրաղաց, ձիթհան և *դինգ*, սակայն բացառությամբ առաջին երկուսի, փաստաթղթի այդ հատվածում մյուս սեփականության տեսակների քանակի շուրջ որևէ վկայություն չկա: Սակայն ելնելով այն փաստից, որ հարկաբաժնում արձանագրված էին 2 ձիթհան, 1 *դինգ* և դրանց դիմաց սահմանված չէր որևէ դրույքաչափ[399], կարելի է եզրակացնել, որ խոսքը եկեղեցու այն սեփականության մասին է, որի դիմաց թվարկման ժամանակ որևէ դրամական արժեք նշված չի եղել: Այնուհետև՝ թվարկվելով գյուղից գանձվող հարկերը՝ շարադրվում է օսմանյան իշխանությունների կողմից Մայր Աթոռին տրված արտոնությունները և նրա վրա դրված պարտականությունները[400]: Ըստ այդ տեղեկությունների՝ Էջմիածնին պատկանող մի շարք սեփականության տեսակներ *մաղաֆ* էին հայտարարվում: Նշվում է 2 գութանի, 1500 սմամար կազմող հողի, 500 գլուխանասունի, 2 ձիթհանի, 2 *դինգ* ջրաղացի, սեփականություն հանդիսացող այգիների, եկեղեցուն պատկանող 4 վանքերի մասին[401]: Եկեղեցին ազատվում էր

[396] BOA, 0901, ss. 150-158.
[397] Նույն տեղում, էջ 156-157:
[398] BOA, 0901, ss. 157-158.
[399] Նույն տեղում, էջ 158:
[400] Նույն տեղում:
[401] Նույն տեղում:

*իսփենջից*, *ջիզիեից* և իրավունք ուներ տիրելու քրիստոնյա բնակչության այն սեփականությանը, որը անժառանգության պատճառով դատարկ էր մնացել: Բացի այդ, հիշատակվում են նաև Վաղարշապատ, Օշական, Մաստարա գյուղերը, որոնք հարկատու էին Էջմիածնին: Այդ ամենից հետո իշխանությունները եկեղեցուց պահանջում են վճարել տարեկան 350 *ղուրուշ*, իսկ օսմանյան զինվորներին՝ 1 *աքչե* և որոշ քանակությամբ ցորեն[402]:

Բավական ուշագրավ են Մայր Աթոռին պատկանող գյուղերի տվյալները: Բանն այն է, որ ըստ Վաղարշապատի 1725 թ. օսմանյան հարկացուցակի՝ եկեղեցապատկան էր թվով 5 գյուղ՝ Վաղարշապատը, Օշականը, Մաստարան, Ֆրանկանոցը և Քիրաջլուն[403]: Սակայն Մատենադարանում պահվող 2 օսմանյան վավերագրերը փաստում են, որ Ֆրանկանոց և Քիրաջլու գյուղերը բացակայում են նաև՝ 1726[404] և 1727[405] թվականներին: Մենք հակված ենք կարծելու, որ այդ երկու գյուղը, անհայտ պատճառներով, այդ տարիներին այլևս վանքապատկան չէին: Այնուամենայնիվ, Նադիր շահի օրոք 1735 թ. Աբրահամ Կրետացի կաթողիկոսին (1734-1737 թթ.) հաջողվում է շահական հրովարտակով ամրագրել Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Ֆրանկանոց, Քիրաջլու, Դիբաքլու և Չալաբիքենդ գյուղերի պատկանելությունը Մայր Աթոռին[406]:

1728 թ. Երևանի *լիվայի* աշխարհագրի ուսումնասիրությունից պարզվում է, որ տարբերություններ կան Մատենադարանի այն երկու հարկացուցակի միջև, որոնք վերաբերում են Վաղարշապատ գյուղին և անմիջականորեն առնչվում են նշյալ թվականի տեղեկություններին: Այդ երկու թղթապանակներից առաջինը[407] թվագրվում է 1728 թ., իսկ երկրորդը[408]՝ թեպետ 1731 թ., այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ նախորդի կրկնությունն է, որը 3 տարի անց պարզապես թարմացվել է: Վերջինս հիմնականում

---

[402] Նույն տեղում:
[403] Մատենադարան, Կ/դ, թղթ. 1 գ, վավ. 316, Փափազյան Հ., նշվ., աշխ., էջ 453:
[404] Մատենադարան, Կ/դ, թղթ. 1 գ, վավ. 306:
[405] Մատենադարան, Կ/դ, թղթ. 1 գ, վավ. 314:
[406] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը III, շարիաթական նոտարական փաստաթղթեր (ԺԷ-ԺԸ դդ.), կազմեցին, բնագրերը թարգմանեցին և ծանոթագրեցին Ք.Պ. Կոստիկյանը և Մ. Ա. Խեչոն, Երևան, 2018, էջ 11 (այսուհետև՝ շարիաթական նոտարական փաստաթղթեր):
[407] Մատենադարան, Կ/դ, թղթ. 1 գ, վավ. 320:
[408] Մատենադարան, Կ/դ, թղթ. 1 գ, վավ. 332:

օգնում է՝ հարկ եղած դեպքում կատարելու որոշ ճշգրտումներ: Ինչպես իրավացիորեն նշել է պատմաբան Հակոբ Փափազյանը, այդպիսի քաղվածքները դուրս են բերվել Երևանի լիվայի ընդարձակ հարկամատյաններից[409]:

Ընթացիկ նյութի հետ համեմատությունից պարզվում է, որ թեպետ հարկատուների թիվը 516-ն է, այնուամենայնիվ, ընդարձակ աշխարհագրում ամուրիները հաշվվում են 130-ը, իսկ 2 թղթապանակի տեղեկություններով՝ նրանց թիվը հասել է 120-ի: Այն ենթադրում է, որ ի սկզբանե Վաղարշապատի քաղվածքի հանձման ընթացքում կամ փոխվել է 10 ամուրիների սոցիալական կարգավիճակը և ըստ այդմ՝ կատարվել են փոփոխություններ, կամ էլ, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է եղել իշխանությունների անճշտությամբ:

Աղբյուրների համադրությունից պարզ է դառնում նաև եկեղեցապատկան ինչքին առնչվող որոշ տեղեկություն: Այն հիմնավորվում է՝ շնորհիվ բուն աշխարհագրի և 1731 թ. մատյանի տեղեկությունների: Բանն այն է, որ 1728 թ. քաղվածքում նշված 2 վարելահողից 1-ի փոխարեն, մյուսներում արձանագրված է 1 *դինգ*: Ինչ վերաբերում է մյուս տեղեկություններին, ապա դրանք 3 աղբյուրում էլ նույնն են:

Կարևոր է նաև համեմատությունը «Ջամբռ» աշխատության հետ, որտեղ երևում են մի շարք տարբերություններ: Մասնավորապես կաթողիկոսը հիշատակել է Էջմիածնին պատկանող 3 վանք, 600 գլուխ անասուն[410], այնինչ ինչպես արդեն վերևում նշվեց, *մաղաֆ* հայտարարված վանքերի թիվը 4-ն էր, իսկ անասունների թիվը՝ 500: Ի դեպ, նույն աղբյուրում որևէ տեղեկություն չկանաև վերը նշված 1 *աքչեի* և ցորենի մասին[411]: Ամենևին չթերագնահատելով Սիմեոն Երևանցու մեծարժեք աշխատության նշանակությունը, սակայն այն մասնավորապես օսմանյան վավերագրերի քննության հարցում ապառիչ և բազմակողմանի ուսումնասիրություն չէ[412], ուստի

[409] Փափազյան Հ., Մատենադարանի թուրքերեն վավերագրերի աղբյուրագիտական արժեքը, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, թիվ 4, 1974, էջ 93:
[410] Ջամբռ, էջ 243:
[411] Նույն տեղում:
[412] Փափազյան Հ., Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, նշվ. աշխ., էջ 433:

հակված ենք կարծել, որ պետք է հիմք ընդունել օսմանյան տվյալները, քանի որ իշխանությունները հարկացուցակները կազմելիս պարտավոր էին յուրաքանչյուր տեղեկություն հնարավորինս ճշգրիտգրանցել:

Վերադառնալով Կարբիի գյուղերի օսմանյան հարկամատյանի ընդհանուր տեղեկություններին՝ պետք է փաստել, որ մեծ թիվ են կազմել այգիները, պարտեզները, հողատարածքները: Մասնավորապես բացի Վաղարշապատ գյուղի տվյալների, գյուղերում հաշվվում է շուրջ 269 այգի, 237 պարտեզ և 18 հողատարածք: Հետաքրքրական է, որ Օշականում այգիներից մեկը եղել է Էջմիածնի սեփականությունը, որի մասին տեղեկություններ է հաղորդում միայն ընթացիկ օսմանյան աշխարհագիրը[413]:

Գյուղերում լայն տարածում է ունեցել նաև ջրաղացների, ձիթհանների և *դինգի* օգտագործումը: Բացառությամբ Վաղարշապատ գյուղի, գյուղերի ջրաղացները 174-ն էին, որոնցից 22-ը ավեր վիճակում էին գտնվում: Ձիթհանները անհամեմատ ավելի քիչ են արձանագրված, որոնք Վաղարշապատից դուրս, 14-ն էին, որոնցից 5-ը չէին գործում: Հատկանշական է, որ աշխարհագրի վկայությունների համաձայն՝ Ջաֆաս (՞) գյուղում ձիթհաններից մեկը պատկանել է Էջմիածնին: Սրանց հակառակ, կարելի է հաշվել ընդամենը մեկ դինգ, որն էլ գտնվել է ավեր վիճակում: Հատկանշական է, որ Խանեվանքում և Մուղնիում հանդիպում է համապատասխանաբար 1 եկեղեցու[414] և նույնքան վանքի առկայության մասին գրություն[415]:

Ըստ օսմանյան ընդարձակ ցուցակների՝ Կարբիի քազային հաջորդում է Դարաչիչեքի[416] *նահիեն*[417]: Այն բաղկացած է եղել 39 գյուղից, որոնց թվում էին՝ Ջահիքը (՞) Ծահունիրը (՞), Վարսուրը, Քամասուրը, Յենիջեն, Ջաբուքլին, Ուլուդուրը, Սեյինլուն (՞), Թուքլուջան (՞), Քարաքեշիշը, Յայջըն, Քարամուրադը, Հայրապետը, Քաջրաքիրը, Քիրանքին, Ջանիբեյը, Ախվարեն, Խուրսուրը, Քըզըլքիլիսեն, Ախթուն, Քուրքադուսը, Քահսին, Ավարանիքը,

[413] BOA, 0901, s. 124.
[414] BOA, 0901, s. 114.
[415] Նույն տեղում, էջ 116:
[416] Այն գտնվել է Ծաղկունյաց լեռներում: Համապատասխանում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Վարաժնունիք գավառին: Ներկայումս՝ Ծաղկաձոր: Տեղանունների բառարան, հատոր 2, էջ 55:
[417] BOA, 0901, ss. 224-240.

Ալաքաքը, Սևանը, Քազուջը, Քարամահմուդը, Քուրդաքը, Ծահարնուրը, Թեքելուն, Բալջիքլուն[418], Քարաքիլիսեն, Աշք Քուդարաթը, Քուխուրլուն (՞), Թեքնելուն, Մազրայե Թաշիրը, Անթուն Սըրֆ Բուլլաքը (՞)[419], Մազրայե Ջարայիսին և Սարաքիղը: Սրանց հետ մեկտեղ կային 3 *մազրայե*:

Նշյալ 39 բնակավայրերից 12-ը դատարկված էին: Դրանք էին՝ Սեյինլու (՞), Ավարանիք, Ալաքաք, Քարամահմուդ ինչպես նաև՝ ըստ վերոնշյալ հաջորդականության՝ Քարաքիլիսեից մինչև վերջին գյուղը ներառյալ: Հարկ է ընդգծել, որ թեպետ օսմանյան աշխարհագրում բնակչությունից զուրկ գյուղերի թվում նշված են նաև ևս երկուսը՝ Քուրդաքը և Ծահարնուրը, այնուամենայնիվ, ելնելով այն փաստից, որ դրանց սահմանների մեջ մտնող թաղերում արձանագրված է բնակչություն, ուստի հարկ ենք համարել դրանք դասել բնակելի գյուղերի շարքին: Հարկամատյանում գյուղերի ուսումնասիրությունից պարզվում է նաև, որ Յայջը, Հայրապետ և Քաչաքիր գյուղերը սահմանակցել են Քարամուրադին, Սարաքիղը գտնվել է Քուրդաքի մոտ:

Հարկամատյանի տեղեկություններով՝ *նահիեում* բնակվել են քրիստոնյաներ և մահմեդականներ, որոնք արձանագրվել են ինչպես առանձին բնակավայրերում, այնպես էլ՝ միևնույն գյուղերում: 28 բնակելի գյուղերից 23-ը բաղկացած է եղել միայն քրիստոնյաներից: Սոսկ մահմեդաբնակ էր միայն 3 գյուղ՝ Խուրսուրը, Քըզըլքիլիսեն և Քուրդաքը: Ինչ վերաբերում է մնացյալ 2 գյուղին (Ծահարնուր և Բալջիքլու), ապա այնտեղ քրիստոնյաներն ու մահմեդականները բնակվել են են համատեղ:

Ամբողջովին քրիստոնեաբնակ էր 22 գյուղ, որոնց թվում էին՝ Ջահիքը (՞) (29 անձ), Ծահունիրը (՞) (30 անձ), Վարսուրը (8 անձ), Քամասուրը (3 անձ), Յենիջեն (1 անձ), Ջաբուքլին (54 անձ), Ուլուդուրը (2 անձ), Թուքլուջան (՞) (22 անձ), Քարաքեշիշը (30 անձ), Յայջըն (3 անձ), Քարամուրադը (21 անձ), Հայրապետը (6 անձ), Քաջրաքիրը (4 անձ), Քիրանքին (7 անձ), Ջանիբեյը (8 անձ), Ախվարեն (2 անձ), Ախթուն (20 անձ), Քուրքադուսը (6 անձ), Քահսինը (7 անձ), Սևանը (10 անձ), Քազուջը (12 անձ) և Թեքելուն (18 անձ):

[418] Այն հայտնի է եղել նաև՝ Ալաջաք անվամբ:
[419] Այն հայտնի է եղել նաև՝ Իսմիշլու անվամբ:

Ի տարբերություն քրիստոնեաբնակ գյուղերի, սոսկ մահմեդաբնակները ընդամենը 3-ն էր՝ Խարսուրը, Քըզըլքիլիսեն և Քուրդաքը, որտեղ գրանցվել են համապատասխանաբա՝ 4, 3 և 7 անձ: Ինչ վերաբերում է համատեղ բնակությամբ աչքի ընկած Շահարնուրը և Բալջիքլու գյուղերին, ապա առաջինում հաշվառվել է 7 քրիստոնյա, 16 մահմեդական, իսկ վերջինում՝ 7 քրիստոնյա և 32 մահմեդական:

Ինչպես երևում է *Նահիեում* հարկատուների թվով ամենամեծ գյուղը քրիստոնեաբնակ Ջաբուքլին էր:

Ըստ տվյալների՝ գրանցված քրիստոնյաները եղել են 317-ը և հաշվի առնելով այն փաստը, որ նրանց շրջանում չի եղել որևէ ամուրի, ուստի ընտանիքները նույնքան են կազմել: Այդ թվերը անհամադրելի են մահմեդականների վիճակագրությանը, ըստ որի՝ ընդհանուր հաշվառվածները կազմել են 62-ը, որից 2-ը՝ ամուրի: Հետևաբար՝ կարելի փաստել, որ *Նահիեում* եղել է շուրջ 1585 քրիստոնյա և 302 մահմեդական:

*Նահիեում* ամենևին շատ չեն եղել ջրաղացների և ձիթհանների առկայությունը: Առաջինները ընդամենը 22-ն էին, որոնցից 2-ը գտնվել է ոչ շեն վիճակում: Ինչ վերաբերում է ձիթհաններին, ապա նշված է 4-ը, որից միայն 1-ը չի գործել: Դրանց զուգահեռ, անկախ բնակչության առկայությունից նշված են նաև մի շարք *քըշլաքի* և *յայլաքների* մասին, որոնք ընդհանուր թիվը չի գերազանցել 10-ը:

Դարաչիչեքից հետո նշված է Ապարանի *նահիեն*[420]: Դրա կազմի մեջ են մտել Ապարան, Սարի Միրաք, Չելլի (°), Մելիք, Չարչարջը, Քազաթլաք Թեփե, Ջանջաք (°), Բալջիքլու, Քոլլաջա, Սարի Բուդաք, Քաբանդլու, Գել Աբդի, Սամ Դերվիշ, Խոդավերդի, Վանքի Քավաք, Դամջիլու (°), Մունլա Քասեմ, Քըզըլ Բուրուն, Քարաքիլիսիե, Բուլամիր (°), Քարա Բուրուն, Լալե, Փոքր Ալի, Բունջաքլու (°), Փարբաշ, Ամիր Բուլաք, Ծիշ Քիա, Քըզըլ Քըշլաք, Թեքնե Բուլաք, Բաթլի Բուլաք (°), Դերբանդ, Հարփուշնա (°), Հաջ Բուլաք, Ծիրեքալա, Բազարջաք, Ջաղանքար (°), Սավմոսավանք, Թաջարբաթ (°), Ազանքաթ, Իփնե Քիղ, Ասնազանգին, Դերվիզ Ավաս, Ծիրվանջաք, Քադի Յաղուբ, Քուրդ Ալի, Գերջալու, Սաջլու, Նորաշեն, Մանսուրքենդի, Քազաջաք,

[420] BOA, 0901, ss. 244-261.

Քանաքերտ[421], Քարաբուլաք, Ապարան Օղլու, Քոյլուքան, Բահչալըք, Դինվանք, Քորքուջ, Համամլու, Վերին Ալի Մարկոս, Ներքին Ալի Մարկոս և Քանզաք (՞) գյուղերը: Նշված են նաև մոտ 10-ի հասնող *մազրայեի* մասին:

Ապարանի հարկացուցակում ևս մի շարք գյուղերի դիմաց առկա է համապատասխան գրություն, ըստ որի՝ կարելի է տեղեկանալ, թե տվյալ գյուղը, որ բնակավայրին է մոտ գտնվել: Այսպես օրինակ՝ պարզվում է, որ Բալջիքլուն և Քարաքիլիսեն գտնվել են Քըզըլ Բիրունի մոտ, Խոդավերդին, Վանքի Քավաքը՝ Գել Աբդինի մերձակայքում, իսկ Դերվիշ Ավասը՝ սահմանակցել է Սավմոսավանքին:

Ուշագրավ է, որ նշյալ 61 գյուղից 37-ը զուրկ է եղել բնակչությունից: Ինչ վերաբերում է մնացյալ 24 գյուղին՝ ապա դրանցում գրանցված քրիստոնյաներն ու մահմեդականները, բացառությամբ երեք գյուղի, բնակվել են առանձին:

Սոսկ քրիստոնեաբնակ էր 14 գյուղ, որոնց թվում էին՝ Սարի Միրաք (14 անձ), Մելիք (9 անձ), Չարչարջը (6 անձ), Քազաթլաք Թեփե (3 անձ), Քոլլաջա (11 անձ), Քաբանդլու (11 անձ), Գել Աբդի (9 անձ), Դամջլիու (28 անձ), Մունլա Քասեմ (17 անձ), Բուլամիր (՞) (20 անձ), Ծիրեքալա (32 անձ), Իփնե Քիղ (15 անձ), Ասնազանգին (20 անձ) և Գերջալու (13 անձ) գյուղերը:

Մահմեդական գյուղերից Սամ Դերվիշում հաշվառվել է 3, Փոքր Ալիում՝ 7, Բունջաքլուում (՞)՝ 5, Փարբաշում՝ 2, Հաջ Բուլաքում՝ 4, Բազարջաքում և Սաջլուում՝ 5-ական անձ: Ինչ վերաբերում է Ապարանին, Սավմոսավանքի և Ջանջաքի (՞), ապա այնտեղ նկատելի է եղել համապատասխանաբար՝ 65 քրիստոնյայի և 2 մահմեդականի, 4 քրիստոնյայի և 7 մահմեդականի, ինչպես նաև՝ 13 քրիստոնյայի և 11 մահմեդականի առկայություն:

Օսմանյան ընթացիկ աղբյուրից կարելի է փաստել, որ ամենաքիչ թվով հարկատուները *նահիեում* գրանցվել են մահմեդաբնակ՝ Փարբաշում, իսկ ամենաշատը՝ Ապարանում:

Վերոնշյալ տվյալների համաձայն *նահիեում* հաշվառված է եղել ընդհանուր 290 քրիստոնյա և 51 մահմեդական: Հատկանշական է,

[421] Այն հայտնի է եղել նաև՝ Քարուքերտանվամբ:

որ նրանց շրջանում չի եղել որևէ ամուրի: Այն ենթադրում է, որ *նահիեում* ընդհանուր եղել է 1450 քրիստոնյա և 255 մահմեդական բնակիչ:

Գյուղերում զգալի է եղել ջրաղացների օգտագործումը, որոնք 27-ն էին: Դրանց թվում չգործողները ընդամենը 4-ն էին: Ի տարբերություն ջրաղացները, ձիթհանների քանակը ընդամենը 2-ն էր, որից մեկը գտնվում էր ավեր վիճակում:

Օսմանյան հարկամատյանում Ապարանին հաջորդում է Սուրմալուի *նահիեն*[422]: Այն բաղկացած է եղել հետևյալ գյուղերից՝ Սուրմալու, Քինար (՞), Աղչաքըշլաք, Բարանի (՞), Սուքուլար, Քալաբ, Խալիֆա[423], Խարամլու, Բիրնուբաթ (՞), Աքավաթ[424], Գյոքթաշ, Աղգիս, Դերեքենդի, Քանզաք (՞), Քուրու Աղաջ, Սիս Թեփե, Թիմուր Սահաբ, Քըզըլ Քըշլաք, Նաղարքազաթ (՞), Ջան Դերվիշ, Քարավան, Ջաբնի, Բիրջանիս, Ալի Քյոսա, Քոլլաջա, Մունլա Ղամար, Թավասաքաթլու, Քաթերլի, Վերին Քալաջաթ[425], Ներքին Քալաջաթ[426], Բաշ Մարգևան, Աբաք Մարգևան, Քըզըլ Բուլաք, Արսլանլու Թեփե, Աբընջա, Հասանխան, Քաղին (՞), Խադամա Քըշլաղը, Աքրաք, Քարաբուլաք, Սոքութլու, Քարաքալա, Փարչալու Գյոլ, Սոքու, Քամիշլու, Բուրաք և Բուբրաք (՞): Կարելի է տեղեկանալ նաև շուրջ 5 *մազրայեի* մասին:

Սուրմալուում ևս կարելի է պարզել աշխարհագրորեն որոշ գյուղերի իրար մոտ գտնվելը: Օրինակ՝ Սուքուլարը մոտ է եղել՝ Քալաբին, Ջան Դերվիշը՝ Աղդիսին, Քարա Բուլաքը՝ Քամիշլուին, իսկ Սոքութլուն՝ սահմանակից է եղել Քարաբուլաքին:

Ուսումնասիրելով *նահիեի* գյուղերը՝ պարզ է դառնում, որ վերոնշյալ 47-ից 19-ը դատարկ էին: Այդ գյուղերից էին՝ Խարամլին, Բիրնուբաթը (՞), Սիս Թեփեից մինչև Բիրջանիս գյուղը, ինչպես նաև՝ Մունլա Ղամարը, Ներքին Քալաջաթը, Աբաք Մարգևանը, Քըշլաղը Քըզըլ Բուլաքը, Արսլանլու Թեփեն, Սոքութլուից Փարչալու Գյոլը ներառյալ և վերջին երկու գյուղերը:

Հարկացուցակի տեղեկություններով *նահիեում* բնակվել են քրիստոնյաներ և մահմեդականներ: Հարկ է նշել, որ վերջիններս 26

---

[422] BOA, 0901, ss. 264-284.
[423] Այն հայտնի է եղել նաև՝ Քալաբ Ալիխան անվամբ:
[424] Այն հայտնի եղել նաև՝ Քամար Վալուդ անվամբ:
[425] Այն հայտնի է եղել նաև՝ Հաքվերդի Քըշլաղը անվամբ:
[426] Այն հայտնի եղել նաև՝ Մեհմեդ Քըշլաղը անվամբ:

գյուղում բնակվել են առանձին, իսկ 2 բնակավայրում՝ աչքի ընկել համատեղ կեցությամբ:

Ամբողջովին քրիստոնեաբնակ էր ընդամենը 3 գյուղ՝ Սուրմալուն, Քինարը (՞) և Բարանին, որտեղ գրանցվել են համապատասխանաբար՝ 41, 14 և 4 անձ:

Ինչ վերաբերում է միայն մահմեդաբնակ գյուղերին, ապա դրանք եղել են 23-ը: Այսպես օրինակ՝ Աղչաքըշլաքում հաշվառվել է 8, Սուքուլարում՝ 9, Խալիֆայում՝ 11, Աք Ավանում՝ 21, Քյոքթաշում՝ 8, Աղզիսում՝ 15, Դերեքենդիում՝ 11, Քանզաքում (՞)՝ 16, Քարու Աղաջում՝ 18, Բիրջանիսում՝ 51, Ալի Քյոսայում՝ 8, Քոլլաջայում՝ 6, Թավասաքաթլուում՝ 11, Քաթերլիում՝ 4, Վերին Քալաջաթում՝ 18, Բաշ Մարզևանում՝ 4, Աբընջայում՝ 26, Հասանխանում՝ 15, Խադամա Քըշլաղում՝ 12, Աքրաքում՝ 33, Քարաբուլաքում՝ 19, Սոքուում՝ 22 և Քամիշլուում՝ 8 անձ: Համատեղ բնակությամբ աչքի ընկած՝ Քալաբում գրանցվել է 99 քրիստոնյա, 18 մահմեդական և Քաղինում (՞)՝ 7 քրիստոնյա, 11 մահմեդական:

Բերված տեղեկություններից պարզ է դառնում, որ *Նահիեում* ամենաբնակեցվածը Քալաբ գյուղն էր: Դրան զուգահեռ, ամենաքիչ հարկատուները գրանցվել են քրիստոնեաբնակ Բարանի (՞) գյուղում:

*Նահիեի* ժողովրդագրական պատկերի ուսումնասիրությունից պարզվում է, որ մահմեդականները Սուրմալուում կազմել են մեծամասնություն: Նրանց շրջանում հաշվառվել է 415 անձ, որոնցից 39-ը եղել են ամուրիներ: Այդ ցուցանիշը անհամադրելի է գրանցված քրիստոնյա հարկատուների քանակին, որոնց թիվը կազմել է 165-ը՝ ունենալով 19 ամուրի: Այն ենթադրում է, որ եղել է 146 քրիստոնյա և 376 մահմեդական ընտանիք: Բերված տվյալների համաձայն՝ *Նահիեի* բնակչությունը կազմել է 749 քրիստոնյա և 1919 մահմեդական:

Ուշագրավ է, որ մահմեդաբնակ գյուղերից երկուսում հանդիպում են Փիրլի և Քուզուքուդանլու հանրույթները, որոնք արձանագրված էին Աղչաքըշլաք և Աբընջագյուղերում:

*Նահիեում* նկատելի են ջրաղացներ, որոնց թիվը հասել է 28-ի: Դրանց շրջանում միայն 2-ն են, որ չեն գործել: Ջրաղացներից բացի,

եղել է նաև 1 ձիթհան և նույնքան ներկատուն: Սուրմալու *նահիեում* նշվում է նաև 4 *յայլաքի* մասին տեղեկություն:

Ըստ հաջորդականության՝ հաջորդը Իգդիրի *նահիեն* է, որը բաղկացած է եղել 67 գյուղից[427]: Դրանց թվին են դասվել՝ Մունլա Ահմեդը, Արաբքիրլին[428], Ախի Մեհմեդը, Քարամեհմեդը, Չարքաջիլին, Բայանջին, Քասեմջանը, Ծեյխ Հասանը, Ասթախանեն, Խոշխաբարը, Ախիվիսը (՞), Խալիֆալարը, Արհաջին, Ջարաքլուն, Մաղրիբաբադը, Իբրահիմաբադը, Իգդիրը, Նովրուզլուն, Քըզըլ Ջանգիրը (՞), Փուլուդը, Քազանջին, Աղանիվիրադը, Սարի Չոբանը, Փանիքը, Աջիթը (՞), Ուջը, Քըշլաք Ջաֆարը, Ջաթաքաթան, Թաջիրլին, Ղամարաթը (՞), Քըզլաղը Ջեքիրլին, Քազա Չուլլին, Դերիշ Քըշլաղը, Դավիդլուն, Վերին Քուրաքլին, Ներքին Քուրաքլին, Քուրաքլին[429], Քաբունթաքը, Քազաջիլերը Քըշլաղըն, Սարիբլեր Քըշլաղըն, Ջեյդեմլին, Թաշլուն, Հասանբեյ Քըշլաղըն, Սամդան Քոլարան, Ծիրդահին, Ալահաջիլերը, Քուրդուքլուն[430], Քաբուդը (՞), Քարահիսարը, Քըզըլքալան, Թուջան, Քուրքին, Արաթլուն, Թոքանշալուն, Քարահիսլերը, Օքուզլուն, Ռահաթլուն, Աթլաջալարը, Ռոսթոմլուն, Ալիխան Հաջիլուն, Թիմուրլու Քըշլաքը, Ռոսուլլուն, Իբրահիմ Հաջիլուն, Մուրշիդ Ալի Քըշլաղը, Խոդուլուն, Ներքին Դավիդլուն և Ներքին Թոքանշալուն:

Իգդիրում նույնպես պահպանվել են գյուղերի տեղագրությանը վերաբերող որոշ տեղեկություններ: Ըստ այդ տվյալների՝ Քըշլաք Ջաֆարը սահմանակցել է Նովրուզլուին, իսկ Ներքին Դավիդլուն՝ Քարահաջիլուին:

Նյութի քննությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ գյուղերի շրջանում մեծ թիվ են կազմել դատարկված բնակավայրերը, որոնք եղել են 22-ը: Դրանց թվում էին՝ Աղավիրադը, Քըշլաք Ջաֆարը, Վերին և Ներքին Քարաքլիները, բացառությամբ Ալահաջիլերի՝ Քաբունթաքից մինչև Թուջան, ինչպես նաև՝ Օքուզլուն, Աթլուջալարը, Ռոսթիմլուն, Ալիխան Հաջիլուն, Մուրշիդ Ալի Քըղլաղըն և Ներքին Թոքանշալուն:

---

[427] BOA, 0901, ss. 287/1-312.
[428] Այն հայտնի է եղել նաև՝ Մամու Սոքութ անվամբ:
[429] Այն հայտնի է եղել նաև՝ Նաֆաս Քըշլաղը անվամբ:
[430] Այն հայտնի է եղել նաև՝ Նազար Ալի Քըշլաղը անվամբ:

Ուշագրավ է մեկ կարևոր իրողություն: Բանն այն է, որ Քարաքլի գյուղում, որը հայտնի է եղել նաև Նաֆաս Քըշլաղը անվամբ, ըստ օսմանյան իշխանությունների գրության՝ այն դատարկված է եղել, սակայն գյուղանունից հետո երևում են 2 մահմեդական անձ: Ելնելով այդ փաստից նշյալ գյուղը հարկ է դասել բնակելիների շարքին:

Ինչ վերաբերում է բնակեցված գյուղերին, ապա պարզ է դառնում, որ մահմեդականներից բացի, բնակվել են նաև քրիստոնյաներ:

Իգդիրի աշխարհագրի տվյալների համաձայն՝ ամբողջովին քրիստոնեաբնակ էր միայն թվով 8 գյուղ, որոնց թվում էին Իգդիրը (26 անձ), Քըզըլ Զանգիրը (՞) (23 անձ), Փուլուդը (75 անձ), Ղազանչին (21 անձ), Սարի Չոբանը (28 անձ), Փանիքը (42 անձ), Աջիթը (՞) (31 անձ) և Ուջը (53 անձ):

Մահմեդաբնակ գյուղերը լինելով՝ 36-ը, ունեին հետևյալ պատկերը: Մունլա Ահմեդում գրանցվել է 20, Արաբքիրլիում՝ 47, Ախի Մեհմեդում՝ 24, Քարամեհմեդում՝ 17, Չարքաջիում՝ 10, Բայանջիում՝ 35, Քասեմջանում՝ 16, Շեյխ Հասանում՝ 31, Խոշխաբարում՝ 32, Ախիվիսում (՞)՝ 30, Խալիֆալարում՝ 56, Արհաջիում՝ 65, Ջարաքլուում՝ 51, Մաղրիբաբադում՝ 26, Իբրահիմաբադում՝ 58, Նովրուզլուում՝ 17, Զաթաքաթայում՝ 5, Թաջիրլիում՝ 22, Ղամարաթում՝ 14, Քըշլաղը Զեքիրլիում՝ 13, *Քազա* Քուլիում՝ 30, Դերվիշ Քըշլաղըում՝ 15, Դավիդլուում՝ 4, Քուրաքլիում՝ 2, Ալահաջիլերում՝ 9, Թուջայում՝ 13, Քուրքիում և Արաթլուում՝ 10-ական, Թոքանշալուում՝ 32, Քարահիսլերում՝ 7, Ռահաթլուում՝ 6, Թիմուրլու Քըշլաքում՝ 4, Ռոսուլլուում՝ 3, Իբրահիմ Հաջիլուում՝ 4, Խոդուլուում՝ 10 և Ներքին Դավիդլուում՝ 15 անձ: Ինչ վերաբերում է Ասթախանեին, ապա *նահիեի* հարկացուցակի տվյալների համաձայն՝ այնտեղ հաշվառվել է 31 քրիստոնյա և 17 մահմեդական: Հատկանշական է, որ քրիստոնյաների շրջանում գրանցված է եղել 1 քահանա:

Հարկացուցակի տվյալներից երևում է, որ քրիստոնեաբնակ գյուղերում հարկատուները բավականաչափ խիտ են եղել բնակեցված: Հատկանշական է, որ ամենաշատ հարկատուները եղել են

քրիստոնեաբնակ գյուղերից Փուլուդում: Դրան հակառակ ամենաքիչը երևում է Քուրաքլի գյուղում:

Վերոնշյալ տեղեկությունները կարևոր են բնակիչների ընդհանուր թիվը պարզելու տեսանկյունից: Օրինակ՝ *նահիեում* արձանագրվել է 330 քրիստոնյա, որոնցից 11-ը՝ ամուրիներ: Հարկ է փաստել, որ այդ ցուցանիշը զգալիորեն զիջել է մահմեդականներին, քանի որ նրանք ունեին 784 հարկատու, որոնցից 80-ը՝ ամուրի: Դա ենթադրում է, որ Իգդիրում եղել է 319 քրիստոնյա ընտանիք, իսկ նրանց թիվը ամբողջ *նահիեում* հասել է 1606-ի: Դրան զուգահեռ՝ մահմեդական ընտանիքների թիվը կազմել է 704-ը, իսկ ամբողջ բնակչությունը՝ շուրջ 3600 մարդ: Այդպիսով, ստացված տվյալները փաստում են, որ Իգդիրում մահմեդականները կազմել են մեծամասնություն:

Մահմեդականների շրջանում նկատելի են նաև հանրույթներ, որոնք հայտնի են եղել Քուդլու, Արաբքիրլի, Ծահանլու, Իսթիհանլու անուններով: Դրանք բնակվել են համապատասխանաբար՝ Ախի Մեհմեդում, Քարամեհմեդում, Դերվիշ Քըշլաղում և Թաշլուում:

*Նահիեն* աչքի է ընկել պարտեզների մշակությամբ: Ընդհանուր հաշվելի է շուրջ 25 պարտեզ: Դրանց թվով ամենաշատը աչքի է ընկել Մունլա Ահմեդ գյուղը, որտեղ արձանագրված են 8-ը[431]: Պարտեզներից բացի, նշվում է նաև 2 հողատարածք: Իգդիրում երևում է նաև ջրաղացների առկայությունը: Ընդհանուր հաշվվում է 32 ջրաղաց, որոնց շրջանում բոլորն էլ շահագործման ենթակա են եղել: Իրավիճակը տարբեր էր ձիթհանների պարագայում, որոնք ընդամենը 3-ն էին:

1728 թ. Երևանի *լիվայի* աշխարհագրում Իգդիրից հետո նշված է Արալըքի *նահիեն*[432]: Դրա մեջ էին մտնում Բուրալաք, Սուլթան Ալի Քըշլաղը, Ղուլամ Ալի Քըշլաղը, Մուշի Քըշլաղը, Քանթաք Քըշլաղը (՞), Աթլու Քըշլաղը, Ամինջա, Քութուրլու, Քուջաքլու, Խոդաաբադ, Քազաքուլի, Աբասաաբադ, Արաթան, Ծիր Բահաթլու, Յենիջե, Թաքիրլի, Ալահաջիլու, Գութլու, Ծահրամանլու, Քալալի (՞), Ծամդա Քիլաթ Քըշլաղը, Օրուջ, Քուզուքուդաթլու, Ալի Քամարլու, Թահզագել Թեփե (՞), Ղարաթլու, Ախուրլու և Ծայիլու (՞), ինչպես նաև՝ Ներքին

[431] BOA, 0901, s. 287/1.
[432] Նույն տեղում, էջ 318-335:

Ծայիլու և Ախուրլու (՞), Քարաքափուլու, Թաջաթիրլի, Ջիլաթիրլի (՞), Սաֆարքուլի Քըշլաղը, Քարահաջիլու, Դերզիլի, Քեդայի և Քալաջաք գյուղերը:

Ուշագրավ է Ախուրլու և Ծայիլու (՞), ինչպես նաև՝ Ներքին Ծայիլու և Ախուրլու (՞) գյուղի ուսումնասիրությունը: Բանն այն է, որ սկզբում հիշատակվում է միայն Ախարլու և Ծայիլու գյուղանունը, որից հետո անցում է կատարվում Ներքին Ծայիլու և Ախուրլու (՞) գյուղի տեղեկություններին: Թեպետ առաջին հայացքից դրանք առանձին գյուղերի տպավորություն են թողնում, սակայն համապատասխան գրության համաձայն՝ Ներքին Ծայիլու և Ախուրլու (՞) գյուղը պատկանել է առաջինին, որը արտահայտվել է հարկաբաժնում՝ դրանց երկուսի տվյալների ընդհանուր ներկայացմամբ, ուստի որևէ հիմք չկա՝ դրանք առանձին գյուղեր ընկալելու համար:

Նշյալ 35 գյուղերից 15-ը դատարկված էր: Դրանք էին՝ Սուլթան Ալի, Ղուլամ Ալի, Մուշի և Քանթաք Քըշլաղները (՞), Յենիջեն, Ծահրամանլու գյուղից մինչև Թահզագել Թեփեն, Սաֆարքուլի Քըշլաղը և վերջին երեք գյուղերը: Հատկանշական է, որ *նահիեի* հարկացուցակում հանդիպում են այնպիսի դեպքեր, երբ բնակչությունից զուրկ էին միայն տվյալ բնակավայրի մաս կազմող թաղերը: Մասնավորապես դրանց շարքին էին դասվում Թաջաթիրլի և Ջիլայերլի գյուղերը, որտեղ կար 5 և 4 դատարկված թաղ:

Նյութի քննությունից պարզվում է, որ *նահիեում* մահմեդականների հետ ապրել են նաև քրիստոնյաներ: Քրիստոնյա և մահմեդական բնակչությունը, բացառությամբ Բուրալաքի և Ախուրլու և Ծայիլու (՞), ինչպես նաև՝ Ներքին Ծայիլու և Ախուրլուի (՞), ընդգրկված է եղել առանձին գյուղերում:

Արալքի *նահիեում* նույնպես քրիստոնյա բնակչությունը չի զբաղեցրել գյուղերի մեծամասնությունը: Ավելին՝ նրանք երևում են ընդամենը երկու գյուղում՝ Խոդաաբադում և Աբասաաբադում, որտեղ արձանագրվել է՝ 10 և 7 անձ:

Ինչպես կարելի է ենթադրել ամբողջովին մահմեդաբնակ գյուղեր թիվը 16-ն էր: *Նահիեի* հարկացուցակի համաձայն՝ Աթլու

Քըշլաղում գրանցվել է 37, Ամինջայում՝ 4, Քութուրլուում՝ 4, Քուջաքլոում՝ 18, Քազաքուլիում՝ 9, Արաթանում՝ 19, Ծիր Բահաթլուում՝ 9, Թաքիրլիում՝ 20, Ալահաջիլուում՝ 16, Քութլուում՝ 22, Թահզագել Թեփեում (՞)՝ 25, Ղարաթլուում՝ 10, Քարաքափուլուում՝ 129, Թաջաթիրլուում՝ 20, Ջիլայերլիում՝ 30 և Քարահաջիլուում՝ 15 մահմեդական:

Ինչ վերաբերում է համատեղ բնակությամբ աչքի ընկած գյուղերին, ապա Բուրալաքում արձանագրվել է 7-ական քրիստոնյա և մահմեդական, իսկ Ախուրլու և Ծայիլու (՞), ինչպես նաև՝ Ներքին Ծայիլու և Ախուրլուում (՞)՝ 145 քրիստոնյա և ընդամենը 3 մահմեդական:

Ստացված տվյալներից երևում է, որ ամենաքիչ հարկատուները արձանագրվել են մահմեդաբնակ Ամինջա և Քութուրլու գյուղերում, այնինչ անենաշատը՝ Ախուրլու և Ծայիլու (՞), ինչպես նաև՝ Ներքին Ծայիլու և Ախուրլու (՞) գյուղում, որտեղ ճնշող մեծամասնություն են կազմել քրիստոնյաները:

Ուսումնասիրության ենթարկելով գյուղերում գրանցված մարդկանց տվյալները՝ կարելի է փաստել, որ քրիստոնյաներն ընդհանուր առմամբ կազմել են 169 հարկատու, որոնց թվում եղել է 12 ամուրի: Ինչ վերաբերում է մահմեդականներին՝ ապա Արալքքում կարելի է հանդիպել 397 մահմեդական անձնանուն, որոնց շրջանում՝ 24-ը գրանցված էին որպես ամուրի: Այն ենթադրում է, որ քրիստոնյա ընտանիքները թիվը կազմել է 157-ը, իսկ մահմեդականներինը՝ 373-ը: Հետևաբար՝ *Նահիեի* ամբողջ բնակչության քանակի համատեքստում կստացվի համապատասխանաբար՝ 797-ը 1889-ի դիմաց հարաբերակցությունը:

Կարևոր է նկատել, որ մահմեդականների շրջանում նորից երևում են մի շարք հանրույթների անվանումներ: Այսպես օրինակ՝ Աթլու Քըշլաղըում բնակվել են Իսհանլու, Քազաքուլիում և Թաքիրլուում՝ Ծիքլի, Քութլուում՝ Քուզիքուդանլու աշիրեթները:

Արալքքի հարկամատյանում կարելի է հանդիպել նաև պարտեզների: Դրանց թիվը կազմում էր 13-ը: *Նահիեի* տնտեսության հարստացման առումով երևելի է նաև թվով 8 ջրաղացի գոյությունը:

Արալըքին հաջորդել է Սադարաքի[433] *նահիեն*, որը բաղկացած է եղել 24 գյուղից[434]: Դրանք էին՝ Սադարաքը և Չոբանը, Գերեքիջեքը, Ասթին, Քավալիքը, Աքգյոլը, Քոլլուջան, Քազաթեփեն, Հաթուն Քահիրը (՞), Արշինխանը, Մունլա Հալիբը, Խաթեմքենդին, Դարաբեյը, Յաղինղահը (՞), Սոքութլուն, Հաջի Ասլամը, Բեյքենդին, Օքուզ Յանուրը (՞), Բաղիխանը, Քարբալան (՞), Քարաբուլաքը, Հադալը (՞), Քարախուդանլուն, Ջիրաբեթլուն և Թաշ Քըշլաքը:

Հարկացուցակի տվյալների համաձայն՝ Չոբան գյուղը պատկանել է Սադարաքին և հարկաբաժնում դրանք ներկայացվել են միասին: Հետևաբար՝ դրանք նույնպես կարելի է դիտարկել որպես 1 գյուղ:

Կարելի է փաստել, որ 24 գյուղից միայն 5-ն է եղել դատարկված: Ըստ վերոնշյալ հաջորդականության այդ բնակավայրերից էին՝ վերջին 4 գյուղերը: Ինչ վերաբերում է բնակեցված գյուղերին, ապա ըստ *նահիեի* աշխարհագրի՝ մնացյալ 19 գյուղում բնակչությունը բացառապես մահմեդաբնակ էր: Այսպես օրինակ՝ Սադարաքում և Չոբանում գրանցվել է 91, Գերեքիջեքում՝ 6, Ասթիում՝ 28, Քավալիքում՝ 29, Աքգյոլում՝ 9, Քոլլաջայում՝ 4, Քազաթեփեում՝ 5, Հաթուն Քահիրում (՞)՝ 7, Արշիխանում և Մունլա Հալիբում, Խաթեմքենդիում՝ 1-ական, Դարաբեյում՝ 4, Յաղինղահում (՞)՝ 1, Սոքութլուում՝ 5, Քաջի Ասլամում՝ 3, Բեյքենդիում՝ 5, Օքուզ Յանուրում (՞)՝ 2, Բաղիխանում՝ 1 և Քարբալայում (՞)՝ 7 հարկատու:

Կարելի է փաստել, որ ամենաքիչ անձ ունեցող գյուղերը 3-ն էին՝ Արշիխանը, Մունլ Հալիբը, Խաթեմքենդին և Յաղինղահը (՞), այնինչ ամենաբնակեցված հարկատուներով աչքի ընկած գյուղը՝ Սադարաք և Չոբան գյուղն է եղել:

Նյութի քննությունը ցույց է տալիս, որ *նահիեում* ընդհանուր գրանցված 210 հարկատուից 4-ը եղել են ամուրի՝ այդպիսով՝ մահմեդական ընտանիքների թիվը հասնելով 206-ի: Ստացվում է, որ *նահիեում* ընդհանուր բնակիչների թիվը կազմել է շուրջ 1034 մարդ:

---

[433] Նահիեի տեղադրությունը համապատասխանել է Նախիջևանի Նորաշենի շրջանին: Տեղանունների բառարան, հատոր 4, էջ 459:

[434] BOA, 0901, ss. 338-348.

Սադարաքում ևս մահմեդականների շրջանում ապրել են հանրույթներ: Մասնավորապես տարածված են եղել դունբուլիները, որոնք բնակվել են Քոլլաջա, Հաթուն Քահիր, Արշինխան, Մունլա Հալիբ և Դարաբեյից մինչև Բաղիխան ընկած գյուղերում: Նկատելի է նաև Զանգինե և Բայադ աշիրեթները, որոնք գրանցված են եղել համապատասխանաբար՝ Քավալիքում և Աքգյոլում:

*Նահիեի* մի շարք գյուղերում հանդիպում են պարտեզներ, ջրաղացներ և հողատարածքներ: Մասնավորապես եղել է 24 պարտեզ, 20 ջրաղաց և 3 հողատարածք: Հարկ է նշել, որ ջրաղացներից 3-ը եղել են չգործող:

Օսմանյան աշխարհագրում Սադարաքից հետո շարադրված է Մակուի *նահիեի* հարկացուցակը[435]: Փաստացիորեն Մակուի *նահիեն* նույնպես ընդգրկված է եղել Երևանի *լիվայի* մեջ, քանի որ տիրանալով շրջանին օսմանյան իշխանությունների համար ավելի ձեռնտու էր կազմել մեկ վարչական միավոր՝ մեկ հարկային ցուցակով: Մակուի *նահիեն* բաղկացած է եղել քաղաքից և գյուղերից: Վերջիններից էին՝ Մեծ Խասը, Փոքր Խասը, Բովաքաթը (՞), Դիքը, Բարդանլարը, Քարահասանը, Մազրայեն, Քարաքլիսեն, Ռիջանը (՞), Մեյդանը, Քարաքիլիսեն, Մաջդիրան, Յումուրթաշը, Ռոսթոմը, Բայընշմըշը (՞), Իբրահիմը, Աբասը, Ուչթաղը, Յուսըրֆը, Մեհմեդ Աղան, Նիյազը, Զաքարլին, Ալի Քոջալան, Զիղչան (՞), Ծամալը, Ուզուն Գունին, Ջարսազը, Քարասուրին, Բարաքին, Քալաղաթը, Աքբուլաքը, Խանուն, Սուրնիքը, Ծահին Աղա Քըշլաղը, Ախիգյոլը, Դուշնամը, Բաշբուլաքը, Չեքինլերը, Բիաբուրը (՞), Ղարաբաղը, Բուլագելդին, Քափարա Բիսաթը, Թաթարլուն, Աբընջան, Արդվարը, Միրին, Քարաջավիրանը, Աք Բաբալաքը, Քըզըլ Թաղլուն, Քարաքուլաքաթան (՞), Քեշիշ Ջարքին, Քարասուրը, Բարխուդաքը, Դիքմեն, Քալաջաքը, Քաշմիր Թեփեն, Գեջուդը, Քարաքըշլաքը, Քըշլաք Նաքլու Աղիլին, Բաշ Դամեն, Իբրահիմը, Նուբախթը, Խուքը, Աբդալիբը, Սութը, Սաբաթը, Հաջմաքան, Արդալարը, Մուրադլուն, Մեծ Քոթանջան, Արաբլուն, Բուրնաքը, Քարղուլին, Քոթլուղուզը, Քյոսալարը, Մուրադվերդին, Հաթուն Քերզին, Դունաբեյը, Աքուզ Բաթուրը, Սաֆարքուլին,

[435] BOA, 0901, ss. 354-388.

Սաքուրլուն, Քոլլաջան, Հաջ Օսթանը, Ռենդը, Բաղչաջաքը և Բազիրքաթը:

Ինչպես կարելի է նկատել՝ Քարաքիլիսե և Իբրահիմ անունով եղել է 2 գյուղ: Ուշագրավ է, որ 87 բնակավայրից (ներառյալ *նահիեի* քաղաքը) 30-ը եղել են դատարկված: Ըստ վերոնշյալ հաջորդականության՝ դրանց թվում էին՝ Յումուրթաշ գյուղից ընդհուպ մինչև Քափարա Բիսաթը ներառյալ, որտեղ բացի գյուղանունից նշված է միայն ընդհանուր հարկաչափը:

Նյութի քննությունը փաստում է, որ Մակուի բնակչությունը կազմված է եղել քրիստոնյա և մահմեդական բնակչությունից: Ըստ հարկացուցակի՝ բացառությամբ մի գյուղի, նրանք բնակվել են առանձին:

Ամբողջովին քրիստոնեաբնակ էր ընդամենը 9 գյուղ. Բարդանլարը (24 անձ), Քարաքիլիսեն[436] (35 անձ), Քալաջաքը (33 անձ), Քյոսալարը (17 անձ), Ռենդը (108 անձ) և Բաղչաջաքը (23 անձ): Սոսկ մահմեդաբնակ բնակավայրերն անհամեմատ ավելի շատ էին և կազմում էին 48-ը: Բացի Մակու քաղաքի տվյալից, Մեծ և Փոքր Խասերում՝ արձանագրվել է 30, Բովաքաթում (՞)՝ 19, Դիքում՝ 16, Քարահանում և Մազրայե գյուղերում՝ 11-ական, Ռիջանում (՞)՝ 15, Քարաքիլիսեում՝ 8, Մաջդիրայում՝ 5, Թաթարլուում՝ 6, Աբընջայում՝ 14, Արդվարուրում և Միրիում՝ 5-ական, Քարաջավիրանում՝ 9, Աք Բաբալաքում՝ 25, Քըզըլ Թաղլուում՝ 8, Քարաքուլաքաթա (՞) և Քեշիշ Ջարքիում՝ 5-ական, Քարասուրում՝ 20, Բարխուդաքում՝ 5, Դիքմեում՝ 24, Քաշմիր Թեփեում՝ 21, Գեջուդում՝ 6, Քարաքըշլաքում՝ 14, Քըշլա Նաքլու Աղիլիում՝ 5, Բաշ Դամեում՝ 6, Իբրահիմում՝ 12, Նուբախթում՝ 15, Խուքում՝ 5, Աբդալիբում՝ 13, Սութում՝ 8, Սաբաթում՝ 22, Հաջմաքայում՝ 13, Արդալարում՝ 10, Մուրադլուում՝ 19, Մեծ Քոթանջայում՝ 8, Արաբլուում՝ 14, Բուրնաքում՝ 19, Քարղուլիում՝ 4, Մուրադվերդիում և Հաթուն Քերզիում՝ 7-ական, Դունաբեյում՝ 9, Աքուզ Բաթուրում՝ 5, Սաֆարքուլիում՝ 7, Սաքուրլուում՝ 8, Քոլլաջայում՝ 9, Հաջ Օսթանում՝ 6 և Բազիրքաթում՝ 30 անձ: Մահմեդաբնակ էր նաև Մակուի քաղաքը, որտեղ 1728 թ. գրանցվել է 79 հարկատու:

[436] Խոսքը առաջին Քարաքիլիսեի մասին է:

Ինչ վերաբերում է խառը բնակչությամբ աչքի ընկած Քոթուղուզին, ապա այնտեղ արձանագրվել է 10 քրիստոնյա և 21 մահմեդական:

Ինչպես պարզ է դառնում *նահիեի* հարկացուցակից՝ Մակուում հաշվառված մարդկանց թվով ամենամեծ գյուղը քրիստոնեաբնակ Ռենդն էր, իսկ բոլոր մնացյալ բնակավայրերում գրանցված հարկատուները նկատելիորեն ավելի քիչ են կազմել:

Հատկանշական է, որ թեպետ քրիստոնյաներով բնակեցված քիչ գյուղերին, այնուամենայնիվ, դրանք եղել են խիտ բնակեցված, որի վառ վկայությունը Ռենդ գյուղն է: Այսպիսով, ընդհանուր առմամբ, գյուղերում հաշվվել է 250 քրիստոնյա և 679 մահմեդական հարկատու: Նրանց շրջանում եղել են համապատասխանաբար՝ 9 և 19 ամուրի, ինչը ենթադրում է, որ քրիստոնյա ընտանիքները եղել են՝ 241-ը, իսկ մահմեդականներինը՝ 660-ը: Ըստ տվյալների՝ Մակուի *նահիեում* բնակվել է շուրջ՝ 1214 քրիստոնյա և 3319 մահմեդական, ինչը փաստում է վերջիններիս քանակական առավելության մասին:

Հատկանշական է, որ մահմեդական բնակչության շրջանում հանդիպում է միայն Դունբուլի աշիրեթը, որոնց ներկայացուցիչները բնակվել են Բովաքաթում, Դիքում, Քարահասանում, Մազրայեում, Ռիջանում (՞), Մեյդանում, Քարաքիլիսեում, և Մուրադվերդիում:

Հարկացուցակից պարզ է դառնում, որ *նահիեում* մեծ թիվ են կազմել հողատարածքները, պարտեզները և ջրաղացները: Մասնավորապես հողատարածքները եղել են 80-ից ավելի, որոնք պատկանել են Մակու քաղաքին[437]: Պարտեզները կազմել են 45-ը, որից 15-ը նույնպես ենթակա են եղել քաղաքին[438]: Ջրաղացների թիվը մի փոքր քիչ է եղել՝ կազմելով 34-ը, որից միայն 1-ը շահագործման ենթակա չէր: Բացի այդ, *նահիեում* նկատելի է 2 *դինգ*, 1 ձիթհան և նույնքան ներկատուն:

Մակուին հաջորդել է Ծարուրի *նահիեն*[439]: Այն բաղկացած է եղել հետևյալ գյուղերից՝ Մաղսուդլու, Իսաջա, Ներքին Ջոմաքազ (՞), Քըզլաղ Միզօղլու, Վերին Ծահրիյար, Ներքին Քուրդքենդին,

[437] BOA, 0901, ss. 355-356.
[438] Նույն տեղում, էջ 355:
[439] Նույն տեղում, էջ 394-439:

Վերին Քուրդքենդի, Ներքին Ծահրիյար, Յալնըզ Աղաջ, Մելիքքենդի, Քըշլաք Փիրվերդի, Սամինե (՞), Վերին Բարջը, Ալվար, Աբիսխան, Բեյդիլի, Դերվիշլեր, Աջը Քահրիզ, Յինաթա (՞), Բալիթաբադ, Դամքալա, Օրուդաբադ, Քըշլաք Գեդայի, Քըշլաք Ջայիք Ալաք (՞), Քըշլաքիան, Ներքին Նորաշեն, Քարաբուրջ, Ներքին Բարջի, Օղուզթաշ, Քազաթիջիլի, Վերին Ջոմաքազ (՞), Վերին Ալիշար, Ներքին Քարքարա, Քալաջաք, Ներքին և Վերին Արալըք, Արնիյաթ (՞), Դերվիշլեր, Վերին Քարքարա, Քըշլաղ Ղայեբ Քուլի, Քաջիհան Քըշլաղը, Մահսարաբադ, Քըշլաք Բարաքի, Գել Թեփե, Բեզիլիք (՞)[440], Արաբ Յենիջե, Արաս Քըշլաղը, Վերին Բարջի, Ալիքլու, Սիյաքութ (՞), Քյոսահան, Ջալահ, Քըշլաք Բուչուք, Քիշթազ, Վերին Նորաշեն, Օղլաղ Ծահլու, Մաքթա, Ուզանլու, Ղազանչիլու, Ջուդանքի, Ջավիյե, Քըշլաք Յուզբաշի, Քուշանջը, Աք Ահմեդ, Ներքին Ալիշար, Մուդիջաք և Քըշլաք Ալքաթարի (՞): Հարկ է նշել, որ վերոնշյալ 66 գյուղերի շրջանում եղել է շուրջ 3 *մազրայե*:

Ծարուրում նույնպես Դերվիշլեր գյուղերի օրինակով կարելի է փաստել, որ նկատելի է այն երևույթը, երբ *նահիեում* երկու գյուղ կրել է միևնույն անվանումը: Բացի այդ, գյուղանունների քննությունից պարզվում է, որ Բալիթաբադ և Դամքալա գյուղերը մոտ են գտնվել Խալիֆաքենդիին, իսկ Քըշլաքիանը սահմանակցել է Քուշանջըին: Հարկ է շեշտել, որ Ծարուրի գյուղերից որոշները եղել են դատարկված, որոնց թիվը հասել է 15-ի: Դրանց թվում էին՝ Քըշլաք Փիրվերդիից մինչև Ներքին Նորաշեն ընկած գյուղերը:

Կարևոր է նաև *նահիեի* ժողովրդագրական պատկերի ուսումնասիրությունը: Ըստ աղբյուրի՝ Ծարուրում բնակվել են միայն մահմեդականներ: Այսպես օրինակ՝ Մաղսուդլուում արձանագրվել է 18, Իսաջայում՝ 19, Ներքն Ջոմաքազում (՞)՝ 9, Քըշլաղ Միզօղլուում՝ 27, Վերին Ծահրիյարում՝ 85, Ներքին Քուրքենդիում՝ 89, Վերին Քուրդքենդիում՝ 52, Ներքին Ծահրիյարում՝ 19, Յալնըզ Աղաջում՝ 15, Մելիքքենդիում՝ 25, Ներքին Նորաշենում՝ 23, Քարաբուրջում՝ 53, Ներքին Բարջիում՝ 24, Օղուզթաշում՝ 2, Քազաթիջիրլիում՝ 109, Վերին Ջոմաքազում (՞)՝ 44,

[440] Այն հայտնի եղել նաև՝ Վիր Մազիյար անվամբ:

Վերին Ալիշարում՝ 108, Ներքին Քարքարայում՝ 7, Քալաջաքում՝ 34, Ներքին և Վերին Արալըքում՝ 15, Արնիաթում (՞) և Դերվիշլերում՝ 9-ական, Վերին Քարքարայում՝ 15, Քըշլաղ Ղայեբ Քուլիում՝ 10, Քաջիհան Քըշլաղում՝ 6, Մահսարաբադում՝ 11, Քըշլաք Բաբաքիում՝ 9, Գել Թեփեում՝ 5, Բեզիլիքում (՞)՝ 37, Արաբ Յենիջեյում՝ 7, Աբաս Քըշլաղում՝ 31, Վերին Բարջիում՝ 7, Ալքիլուում՝ 30, Սիյաքութում (՞)՝ 26, Քյոսահանում՝ 16, Ջալահում՝ 49, Քըզլաք Բուչուքում՝ 15, Քիշթազում՝ 28, Վերին Նորաշենում՝ 83, Օղլադ Ծահիլուում՝ 50, Մաքթայում՝ 19, Ուզանլուում՝ 32, Ղազանչիլուում՝ 48, Զուդանքիում՝ 54, Զավիյեում՝ 204, Քըշլաք Յուզբաշիում՝ 18, Քուշանջըում՝ 42, Աք Ահմեդում՝ 39, Ներքին Ալիշարում՝ 42, Մուդիջաքում՝ 24 և վերջին գյուղում՝ 7 անձ: Հարկացուցակից պարզ է դառնում, որ ամենաշատհարկատուներով աչքի ընկած գյուղը եղել է Զավիյեն:

Բերված տվյալներից ստացվում է, որ ընդհանուր առմամբ եղել է 1759 հարկատու: Հատկանշական է այն հանգամանքը, որ նրանց շրջանում չի եղել որևէ ամուրի, ուստի պետք է արձանագրել, որ ընտանիքները եղել են նույնքան: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ *նահիեի* ընդհանուր բնակիչների քանակը հասել է 8795-ի:

Ըստ *նահիեի* հարկացուցակի՝ մահմեդականների շրջանում կարելի է հանդիպել Բայաթ աշիրեթը: Դրա առկայությունը նկատելի է Քըշլաք Բուչուք և Քըշլաք Ալքաթարի (՞) գյուղերում:

Ծարուրում բավականին տարածված են եղել ջրաղացները, որոնք եղել են 66-ը: Դրանցից 4-ը եղել են ոչ պիտանի վիճակում: Բացի ջրաղացներից, նկատելի է նաև 19 *դինգ*, որից միայն 1-ն է եղել չգործող:

Ծարուրին հաջորդում է Վեդիի *նահիեն*, որը բաղկացած է եղել 56 գյուղից[441]: Դրանց թվին են պատկանել՝ Վեդի, Թալավան, Ջիրեջավան, Աքավրադ (՞), Աղչա Ավրադ (՞), Չուքանդար, Ծըք-Ծըք, Մեծ Ղարաբաղ, Զանազ (՞), Հիրադուս (՞), Խոսրով, Ջաֆարքենդի, Փոքր Ղարաբաղ, Յինեջաք, Արմուք, Հաքաս, Ջարմարուս, Քըզըլ Ավրադ,

[441] BOA, 0901, ss. 450-473.

Ջումիթ (՞), Փանոս, Ջաղիրե (՞), Ձենջիրլու, Ծիրարլի, Քազաբաք (՞)[442], Քարաքերտ, Ծաթլու, Դուդլու, Փիրլու Օշադը, Աջմադար Քըշլաղը (՞), Քաբանջը[443], Հաջիքլու, Գելվաթ Օշար, Թաշլու, Քուրավան, Ձադքիրան, Աբհանլու (՞), Ծահաբլու, Աքքիլիսե, Գյոքքենդի, Թազաքի, Ձամին, Ձարդաքլու, Քուշում, Անգիզ, Մանքուք, Մուսաջաք, Գել Դերվիշ, Քարաջա Աբդալ, Չինքլի, Փիրլի, Գանզաք, Հաքվերդի, Թաթար (՞), Ջանքութ, Յենիջե և Քարահաջ բնակավայրերը:

Հատկանշական է, որ 56 գյուղերից 22-ը եղել են դատարկված: Դրանք էին՝ բացառությամբ Մեծ Ղարաբաղի՝ Ջիրեջավանից Ծըք-Ծըքը ընկած գյուղերը, Քըզըլ Ավրադն ու Ջումիթը (՞), Աջմադարը, Հաջիլուն, Աբհանլուն (՞), Թազաքին, Ձարդաքլուն, Անգիզը, Գել Դերվիշն ու Քարաջա Աբդալը, ինչպես նաև՝ վերջին 4 գյուղերը:

Նյութի քննությունը արժեքավոր է նաև *նահիեի* ժողովրդագրության ուսումնասիրման համատեքստում: Պարզվում է, որ բնակվել են ինչպես մահմեդականներ, այնպես էլ՝ քրիստոնյաներ: Հատկանշական է, որ թե՛ քրիստոնյաները, թե՛ մահմեդականները բնակվել են առանձին գյուղերում: Բացառություն է եղել միայն Վեդի գյուղը, որը աջքի է ընկել համատեղ բնակչությամբ:

Ամբողջովին քրիստոնեաբնակ էին՝ Մեծ Ղարաբաղը (30 անձ), Փոքր Ղարաբաղը (6 անձ), Արմուքը (18 անձ), Հաքասը (9 անձ), Ջարմարուսը (4 անձ), Փանոսը (5 անձ), Ջաղիրեն (՞) (22 անձ), Ձենջիրլուն (27 անձ), Գյոքքենդին (7 անձ), Քուշուշը (4 անձ) և Մանքուքը (16 անձ): Մահմեդաբնակ գյուղերի շրջանում Թալավանում գրանցվել է 18, Ջաֆարքենդիում՝ 9, Յինեջաքում՝ 9, Ծիրարլիում՝ 16, Քազաբաքում (՞)՝ 42, Քարակերտում՝ 12, Ծաթլուում՝ 19, Դուդլուում՝ 44, Փիրլու Օշադում՝ 22, Քաբանջըում՝ 15, Գելվաթ Օշարում՝ 24, Թաշլուում՝ 6, Քուրավանում՝ 7, Ձադքիրանում՝ 23, Ծահաբլուում՝ 6, Աքքիլիսեում՝ 17, Ձամինում՝ 4, Մուսաջաքում և Չինքլիում՝ 8-ական, Փիրլիում՝ 7, Գանզաքում և Հաքվերդիում՝ 6-ական անձ:

Ինչ վերաբերում է խառը բնակությամբ աջքի ընկած Վեդի գյուղին, ապա այնտեղ գրանցվել է 23 քրիստոնյա և 43 մահմեդական:

[442] Այն հայտնի է եղել նաև՝ Ծիքլու անվամբ:
[443] Այն հայտնի է եղել նաև՝ Իմամքուլի անվամբ:

Հարկացուցակի տվյալներից երևում է, որ *նահիեում* ամենաշատ հարկատուներ գրանցված էին Մեծ Վեդիում:

Ստացված տվյալներից երևում է, որ Վեդիում ընդհանուր հաշվառվածների թիվը կազմել է 171 քրիստոնյա և 338 մահմեդական: Նրանց շրջանում եղել են ամուրիներ, ինչը կազմել է համապատասխանաբար՝ 18-ը 41-ի դիմաց: Դա թույլ է տալիս փաստելու, որ քրիստոնյա ընտանիքները եղել են 153-ը, իսկ մահեդականները՝ 297: Ընդհանուրի բերելով *նահիեի* ողջ բնակչության թիվը՝ ապա այն կազմել է 783 քրիստոնյա և 1526 մահմեդական, ինչը վկայում է վերջինների մեծամասնություն կազմելու մասին:

Վեդիի *նահիեում* զգալի են եղել ջրաղացների առկայությունը: Մասնավորապես հաշվվում է 45 հատ, որոնցից 8-ը եղել է չգործող: Բացի այդ կար 17 պարտեզ և 2 ձիթհան: Հատկանշական է այն իրողությունը, որ քրիստոնեաբնակ գյուղերից 4-ում՝ Փոքր Ղարաբաղում, Ջաղիրեում, Քյոքքենդիում և Մանքուքում գրանցված է 1-ական եկեղեցի:

Վեդիին հաջորդում է Գառնիի *նահիեի* հարկացուցակի տվյալները[444]: Ըստ այդ տեղեկությունների՝ Գառնիին են պատկանել՝ Գառնի, Ծահրիյար, Ծիքայեթ, Մունլա Մահմուդ, Ծուր Անքաթու և Քալաջաք (՝), Ալի Քըրք, Քաթավիզ, Հիրանիս Մուսլիմ (՝), Միրզաբեյ, Ուդզանիք, Հարուդ Բիրուն (՝), Փոքր Քաբլան (՝), Մեծ Քաբլան (՝), Ահշվան(՝), Մարկոս, Բայբույթ, Դիմանլու, Գեթուսվանք, Քարամեհմեդ, Վերին Աբդալար, Ջարվանջաք, Խոդաբանդա, Քասեմ Ալի, Չոբան Քըշլաղը, Գաթուր[445], Դուբրալար, Գերիջլի (՝), Քաթուլու (՝), Ջարաթլու, Թահնա Քուբրի, Վերին Սաաթլու, Ներքին Սաաթլու, Հանթիք Քուբրի (՝), Մունլա Քոլաղ, Ջաբաջիլու, Քազաթեփե, Ասթախանե, Վերին Քափուլու Սաղար, Ներքին Քափուլու Սաղար, Թողաթշամլու, Ալփույ, Աբանշամլու, Քազաքափունլու, Թամամլու, Քազա Համզա, Չեքիդ Մելի, Բաշթալու, Բուդարլու, Ջիթիհան (՝), Աղաջիրի, Դելուլեր, Քազաքըշլաք, Բեքիջաքարլու, Թաշլու, Ուղուրբեյլու, Աղչաքըշլաք, Ալմալու, Թոքուզ, Փիրքի (՝), Մեծ Աբասլու, Քուլմա Ալի, Փոքր Աբասլու, Ներքին Բազավանդ, Քադիբեյլու, Արտաշիր, Քազբաթ Քուլի (՝), Դարուղալու, Մահրաբլու,

[444] BOA, 0901, ss. 478-529.
[445] Այն հայտնի է եղել նաև՝ Գել Բուդաք անվամբ:

Վերին Բազավանդ, Սարուջլու, Քարիր Մեհմեդաբադ (՞), Նոր Քարիր (՞), Քարիր Աղչա Թաղա (՞), Իփաքլու, Բիրմանջալու (՞), Բազավանդ Քուդաք, Սեյֆիաբադ, Ջահիրաբլու, Ջանիբեյ, Աղչաքըշլաք, Մեծ Մասումլու, Փոքր Մասումլու, Բովուդ (՞), Խասլեր, Վերին Քուբաքա (՞), Ներքին Քուբաքա (՞), Աբդալեր, Արնուս, Բուրդաք, Քուչեք և Թարմուս[446] գյուղերը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ *նահիեում* գոյություն է ունեցել երկու 2, որը կոչվել է Աղչաքըշլաք: Բացի այդ, հարկացուցակում որոշ գյուղերի մեկմեկու մոտ գտնվելու մասին որոշակի տեղեկություններ կան: Այսպես օրինակ՝ պարզվում է, որ Հիրանիս Մուսլիմը (՞) գտնվել է Ալի Քըրքի մոտ, Ջարաթլուն՝ Քանլուի, Ջաբաջիլուն՝ Մունլա Քոլադի, Փիրքին (՞)՝ Դալուլերի և Բիրմանջալուն (՞)՝ սահմանակացել է Իփաքլուին:

Գառնի *նահիեում* նույնպես եղել են դատարկված բնակավայրեր, որոնք վերոնշյալ 92 գյուղերի շրջանում կազմել են 18-ը: Դրանցից էին՝ Ծիքայեթը, Մունլա Մահմուդը, Ուդզանիքը, Հարուդ Բիրունը (՞), Քարամեհմեդը, Վերին Աբդալարը, Ջարվանջաքը, Քասեմ Ալին, Գերիջլին (՞), Ներքին Սաաթլուն, Աղչաքըշլաքը[447], Ալմալուն, Սարուջուից մինչև Իփաքլուն, ինչպես նաև՝ Սեյֆիաբադը և Ներքին Քաբուքան (՞):

Հարկացուցակի քննությունից պարզվում է, որ *նահիեում* մահմեդականների կողքին բնակվել են նաև քրիստոնյաներ: Հատկանշական է, որ նրանք բնակվել են միայն առանձին գյուղերում:

Քրիստոնեաբնակ էր ընդամենը 10 գյուղ, որոնց թվում էին Գառնին (33 անձ), Միրզաբեյը (14 անձ), Փոքր Քաբլանը (՞) (7 անձ), Մեծ Քաբլանը (՞) (19 անձ), Ահշվանը (՞) (13 անձ), Մարկոսը (7 անձ), Արտաշիրը (13 անձ), Բուրդաքը (12 անձ), Քուչեքը (12 անձ) և Թարմուսը (9 անձ):

Ինչ վերաբերում է մնացյալ 66 մահմեդաբնակ գյուղերին, ապա ըստ հաջորդականության՝ Ծահրիյարում գրանցած է եղել 20, Ծիքայեթում՝ 9, Ծուր Անքաթու և Քալաջաքում (՞)՝ 13, Ալի Քըրքում՝ 14, Քաթավիզում՝ 21, Հիրունիս Մուսլիմում՝ 5, Բայբուրթում՝ 9, Դիմանլուում՝ 6, Գեթուսվանքում՝ 10, Խոդաբանդայում և Չոբան

[446] Այն հայնի է եղել նաև՝ Քըզըլվանք անվամբ:
[447] Խոսքը՝ ըստհաջորդականության առաջին Աղչաքըշլաքի մասին է:

Քըշլաղում՝ 4-ական, Քաթուրում՝ 5, Դուբրալարում՝ 21, Քաթուլուում (՞)՝ 10, Ջարաթլուում՝ 27, Թահնա Քուբրիում՝ 7, Վերին Սաաթլուում՝ 24, Հանթիք Քուբրիում (՞)՝ 22, Մունլա Քոլադում՝ 10, Ջաբաջիրլուում՝ 16, Քազաթեփեում՝ 5, Ասթախանեում՝ 16, Վերին Քափուլու Սաղարում՝ 20, Ներքին Քափուլու Սաղարում՝ 6, Թողաթշամլուում՝ 12, Ալփում՝ 8, Աբանշամլուում՝ 46, Քազաքափունլուում՝ 16, Թամամլուում՝ 11, Քազան Համզայում՝ 21, Չեքիդ Մելիում՝ 25, Բաշթալուում՝ 23, Բուդարլուում՝ 16, Ջիթիհանում (՞)՝ 50, Աղաջիրիում՝ 6, Դելուլերում՝ 90, Քազա Քըշլաքում՝ 50, Բեքիջաքարլուում՝ 48, Թաշլուում՝ 16, Ուղուրբեյլուում՝ 15, Թոքուզում՝ 15, Փիրքիում՝ 29, Մեծ Աբասլուում՝ 65, Քուլմա Ալիում՝ 7, Փոքր Աբասլուում՝ 30, Ներքին Բազավանդում՝ 38, Քադիբեյլուում՝ 2, Քազբաթ Քուլիում (՞)՝ 24, Դարուղալուում՝ 25, Մահրաբլուում՝ 31, Վերին Բազավանդում՝ 25, Իփաքլուում՝ 25, Բիրմանջալուում (՞)՝ 22, Բազավանդ Քուդաքում՝ 6, Ջահիրաբլուում՝ 23, Ջանիբեյում՝ 3, Աղչաքըշլաքում՝ 7, Մեծ Մասումլուում՝ 28, Փոքր Մասումլուում՝ 10, Բովուդում (՞)՝ 45, Խասլերում՝ 9, Վերին Քուբաքայում (՞)՝ 4, Աբդալերում՝ 8 և Արնուսում՝ 13 անձ:

Բերված տվյալներից ստացվում է, որ ընդհանուր առմամբ հաշվառվել է 139 քրիստոնյա և 1251 մահմեդական: Ընդ որում առաջինների շրջանում եղել է 18 ամուրի, այնինչ մահմեդականների մոտ ամուրիները կազմել են 124-ը, ինչը ենթադրում է, որ ընտանիքների թիվը ունեցել է համապատասխանաբար՝ 121-ը 1127-ի դիմաց հարաբերակցությունը: Ի մի բերելով այդ տվյալները՝ քրիստոնյա բնակչության ընդհանուր թիվը *նահիեում* կազմել է 623 մարդ, իսկ մահմեդականները եղել են 5759 անձ:

Գառնիի *նահիեում* նույնպես մեծ տարածում են ունեցել ջրաղացները: Նյութի քննությունից պարզվում է, որ դրանց գյուղերում եղել են 87-ը, որոնցից միայն 15-ը չեն գործել: Նկատելի է նաև *դինգերի* մասին գրություններ, որոնց թիվը հասել է 9-ի: Հատկանշական է, որ դրանց շրջանում 2-ն է եղել չգործող: Անհամեմատ ավելի քիչ էին ձիթհանները, որոնք թեպետ 3-ն էին, սակայն գործում էր մեկը: Ընդամենը 1 հատ է եղել ներկատունը:

Հատկանշական է, որ քրիստոնեաբնակ գյուղերից Գառնիում, Միրզաբեյում, Ահշվանում (՞), Բուրդաքում Քուչեքում և Թարմուսում արձանագրված է եղել 1-ական եկեղեցի:

Ըստ հերթականության՝ վերջին վարչա-քաղաքական միավորը՝ Ծորագյալի[448] *նահիեն է*[449]: Այն ներառել է Բաշքենդ, Բեյքենդի, Ծահքարամ, Քուլաջաթ, Միրանք (՞), Ադիբահաթ (՞), Քյոսաքարա, Սաքուդլու, Բողազ Քեսին, Մունլա Գյոքչա, Քարաքըշլաք[450], Դերվիշ Ալի, Քարաքուլի, Մարաքենդի, Գյոլքենդի, Քալաջաք, Ծիրվանջաք, Աքբուլաք, Քարամահմուդքենդի, Գուլիքենդի, Ալբավադ, Սուքբուլաք (՞), Քուլլուբուլաք, Քինչաք, Խաչքիլիսե, Քարավել Թեփե, Ամրուդլու, Քըզըլչաքչաք, Քազաբիրուն, Դադաքուլի, Քուբիր Բալու (՞), Աքրի Բուչաք, Քուլլուջա, Բազիրինլու, Աթրաքալա, Գութաքլու, Էյլեքենդի[451], Բեյինլեր, Քուքուրադլու, Սարդահանա, Աբդի, Քուլլուբուլաք, Ծահնազար, Ծեքրաբադ, Մասջիդլու, Հոռոմ (՞), Աշիրհանլու, Բանդամուրադ, Թումարթաշ, Յենիջե, Յոլքաջարա, Էյլենջի, Չափուքոջա, Ղազանչի, Դուսթալի, Քուքերչաթլու, Աքաբեթ (՞), Քազաբուլաք, Սամավերդի Քըշլաղը, Վերին Քուլլուջա[452], Քազաբուլաք, Բազարջաք, Ջազահուն (՞), Բայանդուր, Քաբուլու (՞), Ալիքուլի, Քարաքիլիսե, Քարահաջ, Գյոլաջը, Դանջիլու, Չորաքամիշ, Մեծ և Փոքր Դուրքենդի, Չաբուքլու, Քուլալի, Սավալի, Քումրի, Քաբադլու, Լալաջա, Ուդլուջա, Քըզըլքիլիսե, Ջաման Քըշլաղը, Բուսաքլու, Աքքիլիսե, Աղաջան, Դիվանբար, Գելդար, Ուչթեփե, Քարաքիլիսե, Ջալալ, Քազաբուլաք, Բիրավաթ (՞), Աքքիլիսե, Թեքնելու, Ջարմդերե, Չաբուքչու, Քուքերխան, Հաթիմ, Բալիդլու, Քասեմքենդի, Փոքր Էյլեքենդի, Դաբաք (՞), Լավադա (՞), Օրթաքիլիսե, Աքքիլիսե, Քուքիքենդի, Արդիյե (՞), Աքբուլաք, Ջարջուր, Գյոքչա, Քոշա Յաթաք, Արթեփե (՞), Գելաթքիա, Էյլեչաք, Քարաքիլիսե, Սարիքիա, Քազարդաք (՞), Քարաքիլիսե, Աբանլուջա (՞), Մաբլաշ Քըշլաղը, Քոշա Յաթաք, Բիրամ Քըշլաղը, Դերեքենդի, Գյոզլուբուլաք, Հաջաքլու, Դիրաքլու, Սոլուչայ, Ազադհաջ,

---

[448] *Նահիեն* գտնվել է Հայկական լեռնաշխարհում՝ Ախուրյան գետի հովտում: Տեղանունների բառարան, հատոր 4, էջ 150:
[449] BOA, 0901, ss. 533-583.
[450] Այն հայտնի է եղել նաև՝ Դիլիխան անվամբ:
[451] Այն հայտնի է եղել նաև՝ Քազաջաք անվամբ:
[452] Այն հայտնի է եղել նաև՝ Ալի Թաշանլու անվամբ:

Իսահանլու, Քըզըլբուլաք, Ծիշթեփե, Աբլիաթ (՞), Քութաք Քազան, Մուրադիան, Գյոլքենդի, Հաջնազարքուլի, Թաշբուլաք, Քարավարդ (՞), Քոնաքթեփե, Քաֆթարլու, Ծարաբխանե, Բունջուքլու, Չամիշլու, Խորբան (՞), Չարչեքիշ (՞), Քուրի Բողազ, Մելիքքենդի, Քարվանսարա, Աքդիվար, Միրզաբեյ Քըշլաղը, Քալաջա, Չաքչաք, Ջանդար Թեփեսի, Քըզըլ Մազարեսթան, Նազար Ալի, Ջոբան Գերեքմեզ, Քաբանլու[453], Քուչուքլու, Թաշբուլաք, Գյուզելթեփե, Քըրք Դեյիրմեն (՞), Աքբուլաք, Գյոլքենդի, Սարիքիա, Սուդաքին (՞)[454] և Թուքիքսազ գյուղերը: Սրանց կողքին նշված են շուրջ մեկ տասնյակ *մազրայե*:

Հարկ է նկատել, որ մի քանի բնակավայրեր ունեցել են միևնույն անվանումը: Օրինակ՝ նկատելի են թվով 4 Քարաքիլիսե, 3-ական Գյոլքենդի, Աքբուլաք, Աքքիլիսե, ինչպես նաև՝ 2-ական Քուլլուբուլաք, Քոշա Յաթաք, Սարիքիա և Թաշբուլաք գյուղեր: Նկատելի է նաև այն երևույթը, երբ որոշ գյուղերի դիմաց նշված է, թե տվյալ գյուղը վերոնշյալ *նահիեում*, որ բնակավայրի մոտ է գտնվել: Մասնավորապես արձանագրված է, որ Քարաքըշլաքը մոտ է գտնվել Դերվիշ Ալիին, Քարաքուլին՝ Սաքուդլուին, Գյոլքենդին[455]՝ Քալաջաքին, Քուբիր Բալուն (՞)՝ Ամրուդլուին, Աթրաքալան՝ Քարամահմուդքենդիին, Բեյինլերը՝ Աբդիին և այլն:

Հարկացուցակի տեղեկությունների համաձայն՝ Ծորագյալի *նահիեում* տեղ գտած 166 գյուղերից միայն 68-ն էր բնակելի, իսկ մնացյալը դատարկված էին: Նյութի քննությունից պարզ է դառնում, որ բնակեցված գյուղերի շրջանում եղել են ինչպես քրիստոնյաներ, այնպես էլ՝ մահմեդականներ: Ծորագյալում քրիստոնյաներն ու մահմեդականները հիմնականում բնակվել են առանձին գյուղերում և միայն քիչ դեպքերում՝ համատեղ բնակավայրերում:

Սոսկ քրիստոնեաբնակ էր թվով 17 գյուղ, որոնց թվում էին Բաշքենդ (23 անձ), Բեյքենդի (25 անձ), Քուլուջաթ (3 անձ), Միրանք (՞) (29 անձ), Քինչաք (30 անձ), Բեյինլեր (6 անձ), Մասջիդլու (35 անձ), Հոռոմ (՞) (18 անձ), Ղազանչի (17 անձ), Մեծ Դուրքենդի (9 անձ),

[453] Այն հայտնի է եղել նաև՝ Օլաջաք անվամբ:
[454] Այն հայտնի է եղել նաև՝ Ծար Թարմուդում անվամբ:
[455] Ըստ աշխարհագրի հերթականության՝ առաջին Գյոլքենդին:

Քարաքիլիսե[456] (14 անձ), Բալիդլու (20 անձ), Դաբաք (՞) (26 անձ), Աքքիլիսե[457] (22 անձ), Արթեփե (՞) (18 անձ), Չարչեքիշ (՞) (13 անձ) և Մելիքքենդի (14 անձ) բնակավայրերը:

Ամբողջովին մահմեդաբնակ բնակավայրերը իրենց քանակով գերազանցում էին քրիստոնյաներով բնակեցված գյուղերին՝ կազմելով 40-ը: Դրանց թվին էին պատկանում Ծահքարամը (5 անձ), Ադիբահաթը (՞) (12 անձ), Քյոսաքարա Բուլաքը (4 անձ), Սոքուդլուն (13 անձ), Քալաջաքը (17 անձ), Ծիրվանջաքը (14 անձ), Քարամահմուդքենդին (11 անձ), Քուլլուբուլաքը (11 անձ), Խաչքիլիսեն (10 անձ), Քարավել Թեփեն (17 անձ), Քըզըլչաքչաքը (21 անձ), Աթրաքալան (8 անձ), Գութաքլուն (3 անձ), Յոլքենդին (16 անձ), Քուլլուբուլաքը (5 անձ), Ծեքրաբադը (3 անձ), Յենիջեն (6 անձ), Քազաբուլաքը (25 անձ), Սամավերդին Քըշլաղըն (5 անձ), Վերին Քուլլուջա (24 անձ), Բազարջաքը (8 անձ), Ջազահունը (՞) (2 անձ), Քաբուլուն (՞) (13 անձ), Քարաքիլիսեն[458] (10 անձ), Քարահաջը (20 անձ), Գյոլաջը (10 անձ), Չորաքամիշը (23 անձ), Քումրին (68 անձ), Թեքնելուն (20 անձ), Քասեմքենդին (19 անձ), Փոքր Էյլեքենդին (17 անձ), Քուքիքենդին (12 անձ), Ջարջուրը (24 անձ), Գյոքչան (8 անձ), Քոշա Յաթաքը[459] (4 անձ), Գելաթքիսը (3 անձ), Հաջնազարքուլին (6 անձ), Քոնաքթեփեն (15 անձ), Քաֆթարլուն (7 անձ) և Չամիշլուն (5 անձ):

Խառը բնակչությամբ էին աչքի ընկնող գյուղերում պատկերը հետևյալն էր. Ամրուդլուում արձանագրվել է 1 քրիստոնյա, 6 մահմեդական, Դուսթ Ալիում՝ 5 քրիստոնյա, 10 մահմեդական, Աքաբեթում (՞)՝ 2 քրիստոնյա, 12 մահմեդական, Ալիքուլիում՝ 5 քրիստոնյա, 4 մահմեդական, Ուդլուջայում՝ 30 քրիստոնյա, 4 մահմեդական, Քըզըլքիլիսեում՝ 12 քրիստոնյա, 4 մահմեդական, Հին Աքքիլիսեում՝ 55 քրիստոնյա, 3 մահմեդական, Բիրավաթում (՞)՝ 13 քրիստոնյա, 15 մահմեդական, Բունջուքլուում՝ 4 քրիստոնյա, 1 մահմեդական, Խորբանում (՞)՝ 11 քրիստոնյա, 3 մահմեդական, Քուրի Բողազում՝ 11 քրիստոնյա, 2 մահմեդական: Ինչ վերաբերում է

[456] Ըստ աշխարհագրի հերթականության՝ երկրորդ Քարաքիլիսեն:
[457] Ըստ աշխարհագրի հերթականության՝ երրորդ Աքքիլիսեն:
[458] Ըստ աշխարհագրի հերթականության՝ առաջին Քարաքիլիսեն:
[459] Ըստ աշխարհագրի հերթականության՝ առաջին Քոշա Յաթաքը:

մնացյալ գյուղերին, ապա դրանք կազմում էին Ծորագյալի դատարկված գյուղերը:

Հարկատուների թվով ամենամեծ գյուղը եղել է Քումրիում, իսկ ամենաքիչ հարկատուները գրանցվել են Ջազահուն (՞) գյուղում:

Ի մի բերելով գրանցված հարկատուների ընդհանուր թիվը՝ կարելի է փաստել, որ 471 քրիստոնյա և 593 մահմեդական հարաբերակցությամբ Ծորագյալի *նահիեում* մեծամասնություն էին կազմում վերջինները: Հատկանշական է, որ երկու կողմում էլ քիչ են եղել ամուրիները՝ համապատասանաբար կազմելով 4 և 2 անձ: Այդպիսով՝ քրիստոնյա ընտանիքների թիվը հասել է 467-ի, իսկ մահմեդականներինը 591-ի, ինչը ենթադրում է, որ Ծորագյալում 1728 թ. դրությամբ եղել է շուրջ 2339 քրիստոնյա և 2957 մահմեդական բնակիչ:

Հարկացուցակի ուսումնասիրությունից պարզվում է՝ 3 աշիրեթի գոյություն: Այսպես օրինակ՝ Քալաջաքում, Չորաքամիշում բնակվել են Իրամլու (՞), Էյլեքենդիում՝ Խաջումլու իսկ Դուսթ Ալիում, Աքաբեթում և Քազաբուլաքում՝ Մուղանլու հանրույթները:

Ծորագյալի գյուղերը աչքի են ընկել ջրաղացների օգտագործմամբ: Ընդհանուր հաշվվում է 23 ջրաղաց, որոնցից շահագործման էին պիտանի՝ 17-ը: Համապատասխան գրությունները փաստում են, որ նրանց մի մասը նախատեսված է եղել կես տարվա, իսկ մյուս մասը՝ ամբողջ տարվագործածության համար:

Մեծ կարևորություն է ներկայացնում 1728 թ. Երևանի *լիվայի* ժողովրդագրական տվյալների հավաքական պատկերը: Ընդարձակ մատյանների քննությունից կարելի է պարզել, որ ամբողջ *լիվայում* հաշվառվել է շուրջ 14716 հարկատու, որոնց շրջանում 1117-ը՝ ամուրիներ: Այդպիսով՝ Երևանի *լիվայում* բնակվել է 13599 ընտանիք: Ընտանիքի անդամների միջին թիվը 5-ով բազմապատկելու դեպքում կստացվի, որ Երևանի *լիվայի* ընդհանուր բնակչության թիվը հասել է՝ 69112-ի անձի:

Առանձնացնելով քրիստոնյա և մահմեդական բնակչության թիվը՝ կարելի է փաստել, որ քրիստոնյա հարկատուները եղել են

5929-ը, իսկ մահմեդականները՝ 8787-ը, որոնց շրջանում համապատասխանաբար եղել են՝ 514 և 603 ամուրի: Պարզ է դառնում, որ գոյություն է 5415 քրիստոնյա և 8184 մահմեդական ընտանիք: Եթե տոկոսային հարաբերակցությամբ հաշվելու լինենք, ապա նշյալ ժամանակահատվածում Երևանի *լիվայում* բնակչությանը հարաբերակցությունը հօգուտ մահմեդականների՝ եղել է մոտավորապես՝ 39.1%-ը 60.9%-ի դիմաց:

Փորձ է կատարվել հաշվելու նաև 1728 թ. *լիվայի* գյուղերի քանակը: Ուսումնասիրությունների համաձայն՝ դրանց ընդհանուր թիվը հասել է 1015-ի:

Այսպիսով, Երևանի *լիվայի* հարկացուցակներից պարզ է դառնում, որ այն բաղկացած է եղել 14 վարչա-քաղաքական միավորից, որտեղ բնակվել են շուրջ 27589 քրիստոնյա և 41523 մահմեդական: *Լիվայում*, բացի գյուղերից, ամբողջովին քրիստոնեաբնակ էր միայն Կարբի քաղաքը, այնինչ Սադարաքում և Ծարուրում բնակվել են միայն մահմեդականներ: Հատկանշական է, որ մահմեդականների շրջանում եղել են քրդական աշիրեթներ, որոնք բնակվել են Քըրք Բուլաքում, Կարբիում (գյուղերում), Արալըքում, Սադարաքում, Մակուում, Ծարուրում և Ծորագյալում:

Հատուկ կարևորության է արժանի Մայր Աթոռին տրված իրավունքները: 1728 թ. Էջմիածնին են պատկանել Վաղարշապատ, Օշական, Մաստարա գյուղերը: Հատկապես ուշագրավ է, որ եկեղեցին ազատված է եղել *իսփենջ*, *ջիզիե* հարկերից և իր տիրություններում իրավունք է ունեցել տիրանալ՝ անժառանգության հետևանքով թափուր մնացացած գույքին: Բացի այդ, կարևոր է, որ Մայր Աթոռը, ի թիվս Վաղարշապատում ունեցած սեփականության՝ Ջաֆաս (՞) գյուղում ունեցել է 1 ձիթհան, իսկ Երևանի քաղաքում՝ 1 այգի և 2 ջրաղաց:

### 2.3 Երևանի լիվայի հարկերը ըստ 1728 թ. աշխարհագրի

Երևանի *լիվայի* մատյանում ժողովրդագրական տվյալներին և ինչքերի թվին հաջորդում են գանձվող հարկերը, որոնք ամբողջացնում են աշխարհագրի տեղեկությունները:

*Լիվայում* հանդիպում են *իսփենջի*, *չիֆթի,* կես *չիֆթի, բեննաքի*, ամուրիների (մահմեդական), այրիների, ցորենի, գարու, կորեկի, *դյոնումի*, սիսեռի, ոսպի, կտավհատի, բրնձի, բամբակի, այգիների, մրգի, բանջարանոցների, *հարիջի*, աչքալուսանքի, արոտի, քաղցուի, փեթակի, խոտի, *քըշլաքի*, անասունների, ոչխարների, բակլայի, մարգագետնի, առվույտի, կաղամբի, *դաշթիբանիի* և հողի *թափուի*, *բադիավայի* և հարսնության, ջրաղացների, ձիթհանների, *դինգերի*, ներկատների ինչպես նաև՝ հանցանքի և ոճրի, ընդհանուրի և *խասսի բեյթ-ուլ մալի*, բացակայող և կորած ապրանքների, փախած ծառաների և աղախիների գնի, անասունների բեռան՝ ձիու և կովի, ծխի դիմաց սահմանված տուրքերը:

Հանդիպում են դեպքեր, երբ մասնավորապես հողի *թափուի* և հարսնության հարկերը հանդես են գալիս առանձին սկզբունքով, իսկ նրանց հետ արձանագրված *դաշթիբանիի* և *բադիավայի* հարկերը արձանագրված են լինում ըստ հաջորդականության՝ վերջին նշված հարկատեսակի ընդհանուր կառուցում: Բացի այդ, երբեմն բամբակի, այգիների, մրգի, բանջարանոցների, առվույտի տուրքերից գանձվել են միայն դրանց տասանորդական չափը:

Գրեթե յուրաքանչյուր գյուղում տարածված էին *իսփենջի*, *չիֆթի, բեննաքի*, ամուրիների, ցորենի, գարու, խոտի, կտավհատի, ոչխարների, *դաշթիբանիի* և հողի *թափուի*, *բադիավայի* և հարսնության հարկերը, այնինչ մյուսները՝ ըստ տնտեսական և սոցիալական դրության՝ պայմանական բնույթունեին:

Հարկերի շրջանում ամենաբարձր տուրքաչափերը գրանցվել են հիմնականում ցորենի, գարու, բամբակի, բրնձի բերքից, ինչպես նաև՝ այգիների *մաքթուից*: Սակայն ելնելով այն հանգամանքից, որ բրնձի և բամբակի մշակությունը ոչ միշտ է հանդիպել յուրաքանչյուր գյուղում, ուստի դրանով ավելի է մեծանում ցորենի և գարու մշակության արժեքը *նահիեների* տնտեսության համար:

Օսմանյան իշխանությունները որոշ հարկատեսակների դիմաց սահմանել էին նրանց հստակ դրամական չափը: Այսպես օրինակ՝ *իսփենջի* դիմաց յուրաքանչյուր հարկատուից գանձվել է 25 *աքչե*, *չիֆթ և* կես *չիֆթ* ունեցող հպատակներից համապատասխանաբար՝ 50 և

25 *աքչե*, *էքինլու բեննաք* հպատակներից՝ 18, *ջաբա բեննաքից*՝ 12, իսկ այրիներից և մահմեդական ամուրիներից 6-ական *աքչե*: Կորեկի և գարու յուրաքանչյուր *քիլե* գնահատվել է 20, ցորենինը՝ 30 *աքչե*: 60 *աքչե* է պահանջվել սիսեռի, ոսպի, բրնձի մեկ *քիլեն*, իսկ կտավիատից՝ այն կազմել է 100 *աքչե*:

Հստակ դրամական միավորներ էին նախատեսված նաև *դինգերի*, ձիթհանների, ներկատների և ջրաղացների դիմաց: *Դինգերից* գանձվել է 60-ական, ձիթհաններից՝ 120-ական, իսկ ներկատներից՝ 1200-ական *աքչե*: Ինչ վերաբերում է ջրաղացներին, ապա դրանց արժեքը հիմնականում տատանվել է 30 կամ 60 *աքչեի* միջև: Համապատասխան գրություններից պարզվում է, որ դա պայմանավորված էր, թե տվյալ ջրաղացը շահագործվել է կես, թե մեկ տարի:

Քննության է առնվել ընդհանուր հարկաչափերի ուսումնասիրությունը: Ըստ արձանագրված տեղեկությունների՝ ամենաբարձր հարկադրույքը սահմանվել է Վաղարշապատ գյուղում՝ կազմելով 211322 *աքչե*[460]: Եթե համեմատություն անցկացնենք 1725 թ. Վաղարշապատ գյուղի օսմանյան հարկացուցակի միջև, ապա ընդհանուր հարկաչափը այդ նույն տարում եղել է 91515 *աքչե*[461], ինչը նշանակում է, որ հարկի չափը 3 տարվա ընթացքում բարձրացել է 2.3 անգամ: Հարկերն առավել նվազ էին 1725 թ. այն պատճառով, որ օսմանյան իշխանությունները, որոնք մոտավորապես մեկ տարի առաջ էին հաստատվել Արևելյան Հայաստանում, տուրքերի գանձման գործում սկզբնապես բավական զգուշավոր էին և վարում էին սիրաշահելու քաղաքականություն[462]:

1728 թ. Երևանի *լիվայում* բարձր է եղել Երևան քաղաքում սահմանված հարկադրույքը, որը հավասար է եղել 112225 *աքչե*[463]: Մյուս շրջաններում գրանցված ամենաբարձր հարկադրույքները զգալիորեն զիջել են վերջիններիս՝ սահմանված լինելով 14300 *աքչեից*: Հատկանշական է Քըրք Բուլաք *նահիեի* օրինակը, որտեղ

---

[460] BOA, 0901, s. 158.

[461] Փափազյան Հ., Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, նշվ., աշխ., էջ 452:

[462] Փափազյան Հ., Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային քաղաքականության վերաբերյալ, Բանբեր Մատենադարանի, Երևան, թիվ 16, 1994, էջ 198:

[463] BOA, 0901, s. 41.

Ծիրաբաղ գյուղից բացի (62520 *աքչե*), ըստ միջին վիճակագրական տվյալների, բարձր են եղել նաև Ջուրբեշի և Ուլուխանլուի հարկադրույքները՝ համապատասխանաբար հասնելով 60000[464] և 58000[465] *աքչեի*: Ընդհանուր հարկաչափերի քննության համաձայն՝ եղել են դեպքեր, երբ ամենաշատ հարկատուներ ունեցող գյուղը ավելի նվազ տնտեսական հնարավորություններով է աչքի ընկել: Որպես օրինակ՝ կարելի է բերել Գառնիի Դելուլեր գյուղը, որի հարկաչափը կազմել է 20000 *աքչե*[466], ընդամենը երրորդ տնտեսությունն է եղել՝ զիջելով Գառնի և Մեծ Աբասլու գյուղերին, որտեղ արձանագրվել է՝ համապատասխանաբար 23000[467] և 28300[468] *աքչե*:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ծորագյալ *նահիեի* հարկաչափերի ուսումնասիրությունը: Թեպետ գյուղերի մեծաթիվ քանակին և որոշ բնակավայրերում արձանագրված խիտ բնակչության առկայությանը՝ Ծորագյալին պատկանող գյուղերի ընդհանուր հարկաչափերը խիստ ցածր են եղել՝ հասնելով առավելագույնը 20000 *աքչեի* (Քումրի գյուղում[469]) և դա այն դեպքում, երբ մնացյալ դրույքաչափերի գումարը հիմնականում տատանվել է 2000-ից 8000 *աքչեի* սահմաններում:

Նկատելի են նաև որոշ անճշտության դեպքեր: Դրանց թվին են դասվել մասնավորապես այնպիսի երևույթներ, երբ անվանացանկում *չիֆթի*, կես *չիֆթի* կամ *բենաքին* վերաբերող գրությունների ընդհանուր քանակը նույնությամբ չի համապատասխանում հարկաբաժնում գրանցված տեղեկությանը: Հանդիպում են նաև դեպքեր, երբ հարկացանկում տվյալ տուրքի դիմաց նշված չէ դրա գումարային արժեքը: Ամենայն հավանականությամբ, վերոնշյալ իրողությունները օսմանյան իշխանավորների անփութության հետևանք են:

1728 թ. *լիվայի* աշխարհագիր մատյանները աչքի են ընկնում իրենց առանձնահատկություններով: Նախ և առաջ, բնակավայրերի

[464] Նույն տեղում:
[465] Նույն տեղում, էջ 96:
[466] BOA, 0901, s. 505.
[467] Նույն տեղում, էջ 479:
[468] Նույն տեղում, էջ 511:
[469] Նույն տեղում, էջ 560:

անվանացանկերը առանց բացառությունների թվարկված են 5 սյունյակով: Եթե գյուղը աչքի է ընկել քրիստոնյաների և մահմեդականների համատեղ բնակությամբ, ապա որպես կանոն (չհաշված մի քանի դեպքեր) առաջինը նշվել են մահմեդաբնակների անունները, որոնք տարանջատվել են տվյալ դեպքում քրիստոնյա բնակչությունից: Բաց այդ, քանակական թվականները արտացոլված են միայն թվերի տեսքով:

Հարկաբաժնում *իսփենջի* տուրքը հիմնականում արտացոլում է ընտանիքների և ամուրիների քանակը[470], որոնց ընդհանուր գումարը համապատասխանում է անվանացանկում արձանագրված ոչ մահմեդական բնակչության թվին: Կարևոր է հարկացանկում մահմեդական բնակչության արձանագրումը: Բանն այն է, որ *չիֆթի*, կես *չիֆթի*, *բենաքի* և ամուրիների հարկերի ժամանակ նախքան դրանց դրամաչափի ներկայացնելը օսմանյան իշխանավորները մշտապես նշել են, թե համապատասխանաբար մեկ շնչից որքան *աքչե* է սահմանված: Վերջին իրողությունը չի վերաբերում ըստ մեկական *քիլեի* հարկատեսակներին, քանի որ այնտեղ բացի հարկի անունից, տրված է միայն *քիլեի* և դրադիմաց սահմանված դրամաչափը:

Այսպիսով, Վաղարշապատ գյուղի օրինակը ցույց է տալիս, որ օսմանյան իշխանությունները 1728 թ. Երևանի լիվայի աշխարհագիր մատյանում դադարել են հարկային քաղաքականությունը իրականացնել մեղմ ուժի եղանակով և հետզհետե խստացրել են հարկերի գանձումը:

Հարկերի քննությունից պարզվում է, որ Երևանի *լիվայում* առաջնահերթ նշանակություն են ունեցել ցորենի, գարու, բամբակի, բրնձի և այգիների *մաքթուի* վճարի հարկաչափերը: Նկատելի է, որ օսմանյան իշխանությունները հարկերը գրանցելիս թույլ են տվել անճշտություններ, որոնք սակայն, էական ազդեցություն չեն կարողունենալ վերջնական արդյունքի վրա:

Հստակ դրամաչափեր են սահմանվել մասնավորապես *իսփենջի*, *չիֆթի*, կես *չիֆթի*, *բենաքի*, այրիների և մահմեդական ամուրիների դիմաց գանձվող միջոցներից: Բացառություն չեն եղել ըստ մեկական *քիլեի*՝ կորեկի, գարու, ցորենի, սիսեռի, ոսպի, բրնձի և

[470] Հազվադեպդեպքերումնաև այրիներինը:

կտավիատի դիմաց պահանջվող հարկաչափերը: Դրամական հաստատուն արժեքներ են սահմանվել նաև ջրաղացների, *դինգերի*, ձիթհանների, ներկատների հարկերից:

Ըստ սահմանված հարկադրույքների՝ կարելի է եզրակացնել, որ *լիվայում* մեծ տնտեսություն են ունեցել Վաղարշապատ գյուղը և Երևան քաղաքը, որոնց սոցիալ-տնտեսական ներուժը էականորեն տարբերվել է մյուս բնակավայրերից:

## 2.4 1590թ. Երևանի վիլայեթի և 1728թ. Երևանի լիվայի աշխարհագրերի համեմատությունը

Երևանի *լիվայի* 1728 թ. հարկացուցակների քննությունը հնարավորություն է ընձեռում՝ համեմատություն անցկացնել 1590 թ. Երևանի *վիլայեթի* հարկամատյանի տվյալների հետ: Հատկանշական է, որ երկու ժամանակաշրջանի մատյաններում հանդիպում են միայն Երևանի, Կարբիի, Գառնիի, Վեդիի, Ապարանի, Արալքի և Ծարուրի աշխարհագրերը: Ընդ որում՝ Արալքը և Ծարուրը 1590 թ. *քազայի* կարգավիճակ են ունեցել, այնինչ 1728 թ. օսմանյան իշխանությունների կողմից գրանցվել են իբրև *նահիե*, ինչը նշանակում է, որ այդ վարչա-քաղաքական միավորների նշանակությունը XVIII դարի աշխարհագրում նվազել է: Պատկերն այլ է, Երևանի և Կարբիի պարագայում: Առաջինը, թեպետ 1728 թ. *քազայի* կարգավիճակին, բաղկացած լինելով միայն քաղաքից՝ 1590 թ. համեմատությամբ զուրկ է եղել գյուղերից, իսկ Կարբին, որը XVI դարի աշխարհագրում եղել է *նահիե*, XVIII դարի խնդրո առարկա ընդարձակ հարկացուցակում՝ ներկայացվել է որպես *քազա*: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ 1728 թ. Երևանի *լիվայի* մատյանում բացակայում են 1590 թ. Երևանի քազայի մաս կազմող Արմավիրը, Աբնիքը (՞) և Ծարաբխանեն: XVIII դարի աշխարհագրում նշված չէ նաև Թալինը:

Հատկանշական է, որ Երևանի *լիվայի* հարկացուցակները չեն սկսվում *քանուննամեի* շարադրանքից: Բացի այդ, շարադրված նյութերից կարելի է եզրակացնել, նրանց միջև առկա

տարբերություններից մեկը կապված է հպատակների անվանացանկի գրանցման կարգերին: Բանն այն է, եթե XVI դարի Երևանի *վիլայեթի* ընդարձակ մատյանում անձնանունները շարադրվել են 7 սյունյակով, ապա XVIII դարում՝ 5: Սակայն սկզբունքի տարբերություն չի նկատվում խառը բնակչությամբ աչքի ընկնող գյուղերի պարագայում, որտեղ երկու դեպքում էլ սկզբնապես առաջնահերթությունը տրվել է մահմեդականների գրանցմանը:

Կարևոր է նաև քանակական թվականների արձանագրման տարբերությունը՝ երբ 1590 թ. դրանք նշվել են տառերով, իսկ 1728 թ.՝ նկատելի են բացառապես թվային արժեքներ:

Ուշագրավ է այն իրողությունը, որ 1590 թ. Երևանի *վիլայեթի* ամբողջ բնակչության մոտավոր թիվը զգալիորեն զիջել է 1728 թ. Երևանի *վիլայեթի* մաս կազմող համանուն *լիվայի* բնակչությանը (44425-ը՝ 69112-դիմաց): Նույնը կարելի է ասել նաև գյուղերի քանակին, որտեղ տեսնում ենք համապատասխանաբար՝ 763-ը 1015-ի հարաբերակցությունը:

Կարելի է արձանագրել, որ ի տարբերություն 1590 թ. Երևանի *վիլայեթի* հարկամատյանի, 1728 թ. *նահիեներում* վկայված են քրդական աշիրեթներ:

Անխոս, երկու ժամանակաշրջանի մատյանների միջև եղած տեղեկությունների համեմատությունը առավելագույնս արտացոլվում է հարկերի ուսումնասիրության ժամանակ: Հարկ է շեշտել, որ գրանցված տուրքերը մեծամասամբ համընկնում են: Ի տարբերություն 1590 թ. Երևանի վիլայեթի հարկամատյանի, 1728 թ. հարկացուցակներում բացակայում են *չիֆթի* մաքթուի, *յայլաքների*, սպանդանոցների, շուկաների, դրամատան, մոմատների դիմաց գանձվող հարկերը: Սրան հակառակ 1590 թ. բացակայել են մահմեդական ամուրիների, այրիների, կես *չիֆթի*, աչքալուսանքի, մարգագետնի, առվույտի, կաղամբի, *դինգերի*, ինչպես նաև՝ դիմաց հանցանքի և ոճրի, բացակայող և կորած ապրանքների, փախած ծառաների և աղախիների գնի, անասունների բեռան՝ ձիու և կովի, ծխի դիմաց սահմանված տուրքերը:

Հատկապես ուշագրավ է 1590 թ. Երևանի *վիլայեթի* ընդարձակ մատյաններում մահմեդական ամուրիներից որևէ հարկատեսակի

բացակայությունը: Հավանաբար, դա պայմանավորված էր կայսրության սոցիալ-տնտեսական առավել բարվոք վիճակով, քան այն եղել է 1728 թ., որի արդյունքում՝ անհրաժեշտություն է եղել նրանցից նույնպես հարկ սահմանել:

Ուշագրավ է, որ 1590 թ. *դաշթիբանիի* և հողի *թափուի*, ինչպես նաև *բաղհավայի* և հարսնության հարկերը հանդիպում եմ միասին, իսկ բամբակի, այգիների, մրգի բանջարանոցների հարկերը ներկայացված են ամբողջական, այլ ոչ թե՝ տասանորդական եղանակով: Նույն դարաշրջանում երբեմն տասանորդ է պահանջվել *չիֆթի* դիմաց, որը բացակայում է 1728 թ. մատյանում:

Հարկատյանների համեմատությունից պարզվում է, որ երկու դարաշրջաններում էլ բացի *իսփենջի* և *բեննաքի* հարկերից, գրեթե յուրաքանչյուր գյուղից սահմանվել են ցորենի, գարու, խոտի, ոչխարների, *դաշթիբանիի* և հողի *թափուի*, ինչպես նաև՝ *բաղհավայի* և հարսնության տուրքերը: Այնուամենայնիվ, եղել են հարկեր, որոնք ժամանակաշրջաններից միայն մեկում են առավել տարածված եղել. 1728 թ. հարկամատյանների շրջանում կարելի է հիշատակել մասնավորապես կտավիատի, անասունների դիմաց գանձվող տուրքերը: 1590 թ. հարկամատյանում իրենց հերթին համեմատաբար առավել հաճախ են հանդիպում կորեկի, փեթակի և *դյոնումի* հարկերը:

Հիմնական հարկատեսակների համատեքստում թե՛ 1590, թե՛ 1728 թթ. արձանագրված տուրքերը նույնպես համընկնում են. երկու շրջաններում էլ առավել բարձր տուրքաչափեր գանձվել են ցորենի, գարու, բամբակի, բրնձի և այգիների *մաքթուի* դիմաց:

Կարևոր է հստակ սահմանված արժեքների համեմատությունը: Նկատելի է, որ *չիֆթի*, *իսփենջի*, *էքինլու բեննաքի* և *ջաբայի* դիմաց սահմանված հարկաչափերը կրկնվում են՝ կազմելով համապատասխանաբար 50, 25, 18 և 12 *աքչե*: Այնուամենայնիվ, նույնը չի կարելի ասել՝ ըստ մեկական *քիլեի* սահմանված հարկադրույքների մասին, որոնց միջև տարբերությունն ակնհայտ է: Եթե 1590 թ. կորեկի, գարու մեկ *քիլեն* գնահատվել է 6, ապա 1728 թ. Երևանի *լիվայում* այն հասել է 20 *աքչեի*: Նույն հերթականությամբ՝ ցորենի 1 *քիլեի* դիմաց 8 *աքչեն* 1728 թ. դարձել է

30, իսկ ոսպի, սիսեռի մեկ *քիլեն՝* 60 *աքչե*: Բրնձի յուրաքանչյուր *քիլե* 30 *աքչեից՝* հասել է նույնպես 60 *աքչեի*: Ինչ վերաբերում է կտավիատի *քիլեի* արժեքին, ապա 1590 թ. այն կազմել է 6, իսկ 1728 թ. Երևանի *լիվայում՝* 100 *աքչե*:

Տարբերվում էին նաև ձիթհանների, ներկատների արժեքները: 1590 թ. դրանցից գանձվել են 60-ական և 1000-ական *աքչե*, այնինչ 1728 թ.ուսումնասիրության առարկա հարկամատյանում՝ համապատասխանաբար 120-ական և 1200-ական *աքչե*:

Կարևոր է ջրաղացների արժեքի համեմատությունը առ այն, որ երկու դարաշրջաններում էլ հիմնականում գանձվել է 30 կամ 60 *աքչե*: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ XVIII դարի *լիվայում* 1 տարվա շահագործման համար հստակ արձանագրված էր 60 *աքչե* գումար, ապա համեմատելով XVI դարի հարկամատյանի հետ, կարելի է եզրակացնել, որ ջրաղացներից սահմանված հարկաչափը փոփոխության չի ենթարկվել՝ ամսական մնալով 5 *աքչե*:

Տարբերություններ կան հարկաբաժնում մասնավորապես ոչ մահմեդական բնակչության քանակի ներկայացման համատեքստում: Տվյալների համադրումից կարելի է նկատել, որ 1728 թ. բնակչության թիվը *իսփենջի* ներքո բաժանվել է հիմնականում երկու մասի՝ ընտանիքների և ըստանհրաժեշտության ամուրիների միջև, այնինչ 1590 թ. հարկամատյանում անկախ ամուրիների առկայությունից՝ *իսփենջ* հարկատեսակի դիմաց արձանագրված էին հարկատուների ընդհանուր թիվը:

Հատկանշական է նաև հարկացանկերում մահմեդական բնակչության արձանագրման տարբերությունը: Բանն այն է, որ 1590 թ. նախքան *չիֆթի*, *բենաքի* և ամուրիների հարկերի դրամաչափի ներկայացնելը, չի նշվել մեկ շնչի դիմաց գանձվող դրամի չափը: Այդ իրողությունները գլխավորապես պայմանավորված են՝ հարկամատյաներ կազմելու գործում Օսմանյան կայսրության մեթոդաբանական փոփոխություններով:

Դատելով ընդհանուր սահմանված հարկաչափերի տվյալներից՝ կարելի է փաստել, որ 1728 թ. Երևանի *լիվայում* ամենաբարձր հարկադրույքները (բացառությամբ Վաղարշապատ գյուղի) զիջել են

1590 թ. գրանցված շրջանների հարկաչափերին, ինչը փաստում է սոցիալ-տնտեսական ավելի ցածր կարողությունների մասին:

Այսպիսով, երկու դարաշրջանի մատյանների համեմատությունից պարզ է դառնում, որ նրանց միջև կան ինչպես ընդհանրություններ, այնպես էլ՝ տարբերություններ: Առաջին հերթին կարելի է առանձնացնել հարկացուցակների գրանցման սկզբունքները: Իշխանության ներկայացուցիչները երկու դեպքում էլ խառը բնակչության առկայության դեպքում պահպանել են առաջնահերթ մահմեդականներին նշելու միտումը: Սակայն քանակական թվականների գրանցման գործում նկատելի է սկզբունքային տարբերություն. 1590 թ. օսմանյան իշխանությունները դրանք գրանցել են տառային, իսկ 1728 թ.՝ թվային արժեքներով: Առկա տարբերություններից է նաև ըստ սյունյակների՝ հարկատուների անձնանունների արձանագրումը:

Կարելի է փաստել, որ երկու դարաշրջանում ամենամեծ եկամուտը ստացվել է ցորենի, գարու, բամբակի, բրնձի և այգիների *մաքթուի* դիմաց գանձվող հարկաչափերից, որոնց մշակության համար եղել են բարենպաստ պայմաններ: Ընդհանրություններ են գրանցվել նաև *չիֆթի*, *իսփենջի*, *էքինլու* և *ջաբա* բեննաքի դիմաց սահմանված տուրքաչափերի համատեքստում: Սակայն նույնը չի կարելի ասել՝ ըստ մեկական *քիլեի* դրամաչափերի քննությունից, որից պարզվում է, որ դրամաչափերը խիստ փոփոխվել են:

Տարբերվել են նաև ձիթհանների, ներկատների արժեքները: 1590 թ. դրանցից գանձվել են 60-ական և 1000-ական *աքչե*, այնինչ 1728 թ. ուսումնասիրության առարկա հարկամատյանում՝ համապատասխանաբար 120-ական և 1200-ական *աքչե*: Ինչ վերաբերում է ջրաղացների արժեքի համեմատությանը, ապա երկու դարաշրջանում հիմնականում սահմանված է եղել 30 կամ 60 *աքչե*:

## ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ. ԹԻՖԼԻՍԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԱՇՈՑՔ, ՏԱՇԻՐ, ՓԱՄԲԱԿ ՆԱՀԻԵՆԵՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ (ԵՐԵՎԱՆԻ ԼԻՎԱՅԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ)

Օսմանյան կայսրության կողմից Այսրկովկասի նվաճված տարածքների թվում մեծ հետաքրքրություն է ներկայացնում XVIII դարում Թիֆլիսի *վիլայեթին* պատկանող երկրամասերից Աշոցքի, Տաշիրի, Փամբակի *նահիեների* հարկացուցակների ուսումնասիրությունը: Թեպետ այդ *նահիեները* նշյալ ժամանակահատվածում Երևանի *լիվայի* սահմաններից դուրս են գտնվել, այնուամենայնիվ, դրանք լինելով հայկական տարածքներ ընդգրկվել են մեր ուսումնասիրության մեջ և նրանց հետազոտությունը օգտակար է Երևանի *լիվայի* հետհամեմատության տեսանկյունից: Մեծ կարևորություն է ներկայացնում այդ տվյալների համադրությունը նույն ժամանակաշրջանի Երևանի *լիվային*, որի շնորհիվ ավելի է ամբողջանում ոչ միայն շրջանների միջև առկա սոցիալ-տնտեսական վիճակի համեմատությունը, այլ նաև երևում է օսմանյան իշխանությունների ընտրովի մոտեցումը տարբեր ոչ մահմեդական *նահիեների* նկատմամբ: Այդ տեսակետից վեր են հանվել հարկամատյաններ կազմելու գործում օսմանյան իշխանությունների գրանցած առանձնահատկություններն ու տարբերությունները:

Վերոնշյալ երեք *նահիեների* քննության համար օգտվելով վրաց հետազոտողների՝ Սերգի Ջիքիայի և Նոդար Ծենգելիայի Թիֆլիսի *վիլայեթի* հանգամանալից ընդարձակ ցուցակներին վերաբերող երկհատոր աշխատությունից՝ հիմք ենք ընդունել օսմաներեն բնագիր տեքստի պատճեն, որը հաջորդում է վրացերեն թարգմանությանը[471]: Օսմաներեն բնագիրը՝ թույլ է տալիս հարկ եղած դեպքում վրացերեն թարգմանության հետ համադրության շնորհիվ կատարել որոշ ճշգրտումներ:

Աշոցքի (օսմաներեն՝ Քայքուլի) *նահիեի* հարկամատյանը ընդգրկված է գրքի առաջին հատորում[472], իսկ Տաշիրի[473] ու

[471] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 1, გვ. 564-829, წიგნი 2, გვ. 464-727.
[472] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 1, გვ. 810-829.
[473] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 658-664.

Փամբակի[474] աշխարհագրերը համապատասխանաբար՝ երկրորդում: Դրանք այլ ընդարձակ աշխարհագիր մատյանների նման կարևոր սկզբնաղբյուր լինելով հատկապես ժողովրդագրության և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման համար հնարավորություն են ընձեռում պարզել՝ մասնավորապես *նահիեների* բնակեցվածությունը, բնակավայրերի քանակը, որոշարկելու հարկատուների և ընտանիքների թիվը, ազգաբնակչության էթնիկ կազմը, գյուղերից գանձվող հարկերը և այլն:

Մինչ *նահիեների* 1728 թ. օսմանյան հարկամատյանները ներկայացնելը, նախ հարկ ենք համարում տալ *նահիեների* աշխարհագրական դիրքին առնչվող որոշ տեղեկություններ: Այդ առումով օգտագործել ենք Վրաց թագավոր Վախթանգ 6-րդի որդի՝ արքայազն Վախուշտիի կազմած քարտեզը[475]: Ըստ քարտեզի տվյալների՝ XVIII դարում Աշոցքը արևելքում սահմանակցել է Քարաքաջի լեռներին, որին արևմուտքում հարել է Տաշիրը, հյուսիսում հարելով՝ Դմանիսի կիրճին, հյուսիս-արևելքում՝ Սոմխեթի վարչական միավորին, հարավ-արևելքում՝ Սանահինի և Հաղպատի վանքերին, հարավում՝ Դեբեդ գետին[476]: Ինչ վերաբերում է Փամբակին, ապա գտնվելով Տաշիրից հարավ ընկած տարածքում, նրա սահմանները մասնավորապես հյուսիսում հասել են Դեբեդ գետի մերձակայք, իսկ հարավում՝ Երևանի շրջանին[477]:

Հարկ է նշել, որ Աշոցքի, Տաշիրի, Փամբակի *նահիեների* հարկացուցակների քննությունը ստորև ներկայացված է՝ ըստ շրջանների նշյալ հաջորդականության:

Աշոցքի *նահիեն* 1728 թ. Թիֆլիսի *վիլայեթի* աշխարհագրում բաղկացած է եղել թվով 47 գյուղից, որոնցից էին Ղազանչի, Քիլաջա, Մեծ Օրթալու, Փոքր Օրթալու, Բեյ Մելիքքենդի, Մերինջե[478], Մարգարե[479], Սահակքենդի, Ջուսքենդի, Հալիբ, Ջանի Թեփե, Քասաբքենդի, Սեքութլու, Թերզի Օղլու, Ազիզ Օղլու, Մարտիրոս,

[474] Նույն տեղում, էջ 664-680:
[475] Маруашвили Л., Вахушти Багратиони, его предшественники и современники. М., 1956, карта вкладыш из Второго (1742-1743) атласа Вахушти, “Карта Картли к югу от реки Куры”.
[476] Նույն տեղում:
[477] Նույն տեղում:
[478] Այն հայտնի է եղել նաև՝ Յուզբաշի անվամբ:
[479] Այն հայտնի է եղել նաև՝ Ալավերդի անվամբ:

Ազիզբեյը, Քուրդգունի, Փանոս, Բեյքենդի, Կիրակոս, Սելիմքենդի, Ձեքիր, Խաչքենդի, Քոջա, Ջիգրաշեն, Քեշիշքենդի, Մինաթ, Բիզաք, Նուրիքենդի, Մասիրքենդի, Բուլաքքենդի, Քութարզա, Չիքքենդի (՞), .....քենդի, Աբդուլլաքենդի, Յենիչերքենդի, Դուդլուրմու[480], ....., Փոքր Ղարղարա, Քիլաջա, Աքբուլաք, Օքսուզքենդի, Օթար[481], Խան, .....քենդի և Քուրիչայ բնակավայրերը: Սրանց շրջանում նկատելի է նաև 2 *մազրայե* և մի շարք *յայլաքներ*:

Գյուղերի թվարկումից երևում է, որ Աշոցքում Քիլաջա անունով 2 գյուղ է եղել: Բացի այդ, *նահիեի* ուսումնասիրությունից պարզվում է, որ վերոնշյալ գյուղերից Հալիբը, Ջանի Թեփեն, Սեքութլուն, Ազիզբեյը, Քուրդգունին, Մինաթը, Բիզաքը, ըստ հաջորդականության՝ Քումարզայից մինչև Դուդլուրմու, ինչպես նաև՝ Խան գյուղերը դատարկված էին:

Ըստ 1728 թ. օսմանյան հարկացուցակի տվյալների՝ Աշոցքի 34 բնակեցված գյուղերում ճնշող մեծամասնությունը քրիստոնյաներ են եղել: Մահմեդականները քրիստոնյա բնակչության հետ համատեղ բնակվել են միայն Քասաբ, Թերզի Օղլու, Ազիզ Օղլու, Սելիմ, Ջիգրաշեն գյուղերում: Այն ենթադրում է, որ *նահիեում* սոսկ մահմեդաբնակ որևէ գյուղ գոյություն չի ունեցել:

Քրիստոնեաբնակ 29 գյուղում նկատելի է հետևյալ պատկերը: Ղազանչիում արձանագրվել է 190, Քիլաջայում՝ 25, Մեծ Օրթալուում՝ 85, Փոքր Օրթալուում՝ 59, Բեյ Մելիքենդիում՝ 40, Մերինջեում՝ 45, Մարգարեում՝ 42, Սահակքենդիում՝ 13, Ջուսքենդիում՝ 50, Մարտիրոսում՝ 32, Փանոսում՝ 33, Բեյքենդիում՝ 60, Կիրակոսում՝ 8, Ձեքիրում՝ 34, Խաչքենդիում՝ 58, Քոջայում՝ 146, Քեշիշքենդիում՝ 30, Նուրիքենդիում՝ 29, Մասիրքենդիում՝ 47, Բուլաքքենդիում՝ 7, Դուդլուրմուում՝ 51, .....՝ 31, Փոքր Ղարղարայում՝ 18, Քիլաջայում՝ 7, Աքբուլաքում՝ 28, Օքսուզքենդիում՝ 25, Օթարում՝ 63, .....քենդիում՝ 14 և Քուրիչայում՝ 51 անձ: Ինչ վերաբերում է խառը բնակչությամբ աչքի ընկած գյուղերին, ապա Քասաբում գրանցվել է 10 քրիստոնյա, 6 մահմեդական, Թերզի Օղլուում՝ 30 քրիստոնյա, 5 մահմեդական, Ազիզ Օղլուում՝ 21 քրիստոնյա, 10 մահմեդական, Սելիմում՝ 27

[480] Այն հայտնի է եղել նաև՝ Մազսաջ անվամբ:
[481] Օթարը տվյալ գյուղի մյուս անունն էր, այնինչ հիմնական անունը եղծված է:

քրիստոնյա, 1 մահմեդական և Ջիգրաշենում՝ 33 քրիստոնյա, 1 մահմեդական:

Ուշագրավ է, որ Ազիզ Օղլուում գրանցված մահմեդականները եղել են ոչ թե բուն գյուղում, այլ վերջինիս պատկանող *քըշլաքի* համար նախատեսված բնակավայրում:

Կարելի է արձանագրել, որ հարկատուների մեծությամբ ակնհայտորեն աչքի են ընկել Ղազանչի և Քոջաբնակավայրերը, իսկ ամենաքիչ հարկատուները գրանցվել են Բուլաքքենդիում և հաջորդականությամբ երկրորդ Քիլաջայում:

Բերված տվյալների համաձայն՝ քրիստոնյա հարկատուները ընդհանուր առմամբ կազմել են 1442, այնինչ մահմեդականները՝ 23 անձ: Հարկ է ընդգծել, որ թե՛ քրիստոնյա, թե՛ մահմեդական բնակչության շրջանում ամուրիների առկայության մասին որևէ վկայություն չկա, ինչը նշանակում է, որ գրանցված հարկատուների չափը արտացոլում է նաև ընտանիքների քանակը: Այսպիսով՝ ամբողջ *նահիեում* եղել է շուրջ 7210 քրիստոնյա և 115 մահմեդական:

Օսմանյան աշխարհագրից երևում է, որ *նահիեում* եղել է 2 եկեղեցի: Դրանք գտնվել են Մեծ և Փոքր Օրթալու գյուղերում: Բացի այդ, գրանցված հարկատուների շրջանում նկատելի են նաև մի շարք հոգևորականներ, որոնք *նահիեում* 30-ից ավելին էին: Նրանց թիվը գյուղերում տատանվել է հիմնականում 1-ից 4-ի միջև:

*Նահիեում* մեծ թիվ են կազմել ջրաղացները, որոնք ընդհանուր առմամբ 68-ն էին: Հարկացուցակի վկայությամբ՝ դրանցից միայն 11-ն է եղել չգործող: Ջրաղացներից բացի նկատելի են նաև ձիթհանների առկայությունը, որոնք ընդամենը 4-ն էին:

1728 թ. 47 գյուղ է ընդգրկել նաև Տաշիրի *նահիեն*: Հիշատակվում են Քաթերլի, Քըզըլ Ձիյարեթ, Վալեդքենդի, Ռաղնեթ, Աղզը Բյույուք, Քարաքիլիսե, Դերգերքենդի, Ծիշ Թեփե, Բալլի Քիա, Սիրմեբադ, Քըզըլքիլիսե, Թելլի, Հայդարբեյ, Դոլբանդլու, Աջթաշ, Շեքութլու, Բալջիքլի, Բալլի Քիա, Փափախչի, Աթմաքչի, Լաջուրդ, Չարդաքլու, Չաքմաքլու, Քարաքիլիսե, Մունլա Քասեմ, Սուլեյմանքենդի, Դիղավիր, Չալաքենդի, Հակոբքենդի, Քոշաքիլիսե, Ազադ Քիբադի, Դելի Քըլըջ, Դելի Քըլըջ, Քամիշ, Քեշիշքենդի, Ջոքա, Սարիխամ, Թենգիջաք (՞), Սարոքենդի, Իրքա Չաբուք (՞), Քարաքալա,

Քարաքալա, Քարաբուլաք, Սարիքալա, Միսխանա, ինչպես նաև՝ Հակոբլու և Վարդանան բնակավայրերը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Տաշիր *նահիեի* հարկացուցակն ուսումնասիրելիս, սկզբնապես կարելի է հաշվել 45 գյուղ, սակայն անցում կատարելով Փամբակ *նահիեի* 1728 թ. օսմանյան հարկացուցակին՝ պարզ դարձավ, որ Տաշիրին պատկանող 47 գյուղից 2-ը՝ Հակոբլու և Վարդանան բնակավայրերը գրանցված են Փամբակ *նահիեի* հարկացուցակի առաջին էջերում[482]՝ համապատասխան գրություններով:

Գյուղերի քննությունը ցույց է տալիս, որ *նահիեում* Բալլի Քիա, Քարաքիլիսե, Դելի Քըլըջ և Քարաքալա անուններով երկու գյուղ է արձանագվել: Ընդ որում՝ ի տարբերություն առաջին երեքի, 2-ական Դելի Քըլըջ և Քարաքալա գյուղերը հանդիպում են մեկը մյուսի հետևից:

Ըստ օսմանյան աշխարհագրի՝ *նահիեի* բնակչությունը ապրել է միայն 18 բնակավայրում, քանի որ 29 գյուղ զուրկ էր բնակչությունից: Վերջիններիս թվին էին դասվում՝ Ծեքութլուից մինչև Միսխանագյուղերը:

Տաշիրի *նահիեում* բնակչությունը կազմված էր ոչ մահմեդական բնակչությունից, որոնք քրիստոնյա էին: Բացառություն էր Աջթաշ գյուղը, որտեղ նկատելի է մահմեդականների առկայություն[483]:

Աշխարհագրի տեղեկություններով՝ Քաթերլիում հաշվառվել է 25 անձ, 14 ընտանիք, Քըզըլ Ձիյարեթում՝ 11 անձ, 10 ընտանիք, Վալեդքենդիում՝ 18 անձ, 10 ընտանիք, Ռաղնեթում՝ 6 անձ, 3 ընտանիք, Աղզը Բյույուքում՝ 10 անձ, 6 ընտանիք, Քարաքիլիսեում՝ 28 անձ, 15 ընտանիք, Դերգերքենդիում՝ 5 անձ, 3 ընտանիք, Ծիշ Թեփեում՝ 10 անձ, 3 ընտանիք, Բալլի Քիայում՝ 10 անձ, 6 ընտանիք, Սիրմեբադում՝ 2 անձ, 1 ընտանիք, Քըզըլքիլիսեում՝ 9 անձ, 3 ընտանիք, Թելլիում՝ 21 անձ, 9 ընտանիք, Հայդարբեյում՝ 12 անձ, 6 ընտանիք, Դոլբանդլուում՝ 22 անձ, 8 ընտանիք, Միսխանայում՝ 2 անձ[484], և Վարդանանում՝ 14 անձ, 10 ընտանիք և Հակոբլուում՝ 15 անձ, 9

---

[482] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 665.
[483] Նույն տեղում, էջ 661:
[484] Առանձին ընտանիքի թվի վերաբերյալ չկա որևէ գրություն, ուստի կարելի է համարել, որ խոսքը 2 ընտանիքի մասին է:

ընտանիք: Ինչ վերաբերում է Աջթաշին, ապա այնտեղ արձանագրվել է քրիստոնյա 14 հարկատու, 6 ընտանիք, ինչպես նաև՝ 2 մահմեդական անձ: Դատելով վերջինների անվան դիմացի գրությունից՝ նրանք եղել են Լոռվաբերդապահներ[485]:

Կարելի է արձանագրել, որ *նահիեում* գրանցված բնակչությունը այնքան էլ մեծ թիվ չի կազմել: Այդպիսով, ամենաշատ հարկատուներով աչքի է ընկել Քարաքիլիսեն, իսկ ամենաքիչ մարդիկ գրանցվել են Սիրմեբադում և Միսխանայում:

Ստացված տվյալների համաձայն՝ *նահիեում* գրանցված քրիստոնյաների թիվը հասել է 234-ի, իսկ ընտանիքներինը՝ 124-ի: Հատկանշական է այն հանգամանքը, որ Տաշիրում անձանունների թվարկումից հետո բացի հարկատուների ընդհանուր թվից, նշված է նաև ընտանիքների քանակը: Ելնելով այն փաստից, որ 1728 թ. Երևանի *լիվայի նահիեների* հարկաբաժնում *իսփենջ* հարկատեսակի դիմաց սովորաբար տրված ընտանիքների և ամուրիների ընդհանուր թիվը համապատասխանում էր հարկատուների ընդհանուր քանակին, ուստի այդ տրամաբանությամբ հակված ենք ենթադրել, որ Տաշիրի *նահիեի* հարկատուների և ընտանիքների միջև տարբերությունը պետք է փաստի ամուրիների գոյության մասին: Այսպիսով, Տաշիրում եղել է 110 ամուրի՝ դրանով քրիստոնյա ընտանիքները կազմել են 124-ը: Ինչ վերաբերում է Աջթաշ գյուղի մահմեդական զինվորականներին, ապա շատ հավանական է, որ պայմանավորված ծառայողական բնույթով, նրանք բնակվել են առանց ընտանիքի, ուստի որևէ հիմք չկա *նահիեում* փաստելու որևէ մահմեդական ընտանիքի առկայության մասին: Հետևաբար՝ ամբողջ *նահիեում* բնակվել է շուրջ 730 քրիստոնյա և երկու մահմեդական:

Տաշիրի *նահիեում* նկատելի է ձիթհանների և ջրաղացների առկայություն: Ձիթհանները արձանագրվել են Քարաքիլիսեում, որոնց թիվը 2-ն էր[486], իսկ ջրաղացները *նահիեում* 3-ն էր, որոնք գտնվել են Վարդանան գյուղում[487]:

Թիֆլիսի *վիլայեթին* պատկանող վերջին ուշագրավ *նահիեն* Փամբակն է: Վերջինս այդ ժամանակամիջոցում բաղկացած է եղել 89

[485] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 661.
[486] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 659.
[487] Նույն տեղում, էջ 665:

գյուղից: Դրանց թվին էին դասվում՝ Քարաքիլիսե, Քյուսալար, Կարբի, Վանք, Քաչիր, Սադմասաքլու, Քիհալու, Հայդարբեյ, Բուզաբդալ, Փաշաջըք, Դերբաշ, Արմուդլու, Արմուդլու, Քըշլաքքենդի, Քենաջի Քըշլաղը, Հոջա Բաջի (՞), Քուզայի Քըշլաղը, Դայիմ (՞), Բունսուր, Քոջաքենդի, Թեքե Քիսալու, Ալիմանլու, Սիլքի Քըշլաղը, Քյոշաբուլաք, Բաշհարանա, Քադիրքուլի, Անանիա, Ջեջեխան, Բաբախանլու, Նուրսալու, Աքբուլաք, Քյոք Օդա, Ներքին Քարադերզի, Վերին Քարադերզի, Ալալաշան, Ներքին Չեքմեմալ, Վերին Չեքմեմալ, Կարբել Ուզուն, Ծիլավեր, Սալմանլու, Թիաթլու, Ուլաբուրաթ (՞), Քալթաքչի, Բալջիքլի, Թաջդար, Բեյքենդի, Աբդիբեյ, Հալավար, Քարաչոբան, Գյումրուք, Ջանդար, Աքբուլաք, Գյոք Բողուշ, Քարաքիլիսե-Սարիբար, Հուբուր, Կաչաղան, Նորաշեն, Թեքնե, Օրթաբաշ, Օդաքըշլաք, Մունլաքիլիսե, Սարիբար, Սարիչալո, Դերեքենդի, Գյորբուլաք, Սիրահմեդ, Քարաբունա, Էմեքլու, Գյոլաբուլաք, Ամիլիք, Քարաղաջի, Համամլու, Քոջաքարա, Սեբիդիք, Քոջա Ալի Քըշլաղը, Ալի Հալո, Հասան Քըշլաղը, Այաշլու, Քադիմ Ալի, Դուղանլու, Թավշանլու, Հաջիքարա, Ծեքութլու, Հայդար Քարահանլու, Քոլուջա, Ամիրհանլու, Ջանջանլու (՞), Արխար (՞) և Մոբադալ բնակավայրերը: Գյուղերի կողքին արձանագրվել է նաև 7 *մազրայե*:

Փամբակի *նահիեում* նկատելի է, որ Արմուդլու անվամբ 2 գյուղ է եղել, որոնք նշվել են կողք կողքի: Հարկ է նկատել, որ Քարաքիլիսեից բացի, հանդիպում է նաև Քարաքիլիսե-Սարիբար գյուղանունը, որի վերջին բաղադրիչը գյուղի երկրորդ անվանումն էր:

Գյուղերի ուսումնասիրությունից պարզ են դառնում նաև ուշագրավ տեղեկություններ, որոնք վերաբերել են Հայդարբեյ և Ծուլավեր գյուղերին: Ի դեպ, գրությունները, որոնք թվագրվել են 1728 թ. փետրվարի 1-ով, հաջորդել են նշյալ բնակավայրերի հարկաբաժիններին: Ըստ այդ տվյալների՝ Հայդարբեյ և Ծուլավեր գյուղերի միջև ժայռ է եղել և աղբյուր հոսել, ավելին՝ այն վերջինիս կողմով Հայդարբեյ գյուղն էր հոսում: Սահմանագծի ջնջվածության հետևանքով գյուղերը հին ձևով են առանձնացվել [488]:

[488] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 667.

Հաղորդվում է նաև, որ Հայդարբեյ գյուղացիները տնտեսության համար աշխատունակ են եղել, իսկ գյուղի հարկատուները գանձել են նաև Շուլավերի հարկերը[489]:

Նշյալ 89 գյուղերի շրջանում մեծ թիվ էին կազմում բնակչությունից զուրկ բնակավայրերը, որոնք ընդհանուր 36-ն էին: Այդպիսիներից էին՝ Արմուդլուից մինչև Ջեջեխան, Օդաքըշլաքից մինչև Համամլու, Քոջա Ալի Քըշլաղըից մինչև Հաջիքարաընկած գյուղերը, ինչպես նաև՝ Զանջանլու (՞) գյուղը:

Օսմանյան աշխարհագիրը կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև *նահիեի* ժողովրդագրական պատկերի համատեքստում: Պարզվում է, որ Փամբակում բնակվել են ինչպես քրիստոնյաներ, այնպես էլ՝ մահմեդականներ: Երկու տարբեր կրոնին պատկանող բնակիչները հիմնականում ապրել են առանձին և միայն Նուրսալու, Վերին Չեքմեմալ և Օրթաբաշ գյուղերում՝ համատեղ:

Սոսկ քրիստոնեաբնակ գյուղերը թվով 15-ն էին: Դրանք էին՝ Քարաքիլիսե (47 անձ, 26 ընտանիք), Քյոսալար (27 անձ, 15 ընտանիք), Վանք (25 անձ, 10 ընտանիք), Սադմասաքլու (14 անձ, 4 ընտանիք), Հայդարբեյ (13 անձ, 6 ընտանիք), Բուզաբդալ (15 անձ, 12 ընտանիք), Փաշաջըք (7 անձ, 3 ընտանիք), Քյոք Օդա (29 անձ), Թիաթլու (6 անձ, 1 ընտանիք), Ուլաբուրաթ (6 անձ), Քալթաքչի (15 անձ), Բեյքենդի (18 անձ), Հաջիքարա (30 անձ), Շեքութլու (13 անձ) և Արխար (՞) (1 անձ):

Ամբողջությամբ մահմեդաբնակ գյուղերում պատկերը հետևյալն է՝ Կարբիում արձանագրվել է՝ 9, Քաչիրում և Քիհանլուում՝ 11-ական, Դերբաշում՝ 16, Ջեջեխանում և Բաբախանլուում՝ 2-ական, Աքբուլաքում՝ 9, Ներքին Քարադերզիում՝ 3, Վերին Քարադերզիում՝ 4, Ալալաշանում՝ 9, Ներքին Չեքմեմալում՝ 10, Կարբել Ուզունում՝ 14, Շիլավերում՝ 4, Սալմանլուում՝ 9, Բալջիքլիում և Թաջդարում՝ 11-ական, Աբդիբեյում՝ 20, Հալավարում՝ 23, Քարաչոբանում՝ 14, Գյումրուքում՝ 7, Ջանդարում՝ 36, Աքբուլաքում և Գյոք Բողուշում՝ 7-ական, Քարաքիլիսե-Սարիբարում՝ 12, Հուբուրում՝ 20, Կաչաղանում՝ 12, Նորաշենում՝ 4, Թեքնեում՝ 6, Համամլուում՝

[489] Նույն տեղում:

16, Քոջաքարայում՝ 8, Սեբիդիքում՝ 12, Հայդար Քարահանլուում՝ 18, Քոլուջայում՝ 34, Ամիրհանլուում՝ 11 և Մոբադալում՝ 21 անձ:

Խառը բնակչությամբ աչքի ընկած Նուրսալուում՝ արձանագրվել է քրիստոնյա 10 անձ, 4 ընտանիք և 2 մահմեդական, Վերին Չեքմեմալում՝ 5 քրիստոնյա, 3 մահմեդական և Օրթաբաշում՝ 3 քրիստոնյա, 4 մահմեդական անձ:

Հատկանշական է, որ վերջին գյուղի քրիստոնյա և մահմեդական հարկատուների հարաբերակցության ճշգրտումը հարուցել է որոշ դժվարություններ: Բանն այն է, որ Օրթաբաշ գյուղի հարկաբաժնում *իսփենջի* հարկից բացի, նշված լինելով նաև *չիֆթ* և *բենաքի* տուրքերը, ի տարբերություն Նուրսալուի և Վերին Չեքմեմալի, չկա որևէ գրություն, որի շնորհիվ պարզ կդառնար նրանց առանձին թիվը[490], ուստի պետք է փորձ արվեր կողմնորոշվել անձնանուններից. որոնք են՝ Շահնազար՝ որդի Ասլամազի, Սարուխան՝ նրա որդին, .....՝ որդի Մարտիրոսի, Նուր՝ որդի Քուլիի, Վելի՝ որդի Քուլիի, Աղալի՝ նրա որդին, Վելին նրա որդին[491]: Սակայն, հաշվի առնելով այն փորձը, որ արձանագրված Քուլի, Վելի անունները կարող էին տարածում ունենալ ինչպես քրիստոնյա, այնպես էլ՝ մահմեդական բնակչության շրջանում, ուստի ճիշտ է բավարարվել միայն առաջին երեք անձանց անուններով, որոնց քրիստոնյալինելը որևէ կասկած չի հարուցում:

Ուշագրավ է նաև Սալմանլու գյուղի օրինակը[492]: Թեպետ արձանագրված թվով 9 հարկատուի անուններից (Սերդար՝ որդի Թաթանի, Ասլամազ՝ նրա եղբայրը, Սահակ՝ որդի Քուլիխանի, Վելիխան՝ նրա եղբայրը, Օհան՝ որդի Խաչիկի, Ալի-Ռեզա՝ որդի Ռոստոմի, .....՝ որդի Սարգսի, Բայդուր՝ որդի Սահակի, Մելիք՝ որդի Պետրոսի) գրեթե բոլորը վկայում են նրանց քրիստոնյալինելու մասին, այնուամենայնիվ, հարկաբաժնում ոչ մի վկայությունը չկա *իսփենջի* հարկի մասին. փոխարենը հիշատակվում է *չիֆթի* և *բենաքի* (*էքինլու*) տուրքերը[493]: Հետևաբար՝ ամենայն հավանականությամբ, խոսքը վերաբերում է մահմեդականություն ընդունած

[490] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 675.
[491] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 675.
[492] Նույն տեղում, էջ 671-672:
[493] Նույն տեղում, էջ 672:

քրիստոնյաներին, ուստի Սալմանլու գյուղը դիտել ենք որպես ամբողջովին մահմեդաբնակ:

Մեկ այլ կարևոր իրողություն կապված է օսմանյան իշխանությունների որոշ անճշտություններին, որոնք վերաբերել են հարկատուների թվին: Այսպես օրինակ՝ ըստ քրիստոնեաբնակ Գյոք Օդա գյուղի հարկատուների ցանկի, նրանց թիվը կազմել է 25 մարդ, սակայն հանրագումարով տրված է 29[494], որն էլ հարկերի հաշվումի համատեքստում վերջնական արդյունքն էր: Դրան զուգահեռ, նկատելի է նաև հակառակ գործընթացը: Հալավարում թեպետ գյուղացիների անվանացանկում թվարկվում է 24 անձնանուն, սակայն ընդհանուր հաշվարկում նշվել է 23[495]: Հանրագումարով 1 անձ պակաս է արձանագրվել նաև մահմեդաբնակ Գյոք Բողուշում[496]: Ըստ այդ տրամաբանության՝ հարկատուների թիվը ըստ գյուղերի նշելիս, հիմք ենք ընդունել վերջնական արդյունքը:

Ի մի բերելով *նահիեում* արձանագրված մարդկանց թիվը՝ ստացվում է, որ քրիստոնյա հարկատուները 284-ն էին, իսկ ընտանիքները՝ 201-ը: Հետևելով Տաշիրի *նահիեի* ամուրիների քանակը որոշարկելու սկզբունքին՝ Փամբակում եղել է ընդհանուր 83 քրիստոնյա ամուրի: Ինչ վերաբերում է մահմեդականներին, ապա նրանք կազմել են *նահիեում* մեծամասնություն և նրանց ընտանիքները 396-ն էին, քանի որ ընդհանուր գրանցված 433 անձանցից 37-ը ամուրի էր: Այսպիսով, *նահիեում* կարելի է հաշվել շուրջ 1088 քրիստոնյա և 2017 մահմեդական:

Թեպետ մահմեդաբնակ գյուղերի գերազանցող քանակին, այնուամենայնիվ, *նահիեում* քրիստոնյաները խիտ բնակչություն են կազմել, որի վառ ապացույցը քրիստոնեաբնակ Քարաքիլիսե գյուղն էր, որը աչքի է ընկել ամենամեծ հարկատուներով:

*Նահիեի* հարկացուցակում հանդիպում են նաև բնակիչների կողմից շահագործված ջրաղացների և ձիթհանների մասին տեղեկություններ: Ըստ այդ տվյալների՝ ջրաղացները *նահիեում* 28-ն էին, որոնցից միայն 6-ն էին գտնվում ավեր վիճակում: Ինչ վերաբերում է ձիթհաններին, ապա դրանք ընդամենը երկուսն էին:

---

[494] Նույն տեղում, էջ 670:
[495] Նույն տեղում, էջ 673:
[496] Նույն տեղում, էջ 674:

Օսմանյան հարկամատյաններում անքակտելի մաս է կազմում սահմանված հարկաչափերի ուսումնասիրությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տուրքերը Աշոցքում, Տաշիրում և Փամբակում հիմնականում համընկնում են, ուստի դրանց քննությունը ստորև ներկայացված է միասնական կարգով:

Կարելի է արձանագրել, որ 3 *նահիեում* էլ հանդիպում են *իսփենջի*, ցորենի, գարու, ոչխարների, խոզերի, խոտի, յուղի, փեթակի, հարսնության, *դաշթիբանիի* և հողի *թափուի*, ջրաղացների, ձիթհանների, ինչպես նաև՝ *բաղիավայի*, հանցանքի և ոճրի, բացակայող և կորած ապրանքների, ընդհանուրի և *խասսի բեյթ-ուլ մալի* դիմաց սահմանված հարկատեսակները: Բացի այդ, տարածված է եղել օրավար հողի մշակության դիմաց սահմանված դրամաչափը, որը պայմանավորված հողի բերրիությամբ, փոփոխական կերպով տատանվել է 20-ից 250 *աքչեի* միջև:

Այնուամենայնիվ, եղել են նաև մի շարք հարկեր, որոնք 3 *նահիեում* տարբերվել են միմյանցից: Աշոցքի *նահիեում* այդպիսիներից էին *բեննաքի*, կալսված ցորենի, շուկայում օրավարձով աշխատելու և նախնական գնահատմամբ *քիլեի* և ոչխարի փարայի հարկերի արժեքի դիմաց գանձվող միջոցները:

Ի տարբերություն վերջին հարկերի, Տաշիրը աչքի է ընկել աշորայի, կորեկի և *քըշլաքի* դիմաց սահմանված տուրքերով: Ինչ վերաբերում է Փամբակին, ապա այնտեղ տեղ գտած հարկերը հիմնականում նույնն էին, ինչ Տաշիրինը՝ բացառությամբ ամուրիների և *չիֆթի* հարկերից, որոնք չեն հանդիպում նախորդ 2 *նահիեում*:

Ուշագրավ է *բեննաքի* հարկը, որը բացակայում է Տաշիրում: Եթե Աջթաշ գյուղում գտնվող զինվորներից այն չպետք է պահանջվեր, ապա անհասկանալի է դրա բացակայությունը 1 մահմեդական հարկատուով աչքի ընկած Հակոբլու գյուղի պարագայում: Ենթադրաբար՝ այն կապված է օսմանյան իշխանությունների անփութությամբ:

Վավերագրերի քննությունը ցույց է տալիս, որ 3 *նահիեում* բարձր են եղել *իսփենջի*, ցորենի և գարու տուրքաչափերը: Տվյալների համեմատությունից երևում է, որ Աշոցքում նշյալ 3

հարկից ամենաբարձր արժեքը գանձվել է հիմնականում գարու դիմաց սահմանված հարկաչափից, իսկ Տաշիրում և Փամբակում՝ *իսփենջի* և ցորենի հարկերից, որոնց դրամաչափերը փոփոխական կերպով գերազանցել են մեկը մյուսին:

Տաշիրում և Փամբակում *իսփենջի* արժեքի բարձր լինելը առաջին հերթին պայմանավորված էր գարու և ցորենի ոչ առատ պաշարներով, ուստի տրամաբանական է, որ խիտ բնակչության պարագայում, դրա արժեքը պետք է գերազանցեր մյուս երկու հարկադրույքին: Հատկանշական է, որ Աշոցքում նման իրողության բացակայությունը ավելի քան օրինաչափ է, քանի որ *նահիեին* պատկանող գյուղերի ընդհանուր սոցիալ-տնտեսական ներուժը շատ ավելի բարձր էր:

Աշոցքի, Տաշիրի և Փամբակի *նահիեներում* որոշ հարկատեսակների դիմաց օսմանյան իշխանությունները հստակ սահմանել էին նրանց դրամական արժեքները: *Իսփենջի* դիմաց յուրաքանչյուր հարկատուից գանձվել է 120 *աքչե*: Մահմեդական ամուրիներից սահմանվել է 30, իսկ *բեննաքի* հարկաչափը կազմել է 60 *աքչե*: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փամբակում մահմեդաբնակ գյուղերի հարկերը ճնշող մեծամասնությամբ ներկայացվել են ընդհանուր, իսկ մնացած դեպքերում՝ *բեննաքի* հարկը գրանցվել է *չիֆթի* տուրքի հետ միասին, ուստի *բեննաքի* հարկի դրույքաչափի հարցում հիմք է ծառայել Աշոցքի *նահիեի* օրինաչափությունը, քանի որ Փամբակում համապատասխան արժեքի ուսումնասիրությունը գրեթե անլուծելի է: Անշուշտ, այն վերաբերում է նաև *չիֆթի* դրամաչափին:

120 *աքչե* է պահանջվել մեկական ջրաղացից: Ցորենի և գարու ամեն մի *քիլեն* գնահատվել է համապատասխանաբար՝ 20 և 15 *աքչե*: 15 *աքչե* է եղել Աշոցքի *նահիեում* կալսված ցորենի, իսկ Տաշիրի և Փամբակի *նահիեներում՝* աշորայի և կորեկի բերքից ստացված 1 *քիլեի* արժեքը:

Այնուամենայնիվ, հանդիպում են դեպքեր, երբ միևնույն հարկատեսակի դիմաց *նահիեներում* սահմանվել է փոքր-ինչ այլ դրամաչափ: Այսպես օրինակ՝ Աշոցքի և Փամբակի *նահիեներում* հարսնության տուրքից սահմանվել է 120 կամ 180, իսկ Տաշիրում՝

միայն 120 *աքչե*: Հարկաչափի տարբերություն է նկատվում նաև ձիթհաններից գանձվող հարկի պարագայում, երբ Տաշիրի և Փամբակի *նահիեներում* նկատելի է տարեկան 400-ական, իսկ Աշոցքի *նահիեում՝* 600-ական *աքչե*:

*Նահիեների* սոցիալ-տնտեսական դրության գնահատման առումով անչափ կարևոր է *նահիեների* գյուղերի ընդհանուր հարկաչափերի ուսումնասիրությունը: Նյութի քննությունից պարզվում է, որ Աշոցքում ամենաբարձր հարկադրույքը սահմանվել է Ղազանչի գյուղից՝ կազմելով 85000 *աքչե*[497]: *Նահիեի* մնացյալ բնակավայրերում հարկերի ընդհանուր արժեքը տատանվել է 400-ից 52702-ի միջև: Ինչ վերաբերում է Տաշիրի և Փամբակի նույնանման տվյալներին, ապա նկատելի է, որ այդ ցուցանիշները էապես տարբերվում են առաջինից: Այսպես օրինակ՝ Տաշիրում ամենաբարձր հարկը գանձվել է Քարաքիլիսե գյուղից, որը կազմել է ընդամենը 10000 *աքչե*[498]: *Նահիեի* մյուս բոլոր հարկադրույքները հիմնականում զգալիորեն զիջել են Քարաքիլիսեին՝ արձանագրվելով 500-ի և 8260 *աքչեի* սահմաններում: Գրեթե նույն պատկերն է եղել Փամբակում, ուր ամենամեծ տնտեսությունը ունեցել է համանուն գյուղը: Այնտեղ ամենաբարձր դրամաչափը հասել է 15880-ի[499]: Փամբակի այլ գյուղերի սոցիալ-տնտեսական ներուժը գնահատվել է 200-ից մինչև 8230 *աքչե*: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Աշոցքի *նահիեի* տնտեսությունը համեմատած մյուս երկու *նահիեների՝* շատավելի զարգացած է եղել:

Կարևոր է արձանագրել, որ ի տարբերություն Աշոցքի *նահիեի*, հաճախ է հանդիպում այն երևույթը, երբ որոշ գյուղերից գանձվող հարկերը թվարկվում են կողք կողքի, և այնուհետև նշվում է հարկաչափի ընդհանուր գումարը: Այդ պատճառով հնարավորություն չի լինում պարզել, թե ամեն հարկատեսակից որքան *աքչե* է պահանջվել: Հակված ենք կարծել, որ օսմանյան իշխանությունները, տնտեսությունը բավարար մակարդակի չհամարելով, հարկերից գանձվող ընդհանուր գումարը ստիպված են եղել ներկայացնել միջինացված ձևով:

---

[497] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 1, გვ. 811.
[498] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, გვ. 659.
[499] Նույն տեղում, էջ 664:

Տեղեկությունների համեմատության առանցքում ուշադրության է արժանի դատարկված բնակավայրերի քննությունը: Որպես կանոն, գյուղերի՝ հարկատուներից զուրկ լինելու փաստի արձանագրումից հետո ընդհանուր հարկաչափ է սահմանվել: Կարելի է ենթադրել, որ դա օսմանյան իշխանությունների կողմից տվյալ բնակավայրի տնտեսության վճարողունակության գնահատումն էր, որը պետք է կիրառվեր այն պարագայում, երբ գյուղացիները կվերադառնային իրենց տները: Դատելով այն փաստից, որ հիմնականում առավել ցածր հարկադրույքները սահմանվել են դատարկված բնակավայրերից, չի բացառվում, որ դրանք բավականաչափավերվել են:

Բացի այդ, հետաքրքրական է այն հանգամանքը, որ վերոնշյալ 3 *նահիեից* միայն Աշոցքի գյուղերն են աչքի ընկել աշխարհագրական բնույթի տեղեկություններով: Դրանք հիմնականում նկարագրել են, թե տվյալ գյուղի չորսկողմը ինչերով է շրջապատված եղել: Մյուս երկու *նահիեում* նմանատիպ տեղեկություններ չկան:

Աշոցքի *նահիեի* հարկացուցակը առանձնանում է մյուս 2 *նահիեից* նաև նրանով, որ առանձին ներկայացված ընտանիքների կամ ամուրիների մասին վկայություններ չկան: Այդ է պատճառը, որ այնտեղ գրանցված հարկատուների թիվը մեր կողմից նույնացվել է ընտանիքների քանակին:

Ամբողջացնելով *նահիեների* բնակչության տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ Աշոցքը 3 *նահիեի* շրջանում 7325 բնակիչներով աչքի է ընկել մարդկային ամենամեծ ռեսուրսով: Համեմատության համար կարելի է նշել, որ Տաշիրում 1728 թ. եղել է 732, իսկ Փամբակում՝ 3105 մարդ:

Հատկանշական է նաև ընթացիկ շրջանների հարկամատյանների և վրացերեն թարգմանության համեմատության քննությունը: Մասնավորապես նկատելի է, որ որոշ քրիստոնեական անձնանուններ վրացի հետազոտողների կողմից ընթերցվել են ոչ ճիշտ, որը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է եղել անձնանունների համակարգին ոչ բավարար չափով տիրապետելու գործոնով: Բացի այդ, կան մի շարք դեպքեր, երբ հեղինակները թերացել են հետևել անունների՝ օսմաներենի փոխակերպման

օրինաչափությանը և տվյալ անունը մեկ այլ տեղ արձանագրել են այլ կերպ:

Աշոցքի, Տաշիրի, Փամբակի *նահիեների* քննությունը հնարավորություն է ընձեռում համեմատության եզրեր ուրվագծելու՝ նույն ժամանակաշրջանի Երևանի *լիվայում* արձանագրված օսմանյան աշխարհագրի անցկացմանը առնչվող սկզբունքներին:

Առաջին կարևոր հանգամանքներից մեկն այն է, որ Թիֆլիսի *վիլայեթին* պատկանող 3 *նահիեում* միևնույն գյուղում քրիստոնյա և մահմեդական բնակչության արձանագրումը փոքր-ինչ տարբերվում է: Եթե Երևանի *լիվայի* հարկացուցակներում մահմեդական և ոչ մահմեդականների անձնանունները հստակ տարանջատված են, ապա նշյալ 3 *նահիեում* դրանք միասնաբար են ներկայացված:

Առկա տարբերություններից են անձնանունների թվարկումից անմիջապես հետո հարկատուների, ինչպես նաև՝ Տաշիրում և Փամբակում ընտանիքների ընդհանուր թվի արձանագրումը: Առաջին երևույթը հազվադեպ է հանդիպում Երևանի *լիվայի* հարկացուցակներում, իսկ երկրորդի առկայությունը իսպառ բացակայում է: Բացի այդ, Երևանի *լիվայում* ամենևին չի հանդիպում օրավար հողի մշակության համար առանձին սահմանված դրամաչափը, որը բավականին տարածված երևույթ էր Թիֆլիսի *լիվայի* մեզ հետաքրքրող վարչական միավորներում:

Հաջորդ ուշագրավ իրողությունը կապված է սահմանված հարկաչափերին: Հատկանշական է, որ Աշոցքում, Տաշիրում և Փամբակում հանդիպած տուրքերը հիմնականում համընկնում են Երևանի *լիվայի* հարկատեսակների հետ: Երկուստեք տարածված են եղել՝ *իսփենջի*, *չիֆթի*, *բեննաքի*, ամուրիների, ցորենի, գարու, կորեկի, խոտի, փեթակի, հարսնության, *դաշթիբանիի* և հողի *թափուի*, *քըշլաքի*, ոչխարների, ջրաղացների, ձիթհանների, ինչպես նաև՝ *բադիավայի*, հանցանքի և ոճրի, բացակայող և կորած ապրանքների, ընդհանուրի և *խասսի բեյթ-ուլ մալի* դիմաց սահմանված հարկատեսակները: Կարելի է փաստել, որ Երևանի *լիվայի* երկրամասերում բացակայում են խոզերի, կալսված ցորենի, աշորայի, յուղի, նախնական գնահատմամբ *քիլեի* և ոչխարի փարայի

հարկերի արժեքի, շուկայում օրավար աշխատելու դիմաց գանձվող տուրքերը:

Երևանի *լիվայի* մի շարք հարկեր իրենց հերթին են բացակայում Աշոցքում, Տաշիրում և Փամբակում: Դրանց թվին կարելի է դասել՝ կես *չիֆթի*, *դյոնումի*, սիսեռի, ոսպի, կտավհատի, բրնձի, բամբակի, այգիների, մրգի, բանջարանոցների, *հարիջի*, աչքալուսանքի, արոտի, ներկատների, *դինգերի*, բակլայի, մարգագետնի, առվույտի, կաղամբի դիմաց սահմանված հարկադրույքները: Հարկ է նշել, որ թե՛ Երևանի *լիվայում*, թե՛ 3 *նահիեում* տեղ չգտած հարկերը գլխավորապես պայմանավորված են կամ անհրաժեշտ պայմանների անհամապատասխանությամբ, կամ էլ՝ դրանք մշակելու նախադեպի բացակայությամբ:

Հատկանշական է, որ Երևանի ու Թիֆլիսի *վիլայեթի* մաս կազմող խնդրո առարկա շրջաններում առաջնահերթ նշանակություն են ունեցել ցորենի և գարու մշակությունը, որոնք տարբերվել են իրենց բարձր հարկադրույքներով: Թերևս տարբերությունն այն է, որ Երևանի *լիվայում* դրանց կողքին աչքի են ընկել նաև օրինակ՝ բամբակի, բրնձի մշակությունները, որոնց դիմաց սահմանված դրամաչափերը երբեմն առնվազն շատմոտ էին ցորենի և գարու դիմաց պահանջվող գումարին:

Հատուկ կարևորություն է ներկայացնում սահմանված դրամաչափերի համեմատությունը: Աշոցքում, Տաշիրում և Փամբակում *իսփենջի* դիմաց յուրաքանչյուր հարկատուից (այդ թվում՝ ոչ մահմեդական ամուրիներից) պահանջվող 120 *աքչեի*, իսկ Երևանի *լիվայում* արձանագրված 25 *աքչեի* միջև տարբերությունն ակնհայտ է: Ուշագրավ է, որ *իսփենջի* դիմաց պահանջվող երկու դրամաչափերը կիրառելի են եղել նաև այլ շրջաններում: Այսպես օրինակ՝ 120 *աքչե* է սահմանված եղել Գանձակում 1727 թ., իսկ Մորեա կղզում 1716 թ. օսմանցիները պահանջել են 25 *աքչե*[500]: Սակայն հրեաներից պահանջած *իսփենջի* չափը գերազանցել է անգամ 120-ը՝ կազմելով 125 *աքչե*[501]:

[500] İnalcık H., նշվ., աշխ., էջ 607:
[501] Janev V., նշվ., աշխ., էջ 219, Ercan Y., նշվ. աշխ., էջ 387:

Եթե Աշոցքի *նահիեի* օրինակով կարելի է փաստել, որ բեննաքի հարկի չափը 60 *աքչե* է եղել, ապա Երևանի *լիվայում* այն հավասար է եղել 18 *աքչեի*: Մահմեդական ամուրիների հարկը իր հերթին է տարբերվել. 30 *աքչեի* փոխարեն՝ Երևանի *նահիեներում* արձանագրվել է 12 *աքչե*:

Տարբերություններ են նկատելի, ըստ մեկական *քիլեի*՝ սահմանված հարկաչափերի համատեքստում: Եթե առաջին 3 *նահիեում*, գարու և կորեկի յուրաքանչյուր *քիլե* գնահատվել է 15, ապա Երևանի *լիվայում* այն կազմել է 20 *աքչե*: Իսկ ցորենի ամեն մի *քիլեի* արժեքն արտահայտվել է համապատասխանաբար 20 և 30 *աքչե* համադրությամբ:

Ուշագրավ է ջրաղացների և ձիթհանների արժեքների համեմատությունը: Երևանի *լիվայի* մատյանում ջրաղացներից հիմնականում գանձվել է 30 կամ 60 *աքչե*[502], այնինչ Թիֆլիսի *վիլայեթի* նշյալ *նահիեներում* նկատելի է 120 *աքչեի* սահմանումը: Ինչ վերաբերում է ձիթհաններին, ապա Աշոցքում սահմանվել է 600, Տաշիրում և Փամբակում՝ 400-ական *աքչե*, իսկ Երևանի *լիվայում՝* 120 *աքչե*: Հստակ սահմանված հարկադրույքների արժեքի փոփոխությունը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է այն իրողությամբ, որ Օսմանյան կայսրությունը XVIII դարում տարբեր հարկային քաղաքականություն է վարել Թիֆլիսի և Երևանի վիլայեթներին պատկանող վերոնշյալ շրջաններում:

Հարկ է նշել, որ Երևանի *լիվայում* չեն հանդիպում դեպքեր, երբ հարկերը կողք կողքի թվարկված են և միայն վերջում տրված է նրանց ընդհանուր հարկաչափը: Փոխարենը՝ դատարկված գյուղերի պարագայում, երկու դեպքում էլ նշված է տվյալ բնակավայրի դիմաց սահմանված դրամաչափը:

Այսպիսով, 1728 թ. Թիֆլիսի *վիլայեթի* մաս կազմող վերոնշյալ *նահիեների* քննությունը ցույց է տալիս, որ Աշոցքն ու Տաշիրը բաղկացած են եղել 47-ական, իսկ Փամբակը՝ 89 գյուղից: Ամենամեծ բնակչությունը արձանագրվել է Աշոցքում: Ի տարբերություն Աշոցքի ու Տաշիրի, Փամբակում մեծամասնություն են կազմել մահմեդականները:

[502] Կախված այն բանից, թե արժեքը սահմանված էր կես տարվա, թե ամբողջ տարվա համար:

Նշյալ 3 *նահիեի* շրջանում սոցիալ-տնտեսական ներուժով աչքի է ընկել Աշոցքը, ինչը պարզ է դառնում մասնավորապես ընդհանուր հարկաչափերի ուսումնասիրությունից: Բացի այդ, կարևոր է նշել, որ Աշոցքում եղել են ամենաքիչ թվով դատարկված բնակավայրերը և ամենաշատ ջրաղացների ու ձիթհանների շահագործման դեպքերը: Օսմանյան իշխանությունները հստակ դրամաչափեր են սահմանել *իսփենջից*, մահմեդական ամուրիներից, *բենաքից*, ցորենից, գարուց, կալսված ցորենից, աշորայից, կորեկից, ջրաղացներից և ձիթհաններից գանձվող հարկերի դիմաց:

Հատուկ կարևորություն է ներկայացնում Աշոցքի, Տաշիրի, Փամբակի *նահիեների* համեմատությունը նույն թվականի Երևանի *լիվայի* հարկամատյանի հետ: Նախ և առաջ, նկատելի են հարկացուցակների հաշվառման կարգին առնչվող օրինաչափությունների փոփոխություններ, որոնք առնչվում են քրիստոնյա և մահմեդական անձանունների, ինչպես նաև՝ հարկատուների ու ընտանիքների թվի արձանագրմանը: Ուշագրավ է հարկերի համեմատությունը: Կարելի է փաստել, որ երկու տարբերի *վիլայեթին* պատկանող շրջաններում տեղ գրած տուրքերը հիմնականում համընկնում են: Երկու դեպքում էլ տարածված են եղել ցորենի և գարու մշակությունը: Այնուամենայնիվ, էական տարբերություններ են նկատվում հստակ սահմանված հարկաչափերի հարցում, որը պայմանավորված է օսմանցիների որդեգրած հարկային քաղաքականությամբ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով խնդրո առարկա հիմնահարցերը՝ հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

1. Ըստ 1590 թ. հարկամատյանի՝ Երևանի *վիլայեթը* բաղկացած է եղել թվով 7՝ Երևանի, Նախիջևանի, Ծարուրի, Աղչաքալայի, Թալինի, Արալըքի և Օրդուբադի *քազաներից: Քազաներից* 3-ը՝ Երևանը, Նախիջևանը և Օրդուբադը ունեցել են քաղաք և բաժանվել են *նահիեների*, որոնք էլ իրենց հերթին՝ գյուղերի: Ամենաշատ *նահիեներով* աչքի ընկած *քազաները* Երևանն ու Օրդուբադն էին. նրանք ունեին 8-ական *նահիե*, Նախիջևանը՝ 7: Ինչ վերաբերում է մյուս 4 *քազային*, ապա նրանք զուրկ են եղել *նահիեներից* և ներառել են միայն գյուղեր: Բացառությամբ գյուղերի, հաշվի առնելով 1590 թ. Երևանի *վիլայեթի քազաների* և *նահիեների* ընդհանուր թիվը՝ կարելի է արձանագրել, որ Օսմանյան կայսրության իշխանությունները *վիլայեթը* բաժանել են 27 վարչա-քաղաքական միավորի միջև:

Երևանի *լիվան* 1728 թ. բաղկացած է եղել 14 վարչա-քաղաքական միավորից, որոնցից էին՝ Երևանը, Քըրք Բուլաքը, Կարբին, Դարաչիչեքը, Ապարանը, Սուրմալուն, Իգդիրը, Արալըքը, Սադարաքը, Մակուն, Ծարուրը, Վեդին, Գառնին և Ծորագյալը: Դրանց շրջանում *քազայի* կարգավիճակ են ունեցել Երևանը և Կարբին: Հատկանշական է, որ առաջինը աշխարհագիր մատյանում ենթադրել է միայն քաղաք, իսկ Կարբին ներառել է քաղաք և դրան ենթակա գյուղեր: Մնացյալ վարչա-քաղաքական միավորները *նահիեներ* էին, որոնք բաղկացած էին գյուղերից:

Քանի որ մեր հետաքրքրությունների շրջանակից դուրս է գտնվում Թիֆլիսի *վիլայեթի* ամբողջական ուսումնասիրությունը, ուստի բավարարվել ենք միայն Աշոցքի, Տաշիրի և Փամբակի *նահիեների* հարկացուցակների քննությամբ:

2. Հարկացուցակների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ *նահիեներում* նկատելի տոկոս են կազմել չբնակեցված բազմաթիվ գյուղերը: Դրանց դիմաց սովորաբար նշվել է գյուղանունը և ընդհանուր հարկաչափը: Հարկադրույքի արձանագրումը ենթադրել է տվյալ բնակավայրի սոցիալ-տնտեսական

ներուժը, որը ուժի մեջ պետք է մտներ բնակչության վերադարձի պարագայում:

1590 թ. Երևանի *վիլայեթի* հարկացուցակներում հանդիպում են դեպքեր, երբ ամբողջությամբ բնակիչներից զուրկ են եղել մի շարք վարչա-քաղաքական միավորներ: Դրանց թվին են դասվել՝ Ապարանը, Ծարաբխանեն, Աբնիքը (°), Բազարչայը, Զառը և Զաբիլը: Հատկանշական է, որ Երևանի *լիվայում* և Աշոցքի, Տաշիրի ու Փամբակի հարկացուցակներում հանդիպում են միայն չբնակեցված գյուղեր:

Մեզ հաջողվել է պարզել նաև հարկամատյաններում գրանցված գյուղերի ընդհանուր թիվը: Այսպես օրինակ՝ 1590 թ. Երևանի *վիլայեթում* հաշվվում է շուրջ 763, իսկ Երևանի *լիվայի* նշյալ հարկամատյաններում՝ 1015 գյուղ: Ինչ վերաբերում է Թիֆլիսի *վիլայեթին* պատկանող Աշոցքի, Տաշիրի և Փամբակի *նահիեներին*, ապա ընդհանուր գյուղերի թիվը կազմել է 170-ը:

3. Համադրելով 1590 թ. և 1728 թ. հարկամատյանները՝ փորձ է արվել վերհանել ժողովրդագրական պատկերը: Ինչպես ցույց են տալիս տվյալները, 1590 թ. Երևանի *վիլայեթում* քրիստոնյաները մեծամասնություն են կազմել, որն արտահայտվել է շուրջ 63.4%-ը 36.6%-ի դիմաց հարաբերակցությամբ: Հարկամատյանի տեղեկությունների համաձայն՝ *վիլայեթում* սոսկ քրիստոնեաբնակ էին Մեվազիհ Խաթունի, Դարաշամի և Դերենուրգութի *նահիեները*, իսկ Մելիք-Արսլանլու, Ղարաբաղ և Ծարուր վարչա-քաղաքական միավորները՝ մահմեդաբնակ: Քրիստոնյաները մեծամասնություն էին կազմում՝ Երևանի, Կարբիի, Դարաշահբուզի, Սիսիանի, Նախիջևանի (գյուղերը) *նահիեներում* և Թալինի, Արալքքի ու Աղչաքալայի *քազաներում*: Հարկ է նշել նաև Ջուլիա գյուղը, որ կազմված էր բացառապես քրիստոնյաբնակչությունից: Ուշագրավ է, որ քրիստոնյա հարկատուների շրջանում ամուրիները, ի տարբերություն մահմեդականների, բավական քիչ էին (61-ը՝ 519-ի դիմաց):

Ստացված տվյալները համեմատելով Երևանի *վիլայեթի* համառոտ մատյանի տեղեկությունների հետ՝ կարելի է փաստել, որ թեպետ հանդիպում ենք ժողովրդագրական տվյալների անճշտությունների, այնուամենայնիվ, դժվար է դրանք

լուսաբանել ադրբեջանցի հեղինակների դիտավորության լույսի ներքո: Սակայն, նույնը չի կարելի ասել Ռաֆիկ Սաֆարովի ներկայացրած վիճակագրության մասին, որը, հօգուտ մահմեդականների թվի ուռճացման, աչքի է ընկնում փաստերի ակնհայտ ուռճացմամբ:

Ժողովրդագրական պատկերը այլ էր 1728 թ. Երևանի *լիվայում*, որի հարկամատյանից երևում է, որ բնակչության մեծամասնությունը եղել են մահմեդականները: Վերջիններս կազմել են *լիվայի* շուրջ 60.9%-ը, իսկ քրիստոնյաները՝ 39.1%-ը: Հատկանշական է, որ այն գրեթե նույն հարաբերակցությունն է, ինչ ըստ 1590 թ. հարկամատյանի՝ քրիստոնյաները ունեցել են մահմեդականների նկատմամբ: Երևանի *լիվայում* ամբողջովին քրիստոնեաբնակ էր միայն Կարբի քաղաքը, իսկ միայն մահմեդականներով էին զբաղեցված՝ Սադարաքը և Ծարուրը: Մեծ թիվ չեն կազմել այն շրջանները, որտեղ քրիստոնյաները կազմել են մեծամասնություն: Դրանց թվում էին՝ Քըրք Բուլաքի, Դարաչիչեքի և Ապարանի *նահիեները,* ինչպես նաև՝ Կարբիի գյուղերը: 1728 թ. Երևանի *լիվայում* համեմատաբար շատ էր քրիստոնյա ամուրիների քանակը, որը գրեթե մոտ էր մահմեդականների թվին: Ամբողջ *լիվայի* հարկատուների շրջանում կարելի է հաշվել 514 քրիստոնյա և 603 մահմեդական ամուրի:

Աշոցքի, Տաշիրի և Փամբակի ժողովրդագրական պատկերի համատեքստում կարելի է նշել, որ առաջին 2 *նահիեում* քրիստոնյաները համապատասխանաբար կազմել են ընդհանուր բնակչության 98.4% և 100%-ը: Սակայն պատկերը այլ էր Փամբակում, ուր քրիստոնյաները, լինելով փոքրամասնություն, կազմել են ընդհանուր բնակչության շուրջ 35%-ը:

Եղել են դեպքեր, երբ թեպետ քրիստոնեաբնակ գյուղերի սակավությանը, այնուամենայնիվ, քրիստոնյաները կազմել են մեծամասնություն՝ շնորհիվ այն փաստի, որ ավելի խիտ են բնակեցված եղել: Այդ համատեքստում հարկ է նշել 1590 թ. Նախիջևան քաղաքին պատկանող գյուղերի, ինչպես նաև՝ 1728 թ. Կարբիի գյուղերի ժողովրդագրական տվյալները: Ուշագրավ են նաև Մակուի

և Փամբակի Ռենդ ու Քարաքիլիսե գյուղերը, որտեղ քրիստոնյաները ամենախիտբնակեցումն են ունեցել:

4. 1590 և 1728 թթ. օսմանյան հարկամատյանները կարևոր սկզբնաղբյուր են օսմանյան սուլթանների կողմից հայ եկեղեցականներին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին վերաբերող տեղեկությունների քննության համար: Հայոց եկեղեցու իրավունքների մասին համառոտ նշվում է 1590 թ. *վիլայեթի* քանուննամեի շարադրանքում: Մասնավորապես խոսվում է եկեղեցուն շնորհված հարկային արտոնությունների և հոգևորականների կողմից միանվագ 1-ական *աքչե՝* հօգուտ գանձարանի վճարելու մասին:

1728 թ. Էջմիածնին են պատկանել թվով 3 գյուղ՝ Վաղարշապատը, Օշականը և Մաստարան: Հատկանշական է, որ Քիրաջլու և Ֆրանկանոց գյուղերը, ի տարբերություն 1725 թ. օսմանյան քաղվածքի, առնվազն 3 տարի այլևս ենթակա չեն եղել Էջմիածնին: Մայր Աթոռը Վաղարշապատում տիրապետելով հիմնականում քարավանատան, վարելահողերի, ձիթհանների, ջրաղացների, անասունների և ազատված լինելով մասնավորապես *իսփենջի*, *ջիզիեի* հարկերից՝ սեփականություն է ունեցել նաև գյուղի սահմաններից դուրս:

Ուշագրավ է Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատության հետ համեմատությունը, որտեղ հիմնավորապես քննվում են Էջմիածնի սեփականության քանակին վերաբերող որոշ հարցեր: Ամենևին չթերագնահատելով այդ աշխատանքի նշանակությունը՝ պետք է նկատել, որ այդ հարցում առավել հավաստի աղբյուր է օսմանյան աշխարհագիրը, քանի որ այն առավելագույնս արտացոլում է ժամանակի իրողությունը:

5. 1728 թ. հարկամատյանից պարզվում է, որ Երևանի *լիվայում* բնակվել են՝ Թաջիլի, Քարաջալար, Քամարլու Սեյֆիաբադ, Թուրքեմանլու, Ծանլու, Քուրդքուլլու, Քուզիքուդանլու, Քաչիլու, Ծիթլու, Իսհանլու, Ծիրելու, Բանադ, Ծիքլի, Զանգինե, Բայաթ, Դունբուլի, Իրամլու, Խաջումլու, Մուղանլու քրդական աշիրեթները, որոնք արձանագրվել են Քըրք Բուլաքում, Կարբիում (գյուղերում), Արալըքում, Սադարաքում, Մակուում, Ծարուրում և Ծորագյալում: Հատկանշական է, որ թե՛ 1590 թ. Երևանի *վիլայեթում*,

թե՛ 1728 թ. Թիֆլիսի *վիլայեթին* պատկանող նշյալ 3 *նահիեում* հանրույթների հնարավոր գոյություն մասին որևէ տեղեկություն չկա:

6. Ատենախոսությունում մեծ տեղ է հատկացվել հարկերի ուսումնասիրության: Կարելի է փաստել, որ թեպետ 1590 թ. Երևանի *վիլայեթում* և 1728 թ. Երևանի *լիվայում* արձանագրվել են տարբեր հարկատեսակներ, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, տուրքերի շրջանառության հիմնական առանցքը նույնն էր: Այդ միտումը վերաբերում է նաև Աշոցքի, Տաշիրի ու Փամբակի և Երևանի *լիվայի* հարկատեսակների համեմատությանը:

1590 թ. *վիլայեթում* առաջնահերթ նշանակություն են ունեցել հատկապես ցորենի, գարու, բամբակի, այգիների մաքթուի և բրնձի հարկերը, որոնցից դիմաց գանձվող հարկաչափերը ամենաբարձրն էին: Հատկանշական է, որ դա նկատելի է նաև 1728 թ. Երևանի *լիվայի* հարկացուցակներում: Ցորենի և գարու հարկադրույքների բարձր լինելը վերաբերում է նաև Թիֆլիսի *վիլայեթի* խնդրո առարկա *նահիեներին:* Ի թիվս այլ հարցերի, մեծ կարևորություն ենք տվել հարկաչափերի համեմատությանը: Պարզվում է, որ ըստ մեկական *քիլեի* արժեքի՝ միևնույն հարկատեսակների դիմաց սահմանված հարկաչափերը տարբեր են եղել ըստ հարկամատյանների: 1728 թ. դրանց դրամական արժեքը շատ ավելի բարձր է եղել 1590 թ. համեմատությամբ:

Հստակ սահմանված արժեքների փոփոխություն է նկատվում նաև Երևանի *լիվայի* և Աշոցքի, Տաշիրի, Փամբակի տեղեկությունների միջև, որի համատեքստում խոսքը վերաբերում է մասնավորապես *իսփենջի* հարկադրույքի բարձրացմանը: Այդ միտումը հիմնականում պայմանավորված է եղել տվյալ ժամանակահատվածում Օսմանյան կայսրության որդեգրած հարկային քաղաքականության տարբերություններով և վիլայեթի առանձնահատկություններով:

Հատկանշական է նաև այն իրողությունը, որ ի տարբերություն 1590 թ., 1728 թ. օսմանյան հարկամատյաններում հարկեր են սկսել սահմանվել նաև մահմեդական ամուրիների նկատմամբ: Ենթադրելի է, որ այն պայմանավորված է եղել Օսմանյան կայսրության քաղաքական դժվարություններով:

7. Հարկամատյանների քննությունը հնարավորություն է տալիս վերհանել այն օրինաչափությունները, որոնք վերաբերում են օսմանյան հարկամատյանների գրանցման կարգերին: Մասնավորապես օսմանյան իշխանությունները 1590 և 1728 թթ. Երևանի *վիլայեթի* մաս կազմող շրջաններում հարկատուների գրանցման ժամանակ սկզբում նշել են մահմեդականներին, այնուհետև՝ տվյալ բնակավայրի քրիստոնյա բնակչությանը: Նման իրողությունը չի հանդիպում Աշոցքում, Տաշիրում և Փամբակում, ուր բոլոր հարկատուները շարադրվել են ոչ հատուկ կանոնակարգված ձևով: Բացի այդ, 1590 թ. Երևանի *վիլայեթում* օսմանյան իշխանությունները բոլոր քանակական թվականները գրի են առել տառային արժեքներով, որը չի հանդիպում խնդրո առարկա այլ հարկամատյաններում:

Երևանի *վիլայեթի* 1590 թ. հարկացուցակներում իշխանությունները *խսփենջ* հարկատեսակի ներքո հատուկ չեն առանձնացրել ամուրիներին և ընտանիքավորներին, որը չի հանդիպում 1728 թ. Երևանի *լիվայի* շրջաններում, որտեղ առանձին-առանձին նշվում է նրանց ընդհանուր թիվը: Վերջին երևույթի բացակայությունը նկատվում է նաև Տաշիրում և Փամբակում (Աշոցքում չեն եղել ամուրիներ):

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### 1. Արխիվային վավերագրեր

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան

**1.1** Թղթ. 1 գ. վավ. 306:

**1.2** Թղթ. 1 գ. վավ. 314:

**1.3** Թղթ. 1 գ. վավ. 316:

**1.4** Թղթ. 1 գ. վավ. 320:

**1.5** Թղթ. 1 գ. վավ. 332:

T.C. Başbakanlık Osmanlı Arşivi

**1.6** TT_d, sıra nu: 0633, Tapu Tahrir Defteri.

**1.7** TT_d, sıra nu: 0901, Tapu Tahrir Defteri.

### 2. Տպագրված սկզբնաղբյուրներ

**Հայերեն**

**2.1** Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ., մանր մատենագիրք, ԺԵ-ԺԹ դար, կենսագրական տեղեկութիւններով եւ ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ Աղանեանց Ա. քահ., Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանցի, 1912, ԾՁ+602 էջ:

**2.2** Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով, հատոր Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961, 403 էջ:

**2.3** Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավել վածով, հատոր Բ, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, 336 էջ:

**2.4** Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, տպ. Առաք. Աթոռոյ, Ս. Յակոբեանց, 1915, 677 էջ:

**2.5** Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հատոր I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1951, 452 էջ:

**2.6** Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հատոր II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956, 683 էջ:

**2.7** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, հրովարտակներ, արակ առաջին (ԺԵ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956, 314 էջ:

**2.8** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, կալվածագրեր, արակ առաջին (ԺԴ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, 639 էջ:

**2.9** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, արակ երրորդ (1652-1731), կազմեց Ք. Պ. Կոստիկյանը, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2005, 728 էջ:

**2.10** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, արակ չորրորդ (1734-1797), կազմեց՝ Ք. Պ. Կոստիկյանը, Երևան, «Նաիրի» հրատ., 2008, 386 էջ:

**2.11** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, III, շարիաթական նոտարական փաստաթղթեր (ԺԷ-ԺԸ դդ.), կազմեցին, բնագրերը թարգմանեցին և ծանոթագրեցին Ք.Պ. Կոստիկյանը և Մ. Ա. Խեչոն, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 222 էջ:

**2.12** Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, յօրինեալ Ի Տ. Եսայի Աղուանից Կաթողիկոսէ Հասան Ջալալեանց, Յերուսաղէմ, ի տպարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակովբեանց, 1868, 58 էջ:

**2.13** Ջամբռ, գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ եւ շարագրեցեալ ի

Սիմէօնէ ցաւահար եւ վշտակոծ կաթուղիկոսէ Երեւանցւոյ, ի Վաղարշապատ, տպ. Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1873, 304 էջ:

**2.14** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ. առաջաբանով, ներածություններով և ծանոթագրություններով Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., հատոր Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955, 345 էջ:

**2.15** Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI-XVII դդ. կանոननամեներ), թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Զուլալյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1964, 138 էջ:

**Ռուսերեն**

**2.16** Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, том II, часть I, под редакцией Ашота Иоаннисяна, Ереван, изд-во АН Армянской ССР 1964, CIV+395 с.

**2.17** Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, том II, часть II, под редакцией Ашота Иоаннисяна, Ереван, изд-во АН Армянской ССР, 1967, 420 с.

**2.18** Рахмани А. А., “Тарих-и алам арай-и Аббаси” как источник по истории Азербайджана, Баку, изд-во АН Азербайджанской ССР, 1960, 191 с.

**2.19** Эзов Г. А., Сношенія Петра Великаго с армянскимъ народомъ, С.-Петербургъ., тип., Импер. Академии наукъ, 1898, 512 с.

**Ադրբեջաներեն**

**2.20** İrəvan əyalətinin icmal dəftəri. Araşdırma, tərcümə, qeyd ve əlavələrin müəllifləri Ziya Bünyadov Hüsaməddin Məmmədov (Qaramanlı), Rəssamı: Hüsaməddin Məmmədov (Qarammanlı), Bakı, Elm, 1996, 148 s.

**Վրացերեն**

**2.21** 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი. ოსმალური ტექსტი ქართული თარგმანით, შესავლით, გამოკვლევითა და ფაქსიმილეებით გამოსაცემად მოამზადეს სერგი ჯიქიამ და ნოდარ შენგელიამ. წიგნი 1, თბილისი: ჰოროსი XXI, 2009, გვ. 832.

**2.22** 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი. ოსმალური ტექსტი ქართული თარგმანით, შესავლით, გამოკვლევითა და ფაქსიმილეებით გამოსაცემად

მოამზადეს სერგი ჯიქიამ და ნოდარ შენგელიამ. წიგნი 2, თბილისი: ჰოროსი XXI, 2010, გვ. 726.

### 3. Ուսումնասիրություններ

**Հայերեն**

**3.1** Աբրահամյան Ա. Գ., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից (Ուսումնասիրություն և վավերագրեր), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1953, 280 էջ:

**3.2** Ալիշան Ղ., Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, Մխիթարեան տպ., 1890, 509 էջ:

**3.3** Այվազյան Ա. Մ., Դավիթ-Բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, թիվ 3, 1990, էջ 76-85:

**3.4** Այվազյան Ա. Մ., Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, թիվ 1, 1991, էջ 93-100:

**3.5** Այվազյան Ա. Մ., Իրադարձությունները Այսրկովկասում 1723 թվականին և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, թիվ 4, 1990, էջ 63-80:

**3.6** Այվազյան Ա. Մ., Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թվականին, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, թիվ 2, 1991, էջ 102-114:

**3.7** Զուլալյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, 425 էջ:

**3.8** Զուլալյան Մ. Կ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, քաղաքական պատմություն, գիրք Ա, Երևան, ՀԳԱ հրատ., 1990, 364 էջ:

**3.9** Զուլալյան Մ. Կ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI- XVII), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966, 263 էջ:

**3.10** Լեո, հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք առաջին, Երևան, «Հայաստան» հրատ., 1969, 511 էջ:

**3.11** Հակոբյան Թ., Խ., Երևանի պատմությունը 1500-1800, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1971, 522 էջ:

**3.12** Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ. Տ, Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 1, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1986, 991 էջ:

**3.13** Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ. Տ, Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 2, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1988, 991 էջ:

**3.14** Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ. Տ, Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1991, 991 էջ:

**3.15** Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ. Տ, Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1998, 810 էջ:

**3.16** Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ. Տ, Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 5, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2001, 911 էջ:

**3.17** Հայոց պատմություն, հատոր II, միջին դարեր (IV դար- XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ (IX դարի կես- XVII դարի սռաջին կես), Երևան, «Զանգակ» հրատ., 2014, 798 էջ:

**3.18** Հայ ժողովրդի պատմություն, հատոր IV, հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում XIV- XVIII դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 680 էջ:

**3.19** Հովհաննիսեան Ա., Հայ-ռուսական օրիենտացիայի ծագման խնդիրը պատմա-քննադատական ուսումնասիրութիւն, Էջմիածին, Էջմիածին տպ., 1921, 58 էջ+Լ հավելված:

**3.20** Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, 693 էջ:

**3.21** Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, «Զանգակ» հրատ., 2003, 543 էջ:

**3.22** Չոբանյան Պ., Հայաստանի պատմության օսմանյան սկզբնաղբյուրների շուրջ, Բանբեր Հայագիտության, Երևան, թիվ 1, 2017, էջ 206-218:

**3.23** Սահակյան Լ., Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, «Լուսակն» հրատ., 2007, 307 էջ:

**3.24** Փափազյան Հ., Այգիներն ու այգետեղերը ըստ հայերեն և պարսկերեն կալվածագրերի, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, թիվ 1, 1982, էջ 65-82:

**3.25** Փափազյան Հ., Մատենադարանի թուրքերեն վավերագրերի աղբյուրագիտական արժեքը, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, թիվ 4, 1974, էջ 89-99:

**3.26** Փափազյան Հ., Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային քաղաքականության վերաբերյալ, Բանբեր Մատենադարանի, Երևան, թիվ 16, 1994, էջ 197-214:

**3.27** Փափազյան Հ., Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան վավերագրերը, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, թիվ 3, 1984, էջ 195-214:

**3.28** Փափազյան Հ., Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, Բանբեր Մատենադարանի, Երևան, թիվ 5, 1960, էջ 431-464:

**Ռուսերեն**

**3.29** Арутунян П. Т., Освободительные движения армянского народа в первой четверти 18 века, Москва, изд-во АН СССР, 1954, 303 с.

**3.30** Буткова Н. Г., Матеріалы для новой исторіи Кавказа съ 1722 по 1803 годъ, часть первая, С.-Петербургъ., 1869, 620 с.

**3.31** Левиатов В. Н., Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку, изд-во АН Азербайджанской ССР, 1948, 227 с.

**3.32** Лысцов В. П., Персидский поход Петра I. 1722-1723, Москва, изд-во МГУ, 1951, 246 с.

**3.33** Маруашвили Л. И., Вахушти Багратиони, его предшественники и современники, Москва, 1956, 136 с.

**3.34** Никифоров Л. А., Внешняя политика России в последние годы Северной войны: Нишдатский мир, Москва, изд-во АН СССР, 1959, 497 с.

**3.35** Папазян А. Д., Аграрные отношения в Восточной Армении в XVI- XVII веках, Ереван, изд-во АН Армянской ССР, 1972, 301 с.

**3.36** Пигулевская Н. В., Якубовский А. Ю., Петрушевский И. П., Строева А. В., Беленицкий А. М., История Ирана с древнейших времен до конца 18 века, Ленинград, изд-во Ленинградского Университета, 1958, 390 с.

**3.37** Соловъев С. М., История России в царствования Императора Петра 2 и Анны Иоанновны, т. 1, Москва, тип. ун-та., 1868, 392 с.

**3.38** Цагарели А. А., Сношенія Россіи съ Кавказомъ въ XVI- XVIII стольтіяхъ, С.-Петербургъ., тип. В. Киршбаума, 1891, 51 с.

**Անգլերեն**

**3.39** Janev V., The Jews in Macedonia XV- XVII (century), Skopje, Menora publish., 2011, 317 p.

**3.40** Matthee P., The politics of Trade in Safavid Iran, Silk for Silver, 1600-1730, London-New York, Cambridge University Press, 1999, 290 p.

**3.41** Newman J. A., Safavid Iran, Rebirth of a Persian Empire, London-New York, I.B. Tauris publish., 2006, 281 p.

**3.42** Shaw S., History of the Ottoman Empire and Modern Turkey, Empire of the Gazis: The Rise and Decline of the Ottoman Empire, 1280-1808, volume 1, Cambridge, Cambridge University Press, 1976, 368 p.

**3.43** Venzke L., M., The Ottoman Tahrir Defterleri and Agricultural Productivity, The Journal of Ottoman Studies XVII, İstanbul, 1997, p. 1-61.

**Թուրքերեն**

**3.44** Aktepe M., Patrona İsyanı (1730), İstanbul, yayın. Istanbul Edebiyat Fakültesi Basınevi, 1958, 212 s.

**3.45** Bilge S. M., Osmanlı Çağında Kafkasya 1454-1829 (Tarih-Toplum-Ekonomi), Istanbul, yayın. Kitabevi, 2012, 689 s.

**3.46** Ercan Y. Osmanlı İmparatorluğu'nda Gayrimüslimlerin Ödedikleri Vergiler ve Bu Vergilerin Doğurduğu Sosyal Sonuçlar, Türk Tarih Kurumu, Belleten, Ankara, cilt: LV, sayı: 213, 1991, ss. 371-391.

**3.47** İnalcık H., Osmanlılar'da Raiyyet Rüsumu, Türk Tarih Kurumu, Belleten, Ankara, cilt: XXIII, sayı: 92, 1959, ss. 575-608.

**3.48** İslamoğlu M. A., 1590 Tarihli Mufassal Tapu Tahrir Defterine Göre Revan Eyaletinde Alınan Vergiler (Ordubad Kazası Örneği), Cappadocia Journal of History and Social Sciences, volume 4, 2014, ss. 132-166.

**3.49** Karagöz H., 1590 Tahririne Göre Nahçivan Kazası, T.C. Süleyman Demirel Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Tarih Ana Bilim Dalı, Yüksek Lisans Tezi, İsparta, 2001, 78 s.

**3.50** Çağatay N., Osmanlı İmparatorluğunda Reayadan Alınan Vergi ve Resimler, Ankara Dil Tarih Coğrafya Fakültesi Dergisi, Ankara, cilt 5, sayı 5, 1947, ss. 483-511.

**3.51** Kangül H., 16 Yüzyıl Son Çeyreğinde Osmanlı Devleti Gürcistan Eyaletinin İdari ve Nüfüs Yapısı, T.C. Adnan Menderes Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Tarih Anabilim Dalı, Yüksek Lisans Tezi, Aydın, 2016, 109 s.

**3.52** Hinz W. İslam'da Ölçü Sistemleri, çeviren: Sevim A., İstanbul, yayın. Edebiyat Fakültesi Basımevi, 1990, 82 s.

**3.53** Taşkın, Ü. Rüsüm-i Örfiye, Tarih Okulu, İzmir, sayı: XIV, 2013, ss. 55-72.

**3.54** Yıldız S. (H.984) 1576-1577 Tarihli Timar Ruznamçe Defterinde Göre Karaman Eyaleti, T.C. Selçuk Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Tarih Anabikim Dalı Yeniçağ Tarihi Bilim Dalı, Yüksek Lisans Tezi, Konya, 2010, 616 s.

**3.55** دکتر عبدالله رازی- دکتر حسن خزایل، تاریخ مفصل ایران، وقایع ایران از اغاز تا پایان پهلوی، تهران، سازمان چاپ و انشارات، 1388، 488 ص.

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

## ԲԱՌԱՐԱՆ
### հարկային, վարչական և այլ եզրույթների

Աքչե (اقچه)- Արծաթե դրամի միավոր: Օսմաներեն նշանակել է սպիտակավուն: Օսմանյան աքչեները հավասար էին մեկ քառորդ դիրհեմ արծաթի, իսկ դիրհեմը հավասար էր 3.06 գրամի[503]:

Բադիավա (بادهوا)- Եկամտի լրացուցիչ աղբյուրների հետամուտ լինելով՝ օսմանցի կառավարիչները տուգանում էին գյուղացիներին: Բադիհավան գանձվող տուգանքների և հարկի ընդհանուր անունն է[504]:

Բեյթ-ուլ մալ (بيت المال)- Բառացի՝ «գանձատուն», «պետական գանձարան»: Այս եզրույթի տակ հասկացվում էին նաև պետական հարկերը, իսկ ավելի ուշ հարքունիս գրավվող և պետական սեփականություն դարձվող ամեն ինչ: Կենտրոնական իշխանությունների կողմից տարբեր նահանգներում նշանակվում էին «բեյթ-ուլ մալի» հատուկ գործակալներ, որոնք գանձում էին որոշ հոգևոր տուրքեր և զբաղվում էին անժառանգ մեռած քաղաքացիների ունեցվածքի և կալվածների բռնագրավման և նրանցից ստացվող եկամուտների տնօրինման գործերով[505]:

Բեննաք (بناک)- Խոսքը չիֆթ չունեցող ամուսնացած այն մահմեդական հպատակների մասին է, որոնց մշակության տիրույթը կես չիֆթից պակաս հողատարածքն էր: Կարելի է տարբերել՝ էքինլու և ջաբա (քարա) բեննաք: Առաջին խմբին պատկանողները տիրապետել են նշյալ չափի հողատարածքի, այնինչ ջաբաները զրկված լինելով որևէ հողակտորից՝ ուրիշների տիրույթներում կամ բանվոր էին աշխատում, կամ էլ՝ այն շահագործում էին հողատիրոջից վարելահողի իրավունք ստանալուց հետո[506]:

Դեֆթեր (دفتر)- Տետր, մատյան: Գլխավորապես օգտագործվում էր հարկամատյանների իմաստով[507]: Դեֆթերդար (دفتردار)- էր կոչվում այն պաշտոնյան, որը կազում և տնօրինում էր մատյանները[508]:

---

[503] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 128:
[504] Նույն տեղում, էջ 129:
[505] Հրովարտակներ, պրակ առաջին, էջ 107:
[506] Taşkın, Ü., նշվ., աշխ., էջ 59-60.
[507] Ծարիաթական նոտարական փաստաթղթեր, էջ 161:
[508] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 130:

Դինգ (دنک)- Այդպես էին կոչվում բրնձի մաքրման գործատները[509]:

Դյոնում (دونم)- Դյոնումի հարկը (رسم دونم) հողի օսմանյան չափ է: Մեկ դյոնումը ըստ 16-րդ դարի Երևանի վիլայեթի քանուննամեի՝ երկարությամբ և լայնությամբ 40 քայլաչափ հողային տարածություն է:

Թափու (طپو)- Թափուն Օսմանյան կայսրությունում հողաբաժին ունենալու իրավունքն էր, որը ստանում էր ֆեոդալից: Թափուի հիման վրա գյուղացին կախման մեջ էր ընկնում վերջինից[510]:

Իսփենջ (اسپنج)- Այն վճարում էին ոչ մահմեդական հարկատուները չիֆթի հարկի դիմաց: Թեպետ խնդրո առարկա հարկամատյաններում դրա դիմաց սահմանված հստակ դրամաչափին, այնուամենայնիվ, իսփենջի հարկադրույքը Օսմանյան կայսրությունում եղել է խիստ փոփոխական[511]: Այն հպատակներից գանձվում էր մարտ ամսվա սկզբին[512]:

Լիվա (لوا)- Վարչական բաժանման երկրորդ միավորը՝ էյալեթից կամ վիլայեթից հետո: Լիվան կոչվում էր նաև սանջաք[513]: Դրա հայերեն համարժեքը գավառն է[514]:

Հարիջ (حارج)- Խոսքը այն հպատակի մասին է, ով իր ֆեոդալի տիրույթներից դուրս մեկ այլ տեղ հողուներ:

Մազրայե (مزرعه)- Մշակվող հողատարածք, որը զուրկ էր մշտական բնակեցվածությունից[515]:

Մաղաֆ (معاف)- Հարկային իմունիտետ, ազատում պետական հարկերից, երբեմն նաև՝ միայն որոշ հարկերից ու պարտավորություններից[516]:

Ման (من)- Կշռի միավոր: Մեկ մենը XVII -րդ դարում եղել է 2.9 կգ, իսկ XVIII դարում՝ 3 կգ[517]:

---

[509] Հրովարտակներ, պրակ չորրորդ, էջ 103:
[510] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 132:
[511] Çağatay N., նշվ., աշխ., էջ 507-508:
[512] İnalcik H., նշվ., աշխ., էջ 607:
[513] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Ա, էջ 362:
[514] Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 66:
[515] Yıldız S., նշվ., աշխ., էջ 113:
[516] Հրովարտակներ, պրակ երրորդ, էջ 195:
[517] Bilge S. M., նշվ., աշխ., էջ 511:

Մաքթու (مقطوع)- Բառացի նշանակում է որոշակի, կտրված: Այսպես էին կոչվում այն հարկերը, որոնք յուրաքանչյուր տարի կանոնակարգված ձևով առանց հաշվի առնելու բերքի քանակն ու պայմանները, նախապես որոշված հատուկ գումարով գանձվում էին պետության կամ հողատեր ֆեոդալի օգտին[518]:

Մուդ (مد)- Ըստ ընթացիկ քաննունամեի տեղեկության՝ Ստամբուլում 1 մուդը 20 քիլե էր: Այն ենթադրում է, որ տվյալ չափման միավորի համատեքստում առաջնորդվել են կենրոնի չափորոշիչներով:

Մուլք (ملک)- Սեփականություն, տիրույթ, ժառանգաբար ստացած կամ դրամով գնած ու սեփականություն դարձրած հող կամ անշարժ կալված[519]:

Յայլաք (ییلاق)- Արոտավայրերը բարձրանալիս ոչխարների համար գանձվող հարկ[520]:

Նահիե (ناهیه)- Վարչական բաժանման միավոր, քազայի ստորաբաժանումը[521], որի հայերեն համարժեքը՝ գյուղախումբն է[522]:

Չիֆթ (چفت)- Պարսկերեն ջոֆթ բառից, որը նշանակում է զույգ: Չիֆթը կամ չիֆթը այն հողակտորն էր, որը հնարավոր էր մշակել մի զույգ եզան միջոցով[523]: Ըստ Երևանի վիլայեթի 16-րդ դարի քաննունամեի՝ ամբողջական չիֆթի (تام چفت) չափը բարձր բերքատվությամբ աչքի ընկնող տեղի համար հավասար է եղել 80, միջին տեղում՝ 100, իսկ վատ տեղում՝ 130 դյոնումի: Բացի այդ, հանդիպում է նաև կես չիֆթը (نیم چفت), որը ենթադրել է 2 անգամ փոքր հողատարածք[524]:

Չիֆթի հարկը (رسم چفت)- գանձվել է աշխարհագիր մատյաններում գրանցված մահմեդական բնակչությունից[525]: Երևանի վիլայեթի քաննունամեում 1 չիֆթ ունեցող հպատակներից սահմանվել է 50 աքչե, իսկ կես չիֆթի տիրապետողներից՝ 25 աքչե:

---

[518] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 134. Папазян А. Д., Аграрные отношения в Восточной Армении в XVI- XVII веках, Ереван, 1972, с. 205-206.
[519] Հրովարտակներ, պրակ առաջին, էջ 115:
[520] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 136:
[521] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Ա, էջ 371:
[522] Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 66:
[523] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 136:
[524] İnalcik H., նշվ., աշխ., էջ 581:
[525] Çağatay N., նշվ., աշխ., էջ 496-497:

Վաքֆ (وقف)- Բառացի նշանակում է «կանգ առնել», «ամրանալ»: Այսպես էին կոչվում եկեղեցիներից կամ մզկիթներին նվիրված, վաքֆ արված հողերն ու այլ ստացվածքները: Նվիրվելով որևէ կրոնական հաստատության, դրանք այլևս ենթակա չէին ոչ մի կարգի օտարման և մնում էին որպես եկեղեցու կամ մզկիթի մշտական սեփականության և որպես այդպիսիք ազատվում էին պետական հարկերից[526]:

Վիլայեթ (ولايت)- Վարչական ամենամեծ միավորը, նահանգ: Մինչև XVII- XVIII դարերը Օսմանյան կայսրությունում «վիլայեթ» և «էյալեթ» անվանումները գործածվել են նույն իմաստով: Հետագայում վերջնականապես ընդունվում է «վիլայեթ» եզրույթը[527]:

Քադի (قاضى)- Հոգևորական դատավոր[528]:

Քազա (قضا)-Վարչական բաժանման մեջ լիվայի՝ սանջաքի, ստորաբաժանումը[529], որը ենթադրել է գավառակ[530]:

Քըշլաք (قشلاق)- Ձմեռանոց, ձմեռվա արոտավայր[531]:

Քիլե (كيله)- Կշռի միավոր: Օսմանյան կայսրությունում ցորենի, ալյուրի 1 քիլեն հավասար էր 25.65 կգ: Տարբերվում էր գարու և բրնձի մեկական քիլեի չափը, որը համապատասխանաբար կազմել է՝ 22.25 և 12.8 կգ[532]:

---

[526] Հրովարտակներ, պրակ առաջին, էջ 120:
[527] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Բ, էջ 283:
[528] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, կալվածագրեր, պրակ առաջին, (ԺԴ-ԺՁ դդ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյանը, Երևան, 1968, էջ 190:
[529] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Ա, էջ 364:
[530] Մելքոնյան Ա., նշվ., աշխ., էջ 66:
[531] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Ա, էջ 366:
[532] Hinz W. նշվ., աշխ., էջ 51:

بسم الله الرحمن الرحيم وبه نستعين وعليه نعتمد في البدء والختم

حمد وثنا وافر وشكر وسپاس بی پایان اول خالق انس وجان
وزارت خلق جهان دركاه اعلا بسته كه سيوف اقلام ايله جزيره عالمدن
احوالی عالمه نظام اعطا وصلوات فايقات بی نهايه وتحيات لايقات
بی غايه سرور مخلوقات وسرور كاينات محمد المصطفى عليه
افضل الصلوات واكمل التحيات نك روضه علياسنه كه هيئتين
شريفه سنه غزا وتبليغ احكام ملك يزله مصالح بنی آدم قيام دين
مبين ايله انتظام عطا قلدی وال واصحاب عظامنك ارواح مطهرلرينه
كه لوازم مراسم اسلامی نصل اجمال دن مفصل بيان وعيان اهتمام تام
ايله اتمام ايلديلر امثالجه پادشاه عالميناه شهنشاه فلك دركاه
سايه لطف الله خليفه رسول الله كاسر رقاب اكاسره قاصر
فقاه اقاصره صاحب قران زمان مالك جهان دوران قضا توان
قدر فرمان سلطان ابن سلطان سلطان مراد خان ادام الله قيام
خيام سلطانه واوتاد الابد واطناب الخلود في ظله ظله الظليل
بالامن والامان حضرتلرينك مثوبات غزای جنت جزا يايدن كلهمت
هما همتالری وجل مهمت عنقا هيمالری فوق صالة راقصين
وزمره مصلة مخلصين اوزرينه اقدم واتم اولوب اول طايفه
تدكر دارك وجود مسرت آلودلرين اطفار تيغ آبدارلرينه عالمدن
حك ايلمك اولمغين مراد اشرق ديارنه جنود مجندن بی شمار ايله
سردار رفيع المقدار لركوندرب طايفه مقهوره طعمه شمشير وتير
وولايت شروان وبعضی كورجستان فتح وتسخير اولندقدن صكره
بقيه كورجستان وولايت روان ونخجوان بلكه عموما ملكت
آذربايجان دخی خون وخراسنه وحومه حمايه كتورلمك ايچون
وزرای عظما آصف آزادن وزير روشن ضمير مشير مشاوری
تدبير دليزاقليم تسخير آصف اوصاف زمانه سكندر مصاف
يكانه خورشيد برتو جمشيد پرتو رستم رزم حاتم بزم
سرحرم علی عمر مكتی كبر كشور كشا اعنی فرهاد پاشا ادام الله اقباله

واجلاله الی يوم الدين وابده دائما نصرة وفرصة علی الحاسدين
حضرتلری سردار ظفر شعار تعيين بيورلمغله مشار اليه دخی عساكر
منصوره موفوره واجناد بغداد غير محصوره ايله كلوب مامور اولدقلری
ذكر اولنان امور جليل الشعوره بذل مقدور وسعی محصور ايدوب
قوة قاهره شهريارينی وسطوة باهره تاجداری ايله بعون الله الملك
المنان بقيه كورجستان وولايت روان ونخجوان دخی فتح وتسخير وجزك
شرك كفر والحاد نقطه ظهير ايدوب بعضی امصار وبلاد نه لم يخلق مثلها في البلاد
مصداقه ما صدق قلاع بديع الابداع ايجاد واختراع ايلوب مما لك محروسه
سايه كی ضبط وتصرف اولندقدن صكره ذكر اولنان ولايت روان ونخجوان
دخی كاينبغی قوانين عدالت آيين پادشاهی مرعی ومضبوط وقواعد قوانين
نضيعت رهين دين پناهی محكی ومربوط اولنانی ايچون ولايت مزبورنك
عموما قرا ومزارع ومحارث ومتارع وغلات وحقوق ومرسوماتی بغير
وقطمير تحرير ومجمل ومفصل دفتر لر تسفير وتسطير اولنمق مشار اليه
سردار عالی مقام فلك رام حضرتلرينك مرام شهريغلری اولمغين
اولنابدن زمره امرادن دفتردار اموال بوعبدی فخال محمد بن
وديوان همايون سعادت مآل كاتبلرندن الكاتب حسن قولدرينه
فرمان قضا جريان نازل وواصل اولوب مضمون همايون لازم الاذعان
وواجب الامتثالنده قانون قديم وطوز مستقيم اوزره مفصل
ومشروح فرمان اولنان حسب الامكان معلوم واذعان
اولندقدن امتثالا للامر العالی مخرجی شروع ومباشرت اولنوب
اولنابدن فرمان اولنان مأمورات وممنوعات علی قدر الوسع
والطاقه رعايت واحوال تحرير وتزييده ممكن اولدقجه
راستيكاری واستقامت حمايت قلنوب ذكر اولنان
مصالح ومهام اسراع اقدام اقلام ايله اقدام تام
واهتمام ما لا كلام ايله ايام دولت روز افزون
خسروانه بغايت الملك العلام اختتام وانجام بولمشدر
الواقع في اواخر شهر محرم الحرام سنه تسع وتسعين ومائة والف

TT_0633



TT_0633



TT_0901